1 Բնություն

Ուսուցչի գիրք

Լելա Միքիաշվիլի • Մայա Լևիձե • Գիորգի Կվանտալիանի

Երաշխավորվել է Վրաստանի կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարության կողմից
2018 թվականին:

Բնություն 1
Ուսուցչի գիրք
Թբիլիսի, 2018

Հեղինակներ. **Լելա Միքիաշվիլի, Մայա Լևիձե, Գիորգի Կվանտալիանի**

Խմբագիրներ. **Մակա Սեսկուրիա, Էլենե Բերիաշվիլի**
Դիզայներ. **Իա Մախաթաձե**
Պատկերազարդող. **Գիորգի Մաղրաձե**
Տեխնիկական դիզայներ. **Թինաթին Բերբերաշվիլի**

© Բակուր Սուլակաուրիի հրատարակչություն, 2018
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ՍՊԸ «Բակուր Սուլակաուրիի հրատարակչություն»
Հասցե՝ Դավիթ Աղմաշենեբելիի 150, Թբիլիսի 0112
Հեռախոս՝ 291 09 54, 291 11 65
Էլ.հասցե՝ info@sulakauri.ge
www.sulakauri.ge

ISBN 978-9941-30-324-1

The Natural Science 1
Teacher's Book

© Sulakauri Publishing, 2018
all rights reserved.

Tbilisi, Georgia
www.sulakauri.ge

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

2. ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 8

3. ՄԱՆՐԱՄԱՍՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ԴԱՍԱԳՐՔԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԻ ՀԵՏ (ԱՇԱԿԵՐՏԻ ԳԻՐՔ, ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐ, ՈՒՍՈՒՑՉԻ ԳԻՐՔ), ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ.....9

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ 10

5. I ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ 11

6. ԴԱՍԱԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻՆ 18

7. ԴԱՍԱԳՐՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ 21

8. ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 22

ԸՆԹԱՑԻԿ ԴԱՍԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 24

9. ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....151

10. ԻՆՉՊԵՍ ԳՆԱՀԱՏԵՆՔ ԱՇԱԿԵՐՏԻՆ 155

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 157

1. ● ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Տարրական դասարաններում
նպատակահարմար ենք գտնում առավել շատ
կիրառել Սուլխան-Սաբայի և Գոգեբաշվիլու՝ բնական
երևույթների պարզաբանումները և գործածել
նրանց կողմից տրամադրված հասկացությունները,
տերմինները: Դրանցում պահպանված են բնությունն
ամբողջության մեջ քննելու կարգը և բնության հետ
մարդու հուզական կախվածության բնագավառները»:
Գուրամ Ռամիշվիլի

Մենք համամիտ ենք բնաբանում նշված այն կարծիքին, որ այս տարիքում աշակերտների մտավոր-ճանաչողական զարգացման ճանապարհին նպատակահարմար է ամբողջականության տեսակետի ձևավորումը: Դրա հիմքում ընկած է ընկալման հոգեբանական տեսությունը, ինչի շնորհիվ, նախ՝ ձևավորվում են ամբողջական պատկերացումներ, ապա ճշտվում են մանրամասները՝ ամբողջի մասերը: Ընկալման բնույթին համապատասխանում է գիտելիքի ձեռքբերումը հետևյալ սկզբունքով. «ամբողջական պատկերացումներից մինչև մասնավոր պատկերացումներ»: Այստեղ մենք կրկին վերադառնում ենք տարրական դասարաններում ինտեգրած և ամբողջական ուսուցման գոգեբաշվիլիական ավանդույթին, ինչը պարզ ընթերցվում է Յակոբի հետևորդ Լուարսաբ Բոցվաձեի ծրագրային կանոնագրում. «Անհնար է, որ մի առարկայի շրջանակն առանձնացված լինի երկրորդ առարկայից: Մասնավորապես, դպրոցում ուսուցման ժամանակ միասնականության խախտումը, առարկաների առանձնացումը և մասնավորեցումը փոխանցվող գիտելիքի համար մեծ թերություն կարող են դառնալ: Յուրաքանչյուր առարկայի հաջողության գրավականը բավականության զգացումն է, որն ուսուցումը հարուցում է երեխայի մեջ, ինչպես նաև առարկան սովորելու նպատակահարմարությունը: Դասավանդումը հաճելի ու նպատակահարմար կլինի այն ժամանակ, երբ ամուր կապ հաստատվի այն հասկացությունների միջև, որոնք տեղ են գտել գիտակցության մեջ: Տարբեր գիտելիքները պետք է մեկը մյուսին լրացնեն ու պարզաբանեն...Երբ պարապմունքն այս բնույթով է ընթանում, երեխաների մոտ ստեղծվում է հաջորդական և ամբողջական տպավորություն, ինչի արդյունքում նրանք առարկաներին կծանոթանան լիարժեքորեն»: (Տարրական ժողովրդական դպրոցի ժամանակավոր ծրագրեր, Թբ.1919, էջ 14– 15):

Գոգեբաշվիլու կողմից այս մոտեցման հիմնադրումը հաստատում է նաև պրոֆեսոր Գուրամ Ռամիշվիլին: Նա գրում է. «Կրթության ազգային հայեցակարգի մասին խոսելիս՝ կարևորում ենք մեկ հարցի լուծում ևս: Յա.Գոգեբաշվիլու «Մայրենի լեզուն», «Բնության դուռը», «Պատմական պատմվածքները» և «Աստվածաշնչյան պատմությունները» լրացնում են մեկը մյուսին: Այստեղ զարմանալի միասնականություն կա, որի հիմքում ընկած է ինչպես վրացի փիլիսոփայի ու պատմաբանի, այնպես էլ բնագետի մեծ բարոյականությունը: Տեղեկատվության հեղեղի ներխուժումն առարկաների ուսուցման մեջ խախտել է այդ կենսական ամբողջականությունն ու առաջնային կապերը: Պարտադիր ենք համարում այդ ամբողջականության ու ներդաշնակության պահպանում-վերականգնումը: Դպրոցներում առարկաների դասավանդումն այնպես պետք է կազմակերպվի, որ պահպանվի գիտելիքի ամբողջականությունը, վերականգնվեն մարդու և բնության միջև առաջնային կապերը: Այդ իմաստությունը ճշմարիտ գիտելիքի անհրաժեշտ հիմքն է»: (Գ.Ռամիշվիլի, Մայրենի լեզվի տեսություն, Թբ., 2000, էջ 17):

Բնագիտության դասավանդման վերոհիշատակյալ սկզբունքներից (ինտեգրվածություն և ամբողջականություն) տրամաբանորեն անցում ենք կատարում երեք էական պահի, որոնցով էլ առաջնորդվում ենք բնագիտության դասագիրքը կազմելիս:

Առաջինն այն է, որ բնագիտության դասավանդումը պետք է լինի էկոլոգիական: Դա չի ենթադրում միայն բնապահպանական բովանդակություն ունենալը: Մեր ընկալմամբ էկոլոգիան կենդանի օրգանիզմների միջև եղած կապի և դրանց՝ շրջակա միջավայրի հետ ունեցած կապի մասին գիտական իմացությունն է, ինչն ամբողջական պատկերացում է տալիս աշխարհի մասին և հնարավորություն է տալիս մեզ ամբողջականության մեջ քննարկել նաև ուսումնական գործընթացը: Բնագիտություն ուսուցանելիս ցանկացած առարկա կամ երևույթ քննարկվում է աշակերտի շրջակա միջավայրի համատեքստում: Աշակերտի տարիքային աճի հետ մեկտեղ այդ միջավայրի սահմաններն էլ են ընդլայնվում:

Բնապահպանական նպատակներից ելնելով՝ բնագիտության ուսուցման նպատակներից մեկը հենց այն է, որ երեխան սիրի կենդանի ու անկենդան բնությունը, և նրա մեջ զարգանա բնության հանդեպ

խնամատար վերաբերմունք, ձևավորվի բնության պահպանության անհրաժեշտության զգացողություն և զինի նրան այդ ուղղությամբ որոշակի աշխատանքային հմտություններով: Երեխայի ընդհանուր զարգացումը մեծ մասամբ պայմանավորում է մանկավարժորեն կազմակերպված միջավայրում նրա կողմից գիտելիքի և հմտությունների ու կարողությունների սիստեմատիկ ձեռքբերումը: Առավել կարևոր է այն հանգամանքը, որ արտաքին աշխարհի մասին ձեռք բերած գիտելիքը չհասցվի տեղեկությունների գումարի, այլ այն երեխաներին տրվի որոշակի հաջորդականությամբ, նրանց սեփական փորձին կողմնորոշմամբ և տարրական դասարանների աշակերտներին հասանելի եղանակով: Այս տարիքի (նկատի ունենք 6- ից 10 տարեկան) երեխաների մտածողության հիմնական գիծը կայանում է ակնառու-գործնական մտածողությունից ակնառու-պատկերավոր, իսկ վերջինից՝ վերացական մտածողության անցումը: Մեր դեպքում դա նշանակում է, որ, ճիշտ է, երեխաների մոտ պետք է անպայման ստեղծենք բնագիտական պատկերացումներ և ուսուցանենք հասկացություններ, սակայն այդ պատկերացումներն ու հասկացություններն աշակերտներին կոնկրետ բնական առարկաների միջոցով պետք է տանք, քանի որ այդ տարիքում գիտելիքի ձեռբերման հիմքը հենց առարկան ու երևույթն են և ոչ թե՝ վերացական պատկերացումը: Երեխայի մտածողությունը պետք է ուղղված լինի առարկայից (երևույթից) դեպի հասկացություն և ոչ թե հասկացությունից դեպի առարկա (երևույթ) ընթացքով:

Մեր մոտեցման երկրորդ էական պահը ենթադրում է ուսուցման գործընթացի այնպիսի կազմակերպում, որ երեխայի ճանաչողական գործունեությանը մասնակցեն նրա ուղեղի երկու կիսագնդերն էլ: Այս ուղղությամբ մեր կողմից առաջարկվող դասավանդման մեթոդիկան, ծրագիրը, դասագիրքը և երաշխավորությունները հիմնված են մարդու ուղեղի հատուկ ուսումնասիրությունների վրա, որոնք կապված են աշակերտի ստեղծագործական հմտությունների և կարողությունների զարգացման խնդիրների հետ:

Մեր մոտեցման երրորդ էական պահը ենթադրում է բնության ուսումնասիրում և շրջակա միջավայրի հետ ճիշտ կապերի հաստատում՝ գործնական աշխատանքների միջոցով: Այդ նպատակով և՛ դասագրքում, և՛ Ուսուցչի գրքում ներառված են բազմաթիվ գործնական աշխատանքներ, ինչը կնպաստի հետազոտմանը և բնությունն ուսումնասիրելու հանդեպ հետաքրքրության առաջացմանը:

Մեր թվարկած երեք էական մոտեցումներն էլ հիմնված են բնագիտության հոլիստիկ կամ ամբողջական (wholly (անգլ.) – ամբողջությամբ) ուսուցման հայեցակարգի վրա, որը մշակել է հայտնի ամերիկացի գիտնական Ջ. Հասարդը (Jack Hassard, science experiences, 1990): «Հոլիստիկ ուսուցում» դասավանդման մոդելը աշակերտին դիտում է՝ որպես ամբողջական անհատ, և հիմնվում է մարդու գլխուղեղի ամբողջական գործունեության վրա: Գլխուղեղի աջ և ձախ կիսագնդերը տարբեր բնույթի մտածական գործընթացների են մասնակցում: Յուրաքանչյուր կիսագունդ գործառույթների դոմինանտ տարածություն ունի: Ուղեղի ձախ կիսագնդում դոմինանտ է աստիճանաբար և տրամաբանական հաջորդականությամբ մատուցված տեղեկության ընկալումն ու մշակումը: Աջ կիսագնդում գերակշռում է ոչ բառային, ամբողջական-սինթեզային, պատկերավոր-կերպարվեստային տեղեկության ընկալումն ու մշակումը (ինչպիսիք են ռիթմը, մեղեդին, երևակայությունը, գույները...):

Հոլիստիկ կրթության մեջ միասնաբար են հասկացվում ձախ և աջ կիսագնդային տիպի ճանաչողական գործունեությունները: Միաժամանակ այս հայեցակարգը նկատի է առնում երեխաների միջև գոյություն ունեցող տարբերություններն՝ ըստ նրանց մտավոր հնարավորությունների տեսակների, մասնավորապես, մենք նկատի ունենք Գարդների սահմանած մտավոր հնարավորությունների ութ տեսակները (բազմակողմանի բանականություն): Դրանք են.

1) Ներանձնային – ներքին անհատական, երբ աշակերտը նյութը յուրացնում է անհատական ուսումնասիրման և կշռադատման միջոցով:
2) Միջանձնային – երեխան սովորում է ուրիշների հետ համագործակցելով:
3) Երաժշտական-ռիթմիկ – առարկաների ընկալման միջոցը ռիթմն է ու երաժշտական օրինաչափությունները:
4) Վիզուալ-տարածական – առարկան ուսումնասիրելիս աշակերտը գծապատկերային օբյեկտներ դիտելու կարիք է ունենում և հիմնվում է դրանց բաղկացուցիչ մաս կազմող տարրերի վրա:
5) Մարմնաշարժողական (կինեսթետիկ) – աշակերտը սովորում է շարժվելով, տեղափոխվելով, հպվելով:
6) Բանավոր-լեզվաբանական – երբ աշակերտը նյութը յուրացնում է լսած կամ կարդացած բառերի միջոցով:
7) Տրամաբանական-մաթեմատիկական – երբ աշակերտն ունի մաթեմատիկական բանաձևերով ու տրամաբանական կատեգորիաներով ձեռնածելու ունակություն:
8) Նատուրալիստական – աշակերտը բնությունը

ճանաչելու հատուկ տաղանդ ունի: Նա բնական երևույթների ու առարկաների հանդեպ մեծ ձգտում ունի:

Սովորաբար մարդու մեջ այս ութ տեսակներից գերիշխում են մեկը կամ երկուսը, թեև թվարկվածներից յուրաքանչյուրը քիչ թե շատ արտահայտված է նրա մոտ: Դասագիրքը պետք է նպաստի ուսումնական գործընթացի այնպիսի կազմակերպման, որ աշակերտների մտավոր կարողությունների բոլոր տեսակներն ակտիվացված լինեն:

Ըստ Ջ. Հասարդի, հոլիստիկ կրթության նպատակն է երեխայի մտավոր ունակությունների թվարկած բոլոր տեսակների ակտիվացումը, ինչին, կիսագնդային տեսակի մտածողությունից բացի, նպաստում են նաև սենսոմոտորային տեսակի մտածական գործունեությունը (ինչը նկատի ունի ֆիզիկական օբյեկտների հետ անմիջական կապը) և հուզական տեսակի մտածողությունը (ինչը նկատի ունի զգայական-հուզական մտածողությունը):

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ մարդկանց (այդ թվում նաև, բնականաբար, երեխաներին) բնորոշ են տարբեր տեսակի մտավոր ունակություններ և հնարավորություններ, այդ պատճառով ուսուցման հոլիստիկ մոդելը և՛ մանկավարժորեն, և՛ հոգեբանորեն, և՛ սոցիալական հավասարության տեսակետից պրոգրեսիվ և ընդունելի է:

Բնագիտության ուսուցումը տարրական դասարաններում ունի հատուկ դաստիարակչական նպատակ: Սպեցիֆիկ գիտելիքի փոխանցման հետ մեկտեղ բնագիտության դասընթացը պետք է ծառայի աշակերտների բնապահպանական, գեղագիտական, հայրենասիրական դաստիարակությանն ու աշխատանքի հանդեպ սիրո առաջացմանը: Եվ այս ամենն աշակերտների մեջ պետք է արտահայտվի համապատասխան հմտությունների ու կարողությունների և տրամադրվածություն-վերաբերմունքի ձևավորմամբ ու մշակմամբ: Այսպիսով, բնագիտության դասագիրքը պետք է կրի նաև դաստիարակչական բնույթ:

Դասագրքի դաստիարակչական գործառույթի մի մաս ենք համարում նաև ինքնուրույն աշխատելու ունակության զարգացումը: Ժամանակակից մանկավարժական ուսումնասիրություններն ապացուցել են, որ բնագիտության դասերի ժամանակ, երբ աշակերտներն ինքնուրույն են փնտրում հանձնարարված խնդիրը լուծելու ճանապարհներ, ոչ միայն առարկայի հանդեպ նրանց հետաքրքրությունն է աճում, այլև այնպիսի հմտություններ և կարողություններ են զարգանում, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, վերլուծելու և ստեղծագործելու կարողությունը, ստացված տեղեկատվությունը համակարգելու ունակությունը և այլն:

Բնագիտության դասագրքերն այս՝ մեր ձևով կազմելու նպատակի մասին ամբողջական պատկերացում տալու համար, մեկ հարցի ևս պետք է անդրադառնանք: Անցյալ դարում Արևելյան Եվրոպայի երկրներում տարրական դպրոցի հիմքում դրված էր այն տեսակետը, որ տարրական դասարաններում կրթությունը պետք է միտված լինի գիտելիքի որոշակի պաշարի կուտակմանը, դպրոցի հաջորդ աստիճանի համար անհրաժեշտ տեղեկությունների բազիսային մակարդակի ստեղծմանը: Ժամանակակից (ինչպես նաև դասական) մանկավարժական տեսությունները նախապատվությունն այն տեսակետին են տալիս, ըստ որի տարրական դասարանում կրթության և դաստիարակման գործընթացը պետք է միտված լինի անհատի զարգացմանը: Ըստ մեզ, այս երկու սկզբունքներն իրարամերժ չեն, չնայած շեշտն այնուամենայնիվ պետք է զարգացման վրա դրվի:

Մեր կողմից ներկայացված բնագիտության առաջին դասարանի դասագիրքը կազմված է վերը նշված տեսակետների հիման վրա, և նրա առաքելությունն է նպաստել առաջին դասարանում ուսուցման հետևյալ նպատակների իրականացմանը. բնությունն ուսումնասիրելու մեծ ձգտման առաջացում, շրջակա միջավայրի պահպանության զգացողության սերմանում, աշակերտների մեջ հետաքրքրասիրության, զարմանքի և բացահայտում-ուսումնասիրման ճանապարհով առաջացած գոհունակության զգացողության զարգացում, երեխայի վարքի հիմնական ձևի, խաղի աստիճանական վերածում ուսումնական գործընթաց-վարքի (կամ ուսումնական վարքի ձևավորում), ճանաչողական հմտությունների և կարողությունների զարգացում և, ընդհանուր առմամբ, կրթության հանդեպ դրական տրամադրվածության ձևավորում:

2. ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- **Ինտեգրում** – Դասագրքում սինթեզված ձևով են ներկայացված Ազգային ուսումնական պլանով նախատեսված չորս ուղղությունները (Գիտական հետազոտություն-որոնում, Կենդանի աշխարհ, Մարմիններ և երևույթներ, Երկրագունդը և արտաքին աշխարհը), ինչպես նաև քաղաքացիական դաստիարակությանն առնչվող որոշ թեմաներ:
- **Մատչելիություն** – Հաշվի են առնված 5-6 տարեկան երեխաների հոգեբանական առանձնահատկություններն ու անհրաժեշտությունները:
- **Համակարգվածություն և հաջորդականություն** – Յուրաքանչյուր թեմա, որը պետք է ուսուցանվի, կազմված է միասնական կառույցով և հաշվի առնելով հետադարձ կապերը:
- **Կողմնորոշում արդյունքներին** – Դասագիրքը պետք է նպաստի, որ աշակերտները մինչև տարեվերջ հասնեն չափորոշչով նախատեսված արդյունքներին:
- Գիտակցվածություն և ակտիվություն – Դասագրքի ձևավորումը և ուսուցման մեթոդիկան այնպես են մտածված, որ ապահովեն աշակերտի կողմից նյութի գիտակցված յուրացումը՝ տեղեկության ինքնուրույն մշակման, սեփական ուժերի հանդեպ վստահության և համադասարանցիների հետ համագործակցության ճանապարհով:
- **Ակներևություն և զգայական ընկալում** – Դասագիրքը կնպաստի աշակերտների կողմից գիտելիքի ձեռքբերմանն ու հմտությունների և կարողությունների զարգացմանը՝ մարդու բոլոր զգայությունների ակտիվ վարժմամբ ու կիրառմամբ:
- **Հուզական ընկալում** – Դասագիրքը կնպաստի ուսումնական գործընթացն ավելի հետաքրքիր ու հաճելի դարձնելուն, ինչը կապահովի երեխաների մեջ ուսման և առարկայի հանդեպ դրական տրամադրվածության ամրապնդում:
- **Դաստիարակչական** – Բնագիտության դասագիրքը մտավոր զարգացմանը զուգահեռ պետք է ծառայի նաև աշակերտների էկոլոգիական և գեղագիտական դաստիարակությանը, ինչպես նաև անվտանգությանն ու հիգիենային առնչվող ունակությունների զարգացմանը:
- **Դասագրքի ֆունկցիոնալությունը** – Այս սկզբունքը նկատի ունի ուսուցման ամբողջական համակարգում բնագիտության դասագրքի՝ որպես այս համակարգի տարրի ֆունկցիոնալ ծանրաբեռնվածություն այլ տարրերի (ուսումնական նյութեր, ուսուցման միջոցներ, այլ առարկայի դասագրքեր...) հարաբերակցությամբ:
- **Կանոնակարգող փաստաթղթերի հետ համաձայնեցվածությունը** – Դասագրքի թեմատիկան և ուսուցման մեթոդիկան հիմնվում են Հանրակրթության ազգային նպատակներով և Ազգային ուսումնական պլանով սահմանված առաջնահերթությունների ու պահանջների վրա:

3. ՄԱՆՐԱՄԱՍՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ԴԱՍԱԳՐՔԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԻ ՀԵՏ (ԱՇԱԿԵՐՏԻ ԳԻՐՔ, ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐ, ՈՒՍՈՒՑՉԻ ԳԻՐՔ), ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

I դասարանի բնագիտության դասագիրքը հավաքածու է, որը կազմված է 3՝ Աշակերտի գիրք, Աշակերտի տետր և Ուսուցչի գիրք միավորներից:

Աշակերտի գիրքը սպեցիֆիկ է. քանի որ սա առաջին դասարանի դասագիրք է, այստեղ ընդհանրապես չկա ընթերցանության տեքստ: II կիսամյակից որոշ դեպքերում թույլ է տրվում կիրառել համառոտ և պարզ հրահանգներ այն տառերի կիրառմամբ, որոնք արդեն սովորած կլինեն այդ պահի համար: Այնպես որ, Աշակերտի գիրքը հիմնականում պատկերազարդումների և վարժությունների հավաքածու է, որն աշակերտներին բազմազան աշխատանքներ է առաջարկում: Աշակերտի տետր բնագիտություն 1-ը աշխատանքային թերթերի հավաքածու է, որի մեջ աշակերտը նկարում է, գունազարդում, պատրաստում պարզ մոդելներ, խմբավորում է առարկաները և այլն:

I դասարանի Աշխատանքային տետրը կազմի մեջ հաջորդաբար ամրացված առանձին թերթերի հավաքածու է: Յուրաքանչյուր պարապմունքի համար աշակերտին անհրաժեշտ կլինի 1 կամ 2 այսպիսի թերթ: Թերթերը համարակալված են՝ ըստ թեմաների, այդպես դրանց կիրառումն ավելի հարմարավետ է առաջին դասարանցիների համար (ուսուցիչն ըստ իր կարիքների կարող է հեշտությամբ պոկել-հանել տալ ցանկացած թերթ): Հավելվածի տեսքով դասագրքին կցված են նաև գունավոր թերթեր:

Իսկ Ուսուցչի գրքում մանրամասնորեն ներկայացված են բոլոր դասերի սցենարները:

Բնագիտության առարկայական ծրագրով սահմանված են այն սպեցիֆիկ հմտություններն ու կարողությունները, որոնք անհրաժեշտ է զարգացնել այս առարկայի ուսուցման ժամանակ: I դասարանում պետք է նպաստել ուսումնական հետազոտական հմտությունների ու կարողությունների զարգացմանը տարրական մակարդակում, մասնավորապես, ճիշտ այս տարիքում հիմք կդրվի դիտարկման, հետազոտման, նկարագրման, հաշվառման, դասակարգման և հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

Առաջարկված պարապմունքներն ու ուսումնական գործունեությունները նախատեսում են I դասարանի չափորոշչի բոլոր չորս ուղղությունները. **Հետազոտություն-որոնում, Կենդանի աշխարհ, Մարմիններ և երևույթներ, Երկիրը և արտաքին աշխարհը:**

Դասագրքով նախատեսված ակտիվությունները (ուսումնական գործունեությունները) նպաստում են չափորոշչով նախատեսված բոլոր արդյունքներին հասնելուն:

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ

I դասարանի բնագիտության դասագրքով ուսուցանվում են թեմաներ, որոնք ընտրված են հատուկ հետազոտությունների հիման վրա՝ նախատեսելով առաջին դասարանցիների տարիքն ու հետաքրքրությունները: Թեմաները հաշվարկված են 32 ուսումնական շաբաթվա համար, ուսուցչի համար նախատեսված է մի քանի դաս՝ որպես պահուստային և կրկնության համար: Յուրաքանչյուր թեմա ներառում է երկու կամ ավել հարց: Աշակերտի գրքում ընդհանուր առմամբ 58 դաս է: Աշակերտի տետրը համապատասխանաբար թեմատիկ առումով հետևում է դասագրքին և օգնում աշակերտներին՝ թեմայի ավելի լավ ըմբռնման մեջ:

Ուսումնական թեմաների հաջորդականությունը հետևյալն է.

Թեմա. Ես և իմ մարմինը
1.Ես և բնությունը
2. Մարմնի մասերը
Թեմա. Իմ դպրոցը
3. Ճանապարհորդություն դպրոցում
4. Ճանապարհորդություն դպրոցից դուրս
5. Տանից մինչև դպրոց ճանապարհը
Թեմա. Տրանսպորտ և ճանապարհային նշաններ
6. Ճանապարհային երթևեկության կանոններ
7. Ճանապարհային նշաններ և տրանսպորտ
8. Ո՞ր տրանսպորտով ուղևորվենք
Թեմա. Մեր շուրջը
9. Բնական և արհեստական
10. Կենդանի և անկենդան
11. Մեր շուրջը
12. Բնության պահակետում
13. Բնակման միջավայր
14. Ինչն ինչի՞ց է պատրաստվում
15. Որտե՞ղ է ապրում ընտանիքը
16. Կահույք և անձնական իրեր
Թեմա. Աշուն
17. Աշուն
18. Աշնան գույներ
19. Խաղողաքաղ
20. Մենք միրգ ենք սիրում
Թեմա. Սնունդ
21. Միրգ է, թե՞ բանջարեղեն
22. Բանջարեղեն՝ օգտակար սնունդ
23. Սննդամթերք
24. Ըմպելիք
Թեմա. Ձմեռ
25. Ի՞նչ ենք հագնում
26. Ձմեռ
27. Ահա եկել է Նոր տարին
28. Վտանգավոր իրեր
Թեմա. Զգայության օրգաններ
29. Ինչպե՞ս ենք ճանաչում առարկաները
30. Հոտոտելիք և ճաշակելիք
31. Զգայության օրգաններ
Թեմա. Առողջության պահակետում
32. Բժիշկը և դեղերը
33. Ուզո՞ւմ եմ առողջ լինել
34. Մարզվենք բոլորս միասին
Թեմա. Գարուն
35. Գարնան գալուստը
36. Ցերեկ և գիշեր
37. Գարունը մեր բակում
Թեմա. Բույսեր
38. Բույսերի աշխարհ
39. Ի՞նչն է զարդարում դաշտը
40. Սենյակային բույսեր
41. Մեր անտառը
42. Անտառի բնակիչները
Թեմա. Կենդանական աշխարհ
43. Մեր չորքոտանի «բարեկամները»
44. Ընտանի թռչուններ
45. Մի մասը քայլում է, մյուսները՝ սողում
46. Ջրում ապրողները
47. Թռչունների ձայները
48. Փոքրիկ վեցոտնանի կենդանիներ
49. Կենդանաբանական այգում
Թեմա. Տիեզերք
50. Աստղադիտակ, մանրադիտակ
51. Երկնային մարմիններ
52. Ճանապարհորդություն դեպի տիեզերք
53. Ի՞նչ տեղի կունենա, եթե Արեգակը «հանգչի»
Թեմա. Ամառ
54. Ամառն էլ եկավ
55. Մեր գյուղը
56. Էքսկուրսիա դասարանի «անտառում»
57. Վարքի կանոնները բնության գրկում
58. Մեր հայրենիքը

5. Ի ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԻՉԸ	ՉԱՓՈՐՈՇՉԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ
1. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ-ՈՐՈՆՈՒՄ	
ԲՆ. ՏԱՐՐ.(Ի).1.	Աշակերտը պետք է կարողանա. Մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարբրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:
2. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ԿԵՆԴԱՆԻ ԱՇԽԱՐՀ	
ԲՆ. ՏԱՐՐ.(Ի).2.	Աշակերտը պետք է կարողանա. Նկարագրել օրգանիզմները (բույսեր և կենդանիներ) և բնութագրել դրանք՝ ըստ հիմնական հատկանիշների: Օրգանիզմները խմբավորել, խմբերը բնութագրել և համեմատել, դատողություն անել դրանց տիպիկ ներկայացուցիչների կառուցվածքի, կենսագործունեության և կենսական բոլորաշրջանի առանձնահատկությունների մասին, դատողություն անել օրգանիզմների կենսական պահանջմունքների և դրանց վրա միջավայրի գործոնների ներգործության մասին:
3. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ	
ԲՆ. ՏԱՐՐ.(Ի).3.	Աշակերտը պետք է կարողանա. Բնութագրել մարմինները և դրանց բաղադրիչ նյութերի հատկությունները, դատողություն անել ձայնի, լույսի և ջերմության աղբյուրների և դրանց տարածման մասին, դատողություն անել ագրեգատային վիճակի փոփոխության մեջ ջերմության փոխանցման դերի մասին, բնութագրել հիշտությամբ դիտարկվող շարժումները և ուժերը:
4. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ԵՐԿՐԱԳՈՒՆԴԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԸ	
ԲՆ. ՏԱՐՐ.(Ի).4.	Աշակերտը պետք է կարողանա. Կողմնորոշվել տեղի միջավայրում, նկարագրել ջրի և ցամաքի կարևոր օբյեկտները և դրանք ճանաչել տարբեր տեսակի պլանների և քարտեզի վրա, դատողություն անել բնական ռեսուրսների նշանակության մասին, նկարագրել բոլորաշրջանային բնական երևույթները և դատողություն անել դրանք հարուցող պատճառների մասին:

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ՏԱՐԵՎԵՐՋԻՆ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՍՏՈՒԳԻՉՆԵՐԸ

Ուղղություն.Գիտական հետազոտություն-որոնում

ԲՆԱԳԻՏ.Ի.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարբրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս:
- Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:
- Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:
- Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ:
- Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

- Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:
- Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):

Ուղղություն.Կենդանի աշխարհ

ԲՆԱԳԻՏ.I.2.Աշակերտը կարող է գիտակցել զգայության օրգանների նշանակությունը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Անվանում է մարդու զգայության օրգանները և դրանց գործառույթները (օր.՝ աչք – «տեսնում եմ», ականջ – «լսում եմ», լեզու – «զգում եմ համը», քիթ – «զգում եմ հոտը», մաշկ – «զգում եմ ջերմությունը և ցուրտը, ողորկ կամ անհարթ մակերևույթը»:
- Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Ձյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»):
- Դատողություն է անում զգայությունների և զգայության օրգանների դերի մասին մարդու (օր.՝ որոշել սննդամթերքի պիտանելիության ժամկետը, փողոցում անվտանգ տեղաշարժվել) և կենդանիների համար (օր.՝ ժամանակին հայտնաբերել վտանգը, սնունդ հայթայթել, ապաստան գտնել):
- Կիրառում է տարբեր պարզ սարքավորումներ (խոշորացույց, ֆոնենդոսկոպ)՝ զգայությունների հզորացման նպատակով և նկարագրում է մարմնի այն հատկությունները, որոնք այդ սարքավորման օգտագործման ժամանակ են դարձել ակներև:
- Անվանում է անձնական հիգիենայի պարագաներ (օր.՝ սանր, ատամի խոզանակ, սրբիչ): Դատողություն է անում հիգիենայի կանոնների պահպանման նշանակության մասին:

Բովանդակություն

Բնության բազմազանությունը հնարավոր է ընկալել զգայության օրգանների՝ աչքի, ականջի, քթի, լեզվի և մաշկի միջոցով: Ամենօրյա կյանքում զգայության օրգաններն օգնում են մարդուն ընկալել և որոշել մարմիններն՝ ըստ նրանց բնութագրիչների (օրինակ՝ գույն, հոտ, ֆակտուրա, ձև, ձայն): Զգայությունները մարդուն պաշտպանում են վտանգից (օրինակ՝ փողոցում տեղաշարժվելիս), հնարավորություն են տալիս ընկալել շրջակա միջավայրում տեղի ունեցած փոփոխությունները (օրինակ՝ եղանակի փոփոխությունը): Անհրաժեշտ է, որ մարդ խնամի զգայության օրգանները, պահպանի հիգիենայի տարրական նորմերը: Կենդանիների համար զգայության օրգանները հատկապես կարևոր են թշնամուց խուսափելու և սննդի հայթայթման համար:

Երաշխավորվող ակտիվություններ (ուսումնական գործունեություններ)

Ուսուցիչը.

- Աշակերտներին ցույց է տալիս կոնկրետ առարկա և խնդրում անվանել դրա հատկությունները, կապել անվանած հատկությունները համապատասխան զգայության օրգանների հետ:
- Աշակերտների մի խմբի խնդրում է մտքում մտածել որևէ մարմին և նկարագրել դրա հատկությունները, իսկ մյուս խմբին՝ գուշակել մտքում մտածված մարմինը:
- Աշակերտներին առաջադրանք է տալիս. փակ աչքերով որոշել ծանոթ առարկան, նկարագրել առարկայի հատկությունները և բացատրել, թե ինչպես կարողացան որոշել:
- Խնդրում է աշակերտներին որոշել առարկան այն ձայնով, որ արձակում է տվյալ առարկան (օրինակ՝ այդ առարկային թակելու արդյունքում):

- Աշակերտներին լսել է տալիս աուդիոնյութ (օրինակ՝ կենդանիների ձայներ, տարբեր բնական երևույթներին՝ անձրևին, ամպրոպ-որոտին, ծովի հուզումին ուղեկցող ձայներ) և խնդրում է որոշել, թե ինչն է արձակում այս ձայները:
- Իրական միջավայրում, տեսանյութի վրա կամ համակարգչային սիմուլյացիաների կիրառմամբ աշակերտներին ցույց է տալիս իրավիճակ փողոցում: Խնդրում է դատողություն անել զգայության օրգանների նշանակության մասին նախազգուշական նշանների ընկալման և դրանց արձագանքման համար:
- Աշակերտներին առաջարկում է զգայության տարբեր օրգանների միջոցով հետազոտել տեղի միջավայրը (օրինակ՝ դասասենյակ, դպրոցի բակ) և նկարագրել կոնկրետ մարմիններ:
- Առաջադրանք է տալիս. Փակի՛ր աչքերդ և ասա՝ ի՞նչ գույնի է գրիչը: Առանց բաժակին դիպչելու, ասա՝ նրանում սառը ջուր է լցված, թե՞ տաք: Ինչո՞ւ չես կարող ասել: Օգնում է աշակերտներին եզրակացություն անելու, որ մարմնի որոշակի հատկանիշը կարող է ընկալվել միայն որոշակի օրգանի կողմից:
- Աշակերտներին այնպիսի առաջադրանքներ է տալիս, որոնց վերլուծման հիման վրա նրանք կկարողանան եզրակացություն անել անձնական հիգիենայի պահպանման (օրինակ՝ ձեռքերը հաճախ լվալը, ատամները մաքրելը, համակարգչից օգտվելիս՝ հիգիենայի նորմերի պահպանումը) անհրաժեշտության մասին:

ԲՆԱԳԻՏ.Ի.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Նկարագրում է ինքն իրեն, համադասարանցիներին, այլ մարդկանց՝ ըստ աչքի ընկնող արտաքին նշանների (օրինակ՝ հասակ, աչքի գույն, պեպենոտություն):
- Նկարագրում է, իրար հետ համեմատում տարբեր կենդանիների՝ ըստ մարմնի մասերի (օրինակ՝ գլուխ, վերջույթներ, պոչ, ականջներ, կտուց, թևեր, կնճիթ):
- Որոշում է և անվանում ծանոթ բույսերի հիմնական մասերը (օրինակ՝ ցողուն, տերև, արմատ, ծաղիկ, պտուղ):
- Հատվածներից հավաքում է բույսերի, կենդանիների և մարդկանց մարմնի ամբողջական մոդել:
- Խմբավորում է կենդանի մարմիններն՝ ըստ բույսերի և կենդանիների, հիմնավորում է սեփական որոշումը:
- Դատողություն է անում մարդու համար կենդանիների և բույսերի նշանակության մասին (օրինակ՝ բույսերի որոշ մասեր օգտագործվում են՝ որպես սննդամթերք, որպես շինանյութ, շրջակա միջավայրը գեղեցկացնելու համար, կենդանիների և մարդկանց բարեկամություն, սննդամթերք, որ մեզ տալիս են կենդանիները):
- Հարց է ձևակերպում՝ տարբեր միջավայրերում ապրող բույսերը/կենդանիները համեմատելու համար:

Պատասխաններ է որոնում. դիտարկում է և համեմատում դասասենյակում, դպրոցի բակում, տեղի միջավայրում աճող տարբեր բույսերը (օրինակ՝ ըստ տերևների ձևի կամ չափի, ըստ ցողունների ձևի, հաստության կամ երկարության, ըստ ծաղիկների գույնի կամ չափի) կամ/և կենդանիներին (օրինակ՝ որդ, խխունջ, թիթեռ, մայիսյան բզեզ): Դիտարկման արդյունքները փոխանցում է տարբեր ձևով (բանավոր խոսքով, նկարով, կոլաժով, լուսանկարների միջոցով):

Բովանդակություն

Կենդանի մարմինները բաղկացած են տարբեր մասերից: Բույսերն ունեն արմատ, ցողուն, տերև, ծաղիկ, պտուղ և սերմ: Կենդանիների մեծ մասն ունի գլուխ, մարմին և վերջույթներ: Դրանցից որոշներն ունեն պոչ, կտուց, եղջյուր, բեղեր և այլն: Բույսերը և կենդանիներն իրարից

տարբերվում են տարբեր հատկանիշներով, օրինակ, մարմնի մասերով, տարածության մեջ տեղաշարժման կարողությամբ: Բույսերը այնպես, ինչպես կենդանիները, իրարից տարբերվում են մարմնի մասերի ձևով, չափով, գունավորմամբ և այլն: Մարդը բույսերն օգտագործում է իր օգտին. ուտելու համար, որպես շինանյութ, միջավայրի գեղեցկացման համար և այլն:

Երաշխավորվող ակտիվություններ

Ուսուցիչը.

- Խնդրում է աշակերտներին որոշել և անվանել մարդու, կենդանու, բույսի մարմնի մասերը, դատողություն անել դրանց նշանակության մասին:
- Աշակերտներին ցույց է տալիս ծանոթ կամ անծանոթ բույսերի/կենդանիների նկարազարդումներ/տեսանյութ: Խնդրում է դրանք համեմատել՝ ըստ արտաքին նշանների կամ/և մարմնի մասերի:
- Դասարանական ցուցահանդես է կազմակերպում բույսերի/կենդանիների բազմազանության թեմայով (օրինակ՝ աշակերտներին խնդրում է ներկայացնել այն կենդանիների նկարներ, հերբարիումներ, ապլիկացիաներ, լուսանկարներ, որոնք քայլում են/թռչում են/լողում են, բույսերի նկարներ, որոնք ունեն իրարից տարբեր ծաղիկներ): Խնդրում է եզրակացություն անել կենդանի մարմինների բազմազանության մասին:
- Աշակերտներին խնդրում է ընտրել որևէ բույս կամ կենդանի (օրինակ՝ իր ընտանի կենդանին), պատմել պատմություն նրա մասին և համադասարանցիների հետ կիսվել նրա հետ շփումների մասին իր փորձով, անել եզրակացություն մարդու համար կենդանիների և բույսերի նշանակության մասին:
- Աշակերտներին բաժանում է տարբեր բույսեր/դրանց մասեր, խնդրում է հետազոտել դրանք և համեմատել իրար հետ՝ ըստ մատնանշված չափանիշների (տերևները՝ ըստ ձևի, ցողունները՝ ըստ հաստության, բարձրության և ամրության, ծաղիկը և պտուղը՝ ըստ գույնի, ձևի, չափի և այլն):
- Կենդանիների հետ անվտանգ շփվելու կանոնների մասին խոսելու նպատակով, հյուր է հրավիրում (անասնաբույժ, կինոլոգ, կենդանիներ վարժող):

Ուղղություն. Մարմիններ և երևույթներ

ԲՆԱԳԻՏ.Ի.4.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել մարմիններն՝ ըստ բաղադրիչ նյութերի հատկանիշների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Նկարագրում է իր շուրջն առկա մարմինները և խոսում դրանց բաղադրիչ նյութերի մասին (օրինակ՝ մկրատ - երկաթ, տետր - թուղթ, գրենական պարագա ռետին - ռետին):
- Որոշում է և անվանում առօրյա կյանքում տարածված նյութերը:
- Նյութերը նկարագրում է՝ ըստ հեշտ դիտարկելի հատկանիշների (օրինակ՝ թափանցիկություն, առաձգականություն, ջրի մակերևույթին լողալու ունակություն, անջրանցիկություն):
- Խմբավորում է միանման նյութերից պատրաստված մարմինները:

Բովանդակություն

Մեր շուրջը գտնվող մարմինները բաղկացած են տարբեր նյութերից (օրինակ՝ թուղթ, մետաղ, ռետին, պլաստմասսա, ապակի): Տարբեր մարմիններ կարող են պատրաստված լինել նույն նյութից, իսկ միևնույն նշանակման մարմինը (օրինակ՝գդալը) տարբեր նյութերից: Նյութերն իրարից տարբերվում են որոշակի հատկանիշներով. թափանցիկություն, առաձգականություն,

փխրունություն և այլն: Մարմնի հատկությունները կախված են ոչ միայն նրա ձևից և չափից, այլ նաև նրա բաղադրիչ նյութերի հատկություններից:

Երաշխավորվող ակտիվություններ.

Ուսուցիչը.

- Աշակերտներին ցույց է տալիս երկու տարբեր մարմիններ և խնդրում է համեմատել դրանք: Օգնում է աշակերտներին կիրառել մարմնի հատկությունների հետ կապված բառեր (օրինակ՝ մեծ, կարմիր, ծանր, փայլուն):
- Աշակերտներին բաժանում է տարբեր նյութերից (օրինակ՝ թուղթ, մետաղ, ռետին, պլաստմասսա, ապակի) պատրաստած մարմիններ և խնդրում է հետազոտել դրանց հատկությունները (օրինակ՝ թափանցիկություն, առաձգականություն, սուզվո՞ւմ է արդյոք ջրի մեջ, ջրաթափա՞նց է արդյոք):
- Աշակերտներին բաժանում է տարբեր նյութերից պատրաստված մարմինների հավաքածու և խնդրում է խմբավորել միանման նյութերից պատրաստված մարմինները:
- Աշակերտների խմբերին բաժանում է միանման մարմիններ (օրինակ՝ գդալներ, գնդիկներ) և խնդրում է նրանց պլաստիլինից պատրաստել նույն մարմինների մոդելներ: Ուսումնական գործունեության վերջում աշակերտները համեմատում են իրենց պատրաստած մոդելը և բնօրինակը, ուսուցչի օգնությամբ հայտնաբերած տարբերությունները կապում են համապատասխան նյութի հատկությունների հետ:

Ուղղություն. Երկրագունդը և արտաքին աշխարհը

ԲՆԱԳԻՏ.I.5.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և կողմնորոշվի նրանում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Որոշում է և թվարկում ուսումնական միջավայրում (օր.՝ դասասենյակ, դպրոցի միջանցք, դպրոցի բակ, մարզադահլիճ, զուգարան, ճաշարան, բժշկի կաբինետ, վայր, որտեղ պետք է սպասի ավագներին) առկա օբյեկտները և խոսում դրանց նշանակման մասին:
- Կիրառում է համապատասխան տարածական հարաբերություն արտահայտող տերմիններ (օրինակ՝ հեռու, մոտ, ինձանից աջ, վերև, ներքև) և որոշում դպրոցի տարածքում առկա օբյեկտների դիրքն իր նկատմամբ:
- Կատարում և դպրոցի տարածքում կողմնորոշվելու համար, ինքն էլ տալիս է ոչ ավելի, քան 1-2 ուղղության (օրինակ՝ առաջ և աջ) պարզ հրահանգներ:
- Դիտարկման հիման վրա ստեղծում է դպրոցի նկար, խոսում այն մանրամասների մասին, որոնք իր առանձնահատուկ ուշադրությունն են հարուցել:
- Ուսուցչի օգնությամբ համադասարանցիների հետ ձևակերպում է և պահպանում տեղի միջավայրում (օրինակ՝ դասարանում, դպրոցում, բակում, փողոցում, տանը) վարքի կանոնները (օրինակ ՝ պահպանում է դպրոցի մաքրությունը):
- Որոշում է և բացատրում փողոցում տեղաշարժվելու կանոններն արտացոլող պայմանական նշանները, բացատրում է դրանց պահպանման անհրաժեշտությունը, խոսում անվտանգ տեղաշարժման կանոնների պահպանման անհրաժեշտության մասին:

Բովանդակություն

Դպրոցում առկա յուրաքանչյուր օբյեկտ (օրինակ՝ դասասենյակ, մարզադահլիճ, զուգարան, բուֆետ, գրադարան, անվտանգության սանդուղք կամ/և ելք) տարբեր նշանակում և տեղակայման վայր ունի: Կողմնորոշման համար անհրաժեշտ է իմանալ տարածական հարաբերություն

արտահայտող տերմիններ (օրինակ՝ հեռու - մոտ, աջ - ձախ, վերև - ներքև) և ճիշտ կիրառել դրանք: Դպրոցական միջավայրում անհրաժեշտ է որոշակի կանոններ պահպանել (օրինակ՝ մաքրություն պահպանել, ձեռնպահ մնալ աղմկելուց): Փողոցում հետիոտների և մեքենաների անվտանգ տեղաշարժումն ապահովելու համար ստեղծվել են պայմանական նշաններ:

Երաշխավորվող ակտիվություններ

Ուսուցիչը.

- Ուսումնառության առաջին իսկ օրերին, դպրոցին ծանոթացնելու նպատակով, աշակերտներին ուղեկցում է՝ դպրոցը և նրա հարակից տարածքը դիտելու:
- Աշակերտներին խնդրում է անվանել առարկաները, որ տեսնում են դասասենյակում և խոսել այդ առարկաների նշանակման մասին, դրանք համեմատել տանը եղած առարկաների հետ, հայտնաբերել նմանություն տան և դպրոցի միջև: Ուսուցիչը պետք է փորձի, որ դպրոցի միջավայրն աշակերտների համար դառնա հետաքրքիր և հարազատ:
- Աշակերտներին առաջարկում է խաղեր, որոնք պահանջում են տեղաշարժում տարածության մեջ՝ ըստ տարածական հարաբերություն արտահայտող տերմինների (օրինակ ՝ թաքնված առարկան գտնելու համար, արա՛ երկու քայլ առաջ, երեք քայլ ձախ):
- Աշակերտներին տալիս է կոնկրետ հրահանգներ, որոնք ներառում են տարածական հարաբերություն արտահայտող տերմիններ (օրինակ՝ գրքի աջ կողմում դի՛ր մատիտը):
- Աշակերտներին խնդրում է թերթի վրա կամ համակարգչում կատարել տարածական հարաբերություն ներառող առաջադրանքներ (օրինակ՝ սեղանի տակ գնդակ նկարի՛ր):
- Առաջարկում է առաջադրանքներ, որոնց կատարման ժամանակ աշակերտն ինքը պետք է տա տարածական հարաբերություն ներառող պարզ հրահանգ (օրինակ՝ Գիորգիին բացատրի՛ր՝ ինչպես գտնի բժշկի սենյակը: Նկարագրի՛ր՝ ինչպես գնանք նախասրահից դասասենյակ կամ դպրոցի բակ): Ցանկալի է, որ մատնանշող նշանները ճանապարհային սիմուլյացիոն խաղերի համար պատրաստեն իրենք՝ աշակերտները:

ԲՆԱԳԻՏ.Ի.6.Աշակերտը կարող է բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Անվանում է դիտարկվող փոփոխությունները ցերեկվա ու գիշերվա ընթացքում:
- Տարբերում է ցերեկվա ու գիշերվա հատվածները՝ առավոտ, կեսօր, երեկո, գիշեր, և դրանք կապում է իր ակտիվության/գործունեության հետ:
- Անվանում է և իրար հետ համեմատում տարվա եղանակները, դատողություն է անում դրանց տարբերակիչ հատկանիշների մասին: Խոսում է դրանցից յուրաքանչյուրին բնորոշ եղանակի մասին:
- Թվարկում է շաբաթվա օրերը, տարբերում է շաբաթվա օրերը՝ ըստ դրանց բնորոշ հատկանիշների (օրինակ՝ ուսումնական օր - ոչ աշխատանքային/հանգստի օր):
- Թվարկում է մարդու գործունեության (օրինակ՝բույսեր տնկել, խաղողաքաղ, բերքահավաք), կենդանիների վարքի (օրինակ՝ թռչունների չու, ձմեռային քուն) և բույսերին բնորոշ փոփոխությունների (օրինակ՝ ծաղկունք, տերևաթափ) օրինակներ՝ ըստ տարվա եղանակների:
- Հագուստը տեսակավորում է՝ ըստ տարվա եղանակների:

Բովանդակություն

Ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հերթագայությունը ռիթմիկ երևույթներ են: Ըստ ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների՝ տարբեր են եղանակը, բույսերի ու կենդանիների ապրելակերպը և մարդու գործունեությունը:

Երաշխավորվող ակտիվություններ.

Ուսուցիչը.

- Աշակերտներին խնդրում է նկարագրել ցերեկը և գիշերը՝ ըստ տարբերակիչ նշանների, և նկարել գիշերվա և ցերեկվա նկար:
- Աշակերտներին խնդրում է սեփական դիտարկման հիման վրա բնութագրել կենդանիների վարքը ցերեկվա ու գիշերվա ընթացքում (ընտանի կենդանու, օրինակ՝ թութակի, շան, կատվի վարքի դիտարկման արդյունքների կամ տեսաֆիլմի հիման վրա) և կարծիք արտահայտել, թե ինչու է իրենց դիտարկման օբյեկտը վարվում այս կամ այն կերպ:
- Աշակերտներին ցույց է տալիս տարվա եղանակներ արտացոլող նկարներ, խնդրում է որոշել և դատողություն անել դրանց տարբերակիչ հատկանիշների մասին, անվանել իրենց սիրելի տարվա եղանակը:
- Աշակերտին առաջարկում է տուփի մեջ լցված գունավոր թերթերից հանել մի որևէ թերթ և այն կապել տարվա եղանակի հետ: Բացատրել, թե ինչու է այս գույնը կապել անվանած եղանակի հետ:
- Աշակերտներին խաղ է առաջարկում. Աշակերտը քարտի վրա գրված տարվա եղանակն անձայն, դիմախաղով և ժեստերով է արտահայտում, իսկ համադասարանցիները պետք է գուշակեն, թե տարվա որ եղանակն է գրված քարտի վրա:
- Մի քանի աշակերտի խնդրում է համադասարանցիներին պատմել իրենց ծննդյան օրվա մասին: Ուսուցիչը հարցերով ուղղորդում է զրույցը. ավելի հաճախ ինչպիսի՞ եղանակ է լինում քո ծննդյան օրը: Ի՞նչ եք հագնում դուք և ձեր ընկերները: Եղե՞լ է արդյոք ձյուն/անձրև: Ծառերը ծաղկած են, թե՞ ոչ ... Այս հարցերին պատասխաններ ստանալուց հետո դասարանը պետք է գուշակի, թե տարվա որ եղանակին է նրա ծննդյան օրը:

6. ԴԱՍԱԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻՆ

Դասերի և թեմաների անվանումը	Ուսումնական ժամանակի սահմանումը	ՇԱՓՈՐՄՇԻՐ ՈՒՆԸՆԹԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ				
		ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ-ՈՐՈՆՈՒՄ	ԿԵՆԴԱՆԻ ԱՇԽԱՐՀ	ՄԱՐՄՆԻՆԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹԵՐ	ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
		1. Ընտրվելիք դասագրքերը թույլ կտան ապահովել զարգացող միջավայրի ստեղծումը, ինչպես նաև ապահովել ուսանողների գործունեությունը:	2. Ընտրվելիք դասագրքերը կնպաստեն ինքնուրույն աշխատանքի:	3. Ընտրվելիք դասագրքերը կնպաստեն միջառարկայական կապերի:	4. Ընտրվելիք դասագրքերը կնպաստեն հարցադրումների, վերլուծությունների, եզրակացությունների:	5. Ընտրվելիք դասագրքերը կնպաստեն հիշողության զարգացմանը:	6. Ընտրվելիք դասագրքերը կնպաստեն միտքը գրավոր արտահայտելուն:
1. Էս և բնությունը							
2. Մարմնի մասերը							
3. Հանապարհորդություն դեպքերում							
4. Հանապարհորդություն դեպքերից դուրս							
5. Տանից մինչև դպրոց ճամանարհ							
6. Հանապարհային երթևեկության կանոններ							
7. Հանապարհային նշաններ և սրամտարոս							
8. Ո՞ր սրամտարոսով ուղևորվենք							
9. Բնական և արհեստական							
10. Կենդանի և անկենդան							
11. Մեր շուրջը							
12. Բնության պահակետում							
13. Բնակման միջավայր							
14. Ինչն ինչի՞ց է պատրաստվում							

		1	2	3	4	5	6
15. Որտե՞ղ է ապրում ընտանիքը							
16. Կահույք և անձնական իրեր							
17. Աշուն							
18. Աշնան գույներ							
19. Խաղողաքաղ							
20. Մենք միրգ ենք սիրում							
21. Միրգ է, թե՞ բանջարեղեն							
22. Բանջարեղեն՝ օգտակար սնունդ							
23. Մանդամթերք							
24. Ըմպելիք							
25. Ի՞նչ ենք հագնում							
26. Ձմեռ							
27. Ահա եկել է Նոր տարին							
28. Վտանգավոր իրեր							
29. Ինչպե՞ս ենք ճանաչում առարկաները							
30. Հոտոտելիք և համ							
31. Զգայության օրգաններ							
32. Բժիշկը և դեղերը							
33. Ուզո՞ւմ եմ առողջ լինել							
34. Մարզվենք բոլորս միասին							
35. Գարնան գալուստը							
36. Ցերեկ և գիշեր							

		1	2	3	4	5	6
37. Գարունը մեր բակում							
38. Բույսերի աշխարհ							
39. Ի՞նչն է զարդարում դաշտը							
40. Սենյակային բույսեր							
41. Մեր անտառը							
42. Անտառի բնակիչները							
43. Մեր չորքոտանի «բարեկամները»							
44. Ընտանի թռչուններ							
45. Մի մասը քայլում է, մյուսները՝ սողում							
46. Ջրում ապրողները							
47. Թռչունների ձայները							
48. Փոքրիկ վեցոտնանի կենդանիներ							
49. Կենդանաբանական այգում							
50. Աստղադիտակ, մանրադիտակ							
51. Երկնային մարմիններ							
52. Ճանապարհորդություն դեպի տիեզերք							
53. Ի՞նչ տեղի կունենա, եթե Արեգակը «հանգչի»							
54. Ամառն էլ եկավ							
55. Մեր գյուղը							
56. Էքսկուրսիա դասարանի «անտառում»							
57. Բնության մեջ վարքի կանոններ							
58. Մեր հայրենիքը							

7. ● ԴԱՍԱԳՐՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Նախքան ուսումնական գործընթացի մեկնարկն, ուսուցիչն ամբողջությամբ պետք է ծանոթանա Ուսուցչի գրքում տրված բնագիտության ուսուցման հայեցակարգին ու յուրահատկություններին:

Առաջին դասարանցիների մեծ մասը դեռ կարդալ չգիտի կամ էլ շատ է դժվարանում կարդալ, այդ իսկ պատճառով, բնականաբար, դասագրքում ընթերցելու ոչ մի տեքստ չկա: Նրանց համար առաջադրանքներն այնպես են կազմված, որ նրանք հիմնականում փորձ ձեռք բերելով են սովորում կամ, այլ կերպ ասած, սովորում են անմիջական ուսումնասիրմամբ, փորձելով, հպումով, նկարելով և գունազարդելով, նյութը ձեռքով մշակելով, ճանաչողական գործողություններին և դիդակտիկ խաղերին ակտիվ մասնակցելով, քննարկումներով, դատողություններով և իրենց համար նոր գիտելիքի «հայտնաբերումով»:

Քանի որ Աշակերտի դասագիրքն առանց տեքստի է, Ուսուցչի գրքում յուրաքանչյուր պարապմունք մանրամասնորեն նկարագրված է: Ուսուցիչը ծանոթանում է շաբաթվա թեմային, ապա՝ պարապմունքի թեմայի վերնագրին, նպատակներին, անհրաժեշտ նյութին, երեխաների համար հավանական օտար բառերին և դասի ընթացքին: Վերջում տրված լրացուցիչ (այլընտրանքային) ակտիվությունն ուսուցիչը կարող է ըստ իր հայեցողության կիրառել (կամ ընդհանրապես չկիրառել):

Ուսուցչի գրքում դասերի համարակալումն ու նկարագրությունը համապատասխանում են Աշակերտի դասագրքում տրված հարցերի (թեմաների) հաջորդականությանը, ինչն ուսուցչի համար հեշտացնում է դասերի պլանավորումը: Դասի ընթացքի (ակտիվությունների) նկարագրության մեջ առանձացված 3-6 հիմնական ակտիվությունները վերնագրված են և նշված ժամանակացույցով: Նշված բոպեները կողմնորոշման համար են, այլ ոչ թե՝ պարտադիր: Դասի ժամանակը տնտեսելու դեպքում, ուսուցիչը կարող է կիրառել նաև առաջարկվող ուսումնական գործունեությունները (այսուհետ՝ ակտիվություններ): Բոլոր դեպքերում ցանկալի է, որ ուսուցիչը չշտապի և աշակերտներին հանգիստ աշխատելու հնարավորություն տա:

Դասարանում աշակերտների քանակի ու նրանց հնարավորությունների նախատեսմամբ՝ ուսուցիչը կարող է առաջարկված հիմնական ակտիվություններից ընտրել այն ակտիվությունները, որոնք, ըստ նրա, լավագույն արդյունքին կարող են հասցնել: Աշակերտներին տնային հանձնարարություններ չեն տրվում: Ուսուցիչը պարապմունքն այնպես պետք է պլանավորի, որ ուսանում-ուսուցման գործընթացը տեղավորվի դասաժամի մեջ: Բոլոր դասերը պետք է ավարտվեն կարճ եզրակացություններով և ամփոփումով, պետք է կատարվի այսպես կոչված ռեֆլեքսիա (կշռադատում): Ամփոփելիս, ցանկալի է, որ ընդգծվեն կապերը նախորդ և հաջորդ դասերի հետ:

Աշակերտի տետրում կատարված աշխատանքների մի մասը ցանկալի է փակցնել պատերին կամ ամրացնել պատի երկայնքով կապած թելի վրա: Թող այդպես մնա ամբողջ տարվա ընթացքում: Երեխաներին դուր է գալիս ցուցադրել իրենց աշխատանքները, անհրաժեշտության դեպքում դրանց կիրառումն է՛լ ավելի հեշտ կլինի:

Այսպիսով, Ուսուցչի գրքով ուսուցիչներին առաջարկում ենք բնագիտության մեր դասագրքով (Բնություն 1) դասավանդման մեթոդիկան, սակայն դրանով չենք սահմանափակում ուսուցիչներին: Ըստ իրենց որակավորման և պայմանների, նրանք կարող են ինքնուրույն լրացուցիչ ընտրել ուսուցման այն եղանակներն ու ակտիվությունները, որոնք այս դեպքում ավելի արդյունավետ են համարում և, ըստ նրանց, ավելի լավ կնպաստեն յուրաքանչյուր պարապմունքի նպատակի իրականացմանն ու չափոփորշչով նախատեսված արդյունքներին հասնելուն:

8. ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչներից մեկն աշակերտների այսպես կոչված կենսական հմտությունների ու կարողությունների զարգացումն է: Փորձել ենք դասագրքի բովանդակությունն ու կառուցվածքն այնպես կազմել, որ աշակերտներին օգնենք քննադատական մտածողության կարողության և բնագիտություն առարկային հատուկ հմտությունների ու կարողությունների զարգացման հարցում: Որպեսզի ուսուցիչների համար պարզ լինի, թե ինչ նկատի ունենք այս հմտությունների ու կարողությունների զարգացման մասին խոսելիս, դրանցից յուրաքանչյուրը հակիրճ կբնութագրենք:

Քննադատական մտածողության հմտություններ ու կարողություններ

Քննադատական մտածողության կարողություն ասելով հասկանում ենք պատճառա-հետևանքային հասկացություններով մտածողություն, որը միտված է որոշում կայացնելուն՝ ինչին հավատա կամ ինչ միջոց ձեռնարկի մարդը:

«Քննադատական մտածողությունը ներառում է գիտակցման բարդ գործընթաց, որն սկսվում է տեղեկության ընկալմամբ և ավարտվում որոշման կայացմամբ: Քննադատական մտածողությունը նկատի ունի հասկացությունների գիտակցում և դրանց աներևույթ իմաստի հետազոտում, դրանց հանդեպ հոռետեսական վերաբերմունք՝ քաղաքավարության շրջանակներում, դրանց համադրում տարբերվող տեսակետի հետ, դրանց ճշգրտությունը փաստելու համար համոզիչ և վստահելի համակարգերի ներկայացում և այս ամենի հիման վրա՝ որոշակի տեսակետի մշակում... Քննադատական մտածողությունը բարդ գործընթաց է: Հաճախ մտածում են, որ այս գործընթացին պետք է մասնակցեն միայն բարձր դասարանների աշակերտները: Սակայն դա ամենևին էլ այդպես չէ: Փոքրերն էլ, իրենց զարգացածության մակարդակին համապատասխան, հոյակապ կարող են ներգրավվել այս բարդ գործընթացին: Նրանք հաճույքով են մասնակցում բարդ խնդիրների լուծմանը և կարևոր որոշումներ են կայացնում» (Ջ. Սթիլ, Ք. Մերեդիթ, Չ. Թեմփլ, «Տեղեկությունների ուրվանկար քննադատական մտածողության համար», Դասագիրք I):

Դասագրքում տրված վարժություններն ու հանձնարարությունները աշակերտների առջև հիմնախնդիրներ են դնում, առաջարկում են դրանց մասին դատողություն ծավալել, որոնել որոշման կայացման ուղիներ: Ուսուցիչն աշակերտներին պետք է խրախուսի, որ նրանք քննադատաբար և ստեղծագործաբար մտածեն, փորձարկեն ստացած տեղեկատվական գիտելիքը, վերլուծեն փաստերը և կշռադատեն իրենց սեփական պատկերացումներն ու կռահումները:

Քննադատական մտածողության հմտություն-կարողություններին հատկանշական են ըմբռնումը, կիրառումը, վերլուծությունը, համադրությունը և գնահատումը:

Բնագիտությանը բնորոշ յուրահատուկ հմտություններ ու կարողություններ

Այս հմտությունների ու կարողությունների զարգացումը նպաստում է գիտական հետազոտության հիմքերի ստեղծմանը և գիտելիքի՝ գիտակցված տիրապետմանը, ինչպես նաև՝ աշակերտների առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանն ու ստացված գիտելիքի՝ նոր իրավիճակներում կիրառմանը:

Դիտարկում

Դիտարկման կարողությունը բնագիտության տիրապետմանն անհրաժեշտ հիմնարար կարողություն է, որի հիմքում ընկած են բոլոր մնացած յուրահատուկ հմտություններն ու կարողությունները: Մարդը հենց դիտարկման շնորհիվ է հավաքագրում շրջապատում գոյություն ունեցող իրերի ու երևույթների մասին հիմնական տեղեկությունները: Դիտարկումն իր մեջ ներառում է ուշադրությունը, մտածողությունը, ունկնդրումը, շոշափումը, համեմատությունը, գործունեությունը, ինչպես նաև հնարավորություն, որ մարդը նկարագրի, թե ինչ է դիտարկում (ուսումնասիրում):

Դասդասում

Դասդասման ունակությունը ևս կարևորագույն ունակություններից է, և հենց տարրական դասարաններից է նպատակահարմար նրա զարգացումը: Աշակերտներն իրերն ու երևույթները խմբավորում

են՝ ըստ հիմնական բնութագրիչների. սկզբում՝ ըստ որևէ մեկ հեշտ դիտարկելի նշանի, ապա՝ ըստ մի քանի էական նշանի:

Հաղորդակցում

Առանց այս ունակության անհնար է դիտարկման կամ գործունեության (փորձի) արդյունքներով կիսվել ուրիշների հետ: Այդ պատճառով այն հավասարապես կարևոր է ինչպես հետազոտման ժամանակ, այնպես էլ ամենօրյա կյանքում: Հաղորդակցման ժամանակ աշակերտը նկարագրում է, պարզաբանում, ցույց տալիս, գրում է, բանավոր փոխանցում, հասկանալի խոսում:

Չափում

Առանց չափման ունակության անհնար է հետազոտում-որոնումը: Չափման ժամանակ աշակերտը հավաքագրում է համեմատական և քանակական բնութագրիչները: Տարրական դասարաններում աշակերտներին անհրաժեշտ է երկարության, կշռի, ջերմաստիճանի և ժամանակի չափման միավորների իմացություն և դրանց կիրառում:

Համեմատում-հակադրում

Համեմատման և հակադրման ունակությունը առարկաների և երևույթների միջև նման և տարբերվող բնութագրիչների հայտնաբերումն ու սահմանումն է: Այս ունակության զարգացումը նպաստում է գիտելիքի համակարգմանն ու վերլուծական մտածողությանը:

Եզրահանգում

Եզրահանգում անելու ունակությունը հիմնված է արդեն քննարկված ունակությունների զարգացման վրա: Եզրահանգումը կատարվում է ձեռք բերված տվյալների, ուսումնասիրության կամ փորձի արդյունքների վերլուծումից և տեղեկությունների համադրումից հետո:

Կանխատեսում

Կանխատեսման համար աշակերտը կիրառում է իր կողմից արդեն ուսումնասիրված և մշակած տեղեկությունը, որպեսզի ենթադրի, թե ինչ կարող է ապագայում այս ուղղությամբ տեղի ունենալ, կամ էլ ձեռք բերած գիտելիքի և փորձի հիման վրա աշակերտը պետք է կանխատեսի սպասվող հետևանքները:

ԴԱՍ 1

Թեմա.	Ես և իմ մարմինը
Դասի վերնագիրը.	Ես և բնությունը
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան ըստ նկարագրդման որոշել, նկարագրել և տեսակավորել մարմինները և երևույթները: Անձնական կարծիքների և դիտարկման արդյունքում պատասխանել հարցերին, ենթադրություն արտահայտել, աղյուսակի միջոցով հաշվառել-կազմակերպել տվյալները, հարցերին պատասխանելու համար հավաքագրել անհաժեշտ տվյալներ/նշումներ անել, խոսել տարվա ժամանակի (ամառվա) և դրան բնորոշ եղանակի մասին, անձնական կարծիքների վրա հիմնվելով՝ պատասխանել հարցերին, կիրառել հաղորդակցման տարբեր ձևեր:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով): Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):
Անհրաժեշտ նյութ.	թերթեր, գունավոր մատիտներ, կավիճ:

1. ԽՈՍԵԼ ԱՌԱՐԿԱՅԻ ԷՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ (2-3 րոպե)

Բնագիտության առաջին դասը ուսուցիչը սկսում է զրույցով: Նա ցույց է տալիս դասագիրքը և ուշադրությունը կենտրոնացնում նրա կազմի վրա: Խոսում է դասագրքի անվանման և նշանակման մասին, թե ինչպես է ընթանալու այս առարկայի ուսանումը (դասեր բաց երկնքի տակ, փորձերի անցկացում, բնական երևույթների դիտարկում, զրույցներ և այլն):

2. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԱԳՐՔԻՆ (4-5 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել դասագիրքը և ուսումնասիրել այն: Ցանկալի է զրույց ծավալել դիտելու արդյունքում ստացած տպավորությունների, նրանց համար հետաքրքիր թեմաների մասին: Ավել ներգրավվածության և հաղորդակցման նպատակով կարելի է ծավալել նաև հարց-պատասխան, որպեսզի ուսուցչի մոտ պատկերացում ստեղծվի աշակերտների նախապես ունեցած գիտելիքի, հետաքրքրությունների, շրջակա միջավայրի նկատմամբ վերաբերմունքների և այլնի մասին:

3. ՍԽԵՄԱՅԻ ԿԱԶՄՈՒՄ (8-15 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին մտաբերել, թե որտեղ և ինչպես են անցկացրել ամառը:

Այս ակտիվությունն ուսուցիչը կարող է վարել՝ ըստ ցանկության. ցանկացողները 2-3 նախադասությամբ պատմում են ամառվա տպավորությունների մասին կամ նկարում ամառվա մեկ օր:

Զուգահեռաբար ուսուցիչը գրատախտակը բաժանում է 2 մասի, և, քանի որ աշակերտները դեռ հարցը չգիտեն, ձախ կողմում խորհրդանշորեն նկարում է ծով, իսկ աջ կողմում՝ լեռ: Այնուհետև յուրաքանչյուր աշակերտի խնդրում է դուրս գալ գրատախտակի մոտ և գրել «+» այն կողմում, որտեղ անցկացրել է ամառը: Ցանկալի է իրենց կողմից կատարված նկարներն էլ փակցնել: Ի վերջո սխեմայի վրա կխմբավորվեն բոլոր աշակերտների տեղեկությունները:



Խմբավորումից հետո հարց-պատասխան է կազմակերպվում: Աշակերտները նկարագրում են այն միջավայրը, որ սյունակում հայտնվել են: Իհարկե, եղանակի, ջերմաստիճանի, շրջակա միջավայրի, բնության և այլնի մասին համապատասխան հարցերով նրանց օգնում է ուսուցիչը:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔԻ ՎՐԱ (5-8 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել դասագրքի առաջին էջը, ուշադիր դիտել նկարները և նկարագրել (ծով, անտառ, արշավորդների...):

Իսկ վերջում ուսուցիչը հարց է տալիս.

– Ըստ ձեզ, ի՞նչն է միավորում նրանց:

–Ինչպե՞ս կանվանեիր լեռը, անտառը, գետը, դաշտը միասին:

Աշակերտները կարող են արտահայտել բազմաթիվ կարծիքներ, ուսուցիչը հարցերով օգնում է նրանց արտահայտել իրենց կարծիքները:

5. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (3-5 րոպե)

Ուսուցիչը մեկ անգամ ևս ամփոփում է աշակերտների զրույցը և հարց տալիս.

– Ինչ եք կարծում, ի՞նչ է ուսումնասիրում բնագիտությունը:

(Ենթադրաբար՝ բնությունը, շրջակա միջավայրը...)

Ուսուցիչն ուշադիր լսում է բոլորին և ուշադրությունը կենտրոնացնում է ճիշտ պատասխանների վրա (կրկնում է աշակերտի ասածը, դրվատում է նրան և այլն):

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=HKndoaBDN0w

ԴԱՍ 2

Թեմա.	Ես և իմ մարմինը
Դասի վերնագիրը.	Մարմնի մասերը
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան մարդու (սեփական) մարմնի արտաքին մասերը ճանաչել և անվանել: Վարժվել աջն ու ձախը տարբերելուն: Աշակերտների մեջ դիտարկման, համադրման և սոցիալական կարողությունների զարգացմանն օժանդակել: Աշակերտները կարողանան դիտարկել ուսումնասիրման օբյեկտը: Մասնակցել գործնական ակտիվության: Նկարագրդման վրա և իրականության մեջ ճանաչել, նկարագրել, տեսակավորել մարմինները: Հարցին պատասխանելու համար հիմնվել սեփական կարծիքի և դիտարկման արդյունքների վրա: Ըստ արտաքին հատկությունների՝ նկարագրել իրեն և համադասարանցիներին: Մասերից հավաքել մարդու մարմնի մոդել:
Նոր բառեր.	Հոնք, ուս, ճակատ, աչքի թարթիչներ...
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Դիտարկում է ուսումնասիրման օբյեկտը՝ զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների կիրառմամբ: Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով): Նկարագրում է ինքն իրեն, համադասարանցիներին, այլ մարդկանց՝ ըստ աչքի ընկնող արտաքին նշանների (օրինակ՝ հասակ, աչքի գույն, պեպենոտություն): Հատվածներից հավաքում է բույսերի, կենդանիների և մարդկանց ամբողջական մարմնի մոդել:
Անհրաժեշտ նյութ՝	մկրատ, սոսինձ, կարմիր և կանաչ գույնի երկու ժապավեն (կամ ուրիշ փոքր առարկա):

Դասի ընթացքը.

1. ԽԱՂ՝ «ՆՄԱՆ ԵՎ ՏԱՐԲԵՐ» (8-10 րոպե)

Ուսուցիչը խնդրում է երեխաներին դուրս գալ նշված տեղը և ըստ հնարավորության, շարք կազմել՝ ըստ հասակի (բարձրից ցածր): Նրանցից յուրաքանչյուրն ինքը պետք է գտնի իր տեղն ու կանգնի: Եթե ուսուցիչը հարկ համարի, կարող է աշակերտներին կանգնեցնել՝ ըստ աչքերի գույնի, մազերի

գույնի կամ ըստ այլ նշանների: Ակտիվությունն ավարտելիս ուսուցիչն աշակերտներին խնդրում է վերադառնալ իրենց տեղերը, իսկ գրատախտակի մոտ թողնում է երկու աշակերտի՝ առաջինին ու վերջինին: Երեխաներին խնդրում է համեմատել նրանց՝ ըստ նմանվող ու տարբերվող նշանների: (Հավանաբար նմանությունը կլինի՝ երկու ձեռք, երկու աչք, երկու ականջ): Աշխատանքն ամփոփելիս՝ աշակերտներն ուսուցչի հետ (հարցերի օգնությամբ) հետևություններ են անում, որ աշակերտները միմյանցից տարբերվում են հասակով, մազերի գույնով կամ աչքերի գույնով և այլն:

Ապա ուսուցիչը հարց է տալիս. «Հապա՛, ո՞վ կթվարկի և ցույց կտա մարմնի մասերը կամ այն, ինչ բոլոր մարդիկ ունեն»:

Երեխաները թվարկում և ցույց են տալիս ձեռքերը, ոտքերը, գլուխը, մատները և այլն: Եվ եթե ոչ ոք չի հիշատակում, ուսուցիչը հարցնում է, թե որտեղ է նրանց ճակատը, շուրթերը, հոնքերը, աչքի թարթիչները:

2. ԽԱՂ «ԱՋՆ ՈՒ ՁԱԽԸ» ՏԱՐԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (3-5 րոպե)

Ուսուցիչ.

– Քանի՞ ոտք ունի մարդը, իսկ ձե՞ռք:

– Մեր մարմնի էլ ո՞ր մասն է զույգ:

– Ինչպե՞ս տարբերեմ միմյանցից իմ ձեռքերը (սա ո՞ր ձեռքն է), ինչպե՞ս է այն կոչվում (աջ ձեռք կամ ձախ ձեռք):

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է ոտքի կանգնել, ինքն էլ կանգնում է նրանց մոտ: Դեմքով բոլորը նույն կողմն են նայում: Ուսուցիչը ցույց է տալիս, թե որն է իր աջ ձեռքը և որը՝ ձախը: Ապա բարձրացնում է ձախ ձեռքը և բոլորին խնդրում է բարձրացնել ձախ ձեռքերը, հետո բարձրացնում են աջ ձեռքը:

Ուսուցիչը ձախ ձեռքում ունի կարմիր ժապավեն կամ մեկ այլ իր, աջ ձեռքում ունի կանաչ իր: Միաժամանակ համաձայնեցնում է երեխաների հետ, որ երբ ինքը բարձրացնի կարմիր ժապավենը, երեխաները պետք է բարձրացնեն ձախ ձեռքը, կանաչ գույնի ժապավենի բարձրացումը հրահանգում է աջ ձեռքի բարձրացում: Այսպես կխաղարկեն մի քանի անգամ: Ապա ուսուցիչը պտտվում է դեմքով դեպի աշակերտները ու դարձյալ կրկնում է նույն շարժումները: Երեխաները պետք է ուշադրություն դարձնեն գույներին ու ճիշտ կատարեն շարժումները:

3. ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐԻ ՄԱՍԻՆ ԽԱՂԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ (2-3 րոպե)

Ուսուցիչը անվանում է մարմնի մասերը հերթով (կարելի է նաև կրկնել թվարկումը) և դադարներով. աջ ականջ, ձախ ոտք, ձախ ձեռք, աջ աչք, աջ այտ, ձախ ուս...

Աշակերտները պետք է իրենց ձեռքը դնեն այն տեղին, որն այդ պահին անվանում է ուսուցիչը: Երեխաները նայում են մեկը մյուսին ու վերահսկում՝ արդյոք ճի՞շտ են կատարում վարժությունը, թե՞ ոչ: Ուսուցիչը հետևում ու լսում է բոլոր աշակերտներին ու վերահսկում:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (3-4 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել գիրքը համապատասխան դասի վրա և նկարագրել այնտեղ տրված նկարները՝ հետևյալ բառերի կիրառմամբ. բարձր-ցածր, շիկահեր-սևահեր, սևաչյա-կապուտաչյա, մեծ-փոքր, երկար-կարճ:

Հաջորդ վարժության մեջ նրանք պետք է անվանեն ներքևի նկարներում աջ և ձախ կողմում գտնվող իրերը:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ. «ԾԱՆՈԹԱՆԱՆՔ ԳՐՔԻ ՀԵՐՈՄՆԵՐԻ ՀԵՏ» (10-15 րոպե)

Աշխատանք խմբերում.

Աշակերտները փոքր խմբերով նստում են նստարանների մոտ, աշխատելու համար վերցնում են Աշխատանքային տետրի համապատասխան էջը և կտրում են հատվող գծով: Այնուհետև նրանք պետք է կտրեն տրված հատվածները (աղջկա և տղայի մարմնի մասերը) և փակցնելով հավաքեն պատկերներ թերթի վերին մասում, որտեղ միայն արտաքին ուրվագծերն են սահմանագծված: Պետք

է ստացվի տղա կամ աղջիկ (խումբը կարող է աշխատել դասագրքի մեկ թերթի վրա կամ մի քանի թերթ օգտագործել):

Ուսուցչի հարցերը.
– Ի՞նչ (պատկեր) ստացաք:
– Ինչ եք կարծում, ի՞նչ տարիքի են այդ երեխաները:
Այնուհետև ուսուցիչն աշակերտներին տեղեկացնում է, որ ստացված պատկերներն իրենց հասակակիցներն են և էլի բազմիցս առիթ կունենան հանդիպելու նրանց:

6. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է, թե ինչ են սովորել այս պարապմունքի ընթացքում, ի՞նչն էր նրանց համար հետաքրքիր, ի՞նչ են մտապահել, ի՞նչն են հավանել: Ցանկանո՞ւմ են արդյոք կրկին հանդիպել գրքի հերոսների հետ:

Երաշխավորություն.

Այս դասերում տրված ակտիվություններն ուսուցիչը կարող է կիրառել՝ ըստ սեփական հայեցողության (պարտադիր չէ բոլոր ակտիվությունները կիրառել)՝ դասարանի տրամադրվածության և հնարավորությունների նախատեսմամբ:
Եթե դասարանում կա սահմանափակ հնարավորություն ունեցող աշակերտ, ուսուցիչը գնում է նրա մոտ և օգնում ցույց տալ մարմնի մասերը և անվանել դրանք:

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=pgVfLhsoykU

ԴԱՍ 3

Թեմա.	Իմ դպրոցը
Դասի վերնագիրը.	Ճանապարհորդություն դպրոցում
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան կողմնորոշվել դպրոցի ներքին տարածքներում, նկարագրել այն և նպատակաուղղված տեղաշարժվել: Ուսումնական միջավայրում առկա օբյեկտները ճանաչել, թվարկել և խոսել դրանց նշանակման մասին: Աշակերտը կատարի և ինքը ևս տա պարզ, ոչ ավելի, քան 1-2 ուղղության հրահանգներ: Գիտակցել դպրոցում վարքի կանոնների անհրաժեշտությունը, դպրոցական գույքի, անձնական և համադասարանցիների իրերի նկատմամբ հոգատար վերաբերմունք ձևավորել:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ. I.5. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և նրանում կողմնորոշվել:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Պարզ հարցեր է տալիս՝ ուսումնասիրվող մարմնի/երևույթի մասին: Դիտարկում է ուսումնասիրման օբյեկտը՝ զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների կիրառմամբ: Որոշում է և թվարկում ուսումնական միջավայրում (օր.՝ դասասենյակ, դպրոցի միջանցք, դպրոցի բակ, մարզադահլիճ,

զուգարան, ճաշարան, բժշկի կաբինետ, վայր, որտեղ պետք է սպասի ավագներին) առկա օբյեկտները և խոսում դրանց նշանակման մասին:

Կիրառում է համապատասխան տարածական հարաբերություն արտահայտող տերմիններ (օրինակ՝ հեռու, մոտ, ինձանից աջ, վերև, ներքև) և որոշում դպրոցի տարածքում առկա օբյեկտների դիրքն իր նկատմամբ:

Կատարում և դպրոցի տարածքում կողմնորոշվելու համար, ինքն էլ տալիս է ոչ ավելի, քան 1-2 ուղղության (օրինակ՝ առաջ և աջ) պարզ հրահանգներ:

Ուսուցչի օգնությամբ, համադասարանցիների հետ ձևակերպում է և պահպանում տեղի միջավայրում (օրինակ՝ դասարանում, դպրոցում, բակում, փողոցում, տանը) վարվելակերպի կանոնները (օրինակ ՝ պահպանում է դպրոցի մաքրությունը):

Անհրաժեշտ նյութ. գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ:

1. ԾԱՆՈԹԱՆԱԼ ԴՊՐՈՑԻ ՆԵՐՔԻՆ ՏԱՐԱԾՔԻՆ (8-10 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին բացատրում է այս դասի նպատակը. պետք է ուսումնասիրեն դպրոցի տարածքը և տեսնեն, թե «ինչ է կատարվում» իրենց դասասենյակից դուրս: Դրա համար ուսուցիչը խնդրում է աշակերտներին անձայն քայլել և միմյանցից ետ չընկնել (ցանկալի է, որ այս էքսկուրսիայի ժամանակ ուսուցչին օգնի ծնողներից կամ գործընկերներից մեկը):

Երթուղին պայմանական է: Ստորև տրված հերթականությունը պահպանելն ուսուցչի համար պարտադիր չէ.

ա) Ամենասկզբում անցնում են հարևան դասարանի կողքով: Ուսուցիչը բացատրում է, որ այստեղ՝ իրենց հարևանությամբ, սովորում են այս կամ այն դասարանի աշակերտները, այս պահին նրանք պարապում են իրենց դասասենյակում և նրանց չի կարելի խանգարել: Հնարավոր է կիրառել «մոտիկ» տերմինը:

բ) Ճաշարան այցելելիս՝ ուսուցիչը պետք է բացատրի, թե ինչպես կարելի է այստեղ գալ, ինչպես պահպանել հերթը, ինչպես պահպանել մաքրությունն ու այսպես շարունակ: Ուսուցիչը նաև երեխաներին ծանոթացնում է ճաշարանի աշխատող մարդկանց, խոհարարների հետ: Կիրառում է մեր սենյակից աջ, ձախ տերմինները:

գ) Զուգարանը, որպես կանոն, առանձին է լինում աղջիկների և տղաների համար: Երեխաները պետք է հիշեն, թե ինչպես պետք է տարբերեն դրանք միմյանցից (նշանով, գրառումով կամ այլ բանով): Ուսուցիչը բացատրում է հիգիենայի այն պարտադիր կանոնները, որոնց պահպանումը պարտադիր է զուգարանից օգտվելու դեպքում:

դ) Բժշկի առանձնասենյակի տեղը բոլորը պարտադիր պետք է հիշեն, որպեսզի անհրաժեշտության դեպքում ժամանակին դիմեն նրան: Ուսուցիչն աշակերտներին ծանոթացնում է բժշկի (բուժքրոջ) հետ: Ցանկալի է, որ մեկ-երկու բառ էլ նա փոխանակի երեխաների հետ: Հնարավոր է այստեղ անհրաժեշտ լինեն վերև, ներքև տերմինները:

ե) Տնօրենի առանձնասենյակ մտնելը նույնպես ցանկալի է, եթե տնօրենն այդ պահին զբաղված չէ (ուսուցիչը դա նրա հետ նախապես է համաձայնեցնում), ուսուցիչը երեխաներին տանում է տնօրենի առանձնասենյակ, ու նա էլ մի փոքր զրուցում է երեխաների հետ:

Ցանկալի է, որ հասցնեն նաև գրադարան, մարզադահլիճ և երաժշտական դահլիճ այցելել և հիշեն դրանց տեղերը: Ուսուցիչը նաև պետք է պարզաբանի միջանցքների նշանակումը դպրոցում և դասամիջոցի ժամանակ միջանցքում անվտանգության կանոնների պահպանումը:

2. ԽԱՂ. ՄԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԱՐԴՅՈՔ ԿԱՆՈՆՆԵՐ (3-5 րոպե)

Ուսուցիչը, առանց կանոնների մասին նախապես խոսելու, դասարան վերադարձած աշակերտներին առաջարկում է այսպիսի խաղ. բոլորը կանգնում են շրջանով: Շրջանը պետք է սեղմվի: Աշակերտները ձեռքերն առաջ պետք է պարզեն և բռնեն միմյանց ձեռքերը՝ ով ինչպես կկարողանա, առանց որևէ կանոնի պահպանման: Այնուհետև առանց ձեռքերը բաց թողնելու երեխաները պետք է շրջվեն:

Աշակերտներն այս առաջադրանքը (շրջվելը) չեն կարողանա կատարել և կխառնվեն, կշփոթվեն և կսկսեն աղմկել:

Այժմ ուսուցիչն աշակերտներին առաջարկում է խաղի այսպիսի կանոն. յուրաքանչյուր երեխա առաջ ձգած աջ ձեռքը պետք է դնի իր ձախ ձեռքի վրա և այդպես բռնի ընկերոջ ձեռքը (ստացվում է խաչաձև բռնած աջ և ձախ ձեռքեր: Այս կանոնի պահպանման դեպքում, շրջանում կանգնած բոլոր երեխաները կկարողանան այնպես շրջվել, որ բաց չթողնեն ընկերոջ ձեռքը, և ոչ էլ շրջանը կխախտվի (այս դեպքում երեխաները իրար ձեռք բռնած միմյանց նկատմամբ մեջքով կկանգնեն)): Խաղը մի քանի անգամ պետք է կրկնվի: Նրանք, ովքեր այս կանոնը կխախտեն, չեն կարողանա շրջվել կամ ձեռքերը բաց կթողնեն, խաղից դուրս կգան:

3. ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՎԱՐՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ (5-7 րոպե)

Խաղից հետո ուսուցիչն աշակերտներին բացատրում է, որ կանոնների պահպանումը մեզ հասցնում է ցանկալի արդյունքի, իսկ կանոնները չպահպանելը՝ խառնաշփոթի: Դպրոցում (և դասարանում) եղած ժամանակ ևս անհրաժեշտ է պահպանել դպրոցական վարքի կանոնները, որպեսզի լավ սովորենք և հաջողության հասնենք: Եկեք միասին սահմանենք այդ կանոնները, մտապահենք և այնուհետև հետևենք դրանց: Ուսուցիչը սկսում է նախադասությունը, իսկ երեխաներն այն ավարտում են: Օրինակ.

I. Ուսուցիչ.
– Երբ մեկը խոսում է, մյուսները...
Աշակերտներ.
– Մյուսները լսում են նրան:

II. Ուսուցիչ.
– Երբ ինչ-որ բան եմ ուզում ասել...
Աշակերտներ.
– Ձեռք պետք է բարձրացնեմ:

III. Ուսուցիչ.
– Երբ դասարան ենք մտնում ...
Աշակերտներ.
– Ժպտում ենք և բարևում միմյանց:

IV. Ուսուցիչ.
– Առանց հարցնելու ընկերոջ իրը...
Աշակերտներ.
– Չպետք է վերցնենք:

V. Ուսուցիչ
– Երբ ընկերը դժվարության մեջ է, պետք է...
Աշակերտներ.
– Օգնել նրան (կարելի է մտածել նաև այլ պարզ կանոններ. «ընկերոջս չպետք է նեղացնեմ, ուսուցչի առաջադրանքները պետք է կատարեմ», «պետք է խնամքով վերաբերվենք մեր և ուրիշների իրերին»):

Յուրաքանչյուր կանոնի ձևակերպումից հետո, ցանկալի է, որ ուսուցիչը հարցնի, ըստ նրանց՝ անհրաժեշտ է արդյոք այս կանոնները պահպանել: Ի՞նչ տեղի կունենա, եթե այս կամ այն կանոնը բոլորը խախտեն:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին անվանել առարկաներ, որոնք տեսնում են դասասենյակում, և եթե կարող են, խոսեն այդ առարկաների նշանակման մասին: Այնուհետև այս իրերը համեմատեն տանը եղած իրերի հետ, հայտնաբերեն նմանություն տան և դպրոցի միջև:

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին դասագրքում գտնել այս դասի համապատասխան էջը և ուշադիր դիտել ներքևի նկարը, որտեղ մեր գրքի հերոսն է պատկերված՝ դատարկ պայուսակով:

Այստեղ նկարած են ուսումնական պարագաներ: Ուսուցիչը հիշեցնում է երեխաներին, որ կանոններից մեկի համաձայն, մեր պարտականությունն է «խնամքով վերաբերվել մեր և ուրիշների իրերին»:

– Որո՞նք են ուսումնական պարագաները: Ո՞վ օգնեց մեր հերոսին՝ գտնել ուսումնական պարագաները:

Աշակերտները տրված նկարներից պետք է կռահեն, թե որոնք են ուսումնական պարագաները, և անվանեն դրանք: Դրանից հետո ուսուցիչը համառոտ խոսում է այն մասին, թե ինչը կարող ենք կոչել ուսումնական պարագա, երեխաները պայուսակում կարող են ունենալ նաև այնպիսի ուսումնական պարագաներ, որոնք գրքում չեն նկարած: Այդ պատճառով ոչ մի իր չպետք է մնա անուշադիր:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (3-5 րոպե)

ա) Ուսուցիչը խնդրում է բացել Աշխատանքային տետրերը: Վարժություն 1-ում տրված են տարբեր առարկաներ: Ուսուցիչն աշակերտներին խնդրում է կապույտ մատիտով գունավորել այն առարկաները, որոնք, ըստ նրանց, միայն դպրոցում են անհրաժեշտ, կանաչով՝ այն առարկաները, որոնք տանն են օգտագործում, իսկ կարմիրով՝ այն առարկաները, որոնք օգտագործում են դպրոցում էլ, տանն էլ:

բ) Ստորև տրված առաջադրանքն անհրաժեշտ է տարածական հարաբերություն արտահայտող տերմինների վրա վարժվելու համար:

Սեղանի տակ նկարեք գնդակ:

Պահարանի վրա դրեք սենյակային ծաղիկ:

Աթոռի աջ կողմում նկարեք գորգ:

Նստարանի վրա, ձախ կողմում դրեք կապույտ մատիտը, աջ կողմում՝ կարմիրը:

6. ԱԿՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ (2-3 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է բարձրացնել այն ձեռքը, որով բռնում են գդալը, նկարում են և այլ գործողություններ կատարում: Դրանից հետո սկսում են վարժանք աջ և ձախ, վերև և ներքև ուղղությունների, հեռու, մոտիկ և հետ տեղաշարժման վրա: Օրինակ՝ մատիտը դիր գրքի ձախ կողմում, իսկ աջ կողմում դիր սրիչը և այլն: Ի վերջո, նման տիպի վարժությունների միջոցով աշակերտները, այսպես կոչված զվարճալի խաղով, տարածական հարաբերություն արտահայտող տերմինների կիրառմամբ կկարողանան տեղաշարժվել տարածքում: Ցանկալի է, որ ուսուցիչը նկատի ունենա, որ, օրինակ, թաքցրած իրը գտնելու համար, միաժամանակ նպատակահարմար է տարածական հարաբերություն արտահայտող երկու տերմին կիրառել. աջ/ձախ և առաջ ու հետ:

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչը հարցերի միջոցով աշակերտներին կհիշեցնի դասի ժամանակ անցած ակտիվությունները և հնարավորինս կգնահատի նրանց:

ԴԱՍ 4

Թեմա.	Իմ դպրոցը
Դասի վերնագիրը.	Ճանապարհորդություն դպրոցից դուրս
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան միջավայրում կողմնորոշվել և նպատակաուղղված տեղաշարժվել: Ճանաչել շրջապատում գտնվող առարկաները, շարժական և անշարժ իրերն ընկալել ու արձանագրել: Ըստ հրահանգի՝ մասնակցել պարզ հետազոտական ակտիվ-ությունների: Խմբավորել կենդանի և անկենդան մարմինները: Կիրառել տարածական հարաբերություն արտահայտող տերմիններ: Բանավոր փոխանցել հետազոտության արդյունքները:

	Զարգացնել աշակերտների դիտարկման կարողությունը: Կիրառել պարզ գիտական տերմիններ:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների: Բնագիտ. I.5. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և նրանում կողմնորոշվել:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Դիտարկում է ուսումնասիրման օբյեկտը զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների կիրառմամբ: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդման վրա կամ իրականության մեջ: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Խմբավորում է կենդանի մարմիններն՝ ըստ բույսերի և կենդանիների, հիմնավորում է սեփական որոշումը: Որոշում է և թվարկում ուսումնական միջավայրում (օր.՝ դասասենյակ, դպրոցի միջանցք, դպրոցի բակ, մարզադահլիճ, զուգարան, ճաշարան, բժշկի կաբինետ, վայր, որտեղ պետք է սպասի ավագներին) առկա օբյեկտները և խոսում դրանց նշանակման մասին: Կիրառում է համապատասխան տարածական հարաբերություն արտահայտող տերմիններ (օրինակ՝ հեռու, մոտ, ինձանից աջ, վերև, ներքև) և որոշում դպրոցի տարածքում առկա օբյեկտների դիրքն իր նկատմամբ:
Անհրաժեշտ նյութ.	գունավոր մատիտներ և ֆլոմաստերներ, լուսանկարչական սարք:

1.ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾՔԻ ԴԻՏՈՒՄ (10-20 րոպե)

Այս դասի ժամանակ ուսուցիչն աշակերտներին դուրս է տանում դպրոցի բակ, աշակերտները դիտում են ու ուսումնասիրում դպրոցի շրջակա տարածքը (կանաչ տնկիներ, պտղատու ծառեր, խաղահրապարակ, փողոց...), մտաբերում են նաև նախորդ դասին սովորած տերմինները. դեպի աջ/դեպի ձախ, առաջ/հետ, մոտիկ/հեռու: Ցանկալի է բակը դիտելու ժամանակ ուսուցիչն աշակերտներին կոնկերտ հրահանգներ տա, որոնք ներառում են տարածական հարաբերություններ արտահայտող տերմիններ: Դրանից հետո աշակերտներն ուշադրություն են դարձնում, թե որքանով մաքուր է բակը՝ կա՞ն արդյոք աղտոտված մասեր, որտե՞ղ են աղբամանները: Ըստ նրանց, ո՞վ է աղտոտում միջավայրը և ո՞րն է ավելի հրապուրիչ՝ մաքո՞ւր, թե՞ աղտոտ միջավայրը: Այնուհետև ուսուցիչն աշակերտների ուշադրությունը հրավիրում է դպրոցի շենքին, աշակերտները պետք է որոշեն, թե քանի հարկանի է դպրոցի շենքը, որ հարկում է իրենց դասասենյակը: Հենց այստեղ էլ ուսուցիչը խոսում է հեռու-մոտիկ հասկացությունների մասին և օրինակների վրա սովորեցնում է երեխաներին (օրինակ՝ ծա՞ռն է ավելի մոտ դպրոցի շենքին, թե՞ ցանկապատը): Ուսուցիչը ներմուծում է ևս մեկ նոր հասկացություն՝ «անշարժ/շարժական»: Դպրոցի բակում գտնվելու ժամանակ աշակերտները պետք է ճանաչեն անշարժ և շարժական առարկաները (շարժական են ինչպես մարդը, թռչունը կամ միջատը, այնպես էլ ամպը, շարժվող ավտոմեքենան, քամուց քշված տերևը և այլն): Հնարավոր է, որ ուսուցիչը (եթե ժամանակը դրա հնարավորությունն ընձեռում է), անշարժն ու շարժականը միմյանցից

լավ տարբերելու նպատակով, աշակերտներին առաջարկի նրանց ծանոթ, այսպես կոչված՝ «Տեղում քարացի՛ր» խաղը խաղալ: Ուսուցչի նշան տալուն պես աշակերտներն սկսում են ազատ շարժվել, օրինակ՝ թռչկոտել, վազել: Ուսուցչի նշան տալուն պես (ծափ, զգա՛ստ բառը, սուլիչի ձայնը...), նրանք «քարանում են» որոշակի ժամանակով: Ուսուցչի նշան տալուն պես նորից սկսում են ազատ շարժվել: Այսպես կարող է կրկնվել չորս-հինգ անգամ: Այս վարժությունը ծառայում է ոչ միայն անշարժի ու շարժվողի ճանաչմանը, այլև՝ ուշադրության կենտրոնացման կարողության մշակմանը:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ. «ՆԿԱՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ» (3-4 րոպե)

Աշխատանքային թերթի վերին հատվածում տրված է նկար: Երևում է, որ մեր հասակակիցները պայուսակներն ուսերին գնում են: Եկեք նկարագրենք նկարը.

– Ինչ եք կարծում, ո՞վքեր են նկարի վրա պատկերված երեխաները: (աշակերտներ)
– Հիմնավորեք, ինչո՞ւ եք այդպես կարծում: (պայուսակներ ունեն, երևում է դպրոցի շենքը)
– Ըստ ձեզ, ի՞նչ շինություն է սա:
– Ինչո՞ւ եք այդպես կարծում:
– Քանի՞ հարկանի է:
– Այս երեխաները դպրոցի ներսո՞ւմ են, թե՞ դպրոցից դուրս:
– Մենք հիմա ներսո՞ւմ ենք, թե՞ դրսում:
– Համեմատե՛ք ձեր դպրոցի շենքի հետ:
– Ինչպիսի՞ բակ ունի:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (5-8 րոպե)

Աշակերտներին առաջադրանք է տրվում. բացել տետրերը, հիշել քիչ առաջ իրենց տեսած դպրոցի շինությունն ու նկարել այն: Ցանկալի է, որ երեխաները հիշեն, թե քանի հարկանի է իրենց դպրոցը և նկարում պատկերեն, ինչպես նաև նկարեն դպրոցի բակը և այն, ինչը նրանց մոտ շատ է տպավորվել այդ «ճամփորդությունից»: Երեխաները պետք է նկարեն առանց հարկադրության, առանց դիտողությունների, այնպես, ինչպես կարող են և ինչպես դուր է գալիս իրենց: Փոխանցման ճշգրտությունն այս դեպքում էական նշանակություն չունի, ավելի հետաքրքիր է, թե հետո աշակերտն ինչպես կբացատրի իր նկարածը:

Շնորհանդեսին մասնակցությունն ըստ ցանկության է: Ցանկալի է, որ աշակերտը մանրամասնորեն նկարագրի իր աշխատությունը: Իսկ ուսուցիչը նրան օգնում է հարցերով, որպեսզի աշակերտի կողմից աշխատությունը ներկայացնելն ավելի սպառիչ ու հետաքրքիր լինի:

4. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

5. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին ուշադիր դիտել այն միջավայրը, որ երևում է իրենց ննջասենյակի պատուհանից և հաջորդ դասի համար նկարել այն կամ նկարագրել համադասարանցիներին: Ուշադրությունը պետք է կենտրոնացնեն նրա վրա, թե ինչ կա իրենց պատուհանից աջ/ձախ և այն համապատասխանաբար արտացոլեն իրենց աշխատանքում:

ԴԱՍ 5

Թեմա.	Իմ դպրոցը
Դասի վերնագիրը.	Տանից մինչև դպրոց ճանապարհը
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան ըմբռնել տեղի միջավայրում վարքի կանոնները և գիտակցել դրանց պահպանման անհրաժեշտությունը: Ճանաչել փողոցում անվտանգության կանոններն արտացոլող պայմանական նշանները և գիտակցել դրանց պահպանման

	անհրաժեշտությունը: Զրուցել անվտանգ երթևեկության կանոնների պահպանման անհրաժեշտության մասին:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ. I.5. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և նրանում կողմնորոշվել:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Ուսուցչի օգնությամբ համադասարանցիների հետ ձևակերպում է և պահպանում տեղի միջավայրում (օրինակ՝ դասարանում, դպրոցում, բակում, փողոցում, տանը) վարքի կանոնները (օրինակ ՝ պահպանում է դպրոցի մաքրությունը): Որոշում է և բացատրում փողոցում տեղաշարժվելու կանոններն արտացոլող պայմանական նշանները, բացատրում դրանց պահպանման անհրաժեշտությունը, խոսում անվտանգ տեղաշարժման կանոնների պահպանման անհրաժեշտության մասին:
Անհրաժեշտ նյութ.	գրիչներ, մատիտներ:

Դասի ընթացքը.

1. ԶՐՈՒՅՑ «ՏԱՆԻՑ ԴՊՐՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ» ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՋ (6-7 րոպե)

Ուսուցիչը խնդրում է երեխաներին բացել դասագրքի համապատասխան դասը և նկարագրել նկարները: Այնուհետև հիշել տանից դպրոց տանող ճանապարհը. ինչպե՞ս են գալիս, ոտքո՞վ, թե՞ տրանսպորտով, երկա՞ր ժամանակ է պահանջվում դպրոց հասնելու համար, թե՞ ոչ, լայն փողոցով են քայլում, թե՞ նեղ, ճանապարհ անցնելու կարիք ունենո՞ւմ են, թե՞ ոչ և այլն: Ուսուցիչը պետք է երեխաներին խրախուսի, որ հիշեն իրենց ճանապարհին հանդիպող մանրամասներ (ծառ, խանութ, անցում, գետ, ջրափոս, կամուրջ և այլն):

Այս զրույցի արդյունքում աշակերտները պետք է անեն այն եզրահանգումը, որ փողոցն այն ճանապարհն է, որով տեղափոխվում են մարդիկ, տեղաշարժվում է տրանսպորտը:

2. ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԴՊՐՈՑԻ ՀԱՐԱԿԻՑ ՓԱՂՈՑՆԵՐՈՒՄ (15-8 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է դուրս գալ դպրոցից և ուսումնասիրել դպրոցի հարակից փողոցը (փողոցները): Ուսուցիչը երեխաներին կազմակերպված դուրս է տանում դպրոցի բակ այնպես, որ հնարավոր լինի փողոցը տեսնել (ցանկալի է, որ այդ ժամանակ ուսուցչին օգնի որևէ գործընկեր կամ ծնող):

Այս դասի ժամանակ աշակերտները պետք է իմանան, որ փողոցներն անվանումներ ունեն (նրանք պետք է հիշեն այն փողոցը, որտեղ գտնվում է իրենց դպրոցը), իսկ շենքերն ունեն համարներ (կամ քաղաքներում փողոցի բոլոր տները համարակալված են): Ուսուցիչը ցույց է տալիս դպրոցի ցուցանակը (կամ հարևան տան) պատի վրա, կարդում է փողոցի անունն ու համարը:

Դպրոցի տարածքին կարող է հարակից լինել մեկ, երկու կամ երեք փողոց: Ցանկալի է շրջել բոլոր փողոցներով, ուսումնասիրել դրանք ու գտնել տարբերությունները դրանց միջև (հավանական հարցեր. Ինչ եք կարծում, ո՞ր փողոցն էր ամենամեծը, որտե՞ղ է ավելի շատ տրանսպորտ տեղաշարժվում):

Այնուհետև ուսուցիչն ուշադրություն է հրավիրում նրա վրա, թե ինչ է անցումը, ինչ է լուսակիրը, որն է անցումն արտացոլող նշանը: Պետք է խոսեն այն մասին, թե ինչպես է պետք անցնել փողոցը, փողոցն անվտանգ անցնելու համար ինչ կանոնների պահպանում է անհրաժեշտ, ինչպես է կոչվում փողոցի այն մասը, որտեղ կարելի է ոտքով քայլել (մայթ): Թբիլիսիի փողոցներում, դպրոցների հարակից տարածքում հատուկ ուռուցիկ արգելքներ են արված, հատուկ միջոցներ են ձեռնարկված, որպեսզի մեքենաներն այդ տարածքում ընթացքը դանդաղեցնեն: Եթե որևէ միջոց ձեռնարկված չէ, պետք է մտածել, հարկավո՞ր է արդյոք նման միջոցի ձեռնարկումը:

3. ՔՆՆԱՐԿՈՒՄ «ՎՏԱՆԳ ՓՈՂՈՑՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՋ (6-7 րոպե)

Հենց այնտեղ՝ դպրոցի բակում, ուսուցիչը խնդրում է երեխաներին հիշել, թե ինչ վտանգի առաջ են կանգնել փողոցում կամ սովորաբար ինչից են վախենում փողոցում գտնվելիս, ինչ դեպքում են իրենց անպաշտպան զգում:

Քաղաքի, և հատկապես մեծ քաղաքի փողոցներում երեխաներին բազմաթիվ վտանգներ են սպառնում, կլինի դա մեքենաների հոսքը, արտանետումները, թե ճանապարհները շփոթելը և շատ էլի ուրիշ վտանգներ: Քննարկման ժամանակ ուսուցչի օգնությամբ պետք է ճշտվի, թե որն է իրական վտանգը, որը՝ չափազանցված երևակայության պտուղ:

Զրույցի վերջում ուսուցիչը երեխաներին ասում է, որ այս թեմային դեռ կանդրադառնան ու միասին կմտածեն անվտանգության միջոցների մասին:

4. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Հակիրճ ամփոփեք անցկացված դասը:

ԴԱՍ 6

Թեմա.	Տրանսպորտ և ճանապարհային նշաններ
Դասի վերնագիրը.	Ճանապարհային երթևեկության կանոններ
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան նպաստել տվյալների հավաքագրման, խմբավորման և տարրական վերլուծաբանական կարողությունների զարգացմանը: Գիտակցել փողոցում տեղաշարժման կանոնների պահպանման անհրաժեշտությունը: Դատողություն անել փողոցում տեղաշարժվելիս սպասվելիք վտանգը տեսնելու և նրանից խուսափելու անհրաժեշտության մասին: Ճանաչել փողոցում տեղաշարժումն արտացոլող պայմանական նշանները և բացատրել դրանք:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ. I.5. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և նրանում կողմնորոշվել:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Ուսուցչի օգնությամբ համադասարանցիների հետ ձևակերպում է և պահպանում տեղի միջավայրում (օրինակ՝ դասարանում, դպրոցում, բակում, փողոցում, տանը) վարքի կանոնները (օրինակ ՝ պահպանում է դպրոցի մաքրությունը):

Որոշում է և բացատրում փողոցում տեղաշարժվելու կանոններն արտացոլող պայմանական նշանները, բացատրում դրանց պահպանման անհրաժեշտությունը, խոսում անվտանգ տեղաշարժման կանոնների պահպանման անհրաժեշտության մասին:

1. ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ (13-15 րոպե)

Դասագրքի համապատասխան դասի վերին մասում նկարած է քաղաքի փողոց՝ խաչմերուկով, մայթերով, անցումով, տրասպորտով և մարդկանցով...

Սկզբից աշակերտները կուսումնասիրեն նկարը և ընդհանուր առմամբ կնկարագրեն այն: Այնուհետև ուսուցիչն աշակերտներին կհանձնարարի աշխատել զույգերով կամ խմբերով: Դասագրքի հաջորդ էջում աշակերտներն սկսում են աշխատել:

Թղթի վերևի մասում նկարված է քաղաքի փողոց՝ խաչմերուկով, մայթերով, անցումով, տրանսպորտով և մարդկանցով...

– Նախ տեղի է ունենում նկարի ուսումնասիրում և միասնական նկարագրություն (պետք է օգտագործեն ու ամրապնդեն նոր բառերը):

– Այնուհետև ուսուցիչը երեխաներին հանձնարարում է աշխատել զույգերով կամ խմբերով:

Նկարի տակ տրված է աղյուսակ: Աշակերտներն ըստ օրինակի պետք է կռահեն, որ նրանք պետք է հատ- հատ հաշվեն նկարի վրայի երեխաների, կանանց, տղամարդկանց, ծառերի, ավտոմեքենաների, տների, շների քանակը և աղյուսակի համապատասխան մասերում համապատասխան նշումներ անեն (քանի որ դեռ գրել չգիտեն, հնարավոր է նշել կետերով կամ օղակներով):

Այնուհետև, շնորհանդեսի ժամանակ պարզ կդառնա, թե խմբերը (կամ զույգերը) միանման պատասխաննե՞ր են ստացել, թե՞ տարբեր:

(Աղյուսակը լրացնելուց հետո, ցանկալի է, որ կատարվի պարզ վերլուծություն, թե, օրինակ, այս փողոցում ում կամ ինչի ենք հանդիպում ամենաշատը և ում կամ ինչի՝ ամենաքիչը:)

2. ԴԱՍԱԳՐՔԻ ՎՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ (8-10 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին հիշեցնում է, որ բակում գտնված ժամանակ իրենք խոսել են որոշ վտանգների մասին: Այժմ դարձյալ պետք է անդրադառնան այդ թեմային:

Ուսուցիչը խնդրում է երեխաներին նորից նայել տրված նկարին, մտածել և քննարկել իրենց զույգերի հետ.

– Սպառնու՞մ է որևէ մեկին վտանգ: Ու՞մ:

– Ի՞նչ կարող է տեղի ունենալ (օրինակ՝ եթե երեխան մոր ձեռքը թողնի, կարող է մեքենայի անիվների տակ հայտնվել, կամ այն շանը կարող է բախվել, որը նույնպես վազում է դեպի գնդակը: Իրեն՝ շանը և նրա տիրոջը նույնպես վտանգ է սպառնում այն կապույտ ավտոմեքենայից, որի միայն առաջնամասն է երևում: Անցումով անժամանակ և վտանգավոր ձևով անցնում է նաև հեծանվով տղան):

– Խորհուրդ տվեք՝ ինչպե՞ս խուսափել վտանգից:

– Ինչ եք կարծում, անհրաժե՞շտ է արդյոք փողոցում երթևեկության կանոնների առկայությունը: Ինչո՞ւ:

– Անհրաժե՞շտ է արդյոք փողոցում ավտոճանապարհային նախազգուշացնող նշանների գոյությունը: Ինչո՞ւ:

3. ԼԻՑՔԱԹԱՓՈՒՄ. «ԱՆՑՆԵՆՔ ՓՈՂՈՑԸ» (8-10 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին այսպիսի խաղ է առաջարկում. երկու աշակերտ կանգնում են դասարանի տարբեր անկյուններում: Նրանց աչքերը կապած են: Նրանցից յուրաքանչյուրը պետք

է կողմնորոշվի և գնա դեպի սենյակի հանդիպակաց անկյունը: Այս ակտիվությանը բավական է 2-3 զույգ հերթով ներգրավվի: Դրանից հետո ուսուցիչը հարցնում է այս աշակերտներին.

– Ի՞նչ էիք զգում այդ ժամանակ:

– Ձեզ անվտա՞նգ էիք զգում, թե՞ ոչ: Ինչո՞ւ:

– Ի՞նչ կարող է տեղի ունենալ այն մարդու հետ, ով փողոցն անուշադիր կանցնի:

Ուսուցիչն ավելացնում է, որ փողոցն անցնելիս, հետիոտնի համար ամենամեծ վտանգը շարժվող ավտոմեքենաներն են ներկայացնում: Այդ վտանգից խուսափելու համար մարդիկ հորինել են լուսակիրն ու ճանապարհային այլ նշաններ:

– Ե՞րբ և ինչպե՞ս է սկսվել ամեն ինչ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ (ԿԱՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ:

Ուսուցիչը շարունակում է խոսել թեմայի մասին, թե ում ինչպես պետք է դիմեն երեխաները փողոցում, եթե հայտնվեն այս կամ այն վտանգի առջև:

4. ԳՐՔԻՑ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ (2-3 րոպե)

«Ճանապարհային երթևեկության կանոնները» (Ռ. Իանտբելիձե)

Մոտավորապես 100 տարի առաջ փողոցներում առաջին անգամ հայտնվեցին ավտոմեքենաները, որոնք զգուշավոր դարձրին փողոցում ոտքով քայլող մարդկանց: «Այդ պատճառով էլ Լոնդոնում ընդունեցին աշխարհում առաջին քիչ թե շատ ծիծաղելի երթևեկության կանոնը. այնտեղ, որտեղ ավելի հաճախ կարելի էր մարդկանց հանդիպել, ճանապարհի եզրին պետք է կանգնած լիներ կարմիր դրոշակով «կարգուկանոն պահպանողը»: Հենց որ վերջինս նկատում էր մոտեցող մեքենան, դրոշը բարձրացնում էր ու... ճանապարհի վրա եղած մարդիկ տեսնում էին իրենց գլխի ճարը՝ ով ինչպես կարողանար»:

Այն ժամանակ լուսակիր դեռ գոյություն չուներ, մեքենաներն անկանոն էին տեղաշարժվում. ով ինչպես ուզեր, այդպես վարում էր և կայանում մեքենան: Փողոցում բացարձակ անկանոնություն էր. «1920 թվականին Ամերիկայում կանգնեցվեց առաջին լուսակիրը, ինչին էլ հաջորդեց ճանապարհային կանոնների ընդունումը»:

Ուսուցիչը հարցնում է աշակերտներին՝ արդյոք հիշո՞ւմ են լուսակիրի գույները (կանաչ, դեղին, կարմիր) և խնդրում է դասագրքում գտնել լուսակիրով էջը:

– Ի՞նչ է նշանակում կանաչ գույնը (երթևեկությունը թույլատրելի է):

– Ի՞նչ է նշանակում կարմիր գույնը (երթևեկել չի կարելի):

– Ինչ եք կարծում, ի՞նչ կարող է նշանակել դեղին գույնը:

(Զգուշացնող է. փոխվում է լուսակիրի գույնը:)

Եռագույն լուսակիրը նախատեսված է ավտոմեքենաների վարորդների համար, որոշ դեպքերում եռագույն լուսակիրի կողքին տեղադրված է երկգույն լուսակիր՝ հետիոտնի համար: Կանաչ և կարմիր ֆոներով պատկերված են մարդու պատկերներ: Այստեղ էլ կանաչը ճանապարհն անցնելու թույլտվության նշանն է, կարմիրը՝ արգելող (տե՛ս՝ Աշակերտի գրքում):

5. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (3-4 րոպե)

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=Vyy2TkP0X1o

ԴԱՍ 7

Թեմա.	Տրանսպորտ և ճանապարհային նշաններ
Դասի վերնագիրը.	Ճանապարհային նշաններ և տրանսպորտ
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան որոշել որոշ ճանապարհային նշաններ: Տրանսպորտի տեսակներին ծանոթանալ: Հասկանալ տրանսպորտային միջոցների առանձնահատկությունները և տարբերությունները դրանց միջև, տեսնել

	տրանսպորտով տեղաշարժման ժամանակ հնարավոր վտանգները և վերհիշել անվտանգության միջոցները: Մասնակցել պարզ գործնական ակտիվությունների: Հարցին պատասխանելու համար հավաքել անհրաժեշտ տվյալներ/նշումներ անել: Պայմանական նշանները ճանաչել և համապատասխանաբար բացատրել:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ. I.5. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և նրանում կողմնորոշվել:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով): Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Որոշում է և բացատրում փողոցում տեղաշարժվելու կանոններն արտացոլող պայմանական նշանները, բացատրում դրանց պահպանման անհրաժեշտությունը, խոսում անվտանգ տեղաշարժման կանոնների պահպանման անհրաժեշտության մասին:
Անհրաժեշտ նյութ.	թերթեր, մկրատ:

Դասի ընթացքը.

1. ՆԿԱՐԵԼ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ (8-10 րոպե)

Խմբերով աշխատանք.

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել գրքերի 7-րդ դասը և նրանց հետ միասին քննարկում է ճանապարհային նշանները: Այնուհետև իրենք նույնպես պատրաստում են նշաններ (տե՛ս՝ Հավելված):

Ուսուցիչը դասարանը բաժանում է 5 խմբի, յուրաքանչյուր խմբին տալիս է մեկական մաքուր թերթ և հանձնարարում է յուրաքանչյուր թերթի վրա նկարել մեկ ճանապարհային նշան:

I խումբ՝ լուսակիր կարմիր գույնով
II խումբ՝ լուսակիր կանաչ գույնով
III խումբ՝ լուսակիր դեղին գույնով
IV խումբ՝ անցում կապույտ քառակուսիի մեջ
V խումբ՝ «Քարաթափություն»

2. ԶՈՒՅԳԵՐՈՎ ԽԱՂ (5-7 րոպե)

Աշակերտներն արդեն պատրաստել են երկու ճանապարհային նշան և լուսակիրի երեք տարբերակ (կանաչ, դեղին և կարմիր գույներով)՝ առանձին թղթերի վրա:

Ուսուցչի օգնությամբ աշակերտները նստարաններն այնպես են դասավորում, որ դասասենյակում, նստարանների միջև ստեղծվում է «կենտրոնական փողոց»:

Աշակերտները զույգեր են կազմում, ուսուցիչը կանգնում է «փողոցի» սկզբում և հերթով ձեռքն է վերցնում տարբեր ճանապարհային նշաններ: Աշակերտները պետք է գուշակեն այդ ճանապարհային նշանի պահանջը, անվտանգ և կանոնների պահպանմամբ տեղաշարժվեն «փողոցում» և բացատրեն, թե ինչու են այդպես շարժվում (կամ ինչ էր նրանց հուշում ճանապարհային նշանը): Այն զույգը, որը սխալ թույլ կտա, խաղից դուրս կմնա:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-6 րոպե)

Ուսուցիչը երեխաներին խնդրում է հիշել ճանապարհը տնից մինչև դպրոց:

– Ձեռք բարձրացնի նա, ով ոտքով է գալիս:

– Ձեռք բարձրացնի նա, ով այլ միջոցով է ուղևորվում դպրոց:

Եթե այդպիսիք կան, ուսուցիչը հետաքրքրվում է, թե ինչով են այդ երեխաները մինչև դպրոց հասնում (այսինքն՝ ավտոբուս, մարդատար ավտոմեքենա, մետրո, տրոլեյբուս...): Եթե դասը գյուղական դպրոցում է անցկացվում, որտեղ բոլոր երեխաները միայն ոտքով են գնում դպրոց, այդ դեպքում ուսուցիչը հարցնում է. եթե եղել են քաղաքում, ինչո՞վ են երթևեկել և այլն:

Պետք է վերջնական եզրահանգում արվի, որ մարդիկ մի տեղից մյուսը գնալու համար կամ ոտքով են տեղաշարժվում, կամ մեքենաներով, գնացքով կամ այլ միջոցներով:

– Գիտե՞ք, թե ինչ ընդհանուր անունով են կոչվում դրանք: (տրանսպորտ)

Այնուհետև աշակերտները դասագրքում պետք է գտնեն այդ դասի համապատասխան էջը և ուշադիր դիտեն ճանապարհային նշանները, որոնք ճանաչելը պարտադիր է (ուսուցիչը ցույց է տալիս, թե որն է այդ էջը):

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Աշխատանքը շարունակվում է Աշխատանքային տետրում: Թղթի վրա մեր գրքի հերոսները մտազբաղ են: Նրանց խնդրի լուծման հարցում պետք է օգնեն հենց մեր առաջին դասարանցիները: Նույն էջում տրված քառակուսիների մեջ նկարված են տարբեր առարկաներ, երեխաները պետք է գուշակեն, թե յուրաքանչյուր քառակուսու մեջ որն է այն մեկ առարկան, որը ոչ տեղին (առանց տրամաբանության) է տեղադրել նկարիչը, և շրջագծեն, այսինքն՝ նրանք պետք է նշեն կամ շրջագծեն ավտոմեքենան, ինքնաթիռը, գնացքը, նավը կամ ավտոբուսը:

Աշխատանքը կատարվում է ինքնուրույն և ստուգվում զույգերով:

Հանձնարարությունը կատարելուց հետո, ուսուցիչը նորից է հարցեր տալիս.

– Անվանեք այն առարկաները, որոնք ընդգծել եք:

– Ինչի՞ համար է մարդն այդ առարկաներն օգտագործում:

– Կարո՞ղ է իմանաք՝ ի՞նչ ընդհանուր անուն ունեն փոխադրամիջոցները:

Եթե ոչ ոք չի ասում «տրանսպորտ» բառը, այդ դեպքում ուսուցիչն արտասանում է այդ բառը և բացատրում, որ տրանսպորտին է վերագրվում այն ամենն, ինչը մարդն օգտագործում է՝ որպես տեղաշարժման և բեռնափոխադրող միջոց:

5. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (3-8 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է բնութագրել իրենց կողմից նշված տրանսպորտի տեսակները: Ո՞վ է երթևեկել այս կամ այն տրանսպորտով, արագ է ընթանում, թե՞ ոչ, ի՞նչ նմանություններ ունեն դրանցից մի քանիսը (ունե՞ն ակներ, վառելիք պե՞տք է...), ինչո՞վ են տարբերվում միմյանցից:

Այնուհետև ուսուցիչը հարցնում է, թե տրանսպորտի էլ ինչ տեսակներ են տեսել (կամ դրանց մասին լսել): Ի՞նչ գիտեն դրանց մասին:

Ուսուցիչն աշակերտներին ասում է, որ նրանց թվարկած տրանսպորտի միջոցներն ինքնուրույն չեն տեղաշարժվում, դրանք մարդիկ են վարում: Յուրաքանչյուր տրանսպորտի վարող իր անունն ունի: Ուսուցիչն ընդհանուր հարցեր է տալիս, իսկ երեխաները պետք է բարձրաձայն պատասխանեն.

– Ինչպե՞ս է կոչվում այն մարդը, ով մեքենա է վարում: (վարորդ)

– Ինչպե՞ս է կոչվում այն մարդը, որն ինքնաթիռ է վարում: (օդաչու)

– Ինչպե՞ս է կոչվում այն մարդը, որը նավի տեղաշարժումն է կառավարում: (նավավար կամ նավի կապիտան)

Հենց այստեղ էլ կարելի է այսպիսի հարցեր տալ.
– Ինչպե՞ս է կոչվում նավի վրա աշխատող մարդը: (նավաստի)
– Ինչպե՞ս է կոչվում այն մարդը, որը տրանսպորտով երթևեկում է: (ուղևոր)
Ուսուցիչը վարում է զրույց՝ կիրառելով հետևյալ հարցերը.
– Ինչո՞ւ էին հնում նավերի վրա առագաստներ ամրացնում:
– Ինչո՞ւ ժամանակակից նավերը առագաստների կարիք չունեն:
– Նավերն ինչպե՞ս էին տեղաշարժում հնում: (թիավարելով)
– Ի՞նչ կլիներ, եթե մարդը չհայտնագործեր անիվը:
– Վարորդները երթևեկության կանոնները պահպանելու կարիք ունե՞ն:

6. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

7. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ուսուցիչը հանձնարարում է հաջորդ պարապմունքի համար տանից բերել խաղալիք տրանսպորտ:

ԴԱՍ 8

Թեմա.	Տրանսպորտ և ճանապարհային նշաններ
Դասի վերնագիրը.	Ի՞նչ տրանսպորտով երթևեկենք
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան ծանոթանալ տրանսպորտի հին և ժամանակակից տեսակներին: Գիտակցել տրանսպորտով տեղաշարժվելու ժամանակ անվտանգության միջոցների պահպանման անհրաժեշտությունը: Դրվագներից հավաքել ամբողջական մոդել: Մասնակցել պարզ գործնական ակտիվությունների: Որոշել մարմինները, նկարագրել և բնութագրել դրանք: Դատողություն անել մարմինների բաղադրիչ նյութերի մասին, բնութագրել դրանք:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.4.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել մարմինները՝ ըստ բաղադրիչ նյութերի հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Նկարագրում է իր շուրջն առկա մարմինները և խոսում դրանց բաղադրիչ նյութերի մասին (օրինակ՝ մկրատ-երկաթ, տետրթուղթ, գրենական պիտույք): Որոշում է և անվանում առօրյա կյանքում տարածված նյութերը: Նյութերը նկարագրում է՝ ըստ հեշտ դիտարկելի հատկանիշների

(օրինակ՝ թափանցիկություն, առաձգականություն, ջրի մակերևույթին լողալու ունակություն, անջրանցիկություն):

Խմբավորում է միանման նյութերից պատրաստված մարմինները:

Անհրաժեշտ նյութ՝ մաքուր թղթեր, մկրատ, սոսինձ:

Դասի ընթացքը.

1. ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ (3-4 րոպե)

Աշխատանք խմբերում.

Ուսուցիչը դասարանը բաժանում է փոքր խմբերի և աշակերտներին խնդրում է նստարանների վրա դնել տանից բերված այսպես կոչված «տրանսպորտային միջոցները»: Յուրաքանչյուր խումբ կազմակերպում է «տրանսպորտի ցուցադրություն»: Աշակերտները հերթով մոտենում են խմբերից յուրաքանչյուրի սեղանին և ուսումնասիրում նրանց ներկայացրած տրանսպորտի տեսակը: «Հյուրընկալները» պետք է հերթով ասեն դրանց անունները և հակիրճ բնութագրեն (երթևեկության համար, բեռնափոխադրող...), թե ինչի համար է կիրառվում այս կամ այն տրանսպորտը (այսպես հերթով պետք է դիտեն բոլոր սեղանները): Դասի վերջում պետք է խաղալիքները դասավորել տուփի մեջ կամ շարել պատուհանի գոգին:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ (3-4 րոպե)

Աշխատանքային տետրի համապատասխան էջում տրված է աղյուսակ՝ երկու սյունակով և տրանսպորտի հին (ձի՝ ձիավորի, փիղ՝ փղապանի հետ, կառք ձիերով, ուղտ՝ ուղտավարի հետ, շների սահնակ) ու ժամանակակից (հեծանիվ, ժամանակակից նավ, ուղղաթիռ, ավտոմեքենա, մետրոյի վագոն) տեսակներ:

Ուսուցիչը դասարանին հանձնարարություն է տալիս՝ գույգերով կատարելու համար.

Աշակերտները պետք է որոշեն, թե ինչ նշանների հիման վրա առանձնացնեն նկարները և յուրաքանչյուր նկար տարբեր գույնի գծերով կապեն աղյուսակի ազատ վանդակների հետ (ձախ սյունակում կհայտնվեն ուղտը, փիղը, սահնակը, կառքը, աջ սյունակում՝ ուղղաթիռը, ավոտմեքենան, մետրոն, նավը):

Այս աշխատանքին պետք է նախորդի (կարելի է նաև հետո) զրույցն այն մասին, որ հնում մարդիկ տեղաշարժվելու համար կենդանիների էին օգտագործում: Տարբեր երկրներում դրա համար տարբեր կենդանիների էին վարժեցնում: Իսկ հիմնականում, այնուամենայնիվ, ձի էին օգտագործում, քանի որ ձին մյուս ընտանի կենդանիներից ամենաարագաշարժն է և հեշտ կառավարելին:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (4-5 րոպե)

Տրանսպորտի ժամանակակից միջոցների մասին խոսելիս՝ ուսուցիչը կարող է օգտագործել դասագրքում տրված համապատասխան նկարազարդումները:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ. «ՄԵՔԵՆԱ ՀԱՎԱՔԵԼ» (4-5 րոպե)

Աշակերտները պետք է դասագրքում գտնեն այն էջը, որտեղ տարբեր գույներով տրանսպորտի դետալներ են նկարված: Աշխատանքը շարունակվում է խմբերով: Երեխաները պետք է կտրեն-հանեն պատկերները, գուշակեն, թե որ տրանսպորտը կկառուցվի այս մասերից և փակցնեն մաքուր թղթի վրա (նավի մասերը դեղին գույնի են, ուղղաթիռինը՝ կապույտ, ավտոմեքենայինը՝ կարմիր):

Խմբերը կարող են կառուցել երեք տեսակի տրանսպորտներն էլ կամ ըստ ցանկության՝ միայն մեկը: Աշխատանքի ավարտից հետո ցանկալի է, որ աշխատանքները փակցվեն պատին:

5. ՀԱՐՑ– ՊԱՏԱՍԽԱՆ (3-4 րոպե)

Ուսուցիչը շարունակում է զրույցը՝ հետևյալ հարցերի կիրառմամբ.

– Ձեր կարծիքով, հնագույն ժամանակներում մարդիկ ինչի՞ց էին պատրաստում անիվը:

– Ինչպես եք պատկերացնում, ինչպիսի՞ն կլիներ փայտից պատրաստված անիվը (ո՞վ է տեսել սայլի անիվ, ինչպիսի՞ն է):

– Էլ ո՞ր տրանսպորտի համար են օգտագործում փայտը: (նավ, նավակ)

– Ո՞ր տրանսպորտի համար են կիրառում երկաթ և այլ մետաղներ:

– Ինչի՞ց են պատրաստում ավտոմեքենաների անվադողերը (ի՞նչ է անվադողը, ի՞նչ տարբերություն կա սայլի անիվի և անվադողի միջև):

– Ինչի՞ց են պատրաստում ավտոմեքենայի ղեկը (մեծամասամբ պլաստմասսայից): Ի՞նչ ձև ունի ղեկը:

6. ՈՐՈՇԵԼ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ (ՄՆՋԱԽԱՂ) (2-3 րոպե)

Ուսուցիչը երեխաներին առաջարկում է գուշակելու վրա հիմված խաղ: Այս դեպքում, սակայն, աշակերտները կմարմնավորեն ոչ թե ուղևորներին, այլ հենց տրանսպորտային միջոցները՝ համապատասխան շարժումներով ու ձայներով: Իսկ մյուսները պետք է գուշակեն, թե ինչ է դա և ասեն տրանսպորտի անունը:

Յուրաքանչյուր խմբի անդամներ մեջտեղ կարտահայտեն այս կամ այն տրանսպորտով (ենթադրաբար, գնացք, ավտոբուս՝ զույգով կկանգնեն, մարդատար ավտոմեքենա, նավ) երթևեկությունը պատկերող իրավիճակ: Մյուս խմբերի անդամները պետք է գուշակեն, թե որ տրանսպորտով են «երթևեկում» իրենց ընկերները: Ով գուշակի (կամ որ խմբի հերթը գա), նա կսկսի մեջտեղը:

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Երաշխավորություն.

Այս դասերում տրված ակտիվություններն ուսուցիչը կարող է ընտրել՝ ըստ իր հայեցողության (պարտադիր չէ բոլոր ակտիվությունների կիրառումը)՝ դասարանի տրամադրվածության ու հնարավորությունների նախատեսմամբ:

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=pLnyhPsiiNM

ԴԱՍ 9

Թեմա.	Մեր շուրջը
Դասի վերնագիրը.	Բնական և արհեստական
Դասի նպատակը.	Տվյալները կազմակերպել, հաշվառել, դասակարգել: Արդյունքները փոխանցել բանավոր: Պարզ գիտական տերմիններ կիրառել: Նկարագրել կենդանի մարմինների հիմնական հատկանիշները և տարբերությունը անկենդանից: Դիտարկել հիմնական կենսական հատկանիշները և նկարագրել դրանք: Տրված հարցերին պատասխանելու համար հիմնվել դիտարկման արդյունքների վրա:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Անհրաժեշտ նյութ՝ տիկնիկ, գունավոր մատիտներ:

1. ԲՆԱԿԱՆԸ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆԸ (2-3 րոպե)

Ուսուցիչը հարցով դիմում է դասարանին.

– Նախորդ դասին մենք քննարկել ենք փոխադրամիջոցները՝ տրանսպորտը: Մեկ անգամ ևս անդրադառնանք աղյուսակին, որը լրացրել ենք նախորդ դասին: Ձախ կողմում խմբավորեք այն տրանսպորտը, որով առավելապես հնում (երբեմն նաև ներկայումս) էին տեղափոխվում (ձի, փիղ, ուղտ, շուն), աջ կողմում՝ ժամանակակից տրանսպորտը:

– Ըստ ձեզ, ի՞նչն է միավորում ձախ կողմում տեղակայված տրանսպոտը: (կենդանի ուժով փոխադրվելը)

– Ա՞ջ կողմում տեղակայվածը: (անկենդան՝ մեքենա է)

– Դրանցից ո՞րն է բնական և ո՞րն է ստեղծված մարդու ձեռքով, այսպես կոչված՝ արհեստական:

– Ի՞նչ եք տեսնում ձեր շուրջը ցերեկ թե գիշեր: (ենթադրաբար՝ արև, լուսին, ջուր, գետեր, ծովեր, լեռ, անտառ, բույսեր, կենդանիներ և մեզ՝ մարդկանց): Սրանք բնակա՞ն են, թե՞ արհեստական:

Բնական է այն ամենը, ինչ մեր շուրջը, բնության մեջ ինքնըստինքյան գոյություն ունի:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐՔՈՎ (2-3 րոպե)

Ուշադիր դիտեք նկարները: Դատողություն արեք՝ ո՞րն է բնական, ո՞րը՝ այսպես կոչված արհեստական (մարդու ձեռքով պատրաստված):

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Ուշադիր դիտիր նկարները և որոշիր՝ որն է բնական և որը՝ ոչ: Այն, ինչը քո կարծիքով բնական է, դրա օղակը կանաչ գույնով գունավորիր, իսկ որը մարդու ձեռքով է ստեղծված՝ կարմրով:

4. ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ՝ ԿԵՆԴԱՆԻ ԵՎ ԱՆԿԵՆԴԱՆ (5-8 րոպե)

Ուսուցիչը մատնացույց է անում տետրում տրված ուրվագծերը և առաջադրանք է տալիս. գունավորե՛ք կենդանի բնությունն արտացոլող նկարները: Իսկ աշխատանքն ավարտելուց հետո աշակերտներին խնդրում է անվանել այն առարկաները, որոնք գունավորել են և հիմնավորել իրենց տեսակետը գոնե մեկ փաստարկով (շնչում է, քայլում, թռչում, սնվում, բազմանում և այլն):

5. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹ (5-8 րոպե)

Ուսուցիչը, ցանկալի է, ակներևության համար տիկնիկ բերի: Դուրս կանչի երեխաներից մեկ կամավորի և հարցերով դիմի դասարանին.

– Նրանցից ո՞րն է շնչում:

– Ո՞րն է սնվում:

– Ո՞րն է մեծանում:

– Ո՞րն է բազմանում:

– Ո՞րն է ինքնուրույն տեղաշարժվում:

Ցանկալի է, որ աշակերտներն իրենք ամփոփեն թեման.

Մարդը կենդանի է, շնչավոր է, քանի որ շնչում է, սնվում է, մեծանում է, ինքնուրույն տեղաշարժվում է, բազմանում է և այլն:

Իսկ անկենդանին, անշունչին այս ամենը բնորոշ չէ:

6. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (3-5 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասի ժամանակ քննարկված նյութը և հաջորդ դասի համար առաջադրանք է տալիս. դիտարկի՛ր քո բնակման միջավայրը: Ի՞նչն է նրանում կենդանի և ի՞նչը՝ անկենդան:

ԴԱՍ 10

Թեմա.	Մեր շուրջը
Դասի վերնագիրը.	Կենդանի և անկենդան
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան նկարագրել շնչավոր և անշունչ մարմինների հիմնական հատկանիշները և դրանք տարբերակել իրարից: Դիտարկել կյանքի հիմնական հատկանիշները և նկարագրել դրանք: Հետազոտել կենդանի մարմինների հիմնական կենսական պահանջմունքները: Մասնակցել պարզ պրակտիկ գործունեության: Մարմինները որոշել/տեսակավորել, նկարագրել:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:
Անհրաժեշտ նյութ.	գունավոր մատիտներ, մկրատ, սոսինձ:

1. ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ (5-7 րոպե)

Առաջադրանքը ստուգելուց հետո ուսուցիչը դիմում է դասարանին.
– Հիշե՛ք՝ ի՞նչ է բնությունը:
– Ուշադրությո՛ւն դարձրեք «բնություն» և «բնական» բառերին:
– Ինչ եք կարծում, դրանց միջև կա՞ ընդհանուր բան:

Ուսուցիչը երեխաներին մեկ անգամ ևս հասցնում է եզրակացության, որ բնության մեջ գոյություն ունեցող առարկաները կոչվում են բնական և խնդրում է թվարկել մարմիններ, որոնք նրանց կարծիքով բնական են:

2. ԿԵՆԴԱՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ (5-10 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է բացել գրքի համապատասխան էջը և ուշադիր դիտել տրված լուսանկարները. ի՞նչ նշանով են դրանք առանձնացված իրարից: Ինչպիսի՞ բնություն է ձախ կողմում, ինչպիսի՞ն աջ կողմում: Ասեն առարկաներ, որոնք շնչավոր են, բացատրեն՝ ինչ է նշանակում կենդանի (շնչում է, սնվում, մեծանում, բազմանում):
– Քեզ ի՞նչ է անհրաժեշտ ապրելու համար:

3. ԱՆԿԵՆԴԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆ (2-5 րոպե)

Ուսուցիչը խնդրում է անվանել և բնութագրել անկենդան բնությունը (քար, արև, լուսին և այլն):

4. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (5-10 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին ցույց է տալիս տետրում տրված նկարները և խնդրում ավելորդ նկարի վրա գիծ քաշել: Ցանկալի է, որ բացատրեն իրենց կարծիքը:

Այնուհետև ուսուցիչը երեխաներին առաջադրանք է տալիս՝ ուշադիր դիտել իրենց տետրում

տրված նկարները, խմբավորել և առանձին-առանձին թվարկել կենդանին ու անկենդանը: Այնուհետև համապատասխանաբար պետք է փակցնեն տետրում տրված սխեմայի մեջ:

5. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (5-7 րոպե)

Ուսուցիչն ամփոփում է դասի թեման: Այնուհետև աշակերտներին առաջադրանք է տալիս այս անգամ արդեն տանը որոշել, թե ինչը կհատկացնեն կենդանի և ինչը՝ անկենդան բնությանը:

ԴԱՍ 11

Թեմա.	Մեր շուրջը
Դասի վերնագիրը.	Մեր շուրջը
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան դիտարկման արդյունքում նկարագրել տեղի միջավայրը: Սեփական տեսակետը փաստարկված հիմնավորել: Նկարների միջոցով հաշվառել-կազմակերպել տվյալները: Արդյունքները փոխանցել բանավոր կամ նկարով: Ստացած արդյունքներով կիսվել՝ տարբեր հաղորդակցման միջոցների (նկարներ, լուսանկարներ) կիրառմամբ: Պատկերազարդման վրա որոշել մարմինները, նկարագրել, տեսակավորել:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարբական հետազոտական հմտություններ ու կարողություններ:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս: Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):
Անհրաժեշտ նյութ.	ֆորմատ, գունավոր մատիտներ, մկրատ, գրատախտակի մագնիսներ:

Դասի ընթացքը.

1. ԲՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ (5-10 րոպե)

Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է նախորդ դասին քննարկած թեմաները և ստուգում է առաջադրանքը (նկարի հիման վրա շնորհանդես կամ բանավոր նկարագրում):

Նկարագրի՛ր այն միջավայրը, որում ապրում ես:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐՔՈՎ (5-8 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել դասագրքի նշված էջը, դիտարկել, որոշել և անվանել՝ որոնք են մարդու ձեռքով ստեղծված, այսպես կոչված, արհեստական առարկաներ:Այստեղից ելնելով՝ դատողություն անել բնական և մարդու ձեռքով ստեղծված միջավայրի մասին:

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (5-7 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին ուշադիր ուսումնասիրել դասասենյակը, դիտարկել՝ ինչն է սենյակում բնական և ինչը՝ մարդու ձեռքով ստեղծված:

Ուսուցիչը մեկ անգամ ևս ուշադրությունը կենտրոնացնում է այն բանի վրա, որ միջավայրը, որտեղ ապրում ենք, լինում է ինչպես բնական, այնպես էլ մարդու ձեռքով ստեղծված:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (5-7 րոպե)

Ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է բացել Աշխատանքային տետրը և ուշադրությունը կենտրոնացնել համապատասխան էջում տրված նկարների վրա: Այնուհետև հանձնարարում է շրջագծել միայն այն առարկաները, որոնք, ըստ նրանց, պատկանում են բնական միջավայրին:

Դրանից հետո ուսուցիչն աշակերտներին առաջարկում է, որ նրանցից յուրաքանչյուրը 5 րոպեի ընթացքում էջի ստորին մասում տրված շրջանակի մեջ նկարի 1 բնական և 1 արհեստական՝ մարդու ձեռքով ստեղծված առարկա և կտրի-հանի այն:

5. ՇՆՈՐՀԱՆԴԵՍ (4-5 րոպե)

Ուսուցիչը գրատախտակին փակցված ֆորմատի թերթը բաժանում է երկու մասի և խնդրում է աշակերտներին նկարները տեղադրել համապատասխան կողմում: Քանի որ նրանք դեռ կարդալ չգիտեն, ուսուցիչը պայմանականորեն բնական առարկաները (մարմինները) նշելու համար սխեմայի ձախ կողմում նկարում է, օրինակ, ծառ, իսկ աջ կողմում՝ տուն: Աշակերտն ինքն է տեսակավորում նկարները համապատասխան կողմում:

6. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչը մեկ անգամ ևս բացատրում է բնական և մարդու ձեռքով ստեղծված, այսպես կոչված, արհեստական միջավայրը: Շեշտադրում է, որ դրանք երկուսն էլ այն միջավայրի անբաժան մասն են, որտեղ ապրում ենք մենք:

ԴԱՍ 12

Թեմա.	Մեր շուրջը
Դասի վերնագիրը.	Բնության պահակետում
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան տվյալները կազմակերպել, հաշվառել, դասակարգել: Ենթադրություններ արտահայտել: Արդյունքները բանավոր ձևով փոխանցել: Կիրառել պարզ գիտական տերմիններ: Նկարագրել կենդանի մարմինների հիմնական հատկանիշները և դրանք տարբերել անկենդանից:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական

զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):

Անհրաժեշտ նյութ. մատիտներ, տեսանյութ բնության մասին:

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐՔՈՎ (5-7 րոպե)

Ուսուցիչ. Ուշադիր դիտե՛ք նկարները: Ի՞նչ եք տեսնում: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
(Կենդանի է, քանի որ ծնվում է, մեծանում, սնվում, շնչում, շարժվում, մահանում ...)

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (3-5 ՐՈՊԵ)

Ուսուցիչ. Ո՞րն է ավելորդ: Վրան գի՛ծ քաշիր: Հիմնավորի՛ր:

3. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ (5-10 րոպե)

Մեկ րոպե պատկերացրեք, որ արևը չծագի, օդն անհետանա, ջուրը չորանա: Ըստ ձեզ, ի՞նչ կկատարվի:
– Բույսերը կապրե՞ն:
– Կենդանինե՞րը:
– Մարդի՞կ:

4. ՄԻՆԻ-ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ (5-10 րոպե)

Ուսուցիչն ուշադիր կլսի աշակերտների ենթադրությունը, որպես փաստարկ օգտագործելով նրանց ենթադրությունները՝ կավելացնի.

1. Առանց արևի լույսի և ջերմության բույսերը (աննշան բացառությամբ) և կենդանիները, այսինքն՝ կենդանի բնությունը, չի կարող գոյություն ունենալ:
2. Առանց ջրի բոլոր կենդանի արարածները կմեռնեն:
3. Կենդանի ամեն ինչի օդ է անհրաժեշտ:

5. ՔՆՆԱՐԿՈՒՄ (4-5 րոպե)

Ուսուցիչը դիմում է դասարանին.
– Ինչ եք կարծում, մարդիկ կապրեի՞ն առանց անկենդան բնության: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
(Ենթադրաբար. շնչում ենք օդ, ծարավը հագեցնում ենք ջրով, սնվում ենք բույսերով և կենդանիներով:)

6. ՄԵՆՔ ՊԱՇՏՊԱՆՈ՞ՒՄ ԵՆՔ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ (4-5 րոպե)

Ուսուցիչ. Ուշադիր դիտե՛ք ձեր գրքում տրված նկարները: Ի՞նչ եք տեսնում:
Այսինքն՝ ապրելու համար ձկանն անհրաժեշտ է մաքուր ջուր, ճնճղուկին՝ մաքուր օդ, կենդանուն և թռչնին՝ անտառ, մարդուն...

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցչը կամփոփի դասը և կհավելի. Մենք բնության մի մաս ենք, ուստի պետք է խնայենք և պաշտպանենք այն:
Խնայել բնությունը նշանակում է սիրել և պաշտպանել քո երկիրը:

8. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Այնուհետև ուսուցիչն առաջադրանք է տալիս. Ընտրե՛ք մեկ կենդանի առարկա, նկարագրե՛ք այն (ընտանի կենդանի, թռչուն, ծաղիկ), նրա բնակման միջավայրը, ի՞նչ է անհրաժեշտ ապրելու համար, ո՞վ է հոգ տանում նրա մասին, մասնակցո՞ւմ եք արդյոք դուք նրա խնամքին, ինչպե՞ս եք խնամում և այլն:

ԴԱՍ 13

Թեմա.	Մեր շուրջը
Դասի վերնագիրը.	Բնակման միջավայր
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան նկարագրել կենդանի մարմինների հիմնական հատկանիշները: Իրարից տարբերել կենդանին և անկենդանը: Դիտարկել կյանքի հիմնական հատկանիշները և նկարագրել դրանք: Գիտակցել օրգանիզմների կենսական պահանջմունքները: Դիտարկման արդյունքները բանավոր փոխանցել տարբեր ձևերով:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. Ի.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.Ի.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Հարց է ձևակերպում՝ տարբեր միջավայրերում ապրող բույսեր/կենդանիներ համեմատելու համար: Պատասխաններ է որոնում. դիտարկում է և համեմատում դասասենյակում, դպրոցի բակում, տեղի միջավայրում աճող տարբեր բույսերը (օրինակ՝ ըստ տերևների ձևի կամ չափի, ըստ ցողունների ձևի, հաստության կամ երկարության, ըստ ծաղիկների գույնի կամ չափի) կամ/և կենդանիներին (օրինակ՝ որդ, խխունջ, թիթեռ, մայիսյան բզեզ): Դիտարկման արդյունքները փոխանցում է տարբեր ձևով (բանավոր խոսքով, նկարով, կոլաժով, լուսանկարների միջոցով):
Անհրաժեշտ նյութ.	մատիտներ, հեքիաթ կամ մուլտֆիլմ «Երեք խոճկորները»:

1. ՍՏՈՒԳԵԼ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ (2-3 րոպե)

Ուսուցիչը դասը սկսում է տնային առաջադրանքի հարցմամբ: Ցանկություն ունեցողները համադասարանցիներին պատմում են իրենց սիրելի կենդանու, թռչունի կամ բույսի մասին: Ուսուցիչը համապատասխան հարցերով օգնում է ելույթ ունեցողներին (ցանկալի է, որ աշակերտը սահմանափակվի ոչ միայն արտաքինի նկարագրմամբ, այլև խոսի, թե ինչպես է խնամում նրան և այլն):

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐՔՈՎ (5-6 րոպե)

Դասը շարունակվում է գրքի վրա աշխատանքով: Ուսուցիչը դիմում է աշակերտներին՝ ուշադիր դիտել գրքում տրված նկարները, այնուհետ անվանել կենդանի արարածներին, որ պատկերված են նկարի վրա:

– Պատմեք՝ ի՞նչ գիտեք նրանց մասին:

– Որտե՞ղ են ապրում նրանք:

– Ի՞նչ է անհրաժեշտ նրանց ապրելու համար:

– Առանց ինչի՞ չեն կարող նրանք ապրել:

Ուսուցիչը հարցերի միջոցով աշակերտներին պետք է հասցնի այն եզրակացության, որ բոլոր կենդանի օրգանիզմներին ապրելու համար անհրաժեշտ է ջուր, օդ, սնունդ, ջերմություն, լույս:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԻ ՎՐԱ (3-4 րոպե)

Այնուհետև ուսուցիչը մատնանշում է Աշխատանքային տետրում տրված առաջադրանքը և խնդրում աշակերտներին՝օգնել բնակիչներից յուրաքանչյուրին գտնել իր բնակարանը (միացնել գծերով):

4. ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ (3-5 րոպե)

Նկարի վրա դուք տեսաք անտառի (ցամաքի) և ջրի բնակիչների: Նրանք կենդանի միջավայրի անբաժանելի մասն են կազմում:

– Հիշեք՝ ինչո՞վ է տարբերվում կենդանի միջավայրն անկենդանից:

(Ենթադրաբար՝ կենդանին ծնվում է, մեծանում, սնվում, բազմանում և այլն:)

Դուք, հավանաբար, նկատել եք նաև այն, որ նրանցից յուրաքանչյուրին ապրելու համար անհրաժեշտ է «տուն», որտեղ իրեն պաշտպանված է զգում:

Եկեք հիշենք. ինչպե՞ս է կոչվում ճնճղուկի «տունը» (բույն):

Արջի «տունը» (որջ):

Աղվեսի «տունը» (գետնափոր բույն):

Վագրի «տունը» (որջ, քարայր):

Մեղվի «տունը» (փեթակ):

Շան «տունը» (բույն):

Սկյուռի «տունը» (փչակ):

5. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (5-8 րոպե)

Ուսուցիչը քննարկման հարց է տալիս.

– Ի՞նչն է նրանց կյանքի համար վտանգ ստեղծում:

Ցանկալի է, ուսուցիչն անվանի որևէ կենդանի, իսկ աշակերտներն անվանեն այդ կենդանով սնվող կենդանին՝ հետևություն անելով, որ իրենց անվանած կեդանին առաջինի համար վտանգ է ներկայացնում, նրա թշնամին է: Հավանաբար՝ մուկ – կատու, եղնիկ – գայլ, մեղու – ծիտ, ծիտ – կատու և այլն:

6. ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹ (ՄՈՒԼՏՖԻԼՄ «ԵՐԵՔ ԽՈՃԿՈՐՆԵՐԸ») (5-10 րոպե)

Ուսուցիչն աշակերտների համար ցուցադրում է «Երեք խոճկորները» մուլտֆիլմը կամ ընթերցում է համանուն հեքիաթը: Տեսածից կամ լսածից ելնելով՝ աշակերտները եզրակացնում են, որ նրանց թշնամուց պաշտպանվելու համար տուն է անհրաժեշտ:

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (3-5 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասը և տալիս տնային առաջադրանք՝ հաջորդ դասի համար նկարել տուն, որում ապրում են:

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=swmbvGmB9R8

ԴԱՍ 14

Թեմա.	Մեր շուրջը
Դասի վերնագիրը.	Ինչն ինչից է պատրաստվում
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան դիտարկման հիման վրա արձանագրել սեփական տեսակետները: Ճանաչել տարածված նյութերը: Հարցեր տալ և ենթադրություններ արտահայտել: Վերլուծման հիման վրա եզրակացություններ անել: Նկարագրել շուրջն առկա մարմինները՝ բաղադրության նախատեսմամբ: Տեղեկություններ հավաքագրել և նշել: Կիրառել հաղորդակցման տարբեր ձևեր: Միանման նյութից պատրաստված մարմինները խմբավորել:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը կարող է գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ.I.4.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել մարմիններն՝ ըստ բաղադրիչ նյութերի հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով): Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Անվանում է անձնական հիգիենայի պարագաներ (օր.՝ սանր, ատամի խոզանակ, սրբիչ): Դատողություն է անում հիգիենայի կանոնների պահպանման նշանակության մասին: Նկարագրում է իր շուրջն առկա մարմինները և խոսում դրանց բաղադրիչ նյութերի մասին (օրինակ՝ մկրատ – երկաթ, տետր – թուղթ, գրենական պարագա ռետին – ռետին): Որոշում է և անվանում առօրյա կյանքում տարածված նյութերը: Խմբավորում է միանման նյութերից պատրաստված մարմինները:

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ. «ԵՐԵՔ ԽՈՃԿՈՐՆԵՐԻ ՏՆԵՐԸ» (5-10 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին հարցնում է՝ հիշո՞ւմ են արդյոք երեք խոճկորների մասին հեքիաթը.

–Ինչպե՞ս էին նրանց անունները (Նիֆ-նիֆ, Նուֆ-նուֆ և Նաֆ-նաֆ):

Ուսուցիչը հնարավորություն է տալիս աշակերտին պատմել հեքիաթը: Անհրաժեշտության դեպքում ուսուցիչն օգնում է նրան, հիշեցնում անհրաժեշտ մանրամասները:

Այնուհետև երեխաները բացում են դասագրքի այն էջը, որտեղ նկարած են երեք խոճկորները և նրանց տները: Աշակերտներն անհատապես պետք է որոշեն, թե որ տունը որ խոճկորին է պատկանում և հիմնավորեն, թե ինչու են այդպես կարծում:

Ուսուցչի հարցերը.

– Ո՞րն է ծղոտից տունը: Ո՞ր խոճկորին է պատկանում այս տունը: Ինչո՞ւ եք այդպես կարծում:

– Ո՞րն է փայտյա տունը: Ո՞ր խոճկորին է պատկանում փայտյա տունը:

– Ո՞րն է աղյուսից տունը: Ո՞ր խոճկորին է պատկանում աղյուսից տունը:

– Ո՞ր նյութից կառուցած տունն է ավելի դիմացկուն և հուսալի: Ինչո՞ւ:

– Ի՞նչ վտանգ է սպառնում ծղոտից տանը: (Հեշտությամբ է թափանցում անձրևը, քամին, չի դիմանա փոթորկին ...)

– Ի՞նչ է կատարվում բազմաթիվ տարիներ անց փայտյա տան հետ: (Տախտակները փտում են, որդը ուտում է փայտը, հեշտ է հրկիզվում:)

– Բացի աղյուսից, այսօր ի՞նչ են օգտագործում տներ կառուցելու համար: (Բլոկներ)

– Աղյուսից և բլոկից պատրաստած տան մեջ ինչի՞ համար են փայտանյութ օգտագործում:

– Տանն ինչո՞ւ են տանիք սարքում:

2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (3-5 րոպե)

Եկեք կառուցենք վիրտուալ բնակելի տուն. պատրաստենք շինանյութը և սկսենք... Ուսուցիչը ակտիվությանը մասնակցող երեխաների օգնությամբ գրատախտակի վրա տուն է նկարում, համապատասխանաբար, յուրաքանչյուր աշակերտ Աշխատանքային տետրի նշված էջի նշված տեղում տուն է նկարում:

Ցանկալի է, որ նկարելու ժամանակ ուսուցիչն ուշադրությունը կենտրոնացնի այն շինանյութի վրա, որն օգտագործում է «շինարարը»՝ տան յուրաքանչյուր մաս պատրաստելու համար: Օրինակ, տանիքը թիթեղից է կամ կղմինդրից (կավ, երկաթ), պատերը՝ աղյուսից, ավազից, ցեմենտից, դուռ-լուսամուտը՝ փայտից, աստիճանների բազրիքները երկաթից, փայտից և այլն:

Նկարելն ավարտելուց հետո, ուսուցիչը երեխաների ուշադրությունը կենտրոնացնում է այն բանի վրա, որ հաճախ մարդու ձեռքով ստեղծված շինանյութը ևս բնական բաղադրություն ունի (փայտ, քար, ավազ, կավ...): Սակայն գոյություն ունեն նաև արհեստական նյութեր, որոնք մարդն է հայտնագործել (պլաստմասսա, ռետին և այլն): Վերջինիս մեջ ավելի լավ կողմնորոշվելու նպատակով, ցանկալի է, որ ուսուցիչն օգտվի իրենց ձեռքի տակ եղած դիդակտիկ նյութերից, դպրոցական պարագաներից (քանոն, ֆլոմաստեր, ռետին, գրիչ), մատնացույց անի մետաղա-պլաստմասսայե լուսամուտները, եթե դպրոցում կան այդպիսիք:

3. ՔՆՆԱՐԿՈՒՄ (4-5 րոպե)

Ուսուցիչը տալիս է քննարկման հարցեր.

– Ինչ եք կարծում, մարդու կողմից կիրառվող բնական նյութը վնասո՞ւմ է շրջակա միջավայրը:

– Արտահայտեք ենթադրություն և հիմնավորեք ձեր տեսակետը:

– Ի՞նչը կփոխեք, որպեսզի բնությունը փրկվի: Մտածեք ելք:

Քննարկումը վարում է ուսուցիչը, և հարցի էության մեջ ճիշտ կողմնորոշվելու համար, անհրաժեշտ հարցերով օգնում է աշակերտներին (ենթադրաբար՝ ի՞նչ կարող է հարուցել մեծ քանակությամբ ծառերի հատումը, գետի հունից մեծ քանակությամբ ավազ և քար հանելը և այլն):

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ. ԱՎԱՐՏԵԼ ՆԿԱՐԸ (3-5 րոպե)

Առաջադրանք անհատապես կամ խմբերում աշխատելու համար.

Աշակերտի տետրի համապատասխան էջում տրված է տների և ցանկապատի ուրվանկար: Տպավորությունն այնպիսին է, որ առաջին տունը ցանկապատից այն կողմ է, երկրորդ տունը՝ ցանկապատից այս կողմ: Առաջադրանքն այսպիսին է. աշակերտները պետք է շարունակեն նկարել այնպես, որ երկրորդ տունը ևս հայտնվի ցանկապատի այն կողմում: (Երեխաները պետք է կռահեն, որ դրա համար անհրաժեշտ է ցանկապատերը միացնել՝ նկարել-ավելացնել:) Այնուհետև ուսուցիչը

ստուգում է, թե ինչպես կատարվեց առաջադրանքը, և խնդրում է աշակերտներին գունավորել նկարը:

Ուշադիր դիտեք նկարը էջի ստորին մասը:

– Ինչ եք կարծում, ինչի՞ համար է տղան տուն պատրաստում: Միացրե՛ք կետերը և գունավորե՛ք:

5. ԽԱՂ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՄԱՆ ՀԱՄԱՐ (2-3 րոպե)

Ուսուցիչը խնդրում է երեխաներին մեկ հայացքով (կամ մոտավորապես մինչև 10-ը հաշվելով) լավ դիտել այն նկարը, որը էջի վերին մասում է և ծածկել գրքերը (կամ թերթել էջը): Մասնակիցները պետք է հիշեն և պատասխանեն ուսուցչի տված հետևյալ հարցերին.

– Քանի՞ տուն կար նկարի վրա:

– Ո՞ր տունն ուներ ծխնելույզ (ձախը, թե՞ աջը):

– Քանի՞ ծիտ էր թռչում:

– Ի՞նչ էր նստած ցանկապատի վրա:

– Բակում ինչի՞ ծառ կար: Որտե՞ղ էր գտնվում խնձորենին:

– Ծառի վրա քանի՞ խնձոր կար:

6. ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչն ամփոփում է դասի ժամանակ քննարկված թեման:

7. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ուշադիր ուսումնասիրի՛ր այն տունը, որտեղ ապրում ես (ինչ նյութ է օգտագործած պատերի կառուցման համար, դուռ-լուսամուտի համար և այլն) և հաջորդ դասին նկարագրի՛ր այն: Ցանկալի է, որ այս առաջադրանքը կատարվի ընտանիքի անդամների հետ:

ԴԱՍ 15

Թեմա.	Մեր շուրջը
Դասի վերնագիրը.	Որտե՞ղ է ապրում ընտանիքը
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան դիտարկման հիման վրա արձանագրել անձնական կարծիքները: Որոշել առօրյա կյանքում տարածված նյութերը: Հարցեր տալ և ենթադրություններ արտահայտել: Վերլուծության հիման վրա եզրակացություններ անել: Շուրջը գտնվող մարմինները նկարագրել՝ բաղադրության նախատեսմամբ: Կիրառել հաղորդակցման տարբեր ձևեր: Խոսել մարմնի բաղադրության մասին: Խմբավորել միևնույն նյութից պատրաստված մարմինները: Դատողություն անել հիգիենայի պահպանման նշանակության մասին:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը կարող է գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ.I.4.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել մարմիններն՝ ըստ բաղադրիչ նյութերի հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները

	կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով): Անվանում է անձնական հիգիենայի պարագաներ (օր.՝ սանր, ատամի խոզանակ, սրբիչ): Դատողություն է անում հիգիենայի կանոնների պահպանման նշանակության մասին: Նկարագրում է իր շուրջն առկա մարմինները և խոսում դրանց բաղադրիչ նյութերի մասին (օրինակ՝ մկրատ – երկաթ, տետր – թուղթ, գրենական պարագա ռետին – ռետին): Որոշում է և անվանում առօրյա կյանքում տարածված նյութերը: Խմբավորում է միանման նյութերից պատրաստված մարմինները:
Անհրաժեշտ նյութ.	գունավոր մատիտներ, մկրատ, սոսինձ, հավելվածի գունավոր թերթեր:

Դասի ընթացքը.

1. ՇՆՈՐՀԱՆԴԵՍ (3-5 րոպե)

Դասի սկզբում ուսուցիչը ստուգում է տնային առաջադրանքը, այնուհետև հարցեր է տալիս.
– Որտե՞ղ է ապրում ընտանիքը:
– Ինչպիսի՞ տներում են ապրում մարդիկ գյուղում:
– Ինչպիսի՞ բնակելի տների ենք հանդիպում քաղաքում:
– Ինչպե՞ս է կոչվում բազմահարկ բնակելի տունը, որտեղ բազմաթիվ ընտանիքներ են ապրում: (շենք)
Համապատասխան լուսանկարները կարող են դիտել դասագրքում:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (10-15 րոպե)

Ինքնուրույն աշխատանք
Ուսուցիչն աշակերտներին խնդրում է աշխատել դասագրքի համապատասխան էջի վրա (ուսուցիչը կարող է երեխաների նկարների ցուցահանդես կազմակերպել): Նման դեպքում, վերը տրված հանձնարարությունը երեխաները սովորական թղթի վրա կկատարեն: Գրքի հերոսների համար երեխաները պետք է տուն «կառուցեն»: Որոշ աշակերտներ քաղաքի տուն են ընտրում, ոմանք էլ՝ գյուղի: Գրքի հավելվածում եղած գունավոր թղթերով աշակերտները պետք է պատկերներ կտրեն (քառակուսիներ, ուղղանկյունիներ, եռանկյունիներ), փակցնեն թղթի վրա ու տներ «կառուցեն»:
Այնուհետև կարող են ձևավորել. գունավոր թղթերից կտրեն և փակցնեն կամ նկարեն արև, ծառեր, ամպեր...

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ (3-5 րոպե)

Ուսուցիչը խնդրում է ցանկացողներին (երկու-երեք աշակերտի) նկարագրել իրենց աշխատանքները, օրինակ.
– Սա այն տունն է, որտեղ... (օրինակ՝ ապրում է տղան):
– Սա այն տունն է, որտեղ... (ապրում է աղջիկը):
– Այս տանն ապրում են երկուսն էլ, տղան՝ II հարկում, աղջիկը՝ IV հարկում):
– Այս տանը... (ապրում է ընտանիք՝ տատիկ, պապիկ, հայր, մայր...) և այլն: Այլ տարբերակներ էլ կարելի է մտածել:
Իրենց աշխատանքները ներկայացնելուց հետո, եթե աշակերտներն աշխատել են հասարակ թղթերի վրա, ուսուցիչը նրանց աշխատանքները փակցնում է պատին կամ ամրացնում է պատի երկայնքով կապած պարանին (այս դեպքում պարանն այնպես պետք է կապված լինի, որ աշակերտները դրան հեշտ չհասնեն):

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ. ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ (8-10 րոպե)

Այժմ ուսուցիչը երեխաներին առաջարկում է «նայել» տան ներսը և դիտել սենյակները: Դրա համար աշակերտները պետք է բացեն դասագրքի համապատասխան էջը և նայեն կտրվածքով տրված սենյակների նկարները:

I սենյակ՝ ննջասենյակ – Մեր ընկերուհին արթնանում է և վեր է կենում անկողնուց:

II սենյակ՝ լոգարան – Լվացվում է:

III սենյակ՝ խոհանոց – Երեխաները ճաշում են:

IV սենյակ՝ հյուրասենյակ – Երեխաները խաղում են կամ գիրք են կարդում:

Առաջադրանք զույգերով աշխատելու համար. Աշակերտները պետք է հասկանան, թե որ սենյակն ինչ նշանակում ունի և ինչպես է կոչվում, ու բացատրեն, թե ինչու են այդպես կարծում:

Այնուհետև մասնակիցները մեկը մյուսին օգնելով, զույգերով (կամ հերթով՝ 2 նկարը մի աշակերտը, երկուսը՝ մյուսը) նկարագրում են նկարներն ու ասում սենյակների անվանումները:

Բավական է մի քանի զույգի հարցնել՝ ներկայացնելու համար, թե ինչպես են կոչվում սենյակները բնակելի տան մեջ, և մի քանի անգամ կրկնել այդ անունները:

Ուսուցիչը դիմում է ամբողջ դասարանին, բայց ցանկալի է, որ հարցերին պատասխանեն այն զույգերը, որոնք նախորդ ակտիվությանը չեն մասնակցել:

Զրույցի հարցեր (տրված նկարների կիրառմամբ).

– Ո՞վ ցույց կտա ննջասենյակի հատակը: Ի՞նչ է հատակը: Ի՞նչ նյութից են պատրաստում այն (փայտ, քար, լամինացված հատակ):

– Հատակը վերևու՞մ է, թե՞ ներքևում:

– Ո՞վ ցույց կտա, որտե՞ղ է այս սենյակի անկյունը: Մեր դասասենյակում որտե՞ղ է անկյունը:

– Այս սենյակի առաստաղը երևու՞մ է: Առաստաղը վերևու՞մ է, թե՞ ներքևում:

– Ըստ ձեզ, ինչպիսի՞ եղանակ է դրսում:

– Ո՞ր սենյակում է կախված պատի ժամացույցը:

– Լոգարանից դուրս գալու դուռը աջ կողմում է, թե՞ ձախ կողմում:

– Որտե՞ղ է երևում դուռը: Ո՞րն է դռան նշանակումը:

– Ո՞վ ցույց կտա դռան վրայի բռնակը: Ի՞նչ նշանակում ունի բռնակը:

– Ի՞նչ են օգտագործում լոգասենյակի երեսպատման համար: Ինչի՞ց են պատրաստված պատերը, հատակը: Հիմնավորի՛ր:

5. ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ (2-3 րոպե)

Ուսուցիչը երեխաների ուշադրությունը դարձյալ հրավիրում է խոհանոցի նկարի վրա:

Այդ նկարում տնային տնտեսուհին ինչ-որ բան է գցում աղբի դույլի մեջ...

Ուսուցչի հարցերը.

– Ինչ եք կարծում, ի՞նչ է անում տնային տնտեսուհին:

– Ինչո՞ւ է ընտանիքում աղբ հավաքվում:

– Ի՞նչ տեղի կունենա, եթե աղբը նետենք հատակին ու ոչ թե՝ աղբի դույլի մեջ:

– Մտածե՛ք և թվարկե՛ք՝ ի՞նչ կարելի է գցել աղբի դույլի մեջ:

– Ի՞նչ պետք է անենք տանը կուտակված աղբը: Ո՞ւր տանենք:

– Ձեզանից ո՞վ է օգնում ծնողներին ու թափում աղբը:

– Կարելի՞ է աղբը բակում թափել: Ինչո՞ւ:

– Ի՞նչ տեղի կունենա, եթե բոլորն աղբը բակում թափեն:

– Ի՞նչ կլինի, եթե աղբը դասասենյակում թափենք:

Վերջում ուսուցիչը երեխաներին խնդրում է իրենց շուրջը նայել, տեսնել, թե արդյոք հատակին աղբ չկա՞, և եթե որևէ բան լինի գետնին ընկած, վերցնեն ու գցեն աղբամանի մեջ:

6. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2 րոպե)

ԴԱՍ 16

Թեմա.	Մեր շուրջը
Դասի վերնագիրը.	Կահույք և անձնական իրեր
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան անվանել անձնական հիգիենայի իրերը և դատողություն անել հիգիենայի կանոնների պահպանման նշանակության մասին: Նկարագրել շուրջը գտնվող մարմինները և խոսել դրանց բաղադրիչ նյութերի մասին: Նյութերը որոշել, անվանել: Նյութերը բնութագրել՝ ըստ հեշտ դիտարկելի հատկանիշների: Խմբավորել միանման նյութերից պատրաստված մարմինները:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.4.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել մարմիններն՝ ըստ բաղադրիչ նյութերի հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Նկարագրում է իր շուրջն առկա մարմինները և խոսում դրանց բաղադրիչ նյութերի մասին (օրինակ՝ մկրատ – երկաթ, տետր – թուղթ, գրենական պարագա ռետին – ռետին): Որոշում է և անվանում առօրյա կյանքում տարածված նյութերը: Խմբավորում է միանման նյութերից պատրաստված մարմինները:
Անհրաժեշտ նյութ.	գունավոր մատիտներ:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (7-9 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին բաժանում է փոքր խմբերի և խնդրում է պատկերացնել, որ յուրաքանչյուր խումբ մեկ ընտանիք է: Ընտանիքը նոր բնակարան է տեղափոխվում, այդ պատճառով իրենց իրերն էլ պետք է տեղափոխեն:

Աշակերտները պետք է բացեն Աշխատանքային տետրի այն էջը, որտեղ տրված են «կահույքը և անձնական իրերը», խմբերը դիտում են էջի վերևի մասում տրված նկարները. «յուրաքանչյուր ընտանիք» (կամ խումբ) պետք է ընտրի 4 իր, որ ամենակարևորն է իր համար և որն առաջին հերթին է ցանկանում իր հետ տեղափոխել (մյուս իրերը տեղափոխելու հնարավորություն միայն 3 օր հետո կունենան): Երեխաները խմբում պետք է ընդհանուր համաձայնության գան ու գունավորեն իրենց նախընտրած 4 իրը:

Շնորհանդեսի ժամանակ յուրաքանչյուր խումբ անվանում է իր ընտրած իրերն ու պարզաբանում, թե ինչու են կատարել այդպիսի ընտրություն (կամ ինչու են համարել, որ այդ իրերն ամենից անհրաժեշտը կլինեն իրենց): Զուգահեռաբար աշակերտները դատողություն են անում ընտանիքի համար յուրաքանչյուր իրի նշանակման և կարևորության մասին:

Հավանաբար խմբերի կողմից կատարված ընտրությունը միանման չի լինի, և անհրաժեշտ կլինի տրված բոլոր իրերն անվանել ու բնութագրել: Իսկ եթե, ասենք, որևէ իր ոչ մի խմբի կողմից չընտրվի, այդ դեպքում ուսուցիչը հարցնում է, թե ինչու ոչ ոք չի ընտրել այն, ընդհանրապես տանն այն անհրաժեշտ չէ՞, թե՞ հաջորդ անգամ կտանեն:

Ակտիվության վերջում ուսուցիչը խնդրում է տալ աթոռ, սեղան, մահճակալ, պահարան, բազմոց,

բազկաթոռ իրերի ընդհանուր անվանումը: Եթե ոչ ոք չի պատասխանում, այդ դեպքում բացատրում է, որ թվարկվածը կահույք է:

2. ՆՈՒՅՆ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԻՐԵՐ ԳՏՆԵԼ ԴԱՍԱՍԵՆՅԱԿՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչը հարց է տալիս. ի՞նչ կահույք ունենք մեր դասասենյակում:

Երեխաները նայում են իրենց շուրջը, անվանում դասասենյակում եղած կահույքը: Եթե որևէ բան աշակերտները մոռանում են, ուսուցիչը ձեռքով ցույց է տալիս և հարցնում է, թե ինչ է դա: Դա՞ էլ է կահույք, թե՞ ոչ:

3. ԽԱՂ. «ԳՈՒՇԱԿԵՆՔ ՁԱՅՆՈՎ» (5-6 րոպե)

Խաղն ընթանում է երկու մեծ խմբերի միջև: Մի խմբի անդամները շրջվում են դեպի պատը, նրանք չպետք է տեսնեն, թե դասասենյակում եղած իրերից որն է ցույց տալիս ուսուցիչը մյուս խմբին: Երկրորդ խմբի աշակերտներին ուսուցիչը ցույց է տալիս որևէ իր: Աշակերտները տարբեր միջոցներով պետք է արտահայտեն և նկարագրեն, թե ինչպիսին է այդ իրը՝ մեծ և ծա՞նր է, թե՞ փոքր ու թեթև: Անվանեն՝ ինչի՞ց է այն բաղկացած, ի՞նչ մասեր ունի, բացվում է, թե՞ ոչ, ի՞նչ գույնի է, ինչպիսի՞ մակերևույթ ունի, ունի՞ արդյոք հոտ, առաձգակա՞ն է և այլն: Առաջին խմբի աշակերտները պետք է կռահեն, թե ինչ իր է ցույց տվել ուսուցիչը (օրինակ՝ եթե պահարան է ցույց տվել, աշակերտները պետք է գուշակեն ոչ թե այն, որ դա պահարան է, այլ այն, որ դա մեծ և ծանր իր է: Եթե գիրք է ցույց տրվել, աշակերտները պետք է շարունակեն բնութագրել իրը, մինչև առաջին խմբի անդամները գուշակեն այն):

Խաղից հետո ցանկալի է, որ երեխաները բացատրեն, թե ինչպես էին ընկալում և ինչ պատկերացումներ էին ստեղծվում նրանց մոտ խաղի ժամանակ և ինչ էին զգում:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻՆ (5-7 րոպե)

Ուսուցիչը խնդրում է երեխաներին դարձյալ վերադառնալ Աշխատանքային տետրին և ուշադիր դիտել աշխատանքային էջի ներքևի մասը.

– Ի՞նչ իրեր են այստեղ նկարված:

– Կարո՞ղ ենք դրանք անվանել անձնական իրեր:

– Ինչո՞ւ ենք դրանք անվանում անձնական իրեր, ի՞նչ է նշանակում անձնական իրը:

Առաջադրանք զույգերով աշխատելու համար.

Ուսուցիչը բացատրում է, որ որոշ անձնական իրեր ոչ ոքի չի կարելի ժամանակավորապես տալ, որոշ իրեր կարելի է: Աշակերտներն իրենց զույգերի հետ պետք է համաձայնության գան ու կռահեն, թե տրված անձնական իրերից որը չի կարելի ժամանակավորապես տալ ուրիշի, և համապատասխան նկարները գունավորել ու շրջագծել (այդպիսիք են սանրը, ատամի խոզանակը, սրբիչը և թաշկինակը, օճառը):

Ուսուցիչը հերթով ստուգում է զույգերի կատարած հանձնարարությունները. երեխաները պետք է թվարկեն իրենց ընտրած իրերն ու հիմնավորեն, թե ինչու են համարում, որ այդ իրն ուրիշին ժամանակավորապես տալ (կամ ուրիշի կողմից օգտագործվել) չի կարելի:

Ուսուցիչը հարցնում է մի քանի զույգի, այնուհետև աշակերտներին մնացած իրերն էլ (մկրատ, օճառ, արևային ակնոց, հագուստի խոզանակ, օծանելիք) է տալիս անվանել և խնդրում է արտահայտել իրենց կարծիքը՝ թե ինչու կարելի է մնացած անձնական իրերը ժամանակավորապես տալ ուրիշի:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔԻ ՎՐԱ. «ՄԵՐ ԸՆԿԵՐՈՋԸ ՍՈՎՈՐԵՑՆԵՆՔ ԽՆԱՄԵԼ ԻՐԵՆ» (5-7 րոպե)

Հանձնարարություն խմբերով կատարելու համար.

Դասագրքի հաջորդ էջին տրված է տղայի նկար: (Ներքևում երևում են նրա ատամները և ձեռքի մատները:) Ուսուցիչն աշակերտներին հարցնում է. ի՞նչ է պատահել տղային: Ինչո՞ւ այդպիսի տեսք ունի նա:

Խմբի անդամներն իրենց ելույթներում խորհուրդներ են տալիս հասակակցին, թե ինչ և ինչպես պետք է անել:

Այնուհետև ուսուցիչը երեխաներին ասում է, որ գուցե տղան չգիտի, թե ինչպես պետք է մաքրի ատամները: «Այդ պատճառով սովորեցնենք Նիկոլոզին մաքրել ատամները»:

Ուսուցիչը երեխաներին բացատրում է, թե ինչպես է պետք խոզանակով մաքրել ատամները: Դրա համար նա վերցնում է իր խոզանակն ու (կամ տրված նկարի վրա) ցույց է տալիս բոլոր ուղղություններով խոզանակի շարժումները՝ վերև, ներքև, աջ, ձախ, ներսի կողմից: Այնուհետև բացատրում է, որ խոզանակն օգտագործելուց հետո պետք է լավ լվանալ, հետո նոր դնել իր տեղը:

Դասի ավարտին ուսուցիչը հույս է հայտնում, որ սրանից հետո գրքի հերոսը և իր աշակերտները օրվա ընթացքում երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան, ճիշտ կմաքրեն ատամներն ու ճերմակ, առողջ ատամներ կունենան:

6. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (3-5 րոպե)

Ուսուցիչը տալիս է քննարկման հարցեր.
– Էլ ի՞նչը կարող ենք դասել անձնական իրերի շարքում:
– Կարելի՞ է ուրիշին ժամանակավոր օգտագործման տալ կոշիկը (տաբատը, գլխարկը): Ինչո՞ւ:
– Ինչպե՞ս է պետք խնամել անձնական իրերը: Ինչպե՞ս պահենք դրանք մաքուր վիճակում:

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (3-5 րոպե)

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=DEWGBw95bJw

ԴԱՍ 17

Թեմա.	Աշուն
Դասի վերնագիրը.	Աշուն
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան դիտարկել ուսումնասիրվելիք օբյեկտը: Մասնակցել գործնական ակտիվությունների: Կենդանի մարմինները խմբավորել: Տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները նկարագրել: Բույսերին բնորոշ փոփոխությունները նկարագրել և համապատասխանաբար փաստարկել: Նկարագրել կենդանի մարմինների հիմնական հատկանիշները և դրանց տարբերությունները անկենդանից: Հետազոտել օրգանիզմի վրա արտաքին գործոնների ներգործությունը:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների: Բնագիտ.I.5.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և կողմնորոշվի նրանում: Բնագիտ.I.6.Աշակերտը պետք է կարողանա բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս: Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Ձյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»): Որոշում է և անվանում ծանոթ բույսերի հիմնական մասերը (օրինակ՝ ցողուն, տերև, արմատ, ծաղիկ, պտուղ): Խմբավորում է կենդանի մարմիններն՝ ըստ բույսերի և կենդանիների, հիմնավորում է սեփական որոշումը: Որոշում է և թվարկում ուսումնական միջավայրում (օր.՝ դասասենյակ, դպրոցի միջանցք, դպրոցի բակ, մարզադահլիճ, զուգարան, ճաշարան, բժշկի կաբինետ, վայր, որտեղ պետք է սպասի ավագներին) առկա օբյեկտները և խոսում դրանց նշանակման մասին: Անվանում է և իրար հետ համեմատում տարվա եղանակները, դատողություն է անում դրանց տարբերակիչ հատկանիշների մասին: Խոսում է դրանցից յուրաքանչյուրին բնորոշ եղանակի մասին: Թվարկում է մարդու գործունեության (օրինակ՝բույսեր տնկել, խաղողաքաղ, բերքահավաք), կենդանիների վարքի (օրինակ՝ թռչունների չու, ձմեռային քուն) և բույսերին բնորոշ փոփոխությունների (օրինակ՝ ծաղկունք, տերևաթափ) օրինակներ՝ ըստ տարվա եղանակների:
Անհրաժեշտ նյութ.	սոսինձ, գունավոր թղթեր, մկրատ, գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, տերևներ:

Դասի ընթացքը.

1. ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԴՊՐՈՑԻ ԲԱԿՈՒՄ (25-30 րոպե)

Ուսուցիչը դասը սկսվելուն պես երեխաներին ծանոթացնում է պլանը.

– Այսօր դպրոցի բակում եք դասն անցկացնելու, դրա համար պետք է ուշադիր լինեք ու բակում պահպանեք վարքի կանոնները (չցրվեք, չաղմկեք, ուշադիր լսեք ինձ...): Էքսկուրսիա-դասը կապված է տարվա համապատասխան եղանակի՝ աշնան հետ:

Ուսուցիչը երեխաներին կազմակերպված դուրս է տանում դպրոցի բակ, և միասին ուսումնասիրում են տնկիները: Ծառաբույսերի, խոտերի ու թփերի վրա արդեն զգացվում է աշնան հետքը. մի մասի տերևները դեղնանարնջագույն են գունավորված, մյուսների տերևները թափվել են արդեն: Հարցադրումներով ուսուցիչը փորձում է երեխաներին ցույց տալ այդ երևույթը: Եթե դպրոցի բակում խաղողի վազի վրա խաղող կա կամ մեկ այլ մրգատու ծառի վրա՝ միրգ, անպայման այդ երևույթին էլ պետք է ուշադրություն դարձնեն: Ուսուցիչը պետք է նշի ու բացատրի, որ աշնանը շատ մրգեր են հասունանում:

Այնուհետև ուսուցիչը տալիս է հետևյալ հարցերը.

– Ինչ եք կարծում, այս քարն աշնանը որևէ փոփոխության ենթարկվու՞մ է:

– Ինչո՞ւ եք այդպես կարծում:

– Ո՞րն է կենդանի՝ քարը, թե՞ ծառը: Թուփը, թե՞ քարը, մրջյունը, թե՞ քարը:

– Էլ ի՞նչ եք տեսնում ձեր շուրջը կենդանի:

– Քարից բացի, ի՞նչ այնպիսի բան կա ձեր շուրջը, որ անկենդան է:

(Այս և նման հարցերի միջոցով ու բնությունն ուսումնասիրելով՝ երեխաներն իրենք կկարողանան կենդանի ու անկենդան օբյեկտների հիմական հատկանիշները նկարագրել և համեմատել):

Ուսուցիչը երեխաներին բացատրում է, որ աշնան ազդեցությունն անկենդան բնության վրա էլ է զգացվում: Նայենք երկնքին: Ի տարբերություն ամռան, աշնանն ամպերն ավելի մուգ են ու մռայլ: Արևը թեև լուսավորում է, բայց, ի տարբերություն ամառվա, այլևս չունի այրող ճառագայթներ, այդ պատճառով զգալիորեն ավելի հով է: Եթե անձրևում է, դա գարնան ճղփացող անձրև չէ արդեն, այլ բավականին երկար, անդադար ու ձանձրալի անձրև, ամպերի որոտն ու կայծակն էլ հազվադեպ են դառնում:

Այնուհետև ուսուցիչը երեխաներին խնդրում է թափված տերևներից ընտրել մի քանիսը և նկարագրել: Կպարզվի, որ բոլորը նույն գույնի չեն. տերևները բազմերանգ են, չնայած դեղին գույնը գերակշռում է:

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է համեմատել տերևներն՝ ըստ ձևի, մեծության, գույնի՝ արդյոք կկարողանա՞ք գտնել երկու նույնանման տերև:

Այս հանձնարարությունը կատարելուց հետո, աշակերտները պետք է հանգեն եզրակացության, որ երկու միանման տերև գտնելն անհնար է: Իսկ ուսուցիչն իր հերթին ավելացնում է, որ բնության մեջ այդպիսի բան գոյություն չունի, տերևները կարող են շատ նման լինել իրար, սակայն երկու ճիշտ նույնանման չեն կարող լինել, բոլորն անկրկնելի են: Աշակերտները տերևները պետք է հետները տանեն դասարան:

Բակում գտնվելիս ուսուցիչն աշակերտներին տանում է այնտեղ, ուր միջավայրն աղտոտված է (այդպիսինի գոյության դեպքում): Նա աշակերտներին հարցնում է՝ ի՞նչն է տհաճ ձեր աչքին: Ի՞նչն է տգեղացնում միջավայրը: Ուսուցիչն աշակերտներին պետք է հանգեցնի այն կարծիքին, որ աղբն ու թափոնները տգեղացնում ու աղտոտում են միջավայրը: Պետք է դրանք լցնել աղբամանի մեջ: Ուսուցիչը թափոնները հավաքելու համար նախապես պատրաստած ունի հիգիենիկ ձեռնոցներ: Նա երեխաներին բաժանում է ձեռնոցներ և աղբի համար նախատեսված պոլիէթիլենային տոպրակներ և խնդրում է հավաքել բակում գտած աղբը և լցնել աղբամանի մեջ: Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը հրավիրում է թափված տերևների վրա և հետաքրքրվում է՝ կարելի՞ է արդյոք այն կենցաղային աղբ համարել, և խնդրում է հիմավորել պատասխանը:

ԽԱՂ. ՏԵՐԵՎԱԹԱՓ (5-6 րոպե)

Ուսուցիչը բակում (կամ կարող են վերադառնալ դասասենյակ ու այնտեղ խաղալ) երեխաներին բաժանում է փոքր խմբերի: Յուրաքանչյուր խումբ ժեստերի ու դիմախաղի միջոցով պետք է մարմնավորի դեղին տերև (խաղա ընկնելու կամ օդում քամուց պտտվելու տեսարան. ինչ է զգում, ինչ ապրումներ ունի, ինչից է վախենում, ուրախ է, թե՞ ոչ, որ պոկվել է ծառից և այլն: Երեխաների երևակայությունն այս ուղղությամբ անսահման է): Խաղին կարող է մասնակցել ամբողջ խումբը, ցանկալի է, որ ոչ մի ցանկացող երեխա անուշադրության չմատնվի, և բոլորին տրվի խաղալու հնարավորություն:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել Աշխատանքային տետրը և գունավորել աշնան տերևները:

3. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Ուսուցիչն ամփոփում է դասը. աշակերտները հիշում ու պատմում են, թե այսօր ինչ հետաքրքիր ու նոր բան են տեսել, ինչն են մտապահել, ինչն է նրանց դուր եկել, կամ ինչը դուր չի եկել...

Երաշխավորություն.

Նման դասերի ժամանակ երեխաների մոտ բազմաթիվ հարցեր են առաջանում: Հնարավորության սահմաններում բոլորին տվեք իրենց հարցերը տալու հնարավորություն, թե ինչ է նրանց հետաքրքրում, և փորձեք այդ հարցերի պատասխաններն անմիջապես չտալ, այլ նպաստեք, որ նրանք ինքները հասնեն ցանկալի պատասխանին:

Եթե բակում գտնվելու ժամանակ թռչունների չու կամ դրա նախապատրաստություն եք նկատում, անպայման աշակերտների ուշադրությունն էլ հրավիրեք դրա վրա, թող նայեն, մտածեն, դատողություն անեն նրանց վարքի մասին և այն կապեն տարվա համապատասխան եղանակի հետ:

Երաշխավորվող նյութ. https://www.youtube.com/watch?v=wq-CxSiOnjE

ԴԱՍ 18

Թեմա.	Աշուն
Դասի վերնագիրը.	Աշնան գույներ
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան տարվա եղանակների հերթագայության հետ կապված փոփոխությունները նկարագրել/համեմատել: Դիտարկել բնական երևույթները և նկարագրել դրանք: Ցերեկվա ու գիշերվա ընթացքում դիտարկելի փոփոխություններն անվանել և դրա հետ կապված սեփական գործունեությունը նկարագրել: Հագուստը տեսակավորել՝ ըստ տարվա եղանակների: Մասնակցել պրակտիկ գործունեության: Կոլաժ ստեղծել:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ.I.6. Աշակերտը պետք է կարողանա բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Անվանում է դիտարկվող փոփոխությունները ցերեկվա ու գիշերվա ընթացքում: Անվանում է և իրար հետ համեմատում տարվա եղանակները, դատողություն է անում դրանց տարբերակիչ հատկանիշների մասին: Խոսում է դրանցից յուրաքանչյուրին բնորոշ եղանակի մասին:
Անհրաժեշտ նյութ.	թերթեր, սոսինձ, գունավոր թղթեր, մկրատ, գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, տերևներ:

Դասի ընթացքը.

1. ԶՐՈՒՅՑ ՆԱԽՈՐԴ ԴԱՍԻ ԹԵՄԱՅԻ ԵՎ ԴՊՐՈՑԻ ԲԱԿՈՒՄ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻՑ ՍՏԱՑԱԾ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (4-5 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է հիշել նախորդ դասը:
Ո՞ր գույներն էին գերակշռում միջավայրում:
Ի՞նչն է ամենալավ ձևով տպավորվել նրանց մոտ:

2. ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ (4-5րոպե)

Ուսուցիչն աշակերտների համար կարդում է մանկական բանաստեղծություն (ցանկալի է անգիր սովորեցնի).

Դաշտ ու այգի դեղին հագան,
Ծառ ու ծաղիկ մերկացան,
Թռչունները երամ-երամ
Մեր աշխարհից հեռացան:
Հ. Հայրապետյան

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-6 րոպե)

Ուսուցիչը մատնանշում է դասագրքում տրված համապատասխան դասը և խնդրում նկարագրել տարվա եղանակներն՝ ըստ նկարների:

Այնուհետև հարցեր է տալիս.
– Տարին քանի՞ եղանակ ունի:
– Բնությունը փոխվո՞ւմ է արդյոք ըստ այս եղանակների:
– Ազդո՞ւմ է արդյոք բնության փոփոխականությունը մարդկանց կյանքի և աշխատանքի վրա:
– Կենդանիների՞ վրա:
– Բույսերի՞ վրա:

4. ԹԵՄԱՏԻԿ ԶՐՈՒՅՑ (4-5 րոպե)

Աշունը սկսվում է սեպտեմբերով: Դրան հաջորդում են հոկտեմբերը և նոյեմբերը: Վրաստանում աշնան սկզբին բնության փոփոխությունը համարյա չի զգացվում, սակայն սեպտեմբերի վերջից գիշերվա տևողությունն ավելանում է, իսկ ցերեկը՝ պակասում: Արևի ճառագայթներն այնքան տաք և այրող չեն այլևս, ինչպես ամռանն էին: Իսկ հոկտեմբերի վերջից նկատելիորեն զով է:

Եթե ամառվա մաքուր երկինքը իր երկնագույն գույնով և սպիտակ ամպերով էր աչքի ընկնում, աշնանը երկնքում գերակշռում են մոխրագույն ամպերը, հաճախ անձրևում է, իսկ ուշ աշնանը՝ անդադար շաղ է դնում բույսերի ու հողի վրա: Հողը ուշ է չորանում: Համապատասխանաբար, հողը և օդը ավելի և ավելի են սառչում:

Զարմանահրաշ գույներ են շուրջբոլորը, աշնան գույներ... Կարծես ծառերը տոնի են պատրաստվում, գույնզգույն հանդերձ են հագնում, սակայն շուրջբոլորը, միևնույն է, թախծախառն լռություն է և հաճելի միջավայր: Դեղին, կարմիր, ոսկեգույն, տեղ-տեղ՝ կանաչ, շագանակագույն տերևները քամին փչելուն պես պտտվում են, պտտվում և ուժասպառ ընկնում գետնին: Վերջում տերևաթափվող ծառերն ամբողջովին մերկանում են, կարծես բնությունը հոգնել է և պատրաստվում է երկարատև քնի:

5.ԿՈԼԱԺԻ ՍՏԵՂԾՈՒՄ (15-20 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է զույգերի, աշակերտներին բաժանում է նախորդ դասի ժամանակ հավաքած տերևները և հանձնարարում է զույգերով աշխատել ու դասագրքի համապատասխան էջում ստեղծել աշնան պատկեր: Դրա համար աշակերտները պետք է օգտագործեն իրենց բերած տերևները, Աշխատանքային տետրի վերջում եղած գունավոր թղթերը: Կարող են տարբեր գույնի պատկերներ կտրել-ձևել և տերևների հետ փակցնել: Աշակերտները կարող են չափերով մեծ տերևները կտրել և այդպես օգտագործել:

Աշխատանքն ավարտելուց հետո երեխաներին (կամ զույգերին) պետք է հնարավորություն տրվի, որ ամբողջ դասարանին ցույց տան իրենց աշխատանքները, արտահայտեն իրենց ապրումներն ու մտահղացումը:

Յուրաքանչյուր աշակերտի ներկայացնելուց հետո, ուսուցիչը հերթով վերցնում է նրանց աշխատանքներն ու փակցնում է պատին: Այսպես կստեղծվի ընդհանուր նկար, կոլաժ:

6. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2 րոպե)

Կարճ ամփոփեք անցկացված դասը:

Երաշխավորություն.

Նման դասը կարող է աշխուժություն առաջացնել: Աշակերտներին հնարավորություն տվեք իրենց տպավորությունների ու երևակայությունների մասին խոսել առանց սահմանափակումների:

Ուշադրություն դարձրեք, որ այն թափոնները, որ կուտակվել են աշակերտների նստարանների վրա և դասասենյակում, յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն գցի աղբամանի մեջ:

Եթե չեք հասցնում բոլոր կոլաժները տեսնել և քննարկել, դրանք անպայման փակցրեք պատին կամ ցուցապաստառի վրա ու աշակերտներին բացատրեք, որ այդ ամենն այդտեղ դեռ երկար ժամանակ կմնա, և բոլորը այն տեսնելու հնարավորություն կունենան:

ԴԱՍ 19

Թեմա.	Աշուն
Դասի վերնագիրը.	Խաղողաքաղ (այգեկութ)
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան նկարագրել տարվա եղանակների, մասնավորապես աշնան հետ կապված մարդու գործունեությունը (խաղողաքաղ, բերքահավաք, բույսեր տնկել): Մտապահել աշնան ամիսների անվանումները: Նկարազարդման վրա որոշել և նկարագրել երևույթները: Արձանագրել անձնական տեսակետները և դիտարկման արդյունքները: Բույսերի հիմնական մասերն անվանել:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարբական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների: Բնագիտ.I.6.Աշակերտը պետք է կարողանա բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով): Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Որոշում է և անվանում ծանոթ բույսերի հիմնական մասերը (օրինակ՝ ցողուն, տերև, արմատ, ծաղիկ, պտուղ): Թվարկում է մարդու գործունեության (օրինակ՝բույսեր տնկել, խաղողաքաղ, բերքահավաք), կենդանիների վարքի

(օրինակ՝ թռչունների չու, ձմեռային քուն) և բույսերին բնորոշ փոփոխությունների (օրինակ՝ ծաղկունք, տերևաթափ) օրինակներ՝ ըստ տարվա եղանակների:

Անհրաժեշտ նյութ. գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ:

Դասի ընթացքը.

1. ՎՐԱՍՏԱՆԸ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՐԿԻՐ Է. ՄԻՆԻ-ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ (3-5 րոպե)

Մեր խաղողի որթը հնագույնն է աշխարհում, ինչը խոսում է այն մասին, որ վրացին հնուց է տիրապետում խաղողագործությանը:

Խաղողի որթի պտղի հավաքումը կոչվում է «ռթվելի» կամ խաղողաքաղ: Սովորաբար խաղող հավաքելը և քամելը Վրաստանում սկսվում է հոկտեմբերին: Հնում հոկտեմբերը կոչվում էր «ռթվելիս թվե» (թարգմանաբար՝ խաղողաքաղի ամիս), բացի այդ, այն նաև «ղվինոբիս թվե» (թարգմանաբար՝ գինու ամիս) էր կոչվում:

Գինի քամելու համար հատկացված տեղը մառան է կոչվում, իսկ այն ամանը, որի մեջ խաղողը ճզմում կամ քամում էին՝ «սածնախելի»՝ խաղողի քամիչ: Ե՛վ հնում, և՛ ներկայումս քաղողի քամած հյութը կարասի մեջ են լցնում:

Վրացի մարդը գինին օգտագործում է և՛ ուրախության, և՛ տխրության ժամանակ:

2. «ԽԱՂՈՂԱՔԱՂ». ՆԿԱՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ (5-8 րոպե)

Վրաստանում աշնանը նշվում է ավանդական ռթվելին կամ խաղողաքաղի տոնը: Դրան մասնակցելը բոլորի համար մեծ հաճույք է, ուրախանում են և՛ կանայք, և՛ տղամարդիկ, և՛ երեխաները, և՛ դեռահասները:

Ուսուցիչ.

– Ձեզանից որևէ մեկը մասնակցե՞լ է խաղողաքաղի:

– Ինչպե՞ս է կոչվում այն բույսը, որի վրա խաղող է աճում:

– Ինչպիսի՞ ցողուն ունի այն: Ինչպիսի՞ն է տերևը:

– Ի՞նչ գույն ունի նրա պտուղը:

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին հիշել տպավորություններն ու ապրումները, որ կապվում են խաղողաքաղի հետ: Այնուհետև աշակերտները բացում են գրքերն ու նայում նկարներին, որտեղ պատկերված են Կախեթիի այգեկութին բնորոշ դրվագներ: Ուսուցիչը երեխաներին խնդրում է իրենց զույգերի հետ կարծիքներ փոխանակել և փորձել նկարագրել, թե ինչ է տրված նկարներում: Տարվա ո՞ր եղանակն է պատկերված...

Այնուհետև մի քանի աշակերտ նկարագրում են նկարներում պատկերված գործողությունները, ցանկալի է, որ նրանք լրացնեն մեկը մյուսի ասածները, ուսուցիչն էլ օգնում է նրանց հարցերով, և երեխաները քիչ թե շատ պատկերացում են կազմում այգեկութի մասին:

3. ԴԵՐԵՐՈՎ ԽԱՂ. «ԽԱՂՈՂԱՔԱՂ» (6-7 րոպե)

Ուսուցիչը երեխաներին բաժանում է փոքր խմբերի և հանձնարարություն է տալիս. յուրաքանչյուր խումբ մեջտեղով, առանց խոսքերի պետք է հորինի և բեմադրի խաղողաքաղը պատկերող մի դրվագ: Մյուս խմբերը պետք է գուշակեն, թե ինչ են փորձել արտահայտել իրենց ընկերները: Բեմադրությունը ցուցադրում են բոլոր խմբերը հերթով:

4. ԽԱՂ. «ԱՇՆԱՆ ԱՄԻՍՆԵՐԸ» (4-5 րոպե)

Ուսուցիչը հարցեր է տալիս.

– Ո՞վ կարող է ասել, հիմա աշնան ո՞ր ամիսն է:

– Աշնան ուրիշ ի՞նչ ամիսներ գիտեք:

– Ո՞վ կթվարկի աշնան երեք ամիսները հերթականությամբ:

Ուսուցիչը կարող է լիարժեք պատասխաններ ստանալ այս հարցերին, չնայած հնարավոր է լինի այնպիսի աշակերտ ևս, ով չգիտի ամիսների հաջորդականությունը: Նման դեպքում ուսուցիչն այսպիսի խաղ է առաջարկում.

Սեպտեմբերն արտահայտում է 1 ծափը,

Հոկտեմբերը՝ 2 ծափը,

Նոյեմբերը՝ 3 ծափը:

Ուսուցիչը մի քանի անգամ խառը ծափեր է տալիս՝ մերթ մեկ անգամ, մերթ՝ երեք, երկու, նորից երեք և այսպես շարունակ: Իսկ երեխաները պետք է գուշակեն ամիսներն ու հնչեցնեն դրանց անունները: Այնուհետև ուսուցիչը խնդրում է ավելի ուշադիր լսել: Նա դեռ 1 ծափ է զարկում, ապա՝ 2, վերջում՝ 3: Ասում է, որ աշնան ամիսները հենց այս հերթականությունն ունեն, ու նորից է կրկնում այդ երեք ծափերն էլ:

Աշակերտները պետք է գլխի ընկնեն, որ հերթականությունն այսպիսին է՝ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր:

5.ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ. «ՕԳՆԵՆՔ ՀԱՍԱԿԱԿԻՑՆԵՐԻՆ» (4-5 րոպե)

Աշխատանք խմբերով.

Դասագրքի հաջորդ էջի վերևի մասում դարձյալ հայտնվում են մեր ուղեկիցները: Նրանք մտազբաղ նայում են երկու քառակուսիներին, որոնց վանդակներում նկարներ կան, իսկ մեկական վանդակ դատարկ է: Աշակերտները պետք է կռահեն, թե ինչ պետք է նկարված լինի այդ վանդակներում ու նկարեն: (Քանի որ յուրաքանչյուր քառակուսու մեջ երեքական միանման առարկա կա, դատարկ վանդակում պետք է նկարվի հենց այն երրորդ առարկան, որը պակասում է: Մի դեպքում տերև է, իսկ մյուս դեպքում՝ խնձոր:)

Ուսուցիչը երեխաներին խնդրում է աշխատել ինքնուրույն:

Կատարված առաջադրանքները ցույց տալուց հետո պարզ կդառնա, թե ով ճիշտ գուշակեց, աշակերտները պետք է բացատրեն, թե ինչպես կռահեցին, ինչպես որոշեցին ճիշտ պատասխանը:

6. «Ի՞ՆՉ ՍԽԱԼ Է ԱՐԵԼ ՆԿԱՐԻՉԸ» (4-5 րոպե)

Նույն էջի ներքևի մասում նկարված է ուշ աշուն պատկերող նկար՝ սառը եղանակ, տերևաթափված ծառեր...

Աշակերտները պետք է աշխատեն խմբերով ու բացահայտեն, թե ինչ անհամապատասխանություն կա այդ նկարում. I – ծիծեռնակը ձագուկների հետ բնում, և II – մանուշակի ծաղիկը ծառից թափված տերևների մեջ: Երեխաները պետք է բացատրեն, թե ինչու են կարծում, որ այս դեպքում նկարիչը սխալվել է:

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Երաշխավորություն.

Այս դասում տրված ակտիվություններն ուսուցիչը կարող է կիրառել՝ ըստ իր հայեցողության (բոլոր ակտիվությունների կիրառումը պարտադիր չէ)՝ հաշվի առնելով դասարանի տրամադրվածությունն ու հնարավորությունները:

Ցանկալի է, որ մինչև դասի սկսվելը լավ մտածեք, թե որ ակտիվությանը որքան ժամանակ հատկացնեք, արեք այնպես, որ տեղավորվեք դասի ժամանակի մեջ:

Աշակերտների՝ հարցեր մտածելու ժամանակ փորձեք նրանց այնպես օգնել, որ նրանց հարցերն ուսումնական թեմայից՝ աշնանից հեռու չանցնեն:

Եթե ժամանակ մնա, դասի վերջում կրկնել տվեք աշնան ամիսներն ու դրանց հաջորդականությունը:

8. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ուսուցիչը դասի վերջում խնդրում է աշակերտներին, որ հաջորդ դասի համար բերեն որևէ միրգ (մեկ հատ):

ԴԱՍ 20

Թեմա.	Աշուն
Դասի վերնագիրը.	Մենք միրգ ենք սիրում
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան նկարագրել մարմինը՝ ըստ տարբեր բնութագրիչների: Բույսի պտուղը, մասնավորապես միրգը՝ որպես օգտակար սննդամթերք գիտակցել: Տարբեր մրգերը ճանաչել/բնութագրել: Դիտարկել զգայության օրգանների օգնությամբ: Մարմինը որոշել պատկերազարդման վրա և իրականության մեջ: Հաղորդակցման տարբեր ձևեր կիրառել:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Ձյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»): Դատողություն է անում մարդու համար կենդանիների և բույսերի նշանակության մասին (օրինակ՝ բույսերի որոշ մասեր օգտագործվում են ուտելու համար, որպես շինանյութ, շրջակա միջավայրը գեղեցկացնելու համար, կենդանիների և մարդկանց բարեկամություն, սննդամթերք, որ մեզ տալիս են կենդանիները):
Անհրաժեշտ նյութ.	տարբեր մրգեր, զամբյուղ, գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, պլաստիլին:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (8-10 րոպե)

Դասագրքի համապատասխան էջի վերևի մասում շուկայի նկար է: Վաճառասեղանի վրա տարբեր մրգեր են, գրեթե ամեն ինչ, ինչ Վրաստանում աշնանը հանդիպում է մեզ՝ դեղձ, տանձ, խնձոր, խաղող և բազմաթիվ այլ: Մեր բարեկամներն էլ հենց այստեղ են: Նրանց շուկա են բերել՝ միրգ ընտրելու և գնելու:

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է, որ զույգերով ուշադիր դիտեն նկարը, ապա նկարագրեն այն: Նկարը նկարագրելու ժամանակ աշակերտները պետք է ճանաչեն մրգերն ու ասեն դրանց անունները:

Ուսուցչի լրացուցիչ հարցերը.

– Դուք ո՞ր միրգն եք սիրում:

– Ինչ եք կարծում, ինչո՞ւ են ասում, որ միրգն օգտակար է առողջության համար:

Նկարը վերլուծելուց և այս զրույցից հետո, ուսուցիչն աշակերտներին խնդրում է բացել Աշխատանքային տետրի համապատասխան էջը, անվանել այնտեղ նկարված միրգն ու գունավորել: Հիշեցնում է երեխաներին, որ գոյություն ունի (նրանք բնության մեջ մեկ անգամ արդեն տարբերակել են) կենդանի և անկենդան բնություն.

– Ըստ ձեզ, կենդանի՞ բնությունն է միրգ տալիս, թե՞ անկենդան բնությունը:

– Միրգը պետք է դասենք բույսերի՞ շարքը, թե՞ կենդանիների:

– Գիտե՞ք, թե ինչպես են կոչվում այն ծառերը, որոնց վրա միրգ է աճում: (մրգատու ծառեր)

– Այն տե՞ղը, որտեղ ծառեր են տնկած: (մրգատու ծառերի այգի)

2. ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ (3-5 րոպե)

Ուսուցիչը շարունակում է խոսել աշնան մասին և ավելացնում է, որ աշունը տարվա այն եղանակն է, երբ գյուղացին ամբողջ տարվա բերքն է հավաքում և տեղավորում: Եթե աշունը բերրի է և առատ, համապատասխանաբար, նա ձմեռվանից չի վախենում. շուկան լիքն է, ընտանիքն էլ՝ ապահովված:

– Ինչ եք կարծում, արդյոք փոխվո՞ւմ է թռչունների և կենդանիների վարքն աշնանը: Հիմնավորի՛ր քո տեսակետը (թռչունների չու, կենդանիների պատրաստվելը և այլն):

3. ՄՐԳԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ (6-8 րոպե)

Հանձնարարություն խմբերով կատարելու համար.

Աշակերտներին այս դասի համար հանձնարարված էր տանից մեկ հատ ցանկացած միրգ բերել: Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և երեխաներին խնդրում է, որ բոլորը հանեն իրենց բերած միրգը և շարեն սեղաններին: Խմբերը պետք է կազմակերպեն մրգի ցուցահանդես:

Հանձնարարությունն այսպիսին է.

Խմբից մի աշակերտ ոտքի է կանգնում, հերթով վերցնում է իրենց սեղանին եղած մրգերը, ցույց է տալիս ամբողջ դասարանին և ասում է մրգի անունը: Ցանկալի է, որ նրան խմբի մյուս անդամը՝ երկրորդ աշակերտն օգնի. վերջինս հակիրճ բնութագրում է այն միրգը, որի անունը տալիս է առաջին աշակերտը (քաղցր է, թթու է, հյութեղ է, փափուկ է, պինդ է, մեծ կորիզ ունի, հոտավետ է...): Այսպես հերթով մասնակցում են բոլոր խմբերը: Միրգը բնութագրելու համար ուսուցիչը կարող է օգտագործել նաև դասագրքում տրված նկարները:

4. ԽԱՂ. «ՏԵՄՆԵՆՔ ՁԵՌՔԵՐՈՎ» (10-12 րոպե)

Ուսուցիչը պատրաստել է մեծ զամբյուղ կամ արկղ, որում կտեղավորեն միրգը, ուսուցիչը այն կծածկի կտորով: Յուրաքանչյուր խմբից ուսուցիչը կանչում է մեկ աշակերտի: Աշակերտը ձեռքը պետք է մտցնի զամբյուղի մեջ, մրգերից որևէ մեկը շոշափի և ասի այդ մրգի անունը: Այնուհետև նա զամբյուղից հանում է ընտրած միրգը, և այդ ժամանակ պարզ կդառնա՝ ճի՞շտ է գուշակել, թե որ միրգն է դա, թե՞ ոչ: Այսպես բոլոր խմբերը հերթով կմասնակցեն խաղին: (Պարտադիր չէ, որ բոլոր երեխաները հերթով մասնակցեն խաղին, դրա համար շատ մեծ ժամանակ անհրաժեշտ կլինի:) Միրգն ուսուցիչը պետք է պահի հաջորդ դասի համար:

Երաշխավորություն.

Եթե դասի վերջում ժամանակ մնա, ցանկալի է պլաստիլինից տարբեր մրգեր պատրաստել, այնուհետև ցուցահանդես կազմակերպել: Եթե ոչ, նույն առաջադրանքը կարելի է կատարել արվեստի (նկարչության) դասին:

ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=7mH75_KM0mU

ԴԱՍ 21

Թեմա.	Աշուն
Դասի վերնագիրը.	Միրգ է, թե՞ բանջարեղեն
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան նկարագրել մարմին՝ ըստ տարբեր բնութագրիչների: Քննարկել բույսի պտուղը, մասնավորապես՝ բանջարեղենը՝ որպես օգտակար սննդամթերք: Միրգն ու բանջարեղենը ճանաչել/տեսակավորել: Նկարագրել ծանոթ մարմնի հատկությունները: Ըստ տարվա եղանակների՝ թվարկել մարդու գործունեությունը:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ I.6. Աշակերտը պետք է կարողանա բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Զյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»): Թվարկում է մարդու գործունեության (օրինակ՝բույսեր տնկել, խաղողաքաղ, բերքահավաք), կենդանիների վարքի (օրինակ՝ թռչունների չու, ձմեռային քուն) և բույսերին բնորոշ փոփոխությունների (օրինակ՝ ծաղկունք, տերևաթափ) օրինակներ՝ ըստ տարվա եղանակների:
Անհրաժեշտ նյութ.	տարբեր տեսակի մրգեր ու բանջարեղեն, զամբյուղ կամ արկղ, մատիտներ կամ ֆլոմաստերներ:

Դասի ընթացքը.

1. ՀԻՇԵԼ «ՇԱՂԳԱՄԸ» ՀԵՔԻԱԹԸ (5- 6 րոպե)

Ուսուցիչը հարցնում է աշակերտներին.

–Գիտե՞ք շաղգամի մասին հեքիաթը, որ պապիկը այգում տնկել է, ու շատ մեծ շաղգամ է աճել:

Եթե աշակերտներն այս հեքիաթը լսել են, ապա ուսուցիչը խնդրում է հիշել ու պատմել նրա բովանդակությունը: Եթե պարզվի, որ դասարանում ոչ ոք չգիտի հեքիաթը, այդ դեպքում ուսուցիչը հակիրճ պատմում է շաղգամի հեքիաթը. «Բանջարանոցում այդ շաղգամն այնքան է մեծանում, որ պապիկը հողից հանել չի կարողանում: Պապը կանչում է տատիկին, քաշում են, քաշքշում, բայց միասին էլ չեն կարողանում շաղգամը հողից հանել: Տատիկը թոռնիկին է կանչում, աղջիկը տատիկից է բռնվում, տատիկը՝ պապիկից, պապիկը՝ շաղգամից: Միևնույն է, չեն կարողանում հողից հանել: Աղջիկը շնիկին է կանչում, շնիկը՝ փիսիկին: Քաշում են, քաշքշում, հողից չեն կարողանում հանել: Կատուն մկնիկին է կանչում ու նրա օգնությամբ բոլորը միասին հսկայական շաղգամը վերջապես հողից հանում են»:

2. ԴԵՐԵՐՈՎ ԽԱՂ (6-8 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 2 կամ 3 խմբի: Յուրաքանչյուր խումբ, ըստ հեքիաթի սցենարի, պետք է մինի-ներկայացում բեմադրի:

3.ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (3-4 րոպե)

Հանձնարարություն խմբերով կատարելու համար.

Հեքիաթը հիշելուց հետո, ուսուցիչն աշակերտներին խնդրում է դասագրքում գտնել այն էջը, որտեղ հեքիաթի հերոսների մեջտեղում նկարված են շաղգամ և ճակնդեղ:

Հանձնարարությունն այսպիսին է. խմբերը պետք է մտածեն և հասկանան, թե որն է շաղգամը, որը՝ ճակնդեղը, նկարագրեն և հիմավորեն իրենց տեսակետը: Խմբերը պետք է բացատրեն, թե ինչպես կռահեցին, թե ինչն ինչ է:

4. ԶՐՈՒՅՑ. Ի՞ՆՉ Է ԲԱՆՋԱՐԵՂԵՆԸ (4-5 րոպե)

Ուսուցիչը ծավալում է զրույց՝ հետևյալ հարցերի կիրառմամբ.

– Ի՞նչ եք կարծում, շաղգամը մի՞րգ է: Իսկ ճակնդե՞ղը:

– Ուրեմն ի՞նչ է:

Այն դեպքում, եթե աշակերտները չեն կարողանում ճիշտ պատասխանել և «բանջարեղեն» բառը չեն ասում, ուսուցիչն օգնող հարցեր է տալիս.

– Հապա հիշեք, որտե՞ղ է պապիկը ցանում շաղգամը: (բանջարանոցում)

– Էլ ի՞նչ են ցանում բանջարանոցում: (Բացառված չէ նաև այն, որ քաղաքի երեխաներն այս հարցին չկարողանան պատասխանել, այդ ժամանակ ուսուցիչն օգնում է: – Սխտորը որտե՞ղ են ցանում, սո՞խը, գազա՞րը...)

– Ի՞նչ եք կարծում, ի՞նչ ընդհանուր անուն ունեն բանջարանոցում աճեցվող այս բույսերը:

Նման հարցերով ուսուցիչն աշակերտներին պետք է գլխի գցի, որ բանջարանոցում ցանվող ուտելի բույսերը կոչվում են բանջարեղեն: Երեխաները դասագրքում տրված պատկերազարդման վրա կարող են տեսնել, ինչպես են աճեցնում պոմիդորը:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (6-7 րոպե)

Աշխատանքային տետրում նկարած են տարբեր մրգեր և բանջարեղեն:

Հանձնարարությունն այսպիսին է. աշակերտն առանց ձեռք բարձրացնելու պետք է մրգի և բանջարեղենի միջև գիծ քաշի այնպես, որ ձախ կողմում մնա միրգը, աջ կողմում՝ բանջարեղենը: Այնուհետև զույգերը ստուգում են միմյանց կատարած աշխատանքները և ուսուցչի պահանջով առանձին-առանձին որոշում են բանջարեղենները և անվանում դրանք:

6. ԽԱՂ. ՄԻՐԳ Է, ԹԵ՞ ԲԱՆՋԱՐԵՂԵՆ (4-5 րոպե)

Այս դասի համար ուսուցիչը պատրաստել է զամբյուղով տարբեր մրգեր ու բանջարեղեն (ցանկալի է, որ լինի շաղգամ, բողկ, ճակնդեղ, սխտոր, սոխ, կարտոֆիլ, պոմիդոր, վարունգ, լոբի, պղպեղ, գազար, կաղամբ, տարբեր կանաչեղեն...):

Ուսուցիչը ծանոթացնում է խաղի պայմաններին: Երեխաները պետք է ճանաչեն նրա ցույց տված միրգը կամ բանջարեղենը և միասին անվանեն այն: Եվ այսպես, ուսուցիչը հերթով հանում է զամբյուղի պարունակությունն ու ցուցադրում է երեխաներին: Երեխաները տեղից պատասխանում են՝ «միրգ է» կամ «բանջարեղեն է»:

Այնուհետև խաղը քիչ բարդանում է:

Ամեն անգամ յուրաքանչյուր նստարանից պատասխանում է երկու աշակերտ (զույգ) հերթով: Մեկն ասում է այն, ինչ ուսուցիչը ցույց է տալիս, երկրորդն ասում է միրգ է, թե՞ բանջարեղեն: Օրինակ՝ ուսուցիչը զամբյուղից վերցնում է սխտոր, կանգնում են երկու աշակերտներ, մեկն ասում է, որ դա սխտոր է, մյուսը՝ որ սխտորը բանջարեղեն է:

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (3-5 րոպե)

Երաշխավորություն.

Այս դասում տրված ակտիվություններն ուսուցիչը կարող է կիրառել՝ ըստ իր հայեցողության (բոլոր ակտիվությունների կիրառումը պարտադիր չէ)՝ հաշվի առնելով դասարանի տրամադրվածությունն ու հնարավորությունները:

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=j6Iz8mbCVfU

ԴԱՍ 22

Թեմա.	Սնունդ
Դասի վերնագիրը.	Բանջարեղեն՝ օգտակար սնունդ
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցել պարզ գործնական ակտիվություններին: Սեփական տեսակետը կամ հետազոտության արդյունքները բառացիորեն ներկայացնել/հիմնավորել: Զգայության տարբեր օրգանների օգնությամբ նկարագրել այս կամ այն կոնկրետ մարմինը: Մարմինը ճանաչել, նկարագրել, տեսակավորել: Բույսի հիմնական մասերը ճանաչել/անվանել: Դատողություն անել բուսական սննդի նշանակության մասին:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարբական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Որոշում է և անվանում ծանոթ բույսերի հիմնական մասերը (օրինակ՝ ցողուն, տերև, արմատ, ծաղիկ, պտուղ): Դատողություն է անում մարդու համար կենդանիների և բույսերի նշանակության մասին (օրինակ՝ բույսերի որոշ մասեր օգտագործվում են ուտելու համար, որպես շինանյութ, շրջակա միջավայրը գեղեցկացնելու համար, կենդանիների և մարդկանց բարեկամություն, սննդամթերք, որ մեզ տալիս են կենդանիները):
Անհրաժեշտ նյութ.	մատիտ, բանջարեղեն, բանջարեղենի աղցան, հյուր հրավիրել:

Դասի ընթացքը.

1. ԶՐՈՒՅՑ ԽՄԲԵՐՈՒՄ. ԻՆՉՈ՞Վ ԵՆՔ ՍՆՎՈՒՄ (3-4 րոպե)

Ուսուցիչը դասարանին հիշեցնում է, որ այս դասին էլ շարունակվելու է բանջարեղենի թեման: Դասարանը բաժանվում է խմբերի: Խմբերից յուրաքանչյուրին ուսուցիչը տարբեր տեսակի բանջարեղեն է բաժանում (յուրաքանչյուր խմբի 3-4 հատ):

Աշակերտները պետք է մտածեն, իսկ հետո բացատրեն, թե որ բանջարեղենի որ մասն է օգտագործում մարդը՝ որպես սնունդ: Հենց այստեղ էլ խումբը պետք է թվարկի այն ճաշատեսակները, որոնցում օգտագործվում են այդ բանջարեղենները:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ. Ի՞ՆՉ ԵՆ ՈՒՏՈՒՄ ՄԵՐ ԳՐՔԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ (10 րոպե)

Դասագրքում, դասի համապատասխան էջի վերևի մասում մեր գրքի հերոսները ապուր են ուտում: Ինչպես երևում է, նրանցից մեկը ախորժակով է ուտում ապուրը, իսկ մյուսը՝ տրտնջալով, երևում է չի սիրում ապուրի միջի կանաչին, սոխն ու գազարը...Դա շատ երեխաների ու նրանց ծնողներին հուզող ամենադժվար հարցերից մեկն է, և ցանկալի է ասել, որ բանջարեղենով պատրաստված ապուրը պարտադիր է երեխայի ֆիզիկական աճի և առողջության համար: Այդ պատճառով ուսուցիչը երեխաներին խնդրում է աղջնակին խորհուրդ տալ և ինչ-որ ձևով հիմնավորել, որ նա անպայման պետք է ուտի ապուրը:

Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է դասի վերջում տրված պատկերազարդման վրա, որտեղ կան բանջարեղենի նկարներ, և նրանց խնդրում է թվարկել դրանց անվանումները: Եթե դժվարանան, ուսուցիչն ինքը կհիշեցնի: Այնուհետև հարց է տալիս.

Կարո՞ղ եք անվանել, թե ինչ ընդհանուր անուն ունեն ձախ կողմում տրված բանջարեղենները: (կանաչի)

Տնային տնտեսուհին հաճա՞խ է օգտագործում կանաչի: Հիմնավորիր, ըստ քեզ, ինչո՞ւ:

(Կերակուրը համեղ է դարձնում, լի է վիտամիններով, գեղեցկացնում է և այլն:)

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Եթե աղջնակը քմահաճ է, փոխարենը տղան երբեք չի հրաժարվում բանջարեղենից: Այժմ էլ Աշխատանքային տետրում տրված էջում փորձում է հասնել գազարին, սակայն դրա համար անհրաժեշտ է, որ լաբիրինթոսում ճանապարհ բացի իրեն:

Աշակերտներն անհատապես պետք է կատարեն այս առաջադրանքը և այնուհետև զույգերում ստուգեն:

4. ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԹԱՐՄ ԱՂՑԱՆ (10-12 րոպե)

Այս դասի համար ուսուցիչը երեխաների համար անակնկալ է պատրաստում: Ցանկալի է, եթե, իհարկե, կա դրա հնարավորություն, դասի վերջին ակտիվություններն անցկացվեն դպրոցի ճաշարանում: Ուսուցիչը նախապես համաձայնել է 4 կամ 5 ծնողի կամ դպրոցի խոհարարի հետ, ովքեր բանջարեղենից թարմ աղցան պետք է պատրաստեն (առանձին-առանձին) և այդ դասի համար բերեն դպրոց: Ուսուցիչը դասարանը բաժանում է այնքան խմբի, որքան ծնող կմասնակցի այս ակտիվությանը: Ծնողները ներս են մտնում, ուսուցիչն աշակերտներին բացատրում է նրանց գալու պատճառը և ասում, որ կանցկացվի մրցույթ խմբի անդամների միջև:

Յուրաքանչյուր ծնող միանում է մեկ խմբի: Նրանք պատրաստած թարմ աղցանը պետք է գեղեցիկ ձևավորեն ափսեի մեջ և աշխատեն այդ գործի մեջ ընդգրկել նաև աշակերտներին:

Մրցույթի պայմաններն այսպիսին են.

I. Ո՞վ (ո՞ր խումբը) ավելի ճիշտ կպատասխանի հարցին, թե ինչու է այդ ուտեստը կոչվում թարմ աղցան:

II. Ո՞ր խմբի աղցանն է ավելի գեղեցիկ և հրապուրիչ: (Կարելի է ժյուրի կազմել. յուրաքանչյուր խմբից մեկական աշակերտ):

III. Ո՞վ կթվարկի անսխալ, թե ինչ բանջարեղեն կա տվյալ աղցանում:

IV. Ո՞վ ավելի լավ կհիմնավորի, թե ինչու է առողջության համար օգտակար թարմ բանջարեղենով կերակուրը:

5. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

ԴԱՍ 23

Թեմա.	Սնունդ
Դասի վերնագիրը.	Սննդամթերք
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան նկարագարդումների վրա և իրականության մեջ ճանաչել այս կամ այն սննդամթերքը և տեսակավորել: Տրված հարցերին պատասխանելու համար հիմնվել դիտարկման արդյունքների և անձնական կարծիքների վրա: Նկարագրել մարմնի մասերը: Սննդամթերքի պիտանելիության որոշման մեջ զգայության օրգանների նշանակությունը գիտակցել: Տարբերել բուսական և կենդանական սննդամթերքը: Գիտակցել ճիշտ սնվելու անհրաժեշտությունը դեռահասի աճի ու զարգացման համար: Մասնակցել գործնական ակտիվությունների: Դատողություն անել մարդու համար կենդանական և բուսական սննդամթերքի նշանակության մասին: Տարբերել օր ու գիշերվա հատվածները և դրա հետ կապել սեփական ակտիվությունը:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ.I.6.Աշակերտը պետք է կարողանա բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Ձյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»): Դատողություն է անում զգայությունների և զգայությունների օրգանների դերի մասին մարդու (օր.՝ սննդամթերքի պիտանելիության ժամկետը որոշել, փողոցում անվտանգ տեղաշարժվել) և կենդանիների համար (օր.՝ ժամանակին հայտնաբերել վտանգը, սնունդ հայթայթել, ապաստան գտնել): Խմբավորում է կենդանի մարմիններն՝ ըստ բույսերի և կենդանիների, հիմնավորում է սեփական որոշումը: Դատողություն է անում մարդու համար կենդանիների և բույսերի նշանակության մասին (օրինակ՝ բույսերի որոշ

	մասեր օգտագործվում են ուտելու համար, որպես շինանյութ, շրջակա միջավայրը գեղեցկացնելու համար, կենդանիների և մարդկանց բարեկամություն, սննդամթերք, որ մեզ տալիս են կենդանիները):
Տարբերում է.	ցերեկվա ու գիշերվա հատվածները՝ առավոտ, կեսօր, երեկո, գիշեր, և դրանք կապում է իր ակտիվության/գործունեության հետ:

Դասի ընթացքը.

1. ՃԱՆԱՉԵԼ ՆԿԱՐԸ ԵՎ ԱՆՎԱՆԵԼ (5-6 րոպե)

Նախորդ դասին խոսել ենք մրգի և բանջարեղենի մասին, այդ մթերքն այսօր էլ մեզ պետք կգա: Ուսուցիչը հավանաբար դեռ նախորդ դասից պահել է մթերքները (եթե ոչ, ապա պետք է բերի այս դասին): Բացի այդ, նա պետք է պատրաստ ունենա բրինձ, հնդկաձավար, վերմիշել, մակարոն, կաթնաշոռ, թթվասեր, մածուն, մուրաբա, ջեմ, ընկույզի միջուկ, ձկան պահածո և այլ սննդամթերք:

Ուսուցիչը հերթով ցույց է տալիս յուրաքանչյուր սննդամթերք և հարցեր տալիս.

– Ի՞նչ է սա: (Աշակերտներն անվանում են:)

– Ո՞ր ճաշատեսակը պատրաստելիս է օգտագործվում:

– Հո՞ւմ ենք ուտում, թե՞ հարկավոր է եփել (տապակել, խաշել, թխել...):

– Ո՞վ է սիրում սրանից պատրաստված ուտեստ: Ինչո՞ւ: Ինչպիսի՞ համ ունի:

– Էլի ո՞ր ուտեստն եք սիրում: Ինչո՞ւ:

– Ինչո՞ւ է անհրաժեշտ, որ մարդ սնվի:

Այս ակտիվության ժամանակ երեխաները կրկնում են և՛ անցած դասի ժամանակ սովորած միրգն ու բանջարեղենը, և՛ նոր գիտելիք են յուրացնում:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (5-10 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 3 կամ 4 խմբի և իր ձեռքին ունեցած սննդամթերքը բաժանում է այնպես, որ բոլոր խմբերին բաժին հասնի ինչպես կենդանական, այնպես էլ բուսական սնունդ: Հանձնարարությունն այսպիսին է. երեխաները պետք է խմբավորեն սննդամթերքը: Մի խմբում պետք է առանձնացնեն միայն բուսական սնունդը, մյուսում՝ միայն կենդանականը: Ուսուցիչը հարցեր է տալիս.

Ո՞ր սնունդն է պատրաստվում միայն բույսերից:

Ի՞նչ սնունդ են տալիս մեզ կենդանիները:

Ըստ դրա՝ բաժանեք ձեր պարենամթերքը երկու խմբի:

Շնորհանդեսի ժամանակ յուրաքանչյուր խումբ պետք է անվանի բուսական և կենդանական սնունդը: Ցանկալի կլինի, որ նաև բացատրեն, թե որ կենդանին է մեզ ապահովում այս կամ այն սննդամթերքով:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (4-5 րոպե)

Նույն խմբերին այժմ տրվում է նոր առաջադրանք:

Մեր ձեռքի տակ եղած մթերքը աշակերտները կրկին երկու խմբի պետք է բաժանեն: Միայն թե այս անգամ մի խմբի մեջ տեղավորում են բոլոր այն մթերքները, որոնք մարդ կարող է ուտել հում վիճակում, իսկ մյուսում՝ այն մթերքները, որոնք ուտելուց առաջ անպայման պետք է մշակվեն (տապակվի, խաշվի, թխվի...):

Աշակերտները կհայտնաբերեն, որ միևնույն մթերքները տարբեր կերպ խմբավորվեցին, քանի որ առաջադրանքի պայմանը, պահանջը փոխվեց:

Շնորհանդեսի ժամանակ ցանկալի կլինի ուշադրություն դարձվի նաև նրան, թե որ սննդամթերքը՝ կենդանականը, թե՞ բուսականը կարելի է ճաշակել ինչպես հում, այնպես էլ մշակված վիճակում:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Ուսուցչի օգնությամբ երեխաները Աշխատանքային տետրում գտնում են այն էջը, որտեղ տրված են տարբեր տեսակի սննդամթերքներ և ճաշատեսակներ: Աշխատանքը կարելի է կատարել ինքնուրույն

կամ զույգերով: Աշակերտները պետք է գուշակեն, թե որ սննդամթերքը որ ճաշատեսակում են օգտագործում, և գծերով միացնեն իրար: Օրինակ, ձու – ձվածեղ, պանիր – խաճապուրի և այլն: Բացառված չէ, որ որոշ սննդամթերքներ միացվեն երկու տարբեր ճաշատեսակների: Ամեն դեպքում, շնորհանդեսի ժամանակ երեխաները պետք է հիմնավորեն, թե ինչու են այդպես կարծում:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (4-5 րոպե)

Դասագրքում տրված ծաղրաշարում երևում է, որ մեր ծանոթ հերոսը օրվա ընթացքում նախաճաշում է, սովորում, ճաշում և այսպես շարունակ: Աշակերտները հերթականությամբ պետք է նկարագրեն նկարները, ըստ որոնց կկռահեն, թե օրվա որ հատվածում են մարդիկ ճաշում և երբ են ընթրում: Այսինքն, նկարագրության ժամանակ կհասկանան բառերի իմաստները և կհիշեն, թե երբ պետք է կիրառեն հետևյալ բառերը՝ առավոտ – նախաճաշ, կեսօր – ճաշ, երեկո – ընթրիք:

Դասագրքով աշխատանքը կարելի է կատարել ինքնուրույն կամ զույգերով:

6. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (3-4 րոպե)

Ցանկալի է, որ ուսուցիչն անցկացնի դասարանական քննարկում: Հարցեր քննարկման համար.
– Ըստ ձեզ, ո՞ր սննդամթերքն է ավելի օգտակար երեխայի համար:
– Ի՞նչ վնաս կարող է հասցնել շատ քաղցրավենիքի օգտագործումը:
– Օգտակա՞ր է արդյոք շատ սնունդ ընդունելը:
– Ինչպե՞ս պարզենք, սնունդը հի՞ն է, թե ոչ: Փչացած չէ՞ արդյոք (հոտով, փոխված համով, տեսքով...):

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Համառոտ ամփոփեք դասը:

Երաշխավորություն.

Այս դասերում տրված ակտիվություններն ուսուցիչը կարող է կիրառել՝ ըստ իր հայեցողության (բոլոր ակտիվությունների կիրառումը պարտադիր չէ)՝ հաշվի առնելով դասարանի տրամադրվածությունն ու հնարավորությունները: Եթե ուսուցիչը չի կարողանա բերել բոլոր մթերքները, կարող է դրանք փոխարինել նկարներով:

ԴԱՍ 24

Թեմա.	Սնունդ
Դասի վերնագիրը.	Ըմպելիք
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան դիտարկման արդյունքների և անձնական կարծիքների վրա հիմնվելով՝ պատասխանել հարցերին: Նյութը (ջուրը) բնութագրել:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների: Բնագիտ.I.4.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել մարմիններն՝ ըստ բաղադրիչ նյութերի հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Ձյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»):

Որոշում է և անվանում առօրյա կյանքում տարածված նյութերը:

Նյութերը նկարագրում է՝ ըստ հեշտ դիտարկելի հատկանիշների (օրինակ՝ թափանցիկություն, առաձգականություն, ջրի մակերևույթին լողալու ունակություն, անջրանցիկություն):

Խմբավորում է միանման նյութերից պատրաստված մարմինները:

Անհրաժեշտ նյութ. գունավոր մատիտներ, պլաստմասսայե բաժակներ բոլոր աշակերտների համար, խմելու ջուր, տեսանյութ:

Դասի ընթացքը.

1.ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է, որ նախորդ դասին նրանք շատ են աշխատել՝ որոշելու համար, որ մարդուն կյանքի համար խիստ անհրաժեշտ է սնունդը: Հիմա ուսուցիչն այսպիսի հարց է տալիս.

– Ինչ եք կարծում, ինչո՞ւ ենք կիրառում «ուտելիք և ըմպելիք» արտահայտությունը:

Աշակերտները մտածելով ու քննարկելով պետք է գան այն եզրակացությանը, որ ըմպելիքները, հատկապես ջուրը, խիստ անհրաժեշտ է մեր գոյության համար: Ջրից բացի, օրվա ընթացքում տարբեր ըմպելիքներ ենք ընդունում (հյութեր, լիմոնադ, հանքային ջրեր, կաթ, կոմպոտ...):

2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (5-7 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4 հոգանոց խմբերի, այնուհետև յուրաքանչյուր աշակերտի տալիս է պլաստմասսայե թափանցիկ բաժակներ և դրանց մեջ լցնում է մի քիչ ջուր: Այնուհետև նրանց խնդրում է ուսումնասիրել/նկարագրել այն (համ, հոտ, թափանցիկություն, վիճակ): Շնորհանդեսի ժամանակ յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ դասարանին կծանոթացնի խմբի դիտարկման արդյունքը: Ցանկալի է, ուսուցիչը հարցերի օգնությամբ ուղղություն տա շնորհանդեսավարին՝ միտքն ավելի լավ ձևակերպելու համար:

3. ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ (3-4 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 3 խմբի և նրանց տարբեր առաջադրանքներ է տալիս:

I խումբը պետք է մտածի, թե ինչի համար է մարդը ջուր օգտագործում:

II խումբը՝ ի՞նչ նշանակություն ունի ջուրը բույսերի համար:

III խումբը՝ ի՞նչ նշանակություն ունի ջուրը կենդանիների համար:

Խմբային շնորհանդեսներից հետո ուսուցիչը կարող է լրացուցիչ հարցեր ևս տալ, որպեսզի աշակերտներն ավելի լավ ըմբռնեն բոլոր կենդանի օրգանիզմների համար ջրի կարևորության գաղափարը: (Այստեղ նաև պետք է այն կարծիքին հասնեք, որ մարդիկ ու կենդանիները ջուրը միայն խմելու համար չեն օգտագործում, այն բազմաթիվ այլ նշանակումներ էլ ունի: Այդ պատճառով պետք է ջուրը չափավոր օգտագործել, խնայել ու մաքրություն պահպանել ինչպես տանը, այնպես էլ՝ դպրոցում, բնության մեջ):

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (3-5 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել դասագրքի համապատասխան էջը: Աշակերտները հաջորդաբար պետք է նկարագրեն նկարները, ցույց տան խմելու ջրի ճանապարհը աղբյուրից մինչև շշալցված ջուր:

5.ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (5-7 րոպե)

Դասագրքի առաջին հանձնարարությունը նախատեսված է զույգերով աշխատելու համար:

Նույն էջի վերևի մասում ուրվագծերի մեջ տրված են տարբեր տեսակի ուտելիք ու ըմպելիքներ: Աշակերտները դեռ պետք է ճանաչեն, թե որը ինչ է և գունավորեն: Այնուհետև գիծն այնպես պետք է տանեն, որ մի կողմում միայն ուտելիքները, մյուս կողմում՝ ըմպելիքները: Վերջում, որպես նմուշ, ուսուցիչը քննարկում է մի քանի զույգի աշխատանք, որպեսզի մյուսներն էլ ստուգեն, թե որքանով ճիշտ են իրենք կատարել հանձնարարությունը:

6. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (10-11 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է փոքր խմբերի և հանձնարարում է աշխատել դասագրքի նույն էջի երկրորդ հանձնարարության վրա (էջի ներքևի մասում): Այստեղ երեխաները իրենց ընկերներին պետք է օգնեն կատարել առաջադրանքը:

Երեք շարքով տրված է աղյուսակ: Յուրաքանչյուր շարքում 5 վանդակ է: (Ուսուցիչ. «Նայեք շարքում տեղադրված իրերին: Ինչն ինչի՞ց հետո է նկարված: Գուշակեք՝ ի՞նչ պետք է նկարված լինի դատարկ վանդակում:)

I շարքում հաջորդականությամբ նկարված են գազար և կաղամբ: Մի վանդակը դատարկ է: (Աշակերտները պետք է կռահեն, որ այստեղ պակասում է կաղամբը և նկարեն:)

II շարքում հաց և ձու է նկարված՝ միայն երկու դատարկ վանդակով: (Այստեղ ևս պետք է հացն ու ձուն այնպես տեղադրեն, որ պահպանեն հերթականությունը:)

III շարքում երեխաները պետք է կաթի ու հյութի հերթականությունը գուշակեն ու երկու՝ իրարից հեռացված դատարկ վանդակ պետք է լրացնեն (նրանք պետք է նկարեն մեկ հյութ և մեկ կաթ):

Շնորհանդեսի ժամանակ ցանկալի է, որ մի խումբը միայն մեկ շարքի կատարված տարբերակը ցույց տա: Միևնույն ժամանակ, բոլոր ներկայացնողները պետք է բացատրեն, թե ինչու են հանձնարարությունն այդպես կատարել:

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Լրացուցիչ (կամ այլընտրանքային) ակտիվություն

Ինչպիսի՞ ըմպելիքներ կան ճաշարանում:

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է մտնել դպրոցի ճաշարան և խոհարարի համար հավաքել տեղեկություններ, թե ինչ տեսակի ըմպելիքներ կան ճաշարանում:

Կազմակերպված գնում են ճաշարան, որտեղ երեխաները պետք է որոշեն ու անվանեն այնտեղ եղած ըմպելիքը, դատողություն անեն, թե ով որ ըմպելիքն է սիրում: Ինչո՞ւ: Էլ ի՞նչ ըմպելիքներ գիտեն, որ այնտեղ չկա: Սովորաբար երբ ինչ ըմպելիք է օգտագործում մարդը:

Այնուհետև ուսուցիչը խոհարարին խնդրում է կարճատև զրույց ունենալ երեխաների հետ այն մասին, թե օրվա ընթացքում ճաշարանում ինչպես է օգտագործում ջուրը: Նա նաև կարող է երեխաներին խորհուրդ տալ, թե որ ըմպելիքն է առողջության համար ավելի օգտակար (բնական հյութեր, կոմպոտներ...): Պարզ է, որ բոլոր այս հարցերի շուրջ ուսուցիչը նախապես է պայմանավորվել խոհարարի հետ:

Ուսուցիչը կարող է ծավալել զրույց՝ խմելու ջրի ձեռքբերման միջոցների մասին: Վրաստանում շատ վայրերում մարդիկ աղբյուրի ջուր են օգտագործում, որոշ գյուղերում ջրհորի ջուրն էլ են օգտագործում, որոշ գյուղերում օգտագործում են նաև առվակները:

Հենց այստեղ ուսուցիչը պետք է հարցնի՝ արդյոք լսե՞լ են այնպիսի վայրի մասին, որտեղ խմելու ջուր հայթայթելը մարդկանց համար մեծ դժվարություն է ներկայացնում: (Այդպիսի վայրերը Վրաստանում ևս շատ են:) Բոլոր դեպքերում դասը պետք է ամփոփվի՝ կրկնելով, որ խմելու ջուրը պետք է խնամքով օգտագործել:

ԴԱՍ 25

Թեմա.	Զմեռ
Դասի վերնագիրը.	Ի՞նչ ենք հագնում
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան ճանաչել մարմնի մասերը, նկարագրել դրանք և տեսակավորել: Հագուստը տեսակավորել՝ ըստ տարվա եղանակների: Բազմազան ակտիվությունների միջոցով նպաստել ճանաչողական տարբեր կարողությունների («բազմակողմանի բանականության») զարգացմանը:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ. I.6. Աշակերտը պետք է կարողանա բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Հագուստը տեսակավորում է՝ ըստ տարվա եղանակների:
Անհրաժեշտ նյութ.	մկրատ, սոսինձ, ստվարաթղթե տուփ, մանկական տարբեր հագուստ (այդ թվում և նոր բառերով փոխանցված), տեսանյութ, վրացական տարազ կամ պատկերազարդումներ):

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (10-12 րոպե)

Աշակերտները բացում են Աշխատանքային տետրի նոր էջը, այստեղ էլ նրանց ծանոթ հերոսներն են, այս անգամ, սակայն, առանց հագուստի: Զգացվում է, որ աշնանային սառը, ամպամած, անձրևոտ եղանակ է: Էջի ներքևի մասում տարվա տարբեր ժամանակների ու եղանակների հագուստ է նկարված, որտեղից մեր հերոսներին «հարմար» են միայն տվյալ եղանակին համապատասխան տաբատները, բաճկոնները և կոշիկները: Աշակերտները դրանք ճիշտ պետք է ընտրեն, կտրեն-հանեն անհրաժեշտ հագուստն ու «հագցնեն», այսինքն՝ փակցնեն աղջկա և տղայի նկարների վրա: Խմբերը պետք է ներկայացնեն աշխատանքներն ու բացատրեն, թե ինչու են երեխաներին այդպես հագցրել:

2. ԽԱՂ «ՏԵՄՆԵՆՔ ՄԱՏՆԵՐՈՎ» (7-9 րոպե)

Աշակերտները դարձյալ խմբերի են բաժանված: Ուսուցիչը պատրաստել է ստվարաթղթե տուփ, որտեղ գուլպաներ են, կիսատաբատ, կաշնե, գլխաշոր, ձեռնոցներ, գոտի, գոգնոց, բաճկոն, գլխարկ, ժակետ, բլուզ և այլն... Ուսուցիչը հերթով դրանք վերցնում է ու ցույց է տալիս աշակերտներին: Աշակերտները պետք է ասեն բոլոր իրերի անունները (ինչը չկարողանան ասել, ուսուցիչն է ասում, ու երեխաներին կրկնել է տալիս), կռահեն՝ ցուրտ եղանակի հագուստ է, թե՞ տաք, կամ ուրիշ ի՞նչ նշանակում ունի:

Այնուհետև սկսվում է խաղը: Յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ հերթով դուրս է գալիս տուփի մոտ: Ուսուցիչը կապում է նրա աչքերը: Աչքերը փակած աշակերտը պետք է տուփից հանի մեկ իր, մատներով շոշափի և ճանաչի այն: Եթե աշակերտը ճիշտ է գուշակում, շարունակում է խաղը, եթե ոչ՝ ուսուցիչը բացում է նրա աչքերն ու ուրիշ խմբի աշակերտի հրավիրում:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉԻ՞Ց ԵՆ ԿԱՐՈՒՄ ՀԱԳՈՒՍՏԸ (7-9 րոպե)

Ուսուցիչը երեխաներին նորից բաժանում է խմբերի՝ ըստ որևէ նշանի (օրինակ՝ մի խմբում կարող են տեղ գտնել սպիտակ վերնաշապիկով երեխաները, երկրորդում՝ ժակետներով երեխաները, երրորդում՝ գոտիներովը և այլն): Այնուհետև յուրաքանչյուր խմբի հագուստի տուփից տրվում է մեկ

կամ երկու իր: Աշակերտները պետք է հետազոտեն և որոշեն, թե ինչ նյութ է օգտագործվել՝ այդ հագուստը պատրաստելու համար (շատ պարզ, ինչպես կարողանան: Բավական է անգամ գլխի ընկնել, որ որոշ դեպքերում կաշի է օգտագործված, մյուս դեպքում՝ բամբակյա գործվածք, երկաթ, պլաստմասսա կամ այլ բան):

Սեփական հայտնագործությունները խմբերը ներկայացնում են ամբողջ դասարանի ներկայությամբ և հիմնավորում են իրենց կարծիքները: Ցանկալի է նաև նշեն՝ «տա՞ք» է այս կամ այն հագուստը, թե՞ «թեթև», կամ շոգ եղանակին են օգտագործում, թե՞ ցուրտ (կամ ուրիշ ինչ նշանակում ունի):

4. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (4-5 ՐՈՊԵ)

Ուսուցիչն ամփոփում է դասը՝ մեկ անգամ ևս հարցնելով. ի՞նչ սովորեցին այդ օրը, որո՞նք էին հագուստի հետ կապված նոր բառերը, ո՞ր խաղն է նրանց դուր եկել և ինչո՞ւ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ (ԿԱՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Խաղ. «Ծափ կամ դոփյուն»

Ուսուցիչը երեխաներին շրջան է կազմել տալիս: Խաղի կանոնն այսպիսին է. տաբատով աշակերտը (աղջիկ լինի, թե տղա, միևնույն է) պետք է երկու անգամ ծափ տա, իսկ շրջազգեստով աշակերտը պետք է ոտքերով դոփի երեք անգամ: Դա տեղի է ունենում հերթով: Դրա համար ուսուցիչը պետք է փորձի նաև հերթականությամբ շրջանի մեջ բաժանի տաբատով ու շրջազգեստով աշակերտներին: Այդ դեպքում ծափն ու դոփյունը ռիթմիկ ու հաճելի կլինեն (2 ծափ + 3 դոփյուն): Խաղը կարող է մի քանի անգամ կրկնվել, մինչև լավ հարմարվեն:

Ուսուցիչը պատրաստել է մեր նախնիների ավանդական տարազը՝ չուխա- արխալուխ կամ զգեստ: Խոսում են այդ հագուստի դետալների, նշանակության, գեղեցկության մասին... Ինչ-որ տեղ օգտագործո՞ւմ են արդյոք այսօր այն (պարողները, ժողովրդական երգի կատարողները...), գուցե որևէ մեկը տանն այդպիսի հագուստ ունի, ո՞ւմս է այն, ե՞րբ է հագնում և այլն:

Երաշխավորություն.

Այս դասում տրված ակտիվություններից ուսուցիչը կարող է օգտվել՝ ըստ իր հայեցողության (բոլոր ակտիվությունների կիրառումը պարտադիր չէ) ՝ հաշվի առնելով դասարանի տրամադրությունն ու հնարավորությունները:

Ուսուցիչը պետք է երեխաներին ընտելացնի տարածական պատկերացումներին (աջ – ձախ, ներս – դուրս...), պետք է և՛ այս դասի ժամանակ պարապի, և՛ պարբերաբար, ողջ տարվա ընթացքում նույնպես: Դրա համար ուսուցիչն օգտագործում է ինչպես դասագրքի նկարազարդումները, այնպես էլ դասասենյակը կամ այլ միջավայր:

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=UA9j0i_SExg

ԴԱՍ 26

Թեմա.	Ձմեռ
Դասի վերնագիրը.	Ձմեռ
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան անվանել և համեմատել տարվա եղանակները: Նկարագրել տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները: Դատողություն անել և խոսել տարվա տարբեր եղանակներին բնորոշ եղանակի մասին: Ըստ տարվա եղանակների՝ նկարագրել մարդու գործունեությունը, գիտակցել կենդանիների վարքը: Ըստ տարվա եղանակների՝ տեսակավորել հագուստը: Մասնակցել դասարանում ամանորյա տրմադրվածության ստեղծմանը:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ. I.6.Աշակերտը պետք է կարողանա բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Անվանում է մարդու զգայության օրգանները և դրանց գործառույթները (օր.՝ աչք – «տեսնում եմ», ականջ – «լսում եմ», լեզու – «զգում եմ համը», քիթ – «զգում եմ հոտը», մաշկ – «զգում եմ ջերմությունը և ցուրտը, ողորկ կամ անհարթ մակերևույթը»): Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Ձյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»): Անվանում է դիտարկվող փոփոխությունները ցերեկվա ու գիշերվա ընթացքում: Տարբերում է ցերեկվա ու գիշերվա հատվածները՝ առավոտ, կեսօր, երեկո, գիշեր, և դրանք կապում է իր ակտիվության/գործունեության հետ: Անվանում և համեմատում է տարվա եղանակները, դատողություն է անում դրանց տարբերակիչ հատկանիշների մասին: Թվարկում է մարդու գործունեության (օրինակ՝բույսեր տնկել, խաղողաքաղ, բերքահավաք), կենդանիների վարքի (օրինակ՝ թռչունների չու, ձմեռային քուն) և բույսերին բնորոշ փոփոխությունների (օրինակ՝ ծաղկունք, տերևաթափ) օրինակներ՝ ըստ տարվա եղանակների: Հագուստը տեսակավորում է՝ ըստ տարվա եղանակների:
Անհրաժեշտ նյութ.	գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, մկրատ, սոսինձ, տեսանյութ:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (4-5 րոպե)

Դասագրքի համապատասխան էջում տրված են ձմռան տեսարաններ. լուսանկար, որում պատկերված է ձմեռը քաղաքում, գյուղում, սառած գետ և ձմեռային առողջարան:

Ուսուցիչը երեխաներին խնդրում է ուշադիր նայել նկարները ու նկարագրել դրանք:

2. ԶՐՈՒՅՑ ԶՄԵՌՎԱ ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՋ (2-3 րոպե)

Այս զրույցը մոտավորապես այսպես պետք է ծավալի ուսուցիչը.

– Դուք ասում եք, որ այս նկարում ձմեռ է պատկերված: Իսկ դուք ձմռանը սովորաբար դահուկներով սահո՞ւմ եք: Ձեռք բարձրացնեն նրանք, ովքեր սիրում են դահուկներով սահել և սահնակ քշել...

– Ով կասի, հիմա տարվա ի՞նչ եղանակ է: Հիմնավորե՛ք, ինչո՞ւ եք այսպես մտածում:

– Երբ սկսեցիք դպրոց հաճախել, տարվա ո՞ր եղանակն էր: Ուրեմն, աշնանն ի՞նչն է հաջորդում:

– Ո՞վ կհիշի ու կթվարկի աշնան ամիսները:

– Հիմա ո՞ր ամիսն է (մեր հաշվարկով դեկտեմբեր կամ հունվար պետք է լինի):

– Ուրեմն դեկտեմբերը (կամ հունվարը) ձմռան ամիս է: Էլ ո՞ր ամիսն է ձմռան ամիս: (Եթե երեխաները չկարողանան թվարկել ձմռան ամիսները, միայն դրանից հետո պետք է ուսուցիչն ինքը թվարկի դրանք:)

– Քանի՞ ամիս ունի ձմեռը: Աշունը քանի՞ ամիս ուներ:

3. ԽԱՂ. «ՁՄՌԱՆ ԱՄԻՍՆԵՐԸ» (2-3 րոպե)

Ձմռան ամիսներն ավելի լավ հիշելու համար ուսուցիչը երեխաներին առաջարկում է այն խաղի նման տարբերակը, որ նրանք ավելի շուտ՝ աշնան ամիսներին են խաղացել:

Դա ծափերով խաղն է:

1 ծափը դեկտեմբեր է նշանակում:

Հունվարը՝ 2 ծափը:

Փետրվարը՝ 3 ծափը:

Ուսուցիչը մի քանի անգամ խառը ծափահարում է՝ մերթ մեկ անգամ, մերթ՝ երեք, հետո՝ երկու անգամ, նորից՝ երեք ու այսպես շարունակ: Յուրաքանչյուր անգամ աշակերտները պետք է գուշակեն ամիսն ու անվանեն այն: Այնուհետև ուսուցիչը նրանց խնդրում է ուշադրություն դարձնել իր ծափերի հերթականությանը. դեռ 1 ծափ, հետո՝ 2, վերջում՝ 3 ծափ: Բացատրում է, որ ձմռան ամիսները հենց այս հերթականությամբ են հաջորդում մեկը մյուսին և նորից կրկնում է երեք ծափերն էլ: Աշակերտները պետք է մտապահեն, որ ձմռան ամիսների հաջորդականությունն այսպիսին է. դեկտեմբեր, հունվար, փետրվար:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (4-5 րոպե)

Աշխատանքը կատարվում է զույգերով: Դասագրքի հաջորդ էջում դարձյալ մեր գրքի հերոսներն են: Նրանց մեջտեղում տրված է երկու քառանկյուն և դրանց մեջ նկարված են առարկաներ: Աշակերտները պետք է օգնեն գրքի հերոսներին առանձնացնել «ավելորդ» (ոչ տեղին) իրերը (մի քառանկյունիում նկարված է կարճ տաբատ կամ շորտեր, մյուսում՝ ամառային ոտնամաններ): Նրանք պետք է շրջագծեն այդ իրերը ու բացատրեն, թե ինչու են կարծում, որ հենց այս կամ այն իրն է «ավելորդ» և ոչ ուրիշ մեկը: Նկարները պետք է գունավորեն:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ. «ԻՆՉ ՍԽԱԼ Է ԹՈՒՅԼ ՏՎԵԼ ՆԿԱՐԻՉԸ» (4-5 րոպե)

Աշխատանք խմբերով.

Դասագրքի նույն էջի ներքևի մասում ձմռան պատկեր է նկարված: Ձյունոտ միջավայր է: Մի ծառի վրա տերևներ են և թզեր: Տղան կարճաթև վերնաշապիկով է: Թփի վրա ծաղիկ է աճել: Երկնքում չվող թռչունների երամ է երևում: Աշակերտները պետք է հասկանան այդ «սխալները», ապա բացատրեն, թե «ինչ սխալ է թույլ տվել նկարիչը»:

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին հիշել և նկարագրել վայրի կենդանիների վարքը ձմռանը: Աշակերտներն այս դեպքում կդրսևորեն ունեցած նախնական գիտելիքը (օրինակ. արջը ձմեռային քուն է մտել, սկյուռը ձմեռվա պաշար է հավաքում փչակում ...):

Ուսուցիչը կարող է շարունակել զրույցը և աշակերտներին պատմել մարդու դերի և հնարավոր օգնության մասին: Օրինակ՝ թռչունների համար կերակրամաններ պատրաստել: Մտաբերել, որ եղել են դեպքեր, երբ խիստ ձմեռվա պայմաններում այծյամը և եղջերուն մարդկանց մոտ են իջել թուլացած և նրանցից սնունդ ստացել, նրանց մոտ ձմեռել կամ օգտվել են մարդու բարյացակամ վերաբերմունքից և այլն: Ցանկալի է տեսաֆիլմ ցուցադրել:

Դրանից հետո ուսուցիչը կարող է զրուցել ձմռանը ընտանի կենդանիների վարքի մասին և աշակերտներին խնդրել նկարագրել ընտանի կենդանիների վարքը օր ու գիշերվա ընթացքում:

6. ԴԱՍԱՍԵՆՅԱԿԻ ԶԱՐԴԱՐՈՒՄ (10-15 րոպե)

Աշխատանքային տետրի հաջորդ էջում տարբեր տեսակի փաթիլներ են նկարված: Աշակերտներն ինքնուրույն են աշխատում կամ զույգերով: Նրանք պետք է կտրեն այդ փաթիլները (իրենց ընտրությամբ կամ բոլորը) և ուսուցչի օգնությամբ փակցնեն պատուհանների ապակիներին:

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է խոսել իրենց հիշողությունների մասին, ձմռանն անցկացրած լավագույն օրերի մասին (իրենց տպավորությունները ձյան մեջ խաղալուց, ամանորյա նվերների հետ կապված և այլն):

Ուսուցիչը անցկացնում է համառոտ դասարանական քննարկում.

– Ինչպիսի՞ն է բնությունը ձմռանը: Ինչո՞վ է ձմռան բնությունը տարբերվում աշնան բնությունից (ավելի ցրտեց, հաճախ սառնամանիք է, օրը կարճ է, գիշերը՝ երկար, ծառերն առանց տերևների են, մերկ, ձյուն է գալիս...):

Ուսուցիչը հարցեր է տալիս.

– Հիշե՛ք՝ խիստ ձմեռվա պայմաններում, օր ու գիշերվա ընթացքում ե՞րբ է ավելի ցուրտ՝ ցերեկը, կեսօրին, թե՞ երեկոյան:

– Ինչպե՞ս ենք հագնվում ձմռանը և ինչո՞ւ:

– Ինչո՞վ ենք զգում, որ ձյունը սառն է:

– Հնարավո՞ր է առանց ձեռնոց, ձեռքերով ձնագնդի պատրաստել, ինչո՞ւ:

– Օգտագործո՞ւմ եք ձեռնոցներ: Ինչո՞ւ:

Ցանկալի է ուսուցիչը երեխաներին հանգեցնի այն եզրակացության, որ մարդ հպումով զգում է՝ առարկան տաք է, թե՞ սառը:

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (3-4 րոպե)

Երաշխավորություն.

Այս դասում տրված ակտիվություններից ուսուցիչը կարող է օգտվել՝ ըստ իր հայեցողության (բոլոր ակտիվությունների կիրառումը պարտադիր չէ) ՝ դասարանի տրամադրության ու հնարավորությունների նախատեսմամբ:

Եթե ամանորյա հանդեսը մինչև այս դասն է անցկացվում, կարող եք այս պարապմունքը փոխարինել նախորդ շաբաթվա թեմայով այնպես, որ մինչև ամանորյա հանդեսը հասցնեք սենյակը փաթիլներով զարդարել:

ԴԱՍ 27

Թեմա.	Ձմեռ
Դասի վերնագիրը.	Ահա եկել է Նոր տարին
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան զգայության օրգանների և պարզ սարքավորումների կիրառմամբ դիտարկել ուսումնասիրման առարկան: Անվանել զգայության օրգանները և դրանց գործառույթները: Նկարագրել մարմնի հատկանիշները: Զարգացնել դիտարկման ունակությունը: Նպաստել աշակերտների տարբեր ճանաչողական ունակությունների («բազմակողմանի բանականության») զարգացմանը:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. Ի.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.Ի.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Անվանում է մարդու զգայության օրգանները և դրանց գործառույթները (օր.՝ աչք – «տեսնում եմ», ականջ – «լսում եմ», լեզու – «զգում եմ համը», քիթ – «զգում եմ հոտը», մաշկ – «զգում եմ ջերմությունը և ցուրտը, ողորկ կամ անհարթ մակերևույթը»):

Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Ձյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»):

Կիրառում է տարբեր պարզ սարքավորումներ (խոշորացույց, ֆոնենդոսկոպ) զգայությունների հզորացման նպատակով և նկարագրում է մարմնի հատկությունները, որոնք այդ սարքավորման օգտագործման ժամանակ են դարձել ակներև:

Անհրաժեշտ նյութ. գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, խոշորացույց:

Դասի ընթացքը.

1. ԶՐՈՒՅՑ. «ԻՆՉՊԵՍ ԴԻՄԱՎՈՐԵՑԻՆՔ ՆՈՐ ՏԱՐԻՆ» (6-8 րոպե)

Աշխատանքը պետք է կատարվի զույգերով: Զույգ կազմած աշակերտները մեկը մյուսի հետ կիսվում են ամանորյա տպավորություններով, թե ով որտեղ և ինչպես է դիմավորել Նոր տարվա գալուստը, Ձմեռ պապն ինչ նվերներ է բերել և այլն:

Այնուհետև երեխաները պետք է փոխանցեն միմյանց պատմածները կամ այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր աշակերտ պետք է մտապահի ընկերոջ պատմածն ու ինքը կարողանա պատմել: Ցանկալի է, որ ուսուցիչը բոլոր ցանկացողներին ժամանակ տրամադրի, բայց միաժամանակ վերահսկի ժամանակը: Հենց այս ժամանակ էլ ուսուցիչը մի քանի անգամ հարցնում է. «Երբ է գալիս Նոր տարին», որպեսզի աշակերտները Նոր տարվա գալուստը կապեն ձմեռվա, հունվարի մեկի հետ:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (5-6 րոպե)

Աշխատանքային տետրի համապատասխան էջում տրված են անավարտ նկարի ուրվագծեր (Ձմեռ պապը՝ պարկով, Ձմեռ պապը պարկից նվերներ է բաժանում երեխաներին), որը երեխաները պետք է ավարտեն (նկատի ունի տոնածառի վրա աշխատանքն ավարտելը...) և գունավորեն: Այնուհետև մի քանի աշակերտի հնարավորություն կտրվի խոսել նկարի մասին:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Նույն էջի ներքևի հատվածում ոտնահետքեր են նկարված (հավի, շան, մարդու): Ուսուցիչ.

– Ձյան վրա քայլելիս ի՞նչ է առաջանում ձյան վրա: Հետք, ոտնահետք:

– Կարո՞ղ եք զուշակել՝ այդ ոտնահետքերն ո՞ւմս են:

Երեխաները պետք է աշխատեն զույգերով: Նրանք պետք է որոշեն, թե ումս են ոտնահետքերը, ու գծերով միացնեն դրանք համապատասխան հերոսներին:

4. ԽԱՂ. «ՍՏԵՂԾԵՆՔ ՓԱԹԻԼ» (6-8 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին ձեռք-ձեռքի բռնած շրջան է կազմել տալիս և առաջարկում է պատկերացնել ձյան փաթիլ ու փորձել այդպիսի ձև ստեղծել (կամ երեխաներն այնպես պետք է բաժանվեն, որ «փաթիլը» վեց գագաթ ունենա):

Ուսուցիչը բարդացնում է խաղը՝ հարցնելով.

– Չորս աշակերտները կարո՞ղ են «փաթիլ» ստեղծել, իսկ հի՞նգը, վե՞ցը:

Միաժամանակ համապատասխանաբար խմբավորում է երեխաներին: Երեխաները կռահում են, որ այնուամենայնիվ առնվազն վեց աշակերտ անհրաժեշտ է վեց անկյուն ունեցող փաթիլի

ստեղծման համար: Վերջում ամբողջ դասարանը միավորվում է մեկ շրջանի շուրջ և ուսուցչի հանձնարարությամբ փորձում է «ձնագունդ» կազմել (դա շատ ավելի հեշտ ու հաճելի է):

5. ՓԱԹԻԼԻ ԴԻՏՈՒՄ ԽՈՇՈՐԱՑՈՒՅՑՈՎ (5-8 րոպե)

Ուսուցիչը երեխաներին դուրս է տանում դպրոցի բակ: Եթե ձյուն է գալիս, նրանք պետք է նկարագրեն ձյունը (գույն, հոտ, համ, ձև, ֆակտուրա): Այն կապեն զգայության օրգանների հետ: Ձյունը սպիտակ է և սառը (աչք, մաշկ): Այնուհետև փաթիլները դիտարկեն խոշորացույցով: Դրա համար շատ խոշորացույցների կարիք չկա: Մեկ կամ երկու հատն էլ բավական է: Ուսուցիչը երեխաներին հերթով իր մոտ է կանչում, ու նայում են ձեռնոցի կամ թևքածալի վրա ընկած փաթիլներին: Ուսուցիչն այդ ժամանակ հարցնում է. ի՞նչ է տեղի ունենում խոշորացույցով նայելու ժամանակ: (Առարկան ավելի մեծ ենք տեսնում:) Քանի՞ գագաթ ունի փաթիլը (վեց): Փաթիլները միանման են, թե՞ տարբեր (բոլոր փաթիլները տարբեր են, սակայն նման են իրար): Մյուս երեխաներն այդ ընթացքում այդտեղ կանգնած են և սպասում են իրենց հերթին, միաժամանակ լսում են ուսուցչին: (Հենց այստեղ էլ կարելի է ստուգել, թե արդյոք ձյան վրա մնո՞ւմ են ոտնահետքեր:)

6. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

ԴԱՍ 28

Թեմա.	Ձմեռ
Դասի վերնագիրը.	Վտանգավոր իրեր
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան գիտակցել անվտանգության գլխավոր պահանջները: Հրդեհի առաջացման դեպքում անվտանգ գործելու հմտությունների ու կարողությունների մշակում: Գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Երևույթները ճանաչել պատկերզարդման վրա կամ իրականության մեջ: Տեղի միջավայրում ճիշտ վարվելակարգի կանոնների ձևավորում:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ.I.5.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և կողմնորոշվի նրանում:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Անվանում է մարդու զգայության օրգանները և դրանց գործառույթները (օր.՝ աչք – «տեսնում եմ», ականջ – «լսում եմ», լեզու – «զգում եմ համը», քիթ – «զգում եմ հոտը», մաշկ – «զգում եմ ջերմությունը և ցուրտը, ողորկ կամ անհարթ մակերևույթը»): Դատողություն է անում զգայությունների և զգայությունների օրգանների դերի մասին մարդու (օր.՝ սննդամթերքի պիտանելիության ժամկետը որոշել, փողոցում անվտանգ տեղաշարժվել) և կենդանիների համար (օր.՝ ժամանակին

հայտնաբերել վտանգը, սնունդ հայթայթել, ապաստան գտնել):

Ուսուցչի օգնությամբ համադասարանցիների հետ ձևակերպում է և պահպանում տեղի միջավայրում (օրինակ՝ դասարանում, դպրոցում, բակում, փողոցում, տանը) վարքի կանոնները (օրինակ ՝ պահպանում է դպրոցի մաքրությունը):

Անհրաժեշտ նյութ. բաժակ, տիկնիկ կամ մեքենա, գունավոր մատիտներ, վտանգավոր իրեր՝ դանակ, մկրատ, ասեղ, մեխ:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ՇՐՋԱՆ ԿԱԶՄԱԾ. «ՎՏԱՆԳԱՎՈՐ ԻՐԵՐ» (8-10 րոպե)

Ուսուցիչը շարունակում է խոսել Նոր տարվա մասին և ավելացնում, որ Նոր տարին ուղեկցվում է տոնական հրավառությամբ, համազարկերով, բազմաթիվ լուսատուների առկայծումներով և այլն:

Այս ամենը գեղեցիկ է, սակայն ոչ այնքան անվտանգ: Հաճախակի են տհաճ պատմությունները (այրվածքներ, տարբեր վնասվածքներ ...): Ուսուցիչն ուշադրությունը կենտրոնացնում է անվտանգության և այն վարքի վրա, ինչն անհրաժեշտ է այդպիսի իրերի հետ շփվելիս:

Ուսուցիչը նախապես պատրաստել է սուր ծայրերով իրեր (դանակ, մկրատ, ածելի, ասեղ, մեխ) և անվտանգ իրեր (բաժակ, գիրք, գրիչ, խաղալիք...), որոնք շարում է հատակին և երեխաներին խնդրում է այդ իրերի շուրջ շրջան կազմել (կամ նստել, կամ պպզել): Ուսուցիչը բացատրում է, որ ընտանեկան իրերի մեջ հանդիպում են նաև վտանգավոր առարկաներ, ինչով մարդը կարող է վնասվել: «Եկեք ճանաչենք վտանգավոր իրերը», – ասում է ուսուցիչն ու ձեռքն է վերցնում գիրքն ու խաղալիքը և հարցնում, թե արդյոք դրանք վտանգավո՞ր իրեր են: Երեխաները պետք է պատասխանեն՝ ո՛չ:

Այնուհետև ուսուցիչը վերցնում է դանակն ու կրկին հարց է տալիս.

– Սա ի՞նչ է: Վտանգավո՞ր իր է (երեխաները պատասխանում են՝ այո):

– Ըստ ձեզ, ինչո՞ւ է վտանգավոր:

– Մարդիկ դանակն ինչի՞ համար են օգտագործում:

Ուսուցիչն ու աշակերտները խոսում են այն թեմայի շուրջ, թե ինչ կարող է տեղի ունենալ այն դեպքում, եթե երեխան սկսի դանակով խաղալ:

Նույն ձևով խոսում են բոլոր այդ վտանգավոր իրերի նշանակման ու վտանգների մասին: Այդ զրույցներով ուսուցիչն աշակերտներին պետք է հանգեցնի այն եզրակացության, որ սրածայր իրերով խաղալ չի կարելի, չի կարելի ասեղը կամ մեխը բերանը դնել, անկողնու կամ բազմոցի վրա խրել և այլն:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ. «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» (5-6 րոպե)

Աշխատանքը կատարվում է զույգերով.

Աշխատանքային տետրի համապատասխան էջում տրված է չորս «պատուհան»: Յուրաքանչյուր պատուհանի մեջ նկարված է չորս իր: Աշակերտները զույգերով պետք է հասկանան, թե այդ իրերից որն է ավելորդ յուրաքանչյուր պատուհանում և կարմիր մատիտով շրջագծեն: Կառանձնացվի էլեկտրատեխնիկայի չորս ընտանեկան իր՝ արդուկ, էլեկտրական սալիկ, հեռուստացույց, եռուցիչ:

Ընթանում է զրույց՝ հետևյալ հարցերի կիրառմամբ.

– Ի՞նչ ընդհանրություն ունեն ձեր ընդգծած իրերը:

– Էլ ի՞նչ իրեր եք օգտագործում տանը, որոնք էլեկտրական հոսանքով են աշխատում:

– Ի՞նչ վտանգ է սպառնում երեխային այս իրերի հետ շփվելիս:

Ուսուցիչը պետք է բացատրի, որ երկու կարևոր պատճառ կա, ինչի համար երեխաները պետք է խուսափեն էլեկտրասարքավորումներից.

1. Էլեկտրական հոսանք է հաղորդում: Բաց հոսանքալարին ձեռքով հպումը կարող է մահվան ելքով ավարտվել:

2. Կարող է հրդեհ առաջացնել, ինչի հետևանքով մեծ դժբախտություն կարող է տեղի ունենալ (այրվածք, տան ոչնչացում, մահ):

Դրա համար ավելի լավ է, որ երեխաներն առհասարակ խուսափեն այդպիսի առարկաներից, չդիպչեն վարդակին, չսրբեն միացրած հեռուստացույցը կամ այլ էլեկտրական տեխնիկա, թաց ձեռքով չդիպչեն էլեկտրալարին, որևէ բան հոսանքից անջատելու համար չքաշեն լարը...

Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է, որ գազօջախի հետ շփվելը նույնպես վտանգավոր է:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ. «Ի՞ՆՉ ՎՏԱՆԳ Է ՍՊԱՌՆՈՒՄ ՄԵՐ ԳՐՔԻ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ» (2-3 րոպե)

Աշխատանքային տետրի նույն էջում տրված են մեր գրքի հերոսների նկարները: Նրանցից մեկը փորձում է մեխը մտցնել վարդակի մեջ, իսկ մյուսը՝ միացրած արդուկը թողնում է արդուկի սեղանի վրա:

Աշակերտները պետք է կռահեն, թե ինչ վտանգ է սպառնում գրքի հերոսներին ու ժամանակին «զգուշացնեն» նրանց այդ մասին:

4. ՔՆՆԱՐԿՈՒՄ. «ԻՆՉԸ ԿԱՐՈՂ Է ՏԱՆԸ ՀՐԴԵՀ ԱՌԱՋԱՑՆԵԼ» ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՋ (3-5 րոպե)

Քննարկման ընթացքում ուսուցիչն աշակերտներին պետք է հանգեցնի եզրակացության, որ տանը հրդեհի բռնկման պատճառ կարող են լինել կրակայրիչի, լուցկու, միացրած արդուկի, գազօջախի ոչ ճիշտ օգտագործումը (գազօջախը կարող է պայթյունի պատճառ էլ դառնալ), հոսանքին միացված էլեկտրատեխնիկայի (հեռուստացույց, սառնարան, եռուցիչ, մագնիտոֆոն, էլեկտրական սալօջախ...) անսարքությունը և այլն:

Այդ պատճառով նման իրերն առանց ավագների թույլտվության օգտագործել չի կարելի:

5.ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (7-8 րոպե)

Դասագրքում նկարներով տրված է երեխաների գործունեությունը հրկիզվող տան մեջ: Տղան, հենց որ ծխի հոտ զգաց, անմիջապես անկողնուց սողաց հատակին (սենյակում ծուխը վերևում է սկսում հավաքվել), արագ սողաց դեպի դուռը, զգույշ բացեց այն, երբ համոզվեց, որ երկրորդ սենյակում հրդեհ չկար, անցավ այնտեղ ու փակեց դուռը, ճանապարհին արթնացրեց հորն ու մորը, բոլորը պպզած դուրս գնացին շքամուտք, իսկ հետո՝ դուրս՝ բակ: Մինչ այդ հարևաններին տեղեկացրել են հրդեհի մասին ու խնդրել, որ շտապ զանգահարեն հրշեջ ծառայություն և ոստիկանություն:

Արդեն դրսում տղան տեսավ բակում հավաքված հարևաններին: Այդ ժամանակ հայտնվեց նաև հրշեջ մեքենան, հրշեջները ջրաշիթերով հանգցրին կրակը:

Աշակերտները պետք է ուշադրությամբ նայեն նկարները ու նույն հերթականությամբ նկարագրեն գործողությունները հրդեհի ժամանակ:

6. ԴԵՐԵՐՈՎ ԽԱՂ. «ՓՐԿՎԵՆՔ ՀՐԴԵՀԻՑ» (3-4 րոպե)

Շնորհանդեսից հետո ուսուցիչը խմբերին առաջարկում է ընտրել որևէ տեսարան տրված նկարներից և բեմադրել (թույլատրելի են և՛ գոռալը, և՛ բացականչությունները, և՛ ճսջախաղը...), ըստ ցանկության, խումբը կարող է բոլորովին այլ դրվագ մտածել ու դա բեմադրել:

Մյուս խմբի անդամները (հանդիսատեսը) պետք է գնահատեն, թե որքանով ճիշտ ու ժամանակին էին գործում իրենց ընկերները «հրկիզվող տան մեջ»:

7. ՍՐԱՆՔ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԻՐԵՐ ԵՆ (2-4 րոպե)

Ուսուցիչն իր սեղանին է դնում տարբեր տեսակի դեղեր, լվացքի փոշի, հակամիջատային աէրոզոլ... Հերթով սեղանի մոտ է կանչում յուրաքանչյուր խմբի անդամներին, նրանք պետք է գուշակեն, «վտանգավոր իրերը» և բացատրեն, թե ինչու է այս կամ այն նյութը երեխայի համար վտանգավոր (սխալ, ինքնակամ վերցած դեղը կարող է թույնի վերածվել, թունավոր են նաև լվացքի փոշիները, հակամիջատային աէրոզոլը և այլ ընտանեկան քիմիկատներ):

8. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

ԴԱՍ 29

Թեմա.	Զգայության օրգաններ
Դասի վերնագիրը.	Ինչպե՞ս ենք ճանաչում առարկաները
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան իրենց զգայություններն անվանել և գիտակցել դրանց գործառույթները: Նկարագրել ծանոթ մարմնի հատկությունները և դրանք կապել տարբեր զգայությունների հետ: Գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Դատողություն անել անձնական հիգիենայի պահպանման նշանակության և անհրաժեշտության մասին:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Անվանում է մարդու զգայության օրգանները և դրանց գործառույթները (օր.՝ աչք – «տեսնում եմ», ականջ – «լսում եմ», լեզու – «զգում եմ համը», քիթ – «զգում եմ հոտը», մաշկ – «զգում եմ ջերմությունը և ցուրտը, ողորկ կամ անհարթ մակերևույթը»): Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Զյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»): Դատողություն է անում զգայությունների և զգայությունների օրգանների դերի մասին մարդու (օր.՝ սննդամթերքի պիտանելիության ժամկետը որոշել, փողոցում անվտանգ տեղաշարժվել) և կենդանիների համար (օր.՝ ժամանակին հայտնաբերել վտանգը, սնունդ հայթայթել, ապաստան գտնել): Անվանում է անձնական հիգիենայի պարագաներ (օր.՝ սանր, ատամի խոզանակ, սրբիչ): Դատողություն է անում հիգիենայի կանոնների պահպանման նշանակության մասին:
Անհրաժեշտ նյութ.	աչքերը կապելու համար գլխաշոր, օճառ, աուդիոնյութ (կենդանիների, բնության երևույթների՝ անձրևի, ամպրոպ-որոտի, ծովի հուզման, թռչնի դայլայլի և այլն ձայներով), տեսանյութ (իրավիճակ փողոցում):

Դասի ընթացքը.

1. ԽԱՂ. «ՏԵՄՆԵՆՔ ՄԱՏՆԵՐՈՎ» (8-10 րոպե)

Ուսուցիչը դասը սկսում է հարցով. «Ինչո՞վ եք տեսնում առարկաները»: Այնուհետև առաջարկում է խաղալ: Խաղի կանոններն այսպիսին են. ուսուցիչը հերթով իր մոտ է կանչում մեկական աշակերտի, կապում է աչքերն ու որևէ իր է տալիս նրան, օրինակ՝ մատիտ: Աշակերտը մատներով շոշափում է այն ու ասում՝ ինչ է դա: Եթե գուշակում է, թե ինչ է դա, ուսուցիչն ուրիշ իրեր էլ է տալիս (գրիչ, ռետին, գիրք, գլխարկ, խաղալիք...): Եթե դասարանում շատ աշակերտ կա, երկու-երեք առարկա ճանաչելուց հետո ուսուցիչն ուրիշ աշակերտի պետք է կանչի, որպեսզի բոլոր ցանկացողներին տրվի մասնակցության հնարավորություն:

Ուսուցչի հարցերը խաղից հետո.

– Մատների հպումով բոլոր (գրեթե բոլոր) իրերը ճանաչեցիք, էլ ի՞նչ ենք հասկանում սովորաբար շոշափելով: (Այս խաղի ու լրացուցիչ հարցերի միջոցով ուսուցիչը պետք է այնպես անի, որ աշակերտները գիտակցեն, որ շոշափելով ենք զգում՝ առարկան ողորկ է, թե՞ անհարթ, բութ է, թե՞ սուր, սառն է, թե՞ տաք, ի՞նչ ձև ունի, պինդ է, թե՞ փափուկ:)

Այնուհետև ուսուցիչը հարցնում է.

– Ինչո՞վ ենք դիպչում իրերին: (Շոշափելիքի օրգանը մաշկն է, չնայած երեխաները գուցե ասեն, որ մատներն են, քանի որ մատների մաշկը հատկապես զգայուն է, ու մատներով զգալն ավելի հարմար է:)

2. ԽԱՂ. «ՏԵՄՆԵՆՔ ԱԿԱՆՋՆԵՐՈՎ» (5-6 րոպե)

Ուսուցիչ. «Ինչպես տեսնում եք, առարկաները կարելի է ճանաչել ինչպես տեսնելով, այնպես էլ շոշափելով: Իսկ լսելով կարո՞ղ եք ճանաչել իրերը»: Այս հարցին պատասխան տալու համար ուսուցիչն աշակերտներին առաջարկում է նոր խաղ խաղալ:

Աշակերտները ոտքի են կանգնում ու մեջքով շրջվում դեպի ուսուցիչը: Ուսուցիչը մատիտով, ցուցափայտով կամ քանոնով պարբերաբար հարվածում է տարբեր առարկաների (նստարանին, պատուհանի ապակուն, սկուտեղին, երկաթե կամ փայտե առարկաներին...): Աշակերտները ձայնով պետք է ճանաչեն այդ առարկան ու անվանեն այն: Այս դեպքում նրանք միասին են պատասխանում: Դրանից հետո ուսուցիչը հերթով կանչում է աշակերտներին ու կապում աչքերը: Աշակերտը ձայնով պետք է ճանաչի իր դասընկերոջը, ով հարցնում է. «Ես ո՞վ եմ»: Մի քանի աշակերտի ճանաչելուց հետո ուրիշի հերթն է գալիս և այսպես շարունակվում է, մինչև բոլոր ցանկացողները մասնակցում են: Այս դեպքում ակտիվությունը շարունակվում է ժամացույցի կիրառմամբ: Ուսուցիչը հարց է տալիս.

– Ինչ եք կարծում, լսելով կարո՞ղ ենք հասկանալ, աշխատում է, թե՞ ոչ, օրինակ, պատի ժամացույցը, հիմնավորեք (տկտկում է, ձայն է հանում...):

– Ինչպե՞ս կարող ենք հասկանալ, որ չի աշխատում:

– Ի՞նչ եզրահանգում կարող ենք անել այս երկու դեպքում (եթե ձայն հանում է, աշխատում է, եթե ձայն չի հանում, չի աշխատում):

Ցանկալի կլինի, որ այս ակտիվության ժամանակ ակներևության համար ուսուցիչը, բացի դասագրքի ժամացույցից, որպես օրինակ բերի նաև պատի ժամացույցը:

Ցանկալի է, որ ուսուցիչը այս դասի ընթացքում օգտագործի աուդիո կամ տեսանյութ թռչունների կամ գազանների ձայնով:

Խաղի ավարտից հետո ուսուցիչն ու երեխաները եզրակացություն են անում, որ, փաստորեն, առարկաները միմյանցից տարբերել ու ճանաչել մենք կարող ենք ոչ միայն տեսնելով ու շոշափելով, այլև լսելով: Օրինակ՝ փողոցում վտանգը զգում ենք անգամ մեքենաների աղմուկից, ազդանշաններից:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-6 րոպե)

Դասագրքի համապատասխան էջում նկարված են մատ, ականջ և աչքեր: Նույն տեղում էլ երեք արտահայտություն է տրված.

– Փուշն ինձ ծակեց:

– Գնդակը կարմիր է:

– Թռչունը դայլայլում է:

Աշակերտներն աշխատում են զույգերով: Նրանք պետք է կարդան այդ արտահայտություններն ու անվանեն, թե զգայության որ օրգանի միջոցով ենք զգում. փշի ծակելը՝ մատի միջոցով, գնդակի կարմրությունը՝ աչքի միջոցով ու թռչունի դայլայլը՝ ականջի միջոցով:

Հանձնարարությունը կատարելուց հետո, աշակերտները պետք է պարզաբանեն, թե ինչպես և ինչու կատարեցին հանձնարարությունն այսպես:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ. ԴԵՐԵՐՈՎ ԽԱՂ (8-10 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 3 խմբի և խմբերի անդամներին հանձնարարում է մեջխաղի միջոցով դերակատարել.

I խումբ՝ մարդիկ, որոնք չեն տեսնում,

II խումբ՝ մարդիկ, որոնք չեն լսում:

Ակտիվության նպատակն այն է, որ երեխաները որոշեն խմբի «դերը», քանի որ ուսուցիչը անհատական հանձնարարություն է տալիս յուրաքանչյուր խմբին այնպես, որ մյուսները չիմանան:

Երկրորդ անգամ խմբի անդամներն իրենք են ընտրում իրենց ցանկալի դերերն այս երկու տարբերակից ու խաղում մեջտեղով.

Ուսուցիչ.

– Ինչպե՞ս էիք ձեզ զգում այդ մարդկանց դերում եղած ժամանակ:

– Ինչո՞ւ է պարտադիր, որ աչքերը, ականջներն ու մաշկը խնամենք (զգայության օրգանները):

Ուսուցիչը պետք է զրույց ծավալի հիգիենայի նորմերի պահպանման անհրաժեշտության մասին (ականջի խնամք, աչքերի պահպանում և այլն):

Մատնանշելով դասագրքում նկարված համակարգիչը, ուսուցիչը վարում է քննարկում՝ համակարգչի օգտագործման կանոնների վերաբերյալ: Հնարավոր է, որ դասարանն ինքը կանոններ ձևակերպի, որոնց պահպանումն անհրաժեշտ կլինի համակարգչից օգտվելիս (հավանաբար դրանք այսպիսին կլինեն. համակարգչի մոտ երկար չնստե՛ս, վերահսկի՛ր հեռավորությունը քո և մոնիտորի միջև և այլն):

5. ՀԱՃԱԽ ԼՎԱՆՔ ՄԵՐ ՁԵՌՔԵՐԸ (2-3 րոպե)

Եթե դասին դրա ժամանակ կմնա, ցանկալի է, ուսուցիչն աշակերտներին տանի այնպիսի տեղ (օրինակ՝ զուգարան), որտեղ ջրի ծորակներ կան: Ուսուցիչը չորս կամավոր աշակերտների ձեռքերին կքսի նախօրոք պատրաստած մուր և ակներևության համար մեկին միայն սառը ջրով է լվալ տալիս ձեռքերը, երկրորդին՝ սառը ջրով և օճառով, երրորդին՝ միայն տաք ջրով, չորրորդին՝ տաք ջրով և օճառով:

Մնացած աշակերտները հետևում են հասակակիցներին, իսկ վերջում լվացած ձեռքերը համեմատում են իրար հետ և անում եզրահանգում. ո՞ր ջուրն է ավելի լավ լվանում՝ տաքը, թե՞ սառը, օճառով է ավելի լավ մաքրվում կեղտը, թե՞ առանց օճառի:

6. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Երաշխավորություն.

Եթե վերջին ակտիվության անցկացման համար դասի ժամանակը բավարար չի լինի, ուսուցիչը կարող է այս ակտիվությունը մինչև ընդմիջումն անցկացնել:

ԴԱՍ 30

Թեմա.	Զգայության օրգաններ
Դասի վերնագիրը.	Հոտոտելիք և ճաշակելիք
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան անվանել մարդու զգայության օրգանները և գիտակցել դրանց գործառույթները: Նկարագրել ծանոթ մարմնի հատկանիշները և դրանք կապել տարբեր զգայության օրգանների հետ: Աշակերտները գիտակցեն՝ որոնք են ճաշակելիքի և հոտոտելիքի օրգանները: Աշակերտների դիտարկման և վերլուծության կարողությունները զարգացնել: Զգայության և զգայության օրգանների նշանակության մասին դատողություն անել:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բնագիտ.Ի.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ:

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Անվանում է մարդու զգայության օրգանները և դրանց գործառույթները (օր.՝ աչք – «տեսնում եմ», ականջ – «լսում եմ», լեզու – «զգում եմ համը», քիթ – «զգում եմ հոտը», մաշկ – «զգում եմ ջերմությունը և ցուրտը, ողորկ կամ անհարթ մակերևույթը»):

Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Ձյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»):

Դատողություն է անում զգայությունների և զգայությունների օրգանների դերի մասին մարդու (օր.՝ սննդամթերքի պիտանելիության ժամկետը որոշել, փողոցում անվտանգ տեղաշարժվել) և կենդանիների համար (օր.՝ ժամանակին հայտնաբերել վտանգը, սնունդ հայթայթել, ապաստան գտնել):

Կիրառում է տարբեր պարզ սարքավորումներ (խոշորացույց, ֆոնենդոսկոպ) զգայությունների հզորացման նպատակով և նկարագրում է մարմնի հատկությունները, որոնք այդ սարքավորման օգտագործման ժամանակ են դարձել ակներև:

Անհրաժեշտ նյութ. գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, վարդ կամ այլ բուրավետ ծաղիկ, քացախ, լիմոն, բաժակով տաք թեյ, խաղալիք, որն աղմկում է (ձայն է արձակում):

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-7 րոպե)

Ուսուցիչը հիշեցնում է նախորդ դասի թեման ու հիշեցնում աշակերտներին, թե ինչն օգնեց իրենց շրջակա միջավայրի ընկալման մեջ. ինչպես համոզվեցինք, որ իրերը ճանաչում ենք (ընկալում ենք) աչքով (տեսնելով), ականջով (լսելով), մաշկով (շոշափելով): – Մարմի՞ն էլ ո՞ր մասով կարող ենք ճանաչել առարկան:

Այս հարցին պատասխանելու համար աշակերտները պետք է բացեն դասագրքերի համապատասխան էջը, որտեղ նկարված են մեր գրքի հերոսները: Աղջիկը գոհ դեմքով է, իսկ տղան՝ դժգոհ: Նրանց առջև նկարված են լիմոն և շոկոլադ: Աշակերտները պետք է գուշակեն, թե որ երեխան ինչ է կերել, ու անվանեն այդ առարկան:

Ուսուցչի հարցերը.

– Ինչո՞ւ շոկոլադը միացրիք աղջկան:

– Ինչպիսի՞ համ ունի շոկոլադը:

– Ինչո՞ւ լիմոնը միացրիք տղային:

– Ինչպիսի՞ համ ունի լիմոնը:

– Ըստ ձեզ, ինչո՞վ ենք զգում (հասկանում) համը:

Եթե երեխաները լեզվի փոխարեն սխալմամբ բերան ասեն, այդ դեպքում ուսուցիչը դուրս է բերում մեկ կամ երկու աշակերտի, կապում է նրանց աչքերը և շրթունքին (այնպես, որ բերանը չբացեն) լիմոնի հյութ է կաթեցնում:

– Զգացի՞ր համը, – հարցնում է ուսուցիչը: Հետո նույն աշակերտի լեզվին է կաթեցնում լիմոնի հյութ կամ լեզվին դնում լիմոն և հարցը նորից կրկնում է: Այս փորձից հետո երեխաները պետք է կռահեն, որ համը զգում են միայն լեզվով:

2. ԽԱՂ. «ՏԵՄՆԵՆՔ ՔԹՈՎ» (5-6 րոպե)

Ուսուցիչն այս դասի համար նախապես պատրաստել է վարդ կամ մեկ այլ բուրավետ ծաղիկ, շշով քացախ (կամ մեկ այլ սուր հոտով բան, օրինակ՝ եղունգի լաք (մանիկյուր)): Հրավիրում է երկու-երեք աշակերտի, կապում է աչքերն ու քթին մոտ է տանում այս իրերը, նրանք հոտով պետք է գուշակեն, թե որ առարկաներն են դրանք: Ուսուցչի հարցերը.

– Իրերը միանմա՞ն հոտ ունեն, թե՞ տարբեր:

– Ուրեմն, մարմնի էլ ո՞ր մասով կարող ենք ճանաչել իրերը: (քթով)

– Ըստ ձեզ, փչացած ճաշը կամ միրգը փոխո՞ւմ են գույնը, հոտը:

– Եթե տհաճ հոտ եք զգում, այդ կերակուրը պիտանի՞ է, թե՞ ոչ:

– Հոտառությունը մարդուց ավելի լավ ո՞ր կենդանու մոտ է զարգացած:

– Ամենալավ ո՞ր կենդանու տեսողությունն է զարգացած, իսկ լսողությո՞ւնը:

(Ուսուցիչն ու աշակերտները եզրահանգում են անում, որ ինչպես մարդիկ, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչները աշխարհն ընկալում ենք աչքերով, քթով, ականջներով, լեզվով ու մաշկով՝ հինգ զգայարաններով):

3. ՊԱՏՄՎԱԾՔ. ՀԱՆԵԼՈՒԿ (5-7 րոպե)

Ուսուցիչը երեխաների համար պատմվածք է ընթերցում.

«Մի անգամ մարդու մարմնի մասերը խռովել էին իրարից: Աչքերն ասում են. «Հոգնել ենք ձեզ հսկելուց, էլ չենք ուզում ձեր փոխարեն նայել»: Ականջներն ասում են. «Մենք ինչո՞վ ենք աչքերից պակաս, ոչ էլ մենք ենք ուզում այդքան ձայներ լսել»: Լեզուն իր հերթին փնթփնթաց. «Մեկ կծու եմ ուտում, մեկ քաղցր, ես էլ ոչինչի համ չեմ փորձի»: Նրանցից ետ չմնացին նաև քիթն ու մաշկը և խռովեցին: Այսպես, վիճում են աչքերը, ականջները, լեզուն, քիթն ու մաշկը և դադարում միմյանց օգնել: Ի՞նչ եք կարծում, այդ մարդու մարմնի հետ ի՞նչ տեղի կունենար»: (Կազմված է ըստ Յակոբ Գոգեբաշվիլու պատմվածքի):

Վերջին հարցից հետո ուսուցիչը կարող է նաև լրացուցիչ հարցեր տալ.

ի՞նչ կարող էր պատահել այդ մարդուն առանց աչքերի: Ի՞նչ կպատահեր առանց ականջների: Առանց քթի ի՞նչը չէր զգա մարդը: Ի՞նչը չէր զգա նա առանց լեզվի: Ի՞նչ չէր իմանա մարդը, եթե մաշկը ոչինչ զգացնել չտար: Ուրեմն, որո՞նք են մարմնի այն երեք մասերը, որոնցով զգում ենք իրերը:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Սովորած նյութն ամրապնդելու համար՝ ուսուցիչն աշակերտներին առաջարկում է Աշխատանքային տետրի համապատասխան էջում կատարել տրված վարժությունը: Թղթի վրա նկարված է մեր գրքի հերոսը, նրա շուրջ բառեր են գրված՝ լսողություն, տեսողություն, համ, հոտառություն, շոշափում:

Աշակերտներն աշխատում են զույգերով: Նրանք պետք է կարդան այդ բառերը ու գծերով դրանք միացնեն զգայության օրգանների հետ:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (3-4 րոպե)

Տետրի նույն էջի ներքևի մասում նկարված են տարբեր տեսակի կերակուրներ: Աշակերտները պետք է գուշակեն, թե դրանցից որոնք են քաղցր ու գունավորեն:

Երեխաներն աշխատում են ինքնուրույն:

6. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (3-4 րոպե)

«Ինչպե՞ս ավելի լավ լսենք և տեսնենք»:

Ուսուցիչը նախկինում էլ է կիրառել խոշորացույց ու հիմա էլ պատրաստել է խոշորացույցն ու ֆոնենդոսկոպը (բժշկական սարք՝ սիրտն ու թոքերը լսելու համար): Ֆոնենդոսկոպով աշակերտները կարող են մեկը մյուսի սրտի զարկերը լսել (դրա համար պարտադիր չէ հագուստը հանել), իսկ խոշորացույցով հնարավոր է տեսնել ու իրարից տարբերել փոքրիկ իրերը:

Աշակերտները պետք է հասկանան, որ որոշ սարքերի օգնությամբ ավելի լավ կարելի է ընկալել իրերը:

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Երաշխավորություն.

Այս դասում տրված ակտիվություններն ուսուցիչը կարող է կիրառել՝ ըստ իր հայեցողության (բոլոր ակտիվությունների կիրառումը պարտադիր չէ)՝ հաշվի առնելով երեխաների տրամադրությունն ու հնարավորությունները:

ԴԱՍ 31

Թեմա.	Զգայության օրգաններ
Դասի վերնագիրը.	Զգայության օրգաններ
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան ըստ հրահանգի անցկացնել պարզ հետազոտական ակտիվություն: Սեփական օրգաններով մարմիններ դիտարկել: Արդյունքները փոխանցել բանավոր եղանակով: Պատասխանել՝ հիմնվելով դիտարկման արդյունքների վրա: Նկարագրել մարմնի հատկությունները՝ զգայության օրգանների միջոցով:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Անվանում է մարդու զգայության օրգանները և դրանց գործառույթները (օր.՝ աչք – «տեսնում եմ», ականջ – «լսում եմ», լեզու – «զգում եմ համը», քիթ – «զգում եմ հոտը», մաշկ – «զգում եմ ջերմությունը և ցուրտը, ողորկ կամ անհարթ մակերևույթը»): Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Ձյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»):

Անհրաժեշտ նյութ. տերևներ, խոշորացույց, բուրավետ ծաղիկ, շոկոլադի սալիկ, բամբակ, պարկ՝ տարբեր ձևի առարկաներով, տեսանյութ:

1. ԽԹԱՆՈՒՄ (3-5 րոպե)

Այս դասը անցած նյութի այսպես ասած ամփոփում է:

Ուսուցիչը հարցով դիմում է դասարանին.

– Ըստ ձեզ, ի՞նչն է մեզ օգնում ընկալելու մեր շուրջը գտնվող միջավայրը:

Այս հարցին, հնարավոր է, աշակերտները չկարողանան լիարժեք պատասխանել, սակայն այսպիսի հարցերը կնպաստեն աշակերտների խթանմանը:

2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (15-20 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին ցույց է տալիս տարբեր իրեր և խնդրում նրանց անվանել մատնանշված առարկաները: Ի վերջո, աշակերտները հանգում են եզրակացության. տեսողության միջոցով մարդիկ և կենդանիները տեսնում են շրջակա միջավայրը:

–Ի՞նչն է նրանց օգնում դրանում:

Աչքերը տեսողության օրգան են:

Ուսուցիչն աշակերտներին լսել է տալիս տարբեր ձայներ. թռչունների դայլայլ, երաժշտության ձայն, բախյուն, կատվի մլավյուն, շան հաչոց ...

Ի վերջո երեխաները եզրակացնում են.

Լսողության միջոցով մարդիկ և կենդանիները լսում են, թե ինչ է տեղի ունենում նրանց շրջակա միջավայրում:

– Ի՞նչն է նրանց օգնում դրանում: (ականջները, լսողության օրգան)

– Ինչո՞վ ենք ընկալում ծաղիկը, օծանելիքի բո՞ւյրը:

Ուսուցիչը յուրաքանչյուր աշակերտի բաժանում է բամբակյա գնդիկ և խնդրում նրանց մի քանի անգամ սեղմել այն: Նկարագրել այն զգացողությունը, որ նրանք ունեցան բամբակին դիպչելիս: Ինչպիսի՞ն է այն:

Ուսուցիչ. ձեռքը քսեք նստարանի մակերևույթին, ի՞նչ եք զգում, ինչպիսի՞ն է: (ուղիղ, ողորկ ...)

Ուսուցիչը պարկի մեջ նախապես տեղադրում է տարբեր ձևի առարկաներ (գնդիկ, գնդակ, խորանարդ, եռանկյունի, քանոն, մատիտ և այլն): Աշակերտները մեկ առ մեկ պետք է ձեռքը մտցնեն պարկի մեջ և զուշակեն, թե ինչ ձև ունի առարկան, և միայն դրանից հետո հանեն և ցույց տան այն դասարանին:

Ի վերջո, աշակերտները դիտարկման հիման վրա եզրակացություն են անում.

– Շոշափելով կարող ենք զգալ առարկայի ձևը, ջերմաստիճանը, ողորկ է, թե՞ անհարթ, փափուկ է, թե՞ պինդ:

Մաշկը զգայության օրգան է:

Ուսուցիչը շոկոլադի սալիկը այնքան մասի է բաժանում, որքան երեխա կա դասարանում, և մեկ-մեկ բաժանում է նրանց համտեսելու: Այնուհետև խնդրում է բառերով նկարագրել իրենց զգացողությունը (ենթադրաբար. քաղցր է, համեղ է և այլն):

Լեզվի միջոցով մարդիկ տարբերում են սնունդը: Լեզուն զգայության օրգան է:

Քննարկման հարց.

– Ինչ եք կարծում, անհրաժե՞շտ են արդյոք բոլոր այն զգայության օրգանները, որոնք թվարկեցինք: Ինչո՞ւմ են օգնում դրանք մեզ:

3. ՄԻՆԻ-ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ (3-5 րոպե)

Շրջակա միջավայրի բազմազանությունը կարելի է ընկալել զգայության օրգանների՝ աչքի, ականջի, քթի, լեզվի և մաշկի միջոցով: Ամենօրյա կյանքում զգայության օրգանները մարդուն օգնում են ընկալել և ճանաչել մարմինները՝ ըստ նրանց բնութագրիչների (գույն, հոտ, ֆակտուրա, ձև, ձայն): Զգայությունները մարդուն պաշտպանում են վտանգից (օրինակ՝ փողոցում տեղաշարժվելիս), հնարավորություն են տալիս ընկալել շրջակա միջավայրում տեղի ունեցած փոփոխությունները:

Անհրաժեշտ է, որ մարդը հոգ տանի զգայության օրգանների մասին և պահպանի հիգիենայի տարրական նորմերը, իսկ վերջինս անհրաժեշտ է մարդու առողջությանը:

Կենդանիները ևս զգայության օրգանների օգնությամբ են ընկալում տիեզերքը: Նրանց համար զգայության օրգանները առանձնապես կարևոր են թշնամուց խուսափելու և սննդի հայթայթման համար:

Ըստ ձեզ, կենդանիների մոտ զգայության ո՞ր օրգանն է հատկապես զարգացած:

4. ՏԵՍԱՆՅՈՒԹԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ (4-5 րոպե)

5. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչը դասի վերջին աշակերտներին մեկ անգամ ևս թվարկել է տալիս զգայության օրգանները և դրանց նշանակությունը կենդանի օրգանիզմների համար:

6. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.

Ծնողներին, տատիկ-պապիկներին, հարևաններին հարցրեք կենդանիների հետ կապված որևէ հետաքրքիր պատմություն և հաջորդ դասի համար պատմեք մեզ:

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=1tTKLE72fJI

ԴԱՍ 32

Թեմա.	Առողջության պահակետում
Դասի վերնագիրը.	Բժիշկը և դեղերը
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան գիտակցել բժշկի դերն ու անհրաժեշտությունը: Պատրաստել հարցազրույց (մտածել բուժման, առողջության և դեղերի հետ կապված հարցեր և ձևակերպել դրանք): Դեղերի օգտագործման նկատմամբ ճիշտ, զգույշ վերաբերմունք ձևավորել: Պարզ հարցեր տալ (ելնելով թեմատիկայից): Հավաքել անհրաժեշտ տեղեկություններ: Կիրառել հաղորդակցման տարբեր ձևեր:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս: Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով): Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):

Նոր բառեր. հաբ, քսուք, դեղատոմս, վիրակապ (բինտ), մրսածություն, անգինա:

Անհրաժեշտ նյութ. գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (7-8 րոպե)

Ուսուցիչը երեխաներին պատմում է, որ դասագրքի հերոսներից մեկի հետ ինչ-որ բան է պատահել և առաջարկում է նրան տեսության գնալ: Դրա համար նրանք պետք է գտնեն դասագրքի այն էջը, որտեղ նկարված են անկողնում պառկած տղա և բժիշկ:

Նկարի նկարագրությունն ու զրույցը պետք է հետևյալ կերպ ընթանան.

– Ի՞նչ է պատահել մեր ընկերոջը: Ինչո՞ւ է անկողնում պառկած:

– Ո՞վ է եկել նրա մոտ:

– Ո՞վ է բժիշկ կանչել (հրավիրել):

– Ի՞նչ եք կարծում, բժիշկն ինչպե՞ս կվարվի:

Նույն էջին (ներքևի մասում) նկարված են տարբեր իրեր, այդ թվում՝ ջերմաչափ, ֆոնենդոսկոպ, դեղատոմս, հաբեր: Աշակերտները պետք է շարունակեն աշխատել զույգերով, գուշակեն, թե որ իրերը անհրաժեշտ կլինեն բժշկին՝ տղայի համար, ու գունավորեն այդ իրերը:

2. ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԴԵՐԵՐՈՎ ԽԱՂԵՐ (8-10 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4 խմբի և հետևյալ սցենարներն է տալիս խաղալու համար (մեջախաղով).

I խումբ՝ երեխան ատամնաբույժի մոտ,

II խումբ՝ երեխան քիթ-կոկորդի բժշկի մոտ,

III խումբ՝ երեխան մաշկաբանի (մաշկի բժշկի) մոտ,

IV խումբ՝ երեխան ակնաբույժի (աչքի բժշկի) մոտ:

Խաղի ժամանակ երեխաները ժեստերով ու դիմախաղով պետք է մարմնավորեն, թե իրենց որ բժշկի ծառայությունն է անհրաժեշտ: Յուրաքանչյուր խումբ կխաղարկի իր տեսարանը, իսկ մյուսները պետք է գուշակեն, թե «ինչ է պատահել» երեխային, և որ բժիշկն է զննում նրան (կամ բուժում):

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-6 րոպե)

Ուսուցիչն ասում է, որ հիվանդության ու բժշկի մասին խոսելիս մեզ մի քանի անգամ անհրաժեշտ եղավ օգտագործել «դեղ» բառը:

– Բոլորս կարո՞ղ ենք ճանաչել դեղը:

Դասագրքի նույն աշխատանքային էջի վրա աշակերտները կրկին դիտում են ներքևի մասում տրված իրերը. նրանք պետք է ճանաչեն դեղերը:

Ուսուցչի հարցերը.

– Ինչպե՞ս ճանաչեցիք այդ դեղերը:

– Ինչո՞վ են տարբերվում այդ դեղերը իրարից:

(Դասագրքում տրված են հաբեր, քսուք և կաթիլներ):

4. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (6-7 րոպե)

Ուսուցիչը շարունակում է խոսել դեղի թեմայի շուրջ և քննարկում ծավալելու համար տալիս է հետևյալ հարցերը.

– Առանց ավագների թույլտվության կարելի՞ է դեղ ընդունել: Ինչո՞ւ:

Աշակերտներն արտահայտում են իրենց կարծիքները, իսկ քննարկման վերջում ուսուցիչը կարող է մեկնաբանություն անել ու ամփոփել քննարկումը:

5. ԲԺՇԿԻ ԿԱՆՉ

Ուսուցիչն այս դասին հրավիրել է մանկաբույժի (դա կարող է լինել ծնող, դպրոցի բժիշկը կամ ուսուցչի մտերիմներից մեկը), որին նախապես զգուշացրել է դասի բովանդակության ու ակտիվությունների մասին:

Բժիշկը ներկայանում է երեխաներին և խոսում իր մասնագիտության համար անհրաժեշտ արտաքին ատրիբուտների մասին. ինչու են հագնում սպիտակ խալաթ, ինչու են կրում բժշկական դիմակ և այլն:

Այնուհետև բժիշկը պատմում է տարվա այդ եղանակին (ձմռանը) բնորոշ վիրուսային կամ ուրիշ հիվանդությունների մասին, թե ինչպես խուսափել դրանցից:

Ցանկալի կլինի, որ բժիշկը պայմանականորեն դասարանից մի քանի աշակերտ ընտրի (որոնք իբր հարբուխ ունեն, հազում են կամ հիվանդության այլ նշաններ են ցուցաբերում) և հենց տեղում զննի նրանց, միաժամանակ պարզաբանի, թե իր յուրաքանչյուր գործողություն ինչ նշանակություն ունի (օրինակ, թե ինչ է հասկանում կոկորդին նայելով կամ թոքերը լսելով...):

Այնուհետև բժիշկը հիշատակում է դեղատոմս բառը, բացատրում է դրա նշանակությունն ու արդեն զննած երեխաներին պայմանականորեն «դուրս է գրում» դեղ ու նշանակում անում (տեղի է ունենում հիվանդի զննման խաղարկում):

6. ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ՀԱՐՑԵՐ ԲԺՇԿԻՆ (4-6 րոպե)

Աշխատանքը շարունակվում է արդեն բաժանված 4 խմբերի հետ: Յուրաքանչյուր խումբ պետք է մտածի իր համար հետաքրքիր 2 հարց ու տա բժշկին:

Բժիշկն իր հնարավորությունների սահմաններում այդ հարցերին կարճ պատասխաններ է տալիս: Էական նշանակություն չունի տրված հարցերին սպառիչ և լիարժեք պատասխաններ տալը:

- Ուսուցիչը գրատախտակի կենտրոնում գրում է «դեղ» բառը և երեխաներին խնդրում է հիշել դեղերի հետ կապված այն բոլոր բառերը, որ հիշում են: Ուսուցիչն այդ բառերն էլ է գրում գրատախտակին և ստեղծում է զուգորդական կապերի քարտեզ: Այդ բառերը կարող են լինել դեղերի անուններ, դեղերի նշանակումներ, վտանգներ և այլն: Հավանաբար, այս զուգորդական քարտեզի կիրառումը հետո արդյունավետ կլինի՝ դեղորայքի մասին քննարկման անցկացման ժամանակ:



7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (3-4 րոպե)

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=iFnRQn9bT8Y

ԴԱՍ 33

Թեմա.	Առողջության պահակետում
Դասի վերնագիրը.	Ուզո՞ւմ եմ առողջ լինել
Դասի նպատակը.	Աշակերտները գիտակցեն առողջության համար ֆիզիկական վարժությունների նշանակությունը: Աշակերտները բացահայտեն օրգանիզմում տեղի ունեցող որոշ փոփոխություններ (սրտի զարկեր, շնչառություն) ֆիզիկական վարժության ժամանակ: Աշակերտների մոտ ֆիզիկական վարժությունների հանդեպ դրական վերաբերմունք ձևավորվի: Նկարագրել մարմնի հատկանիշները և վիճակը տարբեր սարքերի միջոցով:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով): Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Կիրառում է տարբեր պարզ սարքավորումներ (խոշորացույց, ֆոնենդոսկոպ) զգայությունների հզորացման նպատակով և նկարագրում է մարմնի հատկությունները, որոնք այդ սարքավորման օգտագործման ժամանակ են դարձել ակներև:
Անհրաժեշտ նյութ.	դասագիրք, ֆոնենդոսկոպ կամ ստետոսկոպ, մատիտներ:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (4-5 րոպե)

Դասագրքի համապատասխան էջում տրված է երկու լուսանկար:
Ուսուցիչն աշակերտներին խնդրում է համեմատել այդ նկարները և պատասխանել հարցերին.
– Ի՞նչ տարբերություն կա այս մարդկանց կազմվածքների միջև:
– Ի՞նչ տարբերություն կա նրանց մկանների միջև:
– Ո՞րն է ավելի ուժեղ:
– Որի՞ մարմինն է ավելի գեղեցիկ:
– Ո՞րն է ավելի առողջ երևում:
– Ո՞րն է մարզված և որը՝ ոչ:

2. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (4-5 րոպե)

Ուսուցիչը ծավալում է դասարանական քննարկում հետևյալ հարցերի կիրառմամբ.
– Ինչպիսի՞ տեսք ունի առողջ և ուժեղ երեխան:
– Ի՞նչ պետք է անի մարդ նրա համար, որ առողջ լինի:
(Գուցե ուսուցիչը լրացուցիչ հարցեր տալու կարիք էլ ունենա, մինչև այլ պատասխանների շարքում լսի իր համար ցանկալի տարբերակը, որ մարդու առողջության համար օգտակար է ֆիզիկական վարժությունը):

3. ՍՐՏԻ ԶԱՐԿԻ ԵՎ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ (10-11 րոպե)

Ուսուցիչը երեխաներին առաջարկում է հետազոտել, թե ինչ փոփոխություններ են տեղի ունենում մարմնում մարզվելու ժամանակ: Դրա համար ֆոնենդոսկոպով կամ ստետոսկոպով մի քանի աշակերտի լսել է տալիս 2-3 համադասարանցու սրտի զարկերը: Այնուհետև ամբողջ դասարանի համար կատարում են 3-5 րոպեանոց ֆիզիկական վարժություններ (տեղում ցատկեր, կքանիստներ...): Մարզվելուց հետո դարձյալ լսում են նույն աշակերտների սրտի զարկերը:

Պետք է ծավալվի զրույց՝ ուսուցչի հետևյալ հարցերի կիրառմամբ.

– Ե՞րբ էին սրտի զարկերն ավելի արագ, մինչև վարժություն կատարելը, թե՞ դրանից հետո:

– Շնչառությունն արագացավ, թե՞ դանդաղեց:

– Ի՞նչ զգացիք մարզանքից հետո: (մարմնի տաքացում, հոգնածություն, հաճույք...)

– Ի՞նչ տրամադրություն ստեղծեց մարզանքը:

– Մարդու մաշկն ի՞նչ է արտադրում մարզանքի ժամանակ:

– Ի՞նչ է անհրաժեշտ քրտնած մարմնին: (լողանալ, քրտինքը հեռացնել)

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԶՈՒՅԳԵՐՈՎ (5-6 րոպե)

Ուսուցչի հանձնարարությամբ աշակերտներն իրենց զույգերին պատմում են իրենց նախորդ օրվա գործողությունները (կամ էլ հիշում են, թե ինչ են արել ամբողջ օրվա ընթացքում) արթնանալուց մինչև քնելը (արթնանալ, նախաճաշել, դպրոց գնալ, պարապել, խաղալ, հեռուստացույց դիտել...):

Ապա ուսուցիչը հարցնում է, թե արդյոք որևէ մեկը հիշատակե՞լ է, որ մարզվել է: Ձեռք բարձրացնի այն աշակերտը, ով երեկ մարզվել է:

Ուսուցիչն այդ երեխաներին խնդրում է ոտքի կանգնել ու պատասխանել հետևյալ հարցերին.

– Սովորաբար ե՞րբ եք մարզվում:

– Ինչո՞ւ եք մարզվում:

– Ինչպե՞ս եք ձեզ զգում մարզվելիս: Մարզվելուց հետո՞: (Սովորաբար ֆիզիկական վարժությունների ժամանակ և դրանցից հետո մարդիկ իրենց շատ լավ են զգում և բարձր տրամադրություն են ունենում:)

– Ինչ եք կարծում, ո՞ր մարդն է ավելի ուժեղ, որը մարզվում է, թե՞ որը չի մարզվում:

– Ո՞ր մարդն է ավելի առողջ, ով մարզվում է, թե՞ ով չի մարզվում:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (4-5 րոպե)

Դասագրքի համապատասխան էջի ներքևի մասում հարց է տրված. «Ի՞նչ է անհրաժեշտ ինձ՝ առողջ լինելու համար»: Ուսուցիչը դասարանին հարց է տալիս և խնդրում նկարագրել երեք նկար՝ երեխաները խաղում են բնության գրկում, երեխաները մարզվում են, և երեխաներն ուտում են:Այնուհետև բացում են Աշխատանքային տետրը: Նկարների տակ համապատասխան գրություններ են տրված: Աշակերտները պետք է կարդան դրանք ու գծերով միացնեն համապատասխան նկարներին, ցանկալի է, որ աշակերտները բացատրեն.

– Ինչո՞ւ է անհրաժեշտ և օգտակար բնության գրկում, մաքուր օդին խաղալը:

– Ինչո՞ւ է ֆիզիկական վարժությունն օգտակար:

– Ինչո՞ւ պետք է սննդակարգը ճիշտ և բազմազան լինի:

6. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչը ծավալում է քննարկում՝ հետևյալ հարցերի կիրառմամբ.

– Ի՞նչ է նշանակում «կոփվել» բառը:

– Ի՞նչ է անհրաժեշտ մարմինը կոփելու համար:

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (3-4 ՐՈՊԵ)

Երաշխավորություն.

Այս դասերում տրված ակտիվություններն ուսուցիչը կարող է կիրառել՝ ըստ իր հայեցողության (բոլոր ակտիվությունների կիրառումը պարտադիր չէ)՝ հաշվի առնելով աշակերտների տրամադրությունն ու հնարավորությունները:

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=BwPOZ6nOw8U

https://www.youtube.com/watch?v=FkLvSTXewNE

ԴԱՍ 34

Թեմա.	Առողջության պահակետում
Դասի վերնագիրը.	Մարզվենք բոլորս միասին
Դասի նպատակը.	Աշակերտները գիտակցեն ֆիզիկական վարժությունների պարբերական կատարման անհրաժեշտությունը: Աշակերտները կարողանան պարզ ֆիզիկական վարժություններ կատարել ու հիշել դրանք: Պարզ հարցեր տալ: Մասնակցել գործնական ակտիվությունների: Տեղեկություններ հավաքագրել: Պարզ հրահանգներ տալ, ինչպես նաև կատարել հրահանգներ:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. Ի.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.Ի.5.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և կողմնորոշվի նրանում:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս: Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով): Կատարում և դպրոցի տարածքում կողմնորոշվելու համար, ինքն էլ տալիս է ոչ ավելի, քան 1-2 ուղղության (օրինակ՝ առաջ և աջ) պարզ հրահանգներ:
Անհրաժեշտ նյութ.	գունավոր մատիտներ և ֆլոմաստերներ, լուսանկարչական սարք (ֆոտոապարատ):

Դասի ընթացքը.

1. ԶՐՈՒՅՑ ՄԱՐԶՎԵԼՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (7-8 րոպե)

Ուսուցիչը դասը սկսում է ճիշտ սնվելու ու քնելու մասին զրույցով: Նշում է, որ սխալ սնվելը, շատ քաղցրավենիք ուտելը վնասում են ատամները: Ինչպես նաև նշում է, որ տեսողությունը նույնպես պետք է պահպանել: Շեշտում է ընթերցելու և պարապելու ժամանակ ճիշտ նստելու կարևորությունը, ինչպես նաև ավելացնում է, որ համակարգչի մոտ երկար նստելը և խաղալը վնասակար է տեսողության համար, ողնաշարի և առհասարակ օրգանիզմի համար:

Ուսուցիչը խոսում է առողջության համար մարզանքի նշանակության մասին:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (6-7 րոպե)

Ուսուցիչը մատնանշում է դասագրքի այն էջը, որտեղ մեր ընկերները մարզվում են ու առաջարկում է այդ պահին նրանց վարժություններից երկուսը սովորել ու կատարել:

Աշակերտները բացում են դասագրքի համապատասխան էջը, որտեղ գրքի հերոսները մարզական տարբեր դիրքերում են: Աշակերտները պետք է կռահեն, թե որ շարժումներն են տրված նկարներում, և կատարեն դրանք:

3.ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՒՄ (4-15 րոպե)

Նրանից հետո, երբ ուսուցիչը պարզում է մարզվելու ցանկություն ունեցող աշակերտների թիվը, նրանց տարբեր վարժություններ է առաջարկում:

Այն աշակերտներին, որոնք ֆիզիկապես մարզվում են (իսկ դա պարզ է դարձել արդեն նախորդ դասի ժամանակ), ուսուցիչը խնդրում է դուրս գալ ու իրենց համադասարանցիներին մի քանի վարժություն սովորեցնել: Դուրս եկած աշակերտը վարժությունը կատարում է մի քանի անգամ և միաժամանակ պարզաբանումներ է տալիս, իսկ մյուսները կրկնում են ու փորձում են մտապահել (մարզանքի ժամանակ սենյակի պատուհանը անպայման պետք է բացվի): Վարժությունները պետք է լինեն թեթև ու պարզ, որպեսզի երեխաները շատ չհոգնեն:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (5-6 րոպե)

Ուսուցիչը երեխաներին ասում է, որ մարդիկ մարզվելիս շատ հաճախ տարբեր իրեր են օգտագործում: Մի քանի այդպիսի իր էլ նրանց տետրում է տրված: Նրանք պետք է ուշադիր դիտեն նկարները, որոշեն այդ իրերը և գծերով միացնեն համապատասխան բառերին: Այնուհետև աշակերտները կարող են գունավորել նկարը:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԶՈՒՅԳԵՐՈՎ (2-3 րոպե)

Աշակերտները պետք է մտածեն, որոշեն ու իրենց զուգընկերներին ասեն, թե ինչպես են փոխելու իրենց օրակարգը: Կսկսե՞ն արդյոք ֆիզիկապես մարզվել: Եթե սկսեն, օրվա ո՞ր հատվածում կմարզվեն:

Այնուհետև զույգերն ասում են, թե ում զույգն է պատրաստվում ֆիզիկական վարժություններ կատարել և ումը՝ ոչ:

Ուսուցիչը ցույց է տալիս և սովորեցնում է մարզանքի հետ կապված հետևյալ բառերը. ձեռքերը գոտկատեղին, ձեռքերը կողքի, կքանիստ, կորումներ (կորումներ ետ և առաջ):

6. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

7. ՀՅՈՒՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ (5-6 րոպե)

Ուսուցիչն այս դասի համար դպրոց է հրավիրել այդ քաղաքում (գյուղում, շրջանում...) հայտնի մարզիկի, որի հետ նախապես է պայմանավորվել դասի նպատակների ու բնույթի մասին: Հյուրը հիշում է հետաքրքիր դրվագներ իր կյանքից, պատմում է երեխաներին, թե ինչպես էր մարզվում մանուկ հասակում, ինչպես էր կոփում իր մարմինը, ինչպես են մեծանում և ուժեղանում մկանները պարբերական վարժանքներից, ինչպես է մարդու մոտ մարզանքից գեղեցիկ մարմին ձևավորվում և հեռացվում ավելորդ ճարպը, որքանով կարևոր են ամենօրյա ֆիզիկական վարժություններն առողջության համար և այլն:

Աշակերտները լսում են, հարցեր են տալիս, իրենց կարծիքներն են հայտնում...Լավ կլինի, եթե որպես հիշատակ հյուրի հետ լուսանկար էլ ունենան:

ԴԱՍ 35

Թեմա.	Գարուն
Դասի վերնագիրը.	Գարնան գալուստը
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան նկարագրել տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները: Անվանել տարվա եղանակները և դատողություն անել դրանց տարբերակիչ նշանների մասին: Խոսել տարվա յուրաքանչյուր ժամանակին բնորոշ եղանակի մասին: Թվարկել մարդու գործունեության տեսակները՝ ըստ տարվա եղանակների:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ. I.6. Աշակերտը պետք է կարողանա բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Անվանում է դիտարկվող փոփոխությունները ցերեկվա ու գիշերվա ընթացքում: Տարբերում է ցերեկվա ու գիշերվա հատվածները՝ առավոտ, կեսօր, երեկո, գիշեր, և դրանք կապում է իր ակտիվության/գործունեության հետ: Անվանում է և իրար հետ համեմատում տարվա եղանակները, դատողություն է անում դրանց տարբերակիչ հատկանիշների մասին: Խոսում է դրանցից յուրաքանչյուրին բնորոշ եղանակի մասին: Հագուստը տեսակավորում է՝ ըստ տարվա եղանակների:
Անհրաժեշտ նյութ.	գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ:

Դասի ընթացքը.

1. ՊԱՏՄՎԱԾՔԻ ՈՒՆԿՆԴՐՈՒՄ ԵՎ ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿԻ ՈՐՈՇՈՒՄ (3-4 րոպե)

Ուսուցիչը կարդում է պատմվածքը և խնդրում երեխաներին գուշակել, թե տարվա որ եղանակն է նկարագրված դրանում:

«Երկիրն աստիճանաբար տաքանում է: Հալչում է ձյունը դաշտերում ու լեռներում ...Գետերը խիստ վարարում են: Տաքությունն արթնացրել է ամբողջ երկրագունդը: Հենց ձյունը հալվեց, դաշտերում անմիջապես գլուխ հանեց կանաչ խոտը: Տեղ-տեղ շուտ ծաղկող ծաղիկներն էլ բացվեցին: Տաքությունը ծառերին էլ արթնացրեց ձմեռային քնից: Ծառերը դեռ բողբոջեցին, հետո սպիտակ ծաղիկները բացվեցին, և վերջում խիտ տերևներով զարդարվեցին:

Տարվա այս եղանակն իր հետ շատ թռչուններ է բերում: Տե՛ս, ինչ-որ բան վերևում՝ երկնքում, զանգի նման երգ է ասում, երևի արտույտն է ժամանել: Շուտով ծիծեռնակներն էլ մեզ հյուր կգան: Սարյակը, պիրոլը, մարգալորը, լորը, կկուն... Մեկը մյուսին հաջորդելով ուրախությամբ վերադառնում են մեր երկիր: Դաշտ, անտառ ու մարգագետին տարբեր թռչուններով են լցվում: Նրանց դայլայլն ու ծլվլոցը, ճռվողյունն ու սուլոցներն արթնացնում են բնությունը»:

(Ըստ Յ. Գոգեբաշվիլու «Գարունը» պատմվածքի)

2. ԶՐՈՒՅՑ ԳԱՐՆԱՆ ՄԱՍԻՆ (4-5 րոպե)

Ուսուցիչը զրույց է ծավալում՝ հետևյալ հարցերի կիրառմամբ.

– Ինչպե՞ս գլխի ընկաք, որ այս պատմվածքում գարուն է նկարագրված:

– Տարվա ո՞ր եղանակին է հաջորդում գարունը:

– Գարնանը բնությունն ինչպե՞ս է փոխվում:

(Տաքացավ, օրը երկարեց, գիշերը կարճացավ: Արևն ավելի երկար է մնում երկնքում: Ձյունը

հալչում է (կամ հալվել է), բույսերը սկսում են տերևներով պատվել ու ծաղկել: Դաշտ ու հովիտ կանաչով են պատվում: Թռչունները վերադառնում են մեր երկիր...)

– Ո՞վ է հիշում՝ ո՞ր ամիսներն են ձմռան ամսիները: Իսկ աշնա՞ն ամիսները:

– Որո՞նք են գարնան ամիսները: (Հիմա ո՞ր ամիսն է:)

(Աշակերտներին թելադրելով ուսուցիչը գրատախտակին գրում է գարնան ամիսները:)

– Փաստորեն քանի՞ ամիս ունի գարունը:

– Ո՞ր ամսով է սկսվում գարունը...

3. ԽԱՂ. «ԳԱՐՆԱՆ ԱՄԻՍՆԵՐԸ» (5-7 րոպե)

Գարնան ամիսները լավ հիշելու համար ուսուցիչն աշակերտներին առաջարկում է այնպիսի խաղ խաղալ, ինչպիսին խաղացել էին ձմռան ամիսները սովորելու ժամանակ: Դա ծափերով խաղն է: Ուսուցիչը գրատախտակի վրա մարտի դիմաց գրում է մեկ, ապրիլի դիմաց՝ երկու և մայիսի դիմաց՝ երեք: Դա նշանակում է, որ մարտին համապատասխանում է 1 ծափը, ապրիլին՝ 2-ը, իսկ մայիսին համապատասխանում է 3 ծափը:

Ուսուցիչը մի քանի անգամ խառը ծափահարում է. մերթ մեկ անգամ, մերթ՝ երեք, մերթ՝ երկու, հետո նորից երեք և այսպես շարունակ: Յուրաքանչյուր անգամ աշակերտները պետք է հասկանան, թե որ ամսի մասին է խոսքը ու անվանեն այն:

Այնուհետև ուսուցիչն աշակերտներին խնդրում է լավ հետևել նրա ծափերի հերթականությանը. 1 ծափ, հետո 2 ծափ և վերջում երեք ծափ: Ուսուցիչն ավելացնում է, որ գարնան ամիսները հենց այդ հերթականությամբ են հաջորդում միմյանց ու աշակերտներին կրկնել է տալիս՝ մարտ, ապրիլ, մայիս:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (5-7 րոպե)

Աշխատանքային տետրի համապատասխան էջում (վերևի մասում) նկարված են մեր հերոսները, որոնց ուրախացրել է գարնան գալուստը: Աշակերտները դեռ պետք է գունավորեն գարնան բնապատկերը, իսկ հետո ըստ նկարի նկարագրեն: Ուսուցիչը պետք է ուշադրություն հրավիրի բազմաբղետ գույների առկայության ու գարնանը բնորոշ այլ նշանների վրա:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (4-5 րոպե)

Դասագրքի տրված էջի ներքևի մասում («Գարնան ավետաբերները») նկարված են մանուշակ ու ձնծաղիկ: Նույն տեղում նրանց անուններն են գրված: Աշակերտները պետք է ճանաչեն, թե որն է մանուշակը և որը՝ ձնծաղիկը: Նկարները գծերով միացնեն համապատասխան բառերին: Այնուհետև հարցով դիմում է դասարանին. «Ինչպե՞ս եք ընկալում «Գարնան ավետաբերները» արտահայտությունը»:

6. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (4-5 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի: Յուրաքանչյուր խմբի բաժանում երեքական թուղթ: Մի թղթի վրա գրված է «աշուն», մյուսի վրա՝ «ձմեռ» և երրորդի վրա գրված է «գարուն»: Աշակերտները բոլոր թղթերը պետք է գունավորեն (ոչինչ չեն նկարում, միայն գունավորում են), և հետո խմբերը պետք է բացատրեն, թե ինչու են տարվա այս կամ այն եղանակի համար ընտրել այդ գույները:

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (4-5 րոպե)

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=Vrz1Wz-usuk

ԴԱՍ 36

Թեմա.	Գարուն
Դասի վերնագիրը.	Ցերեկ և գիշեր
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան որոշել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները և դրանք նկարագրել:

	Անվանել ցերեկվա ու գիշերվա ընթացքում դիտարկվող փոփոխությունները: Տարբերել ցերեկվա ու գիշերվա հատվածները և դրանք կապել սեփական գործունեության հետ: Թվարկել շաբաթվա օրերի անվանումները, մտապահել դրանք և բաժանել՝ ըստ կարևոր բնութագրիչների: Դիմելու տերմիններ օգտագործել: Դիտարկման հիման վրա նկար ստեղծել:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարբերական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.5.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և կողմնորոշվի նրանում: Բնագիտ.I.6.Աշակերտը պետք է կարողանա բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ:Կիրառում է համապատասխան տարածական հարաբերություն արտահայտող տերմիններ (օրինակ՝ հեռու, մոտ, ինձանից աջ, վերև, ներքև) և որոշում դպրոցի տարածքում առկա օբյեկտների դիրքն իր նկատմամբ: Դիտարկման հիման վրա ստեղծում է դպրոցի նկար, խոսում այն մանրամասների մասին, որոնք իր առանձնահատուկ ուշադրությունն են հարուցել: Անվանում է դիտարկվող փոփոխությունները ցերեկվա ու գիշերվա ընթացքում: Տարբերում է ցերեկվա ու գիշերվա հատվածները՝ առավոտ, կեսօր, երեկո, գիշեր, և դրանք կապում է իր ակտիվության/գործունեության հետ: Թվարկում է շաբաթվա օրերը, տարբերում է շաբաթվա օրերը՝ ըստ դրանց բնորոշ հատկանիշների (օրինակ՝ ուսումնական օր – ոչ աշխատանքային/հանգստի օր):
Անհրաժեշտ նյութ.	գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ:

Դասի ընթացքը

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (4-5 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է ուշադիր դիտել դասագրքի մատնանշված էջի երկու լուսանկարները. մեկում քաղաքի թաղամասերից մեկը ցերեկն է նկարված, երկրորդում՝ գիշերը, երբ փողոցներն ու տները էլեկտրալամպերով են լուսավորված:

Ուսուցչի հավանական հարցերը.

– Ինչո՞վ է լուսավորված քաղաքն I լուսանկարում: Իսկ II նկարու՞մ:

– Օրվա ո՞ր հատվածն է առաջին լուսանկարում՝ գիշեր է, թե՞ ցերեկ: Իսկ երկրորդու՞մ:

– Ինչո՞վ է այս նկարում ցերեկվա երկինքը տարբերվում գիշերվա երկնքից:

– Պարզ երկնքում սովորաբար ի՞նչ է երևում գիշերը: Իսկ ցերե՞կը:

(Եզրահանգում. ցերեկը լույսն արևից ենք ստանում, արևը լուսավորում է մեզ:)

2. ԶՐՈՒՅՑ ՑԵՐԵԿՎԱ ՈՒ ԳԻՇԵՐՎԱ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ (5-6 րոպե)

Ուսուցիչ. «Այնտեղ, ուր լույս չկա, մութ է: Ամեն օրվա վերջում արևի լույսը պակասում է, լույսի տեղը մութն է զբաղեցնում:

Այդ ժամանակ մենք ասում ենք, որ գիշեր է: Գիշերը երկնքում սովորաբար աստղեր ու լուսին են երևում: Նրանց լուսավորությունը շատ թույլ է, այդ պատճառով մեզ մոտ՝ Երկրագնդի վրա մութ է»:

Գիշերվանից հետո նոր օր է սկսվում, արևը դուրս է գալիս ու լուսավորվում շուրջը:

– Ինչպե՞ս է կոչվում այդ ժամանակը: (Աշակերտները պետք է հասկանան, որ դա առավոտն է:) Այլ կերպ՝ լուսաբաց, արևագալ, այգ, այգաբաց, լուսադեմ:

– Ամբողջ օրվա ընթացքում արևը ջերմացնում է մեզ ու լուսավորում: Իսկ օրվա վերջում արևը մայր է մտնում ու աստիճանաբար մթնում է: Ինչպե՞ս է կոչվում այն ժամանակը, երբ դեռ ամբողջությամբ չի մթնել (երեկո): Այլ կերպ՝ իրիկնադեմ, վերջալույս, մթնշաղ, արևամուտ:

– Մարդիկ ի՞նչ են անում առավոտները: Դուք ի՞նչ եք անում: (Աշակերտները հերթով պետք է հիշեն, թե ինչ են անում առավոտները:)

– Կեսօրին ի՞նչ եք անում:

– Երեկոյան ի՞նչ եք անում:

– Գիշե՞րն ինչ եք անում:

– Գիտե՞ք արդյոք,թե հիմա մոտավորապես որ ժամին է մթնում: (Հունվարին երեկոյան ժամը 6-7-ին արդեն մութ է:)

– Ամռանն է՞լ է այդպես շուտ մթնում:

– Ե՞րբ են ավելի երկար գիշերները, ձմռա՞նը, թե՞ ամռանը:

(Եզրահանգում. ձմռանը շուտ է մթնում ու գիշերը երկար է, ամռանն ուշ է մթնում ու գիշերը կարճ է, իսկ օրը՝ երկար: Երկրագնդի պտույտի հետ գիշերվա ու ցերեկվա կապի մասին այս տարիքում անհրաժեշտ չէ խոսել: Դա հաջորդ դասարաններում կսովորեն:)

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Աշխատանքային տետրում տրված են տարբեր լուսավորող ու չլուսավորող առարկաներ: Աշակերտներն աշխատում են զույգերով: Նրանք պետք է հասկանան, թե որ առարկան է լույս տալիս ու գունավորեն այն:

Ուսուցչի հարցերը.

– Այս առարկաներից ո՞րն է մարդու ձեռքով ստեղծված: (բոլորը՝ արևից ու աստղից բացի)

– Սրանցից ո՞րն է լույս արձակում (ճառագայթում) բնական եղանակով: (արևն ու աստղը)

4. ԶՐՈՒՅՑ ՇԱԲԱԹՎԱ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ (4-5 րոպե)

Ուսուցիչը երեխաներին բացատրում է, որ բոլոր օրերն իրենց անուններն ունեն ու տալիս է հետևյալ հարցերը.

– Այսօր ի՞նչ օր է:

– Էլ ո՞ր օրերի անունները գիտեք:

– Հապա միասին թվարկենք. երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, կիրակի:

(Ուսուցիչը գրատախտակի վրա գրում է այս բառերն ու մի քանի անգամ աշակերտներին միասին կրկնել է տալիս: Աշակերտներն այդ ժամանակ արդեն կարող են տառերն ու այդ բառերը կարդալ):

– Փաստորեն շաբաթը քանի՞ օր ունի:

– Շաբաթվա օրերն այն հերթականությամբ են հաջորդում միմյանց, ինչպես գրված է գրատախտակին: Այսինքն՝ ո՞ր օրով է սկսվում նոր շաբաթը:

– Երկուշաբթիին ո՞ր օրն է հաջորդում:

– Հինգշաբթիից հետո ո՞ր օրն է գալիս:

– Ո՞րն է շաբաթ օրվա նախորդ օրը:

– Շաբաթվա 7 օրերից ո՞րն է վերջին օրը:

– Շաբաթվա ո՞ր օրերին ենք դպրոց հաճախում:

– Ո՞ր օրերն են հանգստյան կամ ոչ աշխատանքային օրեր:

Ուսուցիչը նման հարցերը կարող է մի քանի անգամ կրկնել, որպեսզի երեխաները լավ հիշեն շաբաթվա օրերի անունները:

5. ԽԱՂ ՇԱԲԱԹՎԱ ՕՐԵՐԸ ՄՏԱՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ (8-10 րոպե)

Ուսուցիչը ոտքի է կանգնեցնում մի աշակերտի ու ասում, որ նա «երկուշաբթին» է: Ապա երկրորդ աշակերտին է կանգնեցնում ու ասում. «դու հաջորդ օրն ես, ուրեմն ո՞ր օրն ես» (երեքշաբթի), ու այսպես շարունակում է այնքան, մինչև բոլոր աշակերտների հերթը հասնի ու ունենան իրենց օրերը: Եվ այսպես, առաջին յոթ աշակերտից հետո ութերորդ աշակերտը նորից «երկուշաբթի» կլինի, այնուհետև «երեքշաբթի» և այլն: Բոլորը պետք է մտապահեն, թե որ օրն են իրենք: Հիմա ուսուցիչը խնդրում է խմբեր կազմել այնպես, որ առանձին-առանձին կանգնեն «երկուշաբթին», «երեքշաբթին», «չորեքշաբթին» ...եթե դասարանում 14 աշակերտ է, յուրաքանչյոր խմբում 2 երեխա կհայտնվի, իսկ եթե նրանք ավել են, խմբում երկուսից ավել երեխա կլինի:

Ուսուցիչը երեխաներին հաջորդ առաջադրանքն է տալիս.

I առաջադրանք. Բոլոր աշակերտները պետք է կանգնեն շրջանով, այնպես, որ շաբաթվա օրերը հերթականությամբ բաշխվեն (երեխաները պետք է կռահեն, որ «երեքշաբթին» «երկուշաբթիից» հետո պետք է կանգնի, նրանից հետո պետք է «չորեքշաբթին» կանգնի, «կիրակիից» հետո հերթականությունը դարձյալ սկսվում է «երկուշաբթիով» և այդպես շարունակվում է, մինչև շրջանը լրանա: Վերջում կարող է «օրերը չկապակցվեն», դրա համար ուսուցիչը ժամանակավորապես կկանգնի աշակերտների միջև):

II առաջադրանք. Ուսուցիչը հարցնում է, թե արդյոք գիտե՞ն ինչ է նշանակում «ոչ աշխատանքային օր» (կամ հանգստյան օրեր՝ շաբաթ և կիրակի): Ոչ աշխատանքային օրերը պետք է դուրս գան շրջանից և շրջանի մեջ կազմեն փոքրիկ շրջան (փոքր շրջանում միայն «շաբաթներն» ու «կիրակիները» պետք է լինեն):

III առաջադրանք. Երկու շրջանում էլ երեխաները ձեռք-ձեռքի բռնած են կանգնած:

Ուսուցիչը նրանց առաջարկում է օրերն արտահայտել ծափերով ու դոփյուններով:

Երկուշաբթի – 1 ծափ

Երեքշաբթի – 2 ծափ

Չորեքշաբթի – 3 ծափ

Հինգշաբթի – 4 ծափ (2+2 ռիթմով)

Ուրբաթ – 5 ծափ (2+3 ռիթմով)

Շաբաթ – երկու դոփյուն

Կիրակի – երեք դոփյուն

Երբ ուսուցիչը մեկ ծափ է զարկում, «երկուշաբթիները» պետք է պպզեն ու նորից կանգնեն, երկու ծափի դեպքում պպզում են «երեքշաբթիները» և այսպես շարունակ: Յուրաքանչյուր ծափին ու դոփյունին արձագանքում են համապատասխան «օրերը»:

6. ԴԱՍԻ ԱՄՓԱՓՈՒՄ (2-3 րոպե)

Ամփոփումից հետո ուսուցիչը տալիս է տնային հանձնարարություն. Նրանց Աշխատանքային տետրում տրված է երկու դատարկ շրջանակ՝ ցերեկ և գիշեր: «Ցերեկ» շրջանակի մեջ պետք է նկարեն իրենց լուսամուտից երևացող ցերեկային երկինքը (ամպամած, կապույտ, մոխրագույն և այլն), իսկ գիշերը՝ քնելուց առաջ պետք է պատուհանից դուրս նայեն, դիտարկեն երկինքն ու ներքևի շրջանակում նկարեն գիշերվա երկինքը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ (ԿԱՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Աշխատանք խմբերով. Ուսուցիչը դասարանը բաժանում է փոքր խմբերի ու նրանց մեկական մաքուր թուղթ է տալիս: Թղթի վրա սյունակով պետք է գրեն շաբաթվա օրերը: Այնուհետև Աշակերտի տետրի հավելվածի գունավոր թղթերից կտրում են շրջաններ, յուրաքանչյուր օրվա համար գույն են ընտրում ու փակցնում են օրվա դիմաց (գրքում տրված է 6 գույնի թուղթ, 7-րդը կլինի սպիտակը): Խմբերը պետք է բացատրեն, թե ինչու են ընտրել այս կամ այն գույնը շաբաթվա այս կամ այն օրվա համար (այս վարժությունը կատարեք այն դեպքում, եթե դասարանն այբուբենն ամբողջությամբ սովորել է):

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=aXD_L5pEOzk

https://www.youtube.com/watch?v=SROPBql1q68

ԴԱՍ 37

Թեմա.	Գարուն
Դասի վերնագիրը.	Գարունը մեր բակում
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան ըստ սեզոնային բնութագրիչների տարվա եղանակները ճանաչել ու տարբերել: Աշակերտները կարողանան բնության մեջ ընթացող փոփոխությունները կապել սեփական զգայության օրգանների հետ: Դիտարկել ուսումնասիրման օբյեկտը: Մարմինները ճանաչել, նկարագրել, տեսակավորել: Նպաստել աշակերտների մեջ տրամաբանական մտածողության ունակության զարգացմանը:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. Ի.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.Ի.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ.Ի.6.Աշակերտը պետք է կարողանա բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս: Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Ձյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»): Հարց է ձևակերպում՝ տարբեր միջավայրերում ապրող բույսեր/կենդանիներ համեմատելու համար: Պատասխաններ է որոնում. դիտարկում է և համեմատում դասասենյակում, դպրոցի բակում, տեղի միջավայրում աճող տարբեր բույսերը (օրինակ՝ ըստ տերևների ձևի կամ չափի, ըստ ցողունների ձևի, հաստության կամ երկարության, ըստ ծաղիկների գույնի կամ չափի) կամ/և կենդանիներին (օրինակ՝ որդ, խխունջ, թիթեռ, մայիսյան բզեզ): Դիտարկման արդյունքները փոխանցում է տարբեր ձևով (բանավոր խոսքով, նկարով, կոլաժով, լուսանկարների միջոցով): Թվարկում է մարդու գործունեության (օրինակ՝բույսեր տնկել, խաղողաքաղ, բերքահավաք), կենդանիների վարքի (օրինակ՝ թռչունների չու, ձմեռային քուն) և բույսերին բնորոշ

	փոփոխությունների (օրինակ՝ ծաղկունք, տերևաթափ) օրինակներ՝ ըստ տարվա եղանակների:
Անհրաժեշտ նյութ.	սպիտակ թղթեր, գրիչներ, գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ: Աուդիոնյութ. «Տարվա եղանակները»

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (3-4 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին հիշեցնում է, որ նախորդ դասին սովորել են գարնան ամիսները: Աշակերտները մարմնավորում են գարնան ամիսները և հիշում են նաև աշնան ու ձմռան ամիսները:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (8-10 րոպե)

Աշխատանքային տետրի համապատասխան էջում տրված է գարունը պատկերող նկար, որում նկարիչը սխալներ է «թույլ տվել»: Մասնավորապես՝ կինը խաղող է հավաքում, տղան սահնակ է քշում, իսկ տան աջ կողմում եղած ծառի վրայի տերևները դեղնել ու թափվում են: Աշակերտները զույգերով պետք է ուսումնասիրեն նկարը, որոշեն սխալներն ու շրջագծեն: Նրանք պետք է բացատրեն, թե ինչու են համարում, որ նկարիչն այս կամ այն դեպքում սխալ է «թույլ տվել»: Դրանից հետո գունավորում են նկարը:

3. ԳԱՐՆԱՆ ԹԵՄԱՅՈՎ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԱՄՄՈՒՆՔ (10-12 րոպե)

Ուսուցիչը երեխաներին ասում է, որ գարնան մասին շատ բանաստեղծություններ կան գրված, քանի որ գարնան գալուստը շատ է ուրախացնում մարդկանց: Վրացերենի և մայրենի լեզվի դասերին իրենք ևս սովորել են գարնան մասին բանաստեղծություններ: Ուսուցիչը երեխաներին արտասանել է տալիս իրենց սովորած բանաստեղծությունները: Այնուհետև նույն խմբերին բաժանում է նրանց անծանոթ մեկ կամ երկու քառյակ երկու բանաստեղծությունից: Մեկում գարուն պետք է պատկերված լինի, երկրորդում՝ տարվա մեկ այլ ժամանակ (ուսուցիչը դրա համար կարող է օգտագործել բանաստեղծություններ տարրական դասարանների դասագրքերից): Աշակերտները պետք է հասկանան, թե որ տողերն են նվիրվում գարնանը, և բացատրեն իրենց կարծիքը:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ(4-5 րոպե)

Ուսուցիչը երեխաներին ասում է, որ Աշխատանքային տետրում մեկ առաջադրանք ևս ունեն կատարելու. օգնում ենք ընկերներին, որպեսզի դատարկ վանդակները լրացնեն, հասկանան, թե ինչ է պետք նկարել այդ դատարկ վանդակներում: Դասագրքի համապատասխան էջում (ներքևի մասում) տրված են հաջորդականություններ՝ երկու տարբեր շարքերով: Աշակերտները պետք է հասկանան այդ հաջորդականությունների օրինաչափությունները և դատարկ վանդակներում նկարեն չորս կեռաս (վերևի շարքում), և երկու տերև՝ ներքևի շարքում:

Ուսուցիչը պարբերաբար այսպիսի հարցեր էլ է տալիս.

– Ինչո՞վ եք զգում (ընկալում), որ տերևները կանաչ են: (աչքերով)

– Ինչո՞վ եք զգում, որ ծաղիկը բույր ունի: (քթով)

– Ինչո՞վ եք զգում, որ թռչունները ծլվլում են: (ականջներով)

– Ինչո՞վ եք զգում, որ օդը տաք է: (մաշկով)

Այնուհետև ցանկալի է, որ ուսուցիչն աշակերտներին հիշեցնի կենդանի ու անկենդան բնության օբյեկտները: Դրա համար նա համապատասխան հարցեր պետք է տա. – Կենդանի բնությանն է պատկանում, թե՞ անկենդանին՝ ծառը, մրջյունը, թռչունը, հողը, քարը, տերևը, ջուրը, արևը...

Այստեղ հնարավոր է, որ աշակերտներն անկենդան բնության շարքը դասեն այնպիսի ակներև առարկաներ, ինչպիսիք են պատուհանը, շինությունը, բաճկոնը, գլխարկը և այլն: Այս դեպքում ուսուցչին լավ հնարավորություն է տրվում բացատրել, որ մեզ շրջապատող իրերի մեջ կան ինչպես բնական, այնպես էլ մարդու կողմից ստեղծված, պատրաստված իրեր: Մարդու կողմից ստեղծված իրերը չեն պատկանում ո՛չ կենդանի, ո՛չ էլ անկենդան բնությանը:

5. ԲՆՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԴՊՐՈՑԻ ԲԱԿՈՒՄ (5-7 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին դուրս է տանում դպրոցի բակ: Ուսուցիչն ասում է, որ բակ դուրս գալու նպատակն է գարնանային բնությունը դիտարկելը: Աշակերտները պետք է դիտեն ու բացահայտեն գարնանը կենդանի բնության մեջ կատարվող փոփոխությունները: Աշակերտները պետք է դիտարկեն և որոշեն նաև անկենդան բնության մեջ կատարվող փոփոխությունները: Նրանք բակում շատ բան կարող են ուսումնասիրել, օրինակ, թե ինչպես են փթթել ու պայթել բողբոջները ծառերի ճյուղերի ու թփերի վրա, ինչպես է տերևակալում բույսը, ինչպես է ծաղիկը սկսում բացվել, ինչպես են աշխուժանում թռչունները, ինչպես է արևը ջերմացնում միջավայրը, հողամասում ինչպես է նոր, դալար խոտ աճել, միջատներն էլ են աշխուժացել, օդում հաճելի բույր է զգացվում...

6. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Ուսուցիչը բերել է Վիվալդիի «Տարվա եղանակներ» սիմֆոնիան: Լսել է տալիս աշակերտներին ու խնդրում է գուշակել տարվա եղանակները:

ԴԱՍ 38

Թեմա.	Բույսեր
Դասի վերնագիրը.	Բույսերի աշխարհ
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան բույսի հիմնական մասերը ճանաչել և անվանել: Հատվածներից հավաքել բույսի մոդել: Դատողություն անել մարդու համար բույսի նշանակության մասին: Տեղի միջավայրում բույսի դիտարկման և այս դիտարկման արդյունքների տարբեր ձևով փոխանցման կարողությունը զարգացնել: Անհրաժեշտ տվյալներ հավաքագրել/նշումներ անել:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով): Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Ձյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»): Որոշում է և անվանում ծանոթ բույսերի հիմնական մասերը (օրինակ՝ ցողուն, տերև, արմատ, ծաղիկ, պտուղ): Դատողություն է անում մարդու համար կենդանիների և բույսերի նշանակության մասին (օրինակ՝ բույսերի որոշ մասեր օգտագործվում են ուտելու համար, որպես շինանյութ, շրջակա միջավայրը գեղեցկացնելու համար, կենդանիների և

մարդկանց բարեկամություն, սննդամթերք, որ մեզ տալիս են կենդանիները):

Հարց է ձևակերպում՝ տարբեր միջավայրերում ապրող բույսերը/կենդանիներին համեմատելու համար:

Պատասխաններ է որոնում. դիտարկում է և համեմատում դասասենյակում, դպրոցի բակում, տեղի միջավայրում աճող տարբեր բույսերը (օրինակ՝ ըստ տերևների ձևի կամ չափի, ըստ ցողունների ձևի, հաստության կամ երկարության, ըստ ծաղիկների գույնի կամ չափի) կամ/և կենդանիներին (օրինակ՝ որդ, խխունջ, թիթեռ, մայիսյան բզեզ): Դիտարկման արդյունքները փոխանցում է տարբեր ձևով (բանավոր խոսքով, նկարով, կոլաժով, լուսանկարների միջոցով):

Անհրաժեշտ նյութ. տեսանյութ բույսերի բազմազանության և դրանց աճի-զարգացման մասին:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-6 րոպե)

Ուսուցիչ.
Ուշադիր դիտի՛ր այս երեք նկարը.

- Ինչո՞վ են նման և ինչո՞վ են տարբերվում այս բույսերն իրարից:

Բույսերը բաժանվում են ծառերի, թփերի, խոտաբույսերի:

Որոշիր բույսերը և բացատրիր, թե ինչու ես այսպես տեսակավորել:

Ենթադրաբար. ծառը մեկ հիմնական, պինդ ցողուն ունի, թուփը՝ մի քանի, խոտի ցողունը փափուկ է և ճկուն:

Ուսուցիչը գրքում ցույց է տալիս ծառը և անվանում է նրա մասերը:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Ուսուցիչը մատնանշում է տետրի համապատասխան էջը, որում նույնպիսի ուրվանկար է, ինչպիսին ուսուցիչը գրատախտակին է նկարել: Աշակերտները պետք է գունավորեն ուրվանկարը և ըստ նկարի պատասխանեն հարցերին.

- Ի՞նչ մասերից է բաղկացած բույսը (արմատը և ցողունը շագանակագույն գունավորեն, տերևը՝ կանաչ, ծաղիկը և պտուղը/սերմը՝ գունավոր):

Բույսերը բազմազան են, սակայն դրանք բոլորը միանման կառուցվածք ունեն:

3. ՔՆՆԱՐԿՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչը դասարանին է դիմում հարցով.

– Ըստ ձեզ, ի՞նչ է անհրաժեշտ բույսերին գոյության համար:

Աշակերտները պետք է անեն եզրակացություն, որ բույսերին գոյության համար օդ, ջերմություն, սնունդ, լույս և ջուր է անհրաժեշտ:

4. ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՏԵՍԱՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ ԲՈՒՅՍԵՐԻ ԱՃԻ-ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ (5-7 րոպե)

Ուսուցիչը տեսանյութի ցուցադրմանը զուգահեռ աշակերտների համար հասկանալի լեզվով բացատրում է բույսի աճի ու զարգացման գործընթացը: Այնուհետև հարցերով դիմում է աշակերտներին.

– Որտե՞ղ են տնկում բույսերը:

– Կկարողանա՞ք գուշակել՝ տարվա ո՞ր եղանակին են տնկում դրանք:

Աշակերտները հավանաբար քիչ թե շատ սպառիչ պատասխան կտան: Ցանկալի է, ուսուցիչը նրանց պատասխանն ընդարձակի և աշակերտների մոտ հիշատակի բնահող բառը և այն բացատրի (բնահող է կոչվում հողի վերին շերտը, որում կա բույսի համար անհրաժեշտ սննդանյութ):

Ինչ վերաբերում է բույսեր տնկելուն, ցանկալի է, որ ուսուցիչը հայթայթի նկար կամ տեսանյութ, որում հստակ երևում է տարվա եղանակը: Իսկ աշակերտներին հետևյալ տիպի հարցերը կօգնեն՝ ճիշտ պատասխանները գտնելու համար.

– Ըստ ձեզ, հնարավո՞ր է արդյոք ձմռանը բույս տնկել: (Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:)

– Ամռա՞նը: Հիմնավորե՛ք: (Շոգ է և նպաստավոր չէ:)

– Բույսեր տնկելու համար նպաստավոր ժամանակահատվածը, հիմնականում, գարունն է (տնկում են նաև աշնանը): Ըստ ձեզ՝ ինչո՞ւ: Հիմնավորե՛ք:

5.ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-7 րոպե)

Ուշադիր դիտեք գրքում տրված նկարները.

– Որտե՞ղ է պահված լոլիկի, խատուտիկի, խնձորի, դեղձի, լիմոնի, կեռասի, ձմերուկի սերմը:

6. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (4-5 րոպե)

Ուսուցիչը ցույց է տալիս դասագրքում տրված նկարները և աշակերտներին խնդրում ասել, թե որն է ավելորդ: Հիմնավորել տեսակետը:

Ի՞նչ մասերից է բաղկացած բույսը (արմատ, ցողուն, տերև, ծաղիկ, պտուղ/սերմ): Ուսուցիչը գրատախտակին նկարում է բույսի ուրվանկար և այն լրացնում աշակերտների պատասխաններով:

Կեչի

Վարդակակաչ

Շագանակենի

Կաղնի

Մորենի

Հաղարջենի

Նարգիզ

Կոկռոշենի

Թխկի

Երիցուկ

Շուշան

Աստղածաղիկ

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-4 րոպե)

Տնային առաջադրանք.

Հաջորդ դասի համար դիտարկե՛ք ձեր բակի տնկիները, տեսակավորե՛ք դրանք և լրացրե՛ք Աշխատանքային տետրում տրված աղյուսակը.

ԲՈՒՅՍ	ՔԱՆԱԿԸ
Ծառ	
Թուփ	
Խոտաբույս (ծաղիկ)	

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=0TAmgYIBkFk
https://www.youtube.com/watch?v=H_0dAUgC-Xs

ԴԱՍ 39

Թեմա.	Բույսեր
Դասի վերնագիրը.	Ի՞նչն է զարդարում դաշտը
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան բույսերի մասերը ճանաչել և անվանել: Հատվածներից հավաքել բույսի ամբողջական մոդել: Հատվածներից ստեղծել ապլիկացիա և պատրաստել պատի թերթ: Դիտարկել զգայության օրգանների օգնությամբ: Նկարագրել մարմինը:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Զյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»): Որոշում է և անվանում ծանոթ բույսերի հիմնական մասերը (օրինակ՝ ցողուն, տերև, արմատ, ծաղիկ, պտուղ): Հատվածներից հավաքում է բույսերի, կենդանիների և մարդկանց մարմնի ամբողջական մոդել:
Անհրաժեշտ նյութ.	գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, դաշտային ծաղիկների փունջ (վարդ, մանուշակ, յասաման տերևներով), տարբեր պտուղներ, տարբեր տեսակի տերևներ, մկրատ, սոսինձ, հավելվածի գունավոր թերթեր, մեծ չափսի թուղթ, թփի շյուղեր, ծառի ճյուղ:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (4-5 րոպե)

Դասագրքի համապատասխան էջի վրա (վերին մասում) տրված է գունավոր նկար. մեր գրքի հերոսը ուրիշ տղաների հետ դաշտում գնդակ է խաղում: Հենց այստեղ, մոտակայքում աղջիկը ծաղիկներ է հավաքում: Աշակերտները պետք է նկարագրեն նկարը և բնութագրեն դաշտը (ուսուցչի

օժանդակ հարցերը. ինչպիսի՞ վայր է դաշտը՝ հարթ, թե՞ անհարթ, խոտածածկ, թե՞ քարոտ: Ձեզանից ո՞վ է եղել դաշտում, ինչո՞ւ եք սիրում խաղալ դաշտում: Գարնանը ի՞նչն է զարդարում դաշտը):

2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (5-7 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին բաժանում է տարբեր բույսեր/դրանց մասեր և խնդրում ուսումնասիրել դրանք, իրար հետ համեմատել՝ ըստ հետևյալ չափանիշների (տերևները՝ ըստ ձևի, ցողունները՝ ըստ հաստության, բարձրության և ամրության, ծաղիկը և պտուղը՝ ըստ գույնի, ձևի, չափի և այսպես շարունակ):

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Աշխատանքային տետրի հաջորդ էջին տրված են ծաղկավոր բույսեր՝ ձնծաղիկ, կակաչ, վարդակակաչ, հիրիկ, մեխակ և երիցուկ: Նույն տեղում տրված են այս բույսերի անվանումները: Աշակերտները պետք է աշխատեն զույգերով: Նրանք պետք է որոշեն ծաղիկները և գծերով կապեն համապատասխան բառերին: Այնուհետև ընդհանուր հարցերով պետք է ստուգվի առաջադրանքը:

Այնուհետև սկսվում է խաղը: Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի, կանչում է մեկ ներկայացուցչի, ցույց տալիս մի քանի ծաղիկ, աշակերտը պետք է զննի դրանք, հոտ քաշի և ձեռքով դիպչի: Այնուհետև ուսուցիչը կապում է այս աշակերտի աչքերը, նա միայն շոշափելով և հոտ քաշելով պետք է կարողանա անվանել տվյալ ծաղիկը:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (8-10 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և մեծ չափսի թերթեր է տալիս նրանց: Ուսուցիչը բացատրում է, որ գունավոր թերթերից նրանք պետք է խոտաբույսեր կտրեն-ձևեն, փակցնեն թերթի վրա և «Դաշտը գարնանը» խորագրով ապլիկացիաներ ստեղծեն:

Շնորհանդեսի ժամանակ աշակերտները պարզաբանում են, թե որ ծաղիկներն է ընտրել իրենց խումբը, ինչու է հավանում այս ծաղիկները, ինչ գույներ կան իրենց դաշտում և այլն:

Ցանկալի է, որ պատի վրա երեխաների աշխատանքներին տեղ հատկացվի, որտեղ դրանք կփակցվեն և կմնան:

Եթե ուսուցչին ժամանակ մնա, ցանկալի է, որ աշակերտների համար կարդա բանաստեղծություններ ծաղիկների մասին, որոնք հայկական և վրացական պոեզիայում առատորեն կան:

5. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

6. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ուսուցիչը երեխաներին հանձնարարում է հաջորդ դասի համար բերել դաշտային ծաղիկներ:
Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=rIT-5hnUxY4

ԴԱՍ 40

Թեմա.	Բույսեր
Դասի վենագիրը.	Սենյակային բույսեր
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան անվանել/գիտակցել բույսի կյանքի համար անհրաժեշտ պայմանները: Բույսերի նկատմամբ հոգատար վերաբերմունք ձևավորել: Ճանաչել մարմինը և նկարագրել պատկերազարդման վրա և իրականության մեջ: Անձնական կարծիքների վրա հիմնվելով՝ պատասխանել հարցին: Ճանաչել բույսի հիմնական մասերը: Դիտարկել բույսը և արդյունքները տարբեր ձևով փոխանցել: Սեփական տեսակետներն արտահայտել-հիմնավորել:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Որոշում է և անվանում ծանոթ բույսերի հիմնական մասերը (օրինակ՝ ցողուն, տերև, արմատ, ծաղիկ, պտուղ): Հարց է ձևակերպում՝ տարբեր միջավայրերում ապրող բույսեր/կենդանիներ համեմատելու համար: Պատասխաններ է որոնում. դիտարկում է և համեմատում դասասենյակում, դպրոցի բակում, տեղի միջավայրում աճող տարբեր բույսերը (օրինակ՝ ըստ տերևների ձևի կամ չափի, ըստ ցողունների ձևի, հաստության կամ երկարության, ըստ ծաղիկների գույնի կամ չափի) կամ/և կենդանիներին (օրինակ՝ որդ, խխունջ, թիթեռ, մայիսյան բզեզ): Դիտարկման արդյունքները փոխանցում է տարբեր ձևով (բանավոր խոսքով, նկարով, կոլաժով, լուսանկարների միջոցով):
Անհրաժեշտ նյութ.	տարբեր ծաղիկներ, մանր լարեր կամ թել՝ ծաղկեփնջի համար, թուղթ, մկրատ, սոսինձ, գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ:

Դասի ընթացքը.

1. ԶՐՈՒՅՑ. ԻՆՉՊԵՍ ԽՆԱՄԵՆՔ ԾԱՂԻԿՆԵՐԸ (6- 8 րոպե)

Ուսուցիչն անց է կացնում դասարանական զրույց հետևյալ հարցերի օգտագործմամբ.
– Հիշեք՝ ապրելու համար բույսին ի՞նչ է անհրաժեշտ:
– Ո՞ր մասով է բույսը ներծծում ջուրը:
– Ի՞նչ կպատահի բույսին առանց ջրի:
– Բույսին անհրաժե՞շտ է արդյոք լույս և ջերմություն: Ինչո՞ւ եք այսպես կարծում:
– Տանը ո՞վ ունի սենյակային բույսեր:
– Ինչպե՞ս եք խնամում սենյակային բույսերը:

2. ԽԱՂ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԺԵԼՈՒ ՀԱՄԱՐ (5-7 րոպե)

Ուսուցիչը ծաղկամանի մեջ 4-5 հատ տարբեր ծաղիկ է դնում և ցույց է տալիս դասարանին: Աշակերտները պետք է դիտարկեն կես րոպեի ընթացքում: Այնուհետև ուսուցիչը, աշակերտներից թաքուն ծաղկամանի մեջ փոխում է ծաղիկները (պակասեցնում կամ ավելացնում է մեկ ծաղիկ) և հարցնում է երեխաներին. «Ի՞նչ է փոխվել ծաղկամանում»: Աշակերտները պետք է որոշեն, թե ինչն է փոխվել և ասեն: Խաղը կարող է կրկնվել մի քանի անգամ:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (15-17 րոպե)

Աշխատանքային տետրի տվյալ էջի ստորին մասում ծաղիկ է նկարված: Ուսուցիչը հանձնարարում է գունավորել համապատասխան գույներով. տերևը՝ կանաչ, ծաղիկը՝ կապույտ և այլն:

Տետրի համապատասխան էջում տրված է ծաղրաշար՝ մեր գրքի հերոսների մասնակցությամբ: Միայն թե այս 6 նկարները հաջորդաբար չեն դասավորված:

Աշխատանքը պետք է ընթանա խմբերում: Ուսուցիչը խմբերին թերթեր է բաժանում, որոնց վրա գրված են այս ծաղրաշարին կցված նախադասությունները: Դրանք են.

1. Մայրը աղջկա համար ծաղիկների սերմեր գնեց:
2. Մեր ընկերները բակում հողը փորեցին:
3. Աղջիկը փորած հողի մեջ սերմեր շաղ տվեց:
4. Այնուհետև ցնցուղով ջրեց ցանված տեղը:
5. Մի քանի օրում հողից բույսերի ընձյուղները երևացին:
6. Որոշ ժամանակ անց երեխաները տեսան իրենց գեղեցիկ ծաղիկները:

Աշակերտները պետք է կտրեն նկարները, որոշեն, թե որ նախադասությունը որ նկարն է նկարագրում, թերթի վրա նկարները ճիշտ հաջորդականությամբ տեղադրեն (սոսնձեն և համապատասխան նախադասություններն էլ կողքին գրեն կամ փակցնեն): Վերջում գունավորեն:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ

Համաձայն առաջադրանքի, աշակերտներն այս պարապմունքի համար պետք է բերեին ծաղիկներ: Ուսուցիչը այս ծաղիկները մեկ արկղի մեջ է տեղադրում: Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի հետևյալ մեթոդով. տարբեր տեսակի ծաղիկները (մեկական ծաղիկ) դնում է չորս սեղանի վրա (օրինակ՝ դրանք կարող են լինել մանուշակ, հիրիկ, մեխակ, երիցուկ): Այնուհետև արկղով շրջում է երեխաների միջև, երեխաները ձեռքը մտցնում են արկղի մեջ և վերցնում այս կամ այն ծաղիկը: Ում ինչ բաժին կընկնի, այդ ծաղկի սեղանի մոտ կնստի: Այսպես կստեղծվեն մանուշակների, հիրիկների, մեխակների և երիցուկների խմբեր: (Ուսուցիչը կարող է որոշակի ուղղումներ անել, որպեսզի աշակերտները հավասար քանակությամբ բաշխվեն):

Խմբերի աշխատանքային առաջադրանքն այսպիսին է. նրանք պետք է նկարագրեն ծաղիկը (տեսքը, գույնը, բույրը և այլն):

Ուսուցիչը կարող է երեխաներին տանել դպրոցի բակ՝ ծաղկավոր բույսեր դիտարկելու:

Այստեղ ուշադրություն պետք է դարձվի նրան, որ ծաղիկ են ունենում ինչպես խոտաբույսերը, այնպես էլ թփերը (օրինակ՝ վարդ, յասաման) և ծառերը (դիտարկում են, եթե, իհարկե, այս ժամանակ դպրոցի բակում որևէ ծառ ծաղկում է):

5. ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

ԴԱՍ 41

Թեմա.	Բույսեր
Դասի վերնագիրը.	Մեր անտառը
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան քննարկել անտառը՝որպես բույսերի, կենդանիների և այլ կենդանի օրգանիզմների կենսամիջավայր, այսպես կոչված՝ տուն: Ճանաչել սաղարթավոր և փշատերև ծառերը, համեմատել և պարզ գիտակցել, որ անտառը ծառերի և այլ կենդանի օրգանիզմների կենսամիջավայրն է: Աշակերտները կարողանան համեմատել սաղարթավոր և փշատերև ծառերը և պարզ բնութագրել դրանք: Մարմինը ճանաչել, նկարագրել, տեսակավորել: Հարցին պատասխանելու համար հիմնվել անձնական տեսակետների վրա: Կիրառել հաղորդակցման տարբեր ձևեր: Նպաստել անտառի նկատմամբ դրական և հոգատար վերաբերմունքի ձևավորմանը: Գիտակցել բույսերի նշանակությունը:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. Ι.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.Ι.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների: Բնագիտ.Ι.4.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել մարմիններն՝ ըստ բաղադրիչ նյութերի հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Որոշում է և անվանում ծանոթ բույսերի հիմնական մասերը (օրինակ՝ ցողուն, տերև, արմատ, ծաղիկ, պտուղ): Դատողություն է անում մարդու համար կենդանիների և բույսերի նշանակության մասին (օրինակ՝ բույսերի որոշ մասեր օգտագործվում են ուտելու համար, որպես շինանյութ, շրջակա միջավայրը գեղեցկացնելու համար, կենդանիների և մարդկանց բարեկամություն, սննդամթերք, որ մեզ տալիս են կենդանիները): Խմբավորում է միանման նյութերից պատրաստված մարմինները:
Անհրաժեշտ նյութ.	մեծ չափի թուղթ, մկրատ, սոսինձ, գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ:

Դասի ընթացքը.

1. ԶՐՈՒՅՑ ԱՆՏԱՌԻ ՄԱՍԻՆ (5-7 րոպե)

Ուսուցիչ.

– «Որտե՞ղ են աճում ծառերը, կամ ինչպե՞ս է կոչվում բնության մեջ այն տեղը, որտեղ շատ ծառ է աճում»:

– Ձեզանից ո՞վ է եղել անտառում:

– Բացի ծառերից, ուրիշ ի՞նչ է աճում անտառում: (խոտեր, թփեր, սնկեր)

– Շոգ եղանակին ինչո՞ւ է անտառում զով:

– Անտառում ինչո՞ւ շատ ստվեր կա:

– Անտառում որտե՞ղ կարող են հանդիպել սնկերը: (գետնի վրա, ծառերի վրա)

– Ո՞վ է ուզում հիշել տպավորությունները, որ նրա վրա թողել է անտառը:

Այս հարցերից հետո ուսուցիչը ցանկացողներին հնարավորություն է տալիս հիշել և փոխանցել անտառի հետ կապված հիշողություններ:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (5-7 րոպե)

Տետրի համապատասխան էջի վերին մասում տրված են եղևնու և կաղնու ուրվանկարներ: Նույն տեղում գրված են դրանց անվանումները: Աշակերտները նկարների վրա պետք է ճանաչեն ծառերը և գծերով կապեն համապատասխան բառերի հետ:

Նույն տեղում ուսուցիչը համեմատել է տալիս այս երկու ծառերն իրար հետ և հարցնում է.

– Ի՞նչ տարբերություն եք տեսնում կաղնու և եղևնու միջև:

– Ի՞նչ նմանություն եք տեսնում այս երկու բույսերի միջև:
– Ով գիտի՝ ինչպե՞ս է կոչվում կաղնու պտուղը: (կոն)
– Ըստ ձեզ՝ որի՞ ստվերն է ավելի մեծ՝ կաղնո՞ւ, թե՞ եղևնու: Ինչո՞ւ:
– Ուրիշ ի՞նչ փշատերև ծառեր գիտեք:

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (12-13 րոպե)

Նույն էջի ստորին մասում տրված են սոճու փշատերևների և կաղնու տերևների նկարներ: Աշակերտները պետք է որոշեն դրանք և գծերով կապեն համապատասխան բառերի հետ, որոնք առանձին են տրված: («Ի՞նչ տարբերություն կա տերևի և փշատերևի (փուշ-տերևի) միջև»:)

Ուսուցիչը երեխաներին տարօրինակ հարց է տալիս. – Ուզո՞ւմ եք մեր դասարանում էլ անտառ աճեցնենք: Երեխաների մեծ մասը, հավանաբար, կզարմանա (ինչպե՞ս), մյուսներն էլ ուրախությամբ կհամաձայնեն:

Ուսուցչի ցուցումով բոլոր աշակերտները վերցնում են Աշխատանքային տետրի նույն էջը, որի վրա մեզ լավ ծանոթ երկու ծառերի ուրվանկարն է նկարված (մեկը՝ սաղարթավոր, մեկը՝ փշատերև): Աշակերտները պետք է աշխատեն ինքնուրույն: Նրանք պետք է ընտրեն այս ծառերից մեկը, գունավորեն և կտրեն-հանեն, այնուհետև պատի վրա փակցված մեծ չափսի թղթի վրա փակցնեն (եթե մեծաքանակ դասարան է, ուսուցչին գոնե 2 հատ այսպիսի թուղթ է անհրաժեշտ):

Քանի որ երեխաներին գունավորելու և կտրելու համար տարբեր ժամանակ է անհրաժեշտ, հույս ունենք, որ պատի մոտ բոլորը միասին չեն աշխատի: Ուսուցիչը պետք է օգնի աշակերտներին, որպեսզի նրանք միմյանց չխանգարեն: Այն աշակերտները, որոնք շուտ կավարտեն աշխատանքը, կվերադառնան տետրին և նրանում կգունավորեն երկրորդ ծառի ուրվանկարը, որը, սակայն, չեն կտրի-հանի:

Այսպես ստեղծվում է դասարանի անտառը: Եթե ժամանակ է մնում, ուսուցիչը կազմակերպում է երկրորդ զրույցը՝ օգտագործելով հետևյալ հարցերը.

– Ի՞նչ է նշանակում, ըստ ձեզ, խիտ՝ անանցանելի անտառ: Այլ կերպ ինչպե՞ս են կոչում այն (թավախիտ):
– Ըստ ձեզ, ի՞նչ է նշանակում նոսր անտառ:
– Մեր պատի վրա ինչպիսի՞ անտառ է ստացվել՝ նոսր, թե՞ թավախիտ:
– Մեր անտառում ծառերը չոր են, թե՞ դալար: Ինչո՞ւ եք այդպես կարծում:
– Ինչ եք կարծում, անտառին անհրաժե՞շտ է խնամք: (Դատեն անտառի խնամքի և խնամելու անհրաժեշտության մասին:)
– Ըստ ձեզ, ի՞նչը կարող է ոչնչացնել անտառը:

4. ԶՐՈՒՅՑ. «Ի՞ՆՉ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՓԱՅՏԻՑ»

Նման զրույց առաջ էլ են անցկացրել, սակայն այժմ նույնպես ցանկալի է այս զրույցը կրկնել: Ուսուցիչը խնդրում է աշակերտներին դասարանում եղած առարկաներից անվանել փայտից պատրաստված առարկաները: Աշակերտները պետք է թվարկեն բոլոր առարկաները և փորձեն բացատրել, թե ինչու են այս առարկաները փայտից պատրաստում:

5. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

ԴԱՍ 42

Թեմա.	Բույսեր
Դասի վերնագիրը.	Անտառի բնակիչները
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան նպաստել անտառի նկատմամբ դրական և հոգատար վերաբերմունքի մշակմանը:
	Ծանոթանալ անտառի բնակիչներին և նրանց բնակման միջավայրին:
	Թունավոր և օգտակար սնկերի գոյությունը և դրանց հետ

	շփվելու կանոնների պահպանման անհրաժեշտությունը: Որոշել մարմինները, նկարագրել, տեսակավորել: Տարբեր կենդանիների նկարագրել-համեմատել: Խմբավորել կենդանի մարմինները, համապատասխանաբար, հիմնավորել որոշումը: Այսպես կոչված «Դասարանի անտառում» բնակեցնել գազաններին:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Ձյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»): Կիրառում է տարբեր պարզ սարքավորումներ (խոշորացույց, ֆոնենդոսկոպ) զգայությունների հզորացման նպատակով և նկարագրում է մարմնի հատկությունները, որոնք այդ սարքավորման օգտագործման ժամանակ են դարձել ակներև:
Անհրաժեշտ նյութ.	գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, մկրատ, սոսինձ, տեսանյութ սնկերի մասին:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ. «Ի՞ՆՉ ՍԽԱԼ Է ԹՈՒՅԼ ՏՎԵԼ ՆԿԱՐԻՉԸ» (5-7 րոպե)

Աշխատանքային տետրի համապատասխան էջի վրա (վերին մասում) նկարած է ամառային անտառ. Փայտփորիկը՝ սաղարթախիտ ծառի վրա, սնկերը՝ ծառի տակ, մեր գրքի հերոսները զամբյուղով սունկ են հավաքում: Այստեղ, տեղ-տեղ հողի վրա ձյուն կա:

Աշակերտները պետք է կռահեն, որ ձյուն չպետք է լինի նկարված, քանի որ ուշ գարուն է կամ ամառ: Աշակերտները պետք է գունավորեն նկարը և փորձեն ուղղել նկարչի սխալը: Ուսուցիչը հարցնում է նրանց. «Ինչպե՞ս կարելի է ուղղել նկարչի սխալը: Մտածե՛ք և աշխատե՛ք»: (Այս սխալը հեշտ կարելի է ուղղել՝ հողի ձյունոտ մակերևույթը պետք է կանաչ գույնով գունավորվի, խոտերով նկարազարդվի:)

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (8-10 րոպե)

Դասագրքում տրված է չորս տարբեր սնկի նկար, սրանք են՝ ագարիկոնը, շիկասունկը, կարմիր ճանճասպանը և ճանճասպանը (թունավոր): Դրանց կողքին գրված են անվանումները: Ուսուցիչը պետք է ծանոթացնի աշակերտներին այս սնկերը և բացատրի, որ թունավոր սնկերը պիտանի չեն ուտելու համար և թունավորում են առաջացնում, հաճախ նույնիսկ մահվան պատճառ դառնում, այնքան էլ հեշտ չէ դրանք ճանաչելը և որ առանց փորձված ավագների հետևելու, չի կարելի սունկ հավաքել:

Ուսուցիչը պետք է հանձնարարի աշակերտներին ընտրել միայն այն սնկերը, որոնք պիտանի են ուտելու համար:

Ըստ ցանկության կտրեն-հանեն մեկը և նախորդ դասին ստեղծած «դպրոցի անտառում» տեղավորեն (փակցնեն):

Ուսուցիչն այստեղ մի քանի հարց է տալիս.

– Ինչո՞ւ պետք է սունկ հավաքելիս զգուշություն հանդես բերել:

– Իմացե՞լ եք արդյոք, թե ինչ հետևանք է ունեցել սնկով թունավորումը:

– Ինչպե՞ս պետք է վարվենք վտանգից խուսափելու համար:

3.ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՒՄ. «ԳԱԶԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԵՑՈՒՄ ԱՆՏԱՌՈՒՄ» (13-15 րոպե)

Աշխատանքային տետրի հաջորդ էջում տրված են անտառային գազաններ. արջ, եղնիկ, գայլ, աղվես, սկյուռ, վարազ:

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և տալիս առաջադրանքներ: Աշակերտները պետք է գունավորեն գազանների նկարները: Այնուհետև խմբում բաշխում են նկարած կենդանիներն այնպես, որ աշակերտներին կտրելու համար բաժին ընկնեն միմյանցից տարբեր գազաններ (օրինակ, եթե խմբում 6 աշակերտ կա, վեցին էլ մեկական գազան բաժին կընկնի, եթե վեցից պակաս են, կարող են ընտրել այն գազանը, որը ցանկանում են կտրել-հանել): Այնուհետև յուրաքանչյուր աշակերտ կկտրի-կհանի այն գազանը, որ բաժին է ընկել իրեն, և կտեղավորի («Դասարանի անտառում» կփակցնի):

Այնուհետև աշակերտներն երկրորդ առաջադրանքը պետք է կատարեն. յուրաքանչյուր խումբ պետք է հորինի որևէ պատմություն, որ կապված է իրենց անտառի հետ: Շնորհանդեսի ժամանակ աշակերտները կկարողանան իրենց ստեղծած անտառն օգտագործել՝ որպես ակներև նյութ և հաղորդել պատմությունը:

(Ուսուցչի լրացուցիչ հարցեր.

– Ի՞նչ գազաններ են ապրում մեր անտառում:

– Սրանցից ո՞րն է գիշատիչ կենդանի:

– Ո՞ր գազանն է սնվում միայն բուսականությամբ:)

4. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

ԼՐԱՑՈՒՑԻՉ (ԿԱՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչն աշակերտների համար կարդում է սնկերի մասին տեքստ Ռ.Ավալիանիի «Անտառի արահետներով» գրքից.

«Դժվար է պատկերացնել անտառն առանց սնկի: Ինչպիսի անտառում ասես կհանդիպես սնկերի՝ սաղարթավորում, փշատերևում և խառը անտառում: Մնկի որոնման մեջ այնպես կանցնես բազմաթիվ կիլոմետրեր, որ հոգնածություն չես էլ զգա: Սունկ հավաքողի գլխավոր գործիքը զամբյուղն ու փայտն են: Նա սունկ հավաքելու է գնում վաղ առավոտյան, մինչև արևածագը, երբ դեռ չի չորացել ցողը: Այս ժամանակ սունկն ավելի լավ է երևում, նրա գլխարկը ժամանակ առ ժամանակ պսպղում է, սակայն ոք չգիտի, թե որտեղ ինչ սնկի կհանդիպի:

Եթե անձրևներից հետո տաք եղանակ լինի, անտառում, ծառի տակ, խոտերի մեջ, թփուտներում, ծառերի թե կոճղերի վրա կնկատեք թերթասունկ, թնոպի, ագարիկոն, պղպեղասունկ, աղվեսասունկ, աբեթասունկ, կարմիր ճանճասպան և այլ սնկեր: Նրանցից մի քանիսը գավաթի են նման, մի քանիսը՝ թասի կամ անծանոթ ծաղկի, մի քանիսը՝ գնդակի: Գո՞ւյնը: Շատ հարուստ է սնկերի «ներկապնակը»՝ սպիտակից մինչև սևը՝ ներառյալ բոլոր գույները և գուներանգները:

Վրաստանում 100-ից ավելի ուտելի և շուրջ 15 թունավոր սունկ կա: Ճիշտ է, մեր անտառներում շատ չեն թունավոր սնկերը, սակայն, միևնույն է, դրանք կարող են հայտնվել զամբյուղի մեջ և թունավորել մարդու: Ամեն տարի բազմաթիվ են դրանցից թունավորվելու և մահացության դեպքերը:

Անտառում, սունկ հավաքելիս՝ սովորաբար ներքև են նայում, հողին: Բայց ինչքա՛ն սունկ է աճում ծառերի վրա: Այստեղ կգտնեք ծառի սունկ՝ աբեթասունկ, որ Կախեթիում խեթամխալի՝ ծառի ուտելի բույս են անվանում: Աբեթասունկը հեշտ հրկիզվում է և քամու ժամանակ դժվար է հանգչում: Շատերն են տեսել այն, սակայն քչերը գիտեն, որ այն ուտելի սունկ է: Այն թեթև, հաճելի հոտով գլխիկ ունի: Աբեթասունկը սերտաճում է ծառին և ծծում ծառի հյութը: Երբ ծառի վրա աբեթասնկեր են աճում, դա այն բանի նշան է, որ այդ ծառը ներսից փտում է ամբողջությամբ»:

Երաշխավորություն.

Այս դասի մեջ տրված ակտիվություններն ուսուցիչը կարող է կիրառել՝ ըստ իր հայեցողության (պարտադիր չէ կիրառել բոլոր ակտիվությունները)՝ դասարանի տրամադրվածության և հնարավորությունների նախատեսմամբ:

ԴԱՍ 43

Թեմա.	Կենդանական աշխարհ
Դասի վենագիրը.	Մեր չորքոտանի «բարեկամները»
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան տարբերել ընտանի և վայրի կենդանիներին: Ճանաչել ու անվանել ընտանի կենդանիներին (կաթնասուններին): Որոշակի հատկանիշներով (վարք, ձայն) կարողանան միմյանցից տարբերել ընտանի կենդանիներին: Մարմինները որոշել, նկարագրել, տեսակավորել: Խմբավորել կենդանիներին: Խոսել մարդու համար կենդանիների նշանակության մասին:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. Ի.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.Ի.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Որոշում է, նկարագրում է ծանոթ մարմնի հատկությունները (օր.՝ գույն, հոտ, ձև, ֆակտուրա) և դրանց ընկալումը կապում է զգայության օրգանի հետ (օր.՝ «Գնդակը կարմիր է – աչք», «Շոկոլադը քաղցր է – լեզու» կամ «Ձյունը սպիտակ է և սառը – աչք և մաշկ», «Լիմոնը դեղին է և թթու – աչք և լեզու»): Անվանում է անձնական հիգիենայի պարագաներ (օր.՝ սանր, ատամի խոզանակ, սրբիչ): Դատողություն է անում հիգիենայի կանոնների պահպանման նշանակության մասին:
Անհրաժեշտ նյութ.	մկրատ, գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, աուդիոնյութ կենդանիների ձայներով:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (12-15 րոպե)

Աշխատանքային տետրի համապատասխան էջում նկարված են հետևյալ կենդանիները. շուն, կատու, ձի, խոզ, ավանակ, կով, այծ և ոչխար: Ներքևում տրված են «ընտանի կենդանիներ» և «վայրի կենդանիներ» գրությունները:

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է զույգերով դիտել այդ նկարները և կարդալ գրությունները, այնուհետև միասին դատողություն են անում և որոշում կայացնում. թողնեն այն գրությունը, որը այս կենդանիներին համապատասխան են համարում, իսկ մյուսի վրա գիծ քաշեն:

Հանձնարարությունը ստուգելուց հետո, ուսուցիչը հարցնում է, թե ինչպես են ընկալում երեխաները «ընտանի կենդանիներ» արտահայտությունը, ի՞նչ է նշանակում դա: Ինչո՞ւ ենք նրանց այդպես

անվանում: Ինչի՞ համար է մարդ խնամում և ինչո՞ւ է պահում ընտանի կենդանիներ: Ինչպե՞ս է օգտագործում նրանց:

Այնուհետև աշակերտները պետք է գունավորեն կենդանիների նկարներն ու կտրեն-հանեն դրանք:

2. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ (8-10 րոպե)

Նախորդ ակտիվության ժամանակ կտրած-հանած ընտանի կենդանիների նկարների վրա մի քանի հանձնարարություն են կատարում: Նրանք դարձյալ զույգերով են աշխատում:

I. Հերթով մի քանի աշակերտներ ցույց են տալիս այս նկարները դասարանին ու ասում են դրանց անունները:

II. Զույգերը խմբավորում են.

ա) կենդանիներին, որոնք խոտ են ուտում,

բ) կենդանիներին, որոնք միս են ուտում:

III. Աշակերտները պետք է անվանեն ու ցույց տան այն կենդանիներին, որոնք ճանկեր ունեն (շուն և կատու):

IV. Աշակերտները պետք է անվանեն և ցույց տան այն կենդանիներին, որոնք ունեն սմբակներ (բոլորը՝ շնից ու կատվից բացի):

V. Աշակերտները պետք է անվանեն ու ցույց տան այն կենդանիներին, որոնք եղջյուրներ ունեն (կով, ոչխար, այծ):

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (5-6 րոպե)

Աշխատանքային տետրի հաջորդ էջում (վերևի մասում) նկարված է մի քանի ընտանի կենդանի, դարձյալ առանձին գրված են հետևյալ բառերը. վրնջում է, մլավում է, ճվաղում է... Աշակերտները պետք է գլխի ընկնեն, թե որ կենդանու ձայներին որ բառերն են համապատասխանում ու գծերով միացնեն իրար:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (3-5 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի, հետո բոլոր երեխաներից (ժամանակավոր) վերցնում է նրանց կտրած-հանած կենդանիների նկարներն ու տալիս է այսպիսի հանձնարարություն. խմբի անդամները մեջտեղ պետք է մարմնավորեն այն ընտանի կենդանիներին, որի նկարն ուսուցիչը կդնի այդ խմբի սեղանին: Իսկ մյուս խմբերի աշակերտները պետք է գուշակեն, թե ինչ են մարմնավորում նրանք: Պարզ է, որ շեշտն այս դեպքում դրվում է ոչ թե կենդանիների ձայների, այլ ավելի նրանց վարքի վրա:

5. ՀԱՊԱ, ԳՈՒՇԱԿԻ՛Ր (2-3 րոպե)

Ուսուցիչը պատրաստել է ընտանի կենդանիների ձայների ձայնագրություն: Լսել է տալիս երեխաներին, ու նրանք ձայնով պետք է ճանաչեն յուրաքանչյուր կենդանու:

6. ՈՐՔԱ՞Ն Է (2-3 րոպե)

Պարապմունքն ավարտվում է տետրում (էջի ներքևի մասում) տրված ևս մեկ վարժությամբ: Մի քանի ընտանի կենդանիների ուրվագծեր իրար վրա են դրված: Աշակերտները պետք է գուշակեն, թե ընդամենը քանի կենդանի կա այդտեղ ու ասեն նրանց անունները (կով, ձի, շուն...):

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=HgP34DdyYuI
https://www.youtube.com/watch?v=HwPeYXwcwXk
https://www.youtube.com/watch?v=9uO3u7JoUIk

ԴԱՍ 44

Թեմա.	Կենդանական աշխարհ
Դասի վերնագիրը.	Ընտանի թռչուններ
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան թռչունները համեմատել կաթնասունների հետ և անվանել ակներև տարբերակիչ նշանները: Ճանաչել և անվանել ընտանի թռչուններին: Ձայներով տարբերել ընտանի թռչուններին: Մարմինները որոշել. նկարագրել, տեսակավորել: Անձնական կարծիքների վրա հիմնվելով՝ պատասխանել հարցին: Կիրառել հաղորդակցման տարբեր ձևեր: Նկարագրել/համեմատել տարբեր կենդանիների մարմինները:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.3. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Նկարագրում է և իրար հետ համեմատում տարբեր կենդանիների՝ ըստ մարմնի մասերի (օրինակ՝ գլուխ, վերջույթներ, պոչ, ականջներ, կտուց, թևեր, կնճիթ): Հարց է ձևակերպում՝ տարբեր միջավայրերում ապրող բույսերը/կենդանիներին համեմատելու համար: Պատասխաններ է որոնում. դիտարկում է և համեմատում դասասենյակում, դպրոցի բակում, տեղի միջավայրում աճող տարբեր բույսերը (օրինակ՝ ըստ տերևների ձևի կամ չափի, ըստ ցողունների ձևի, հաստության կամ երկարության, ըստ ծաղիկների գույնի կամ չափի) կամ/և կենդանիներին (օրինակ՝ որդ, խխունջ, թիթեռ, մայիսյան բզեզ): Դիտարկման արդյունքները փոխանցում է տարբեր ձևով (բանավոր խոսքով, նկարով, կոլաժով, լուսանկարների միջոցով):
Անհրաժեշտ նյութ.	փոքրիկ կպչուն թղթեր (ստիկերներ), գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, աքաղաղի, հավի, սագի և հնդուհավի նկարներ:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Տետրի համապատասխան էջում նկարված են ընտանի թռչուններ և նույն տեղում տրված են հնդուհավ, սագ, հավ, բադ բառերը:

Ուսուցիչը խնդրում է երեխաներին որոշել նկարները և գծերով կապել բառերի հետ:

Այնուհետև ուսուցիչը զրույց է վարում այն հարցի շուրջ, թե ինչով են տարբերվում թռչուններն այն կենդանիներից (կամ կաթնասուններից), որոնց մասին սովորել են նախորդ շաբաթվա ընթացքում: Աշակերտները ուշադիր պետք է դիտեն նկարները և կռահեն, որ թռչունների տարբերակիչ նշաններն են թևերը, կտուցը, փետուրը, երկու ոտքը...

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (13-14 րոպե)

Աշակերտի աշխատանքային տետրում աքաղաղի ուրվանկար է: Որպեսզի աշակերտներն ավելի մանրամասնորեն ծանոթանան թռչնի կառուցվածքի առանձնահատկություններին:

Սկզբից ուսուցիչը երեխաների համար կարդում է Յ.Գոգեբաշվիլիի պատմվածքի համաձայն կազմած փոքրիկ տեքստն աքաղաղի մասին.

«Հենց որ լուսացավ, աքաղաղն անմիջապես թառից ցած թռավ և հպարտ դուրս եկավ: Հետևից եկան վառեկները և թուխսերն՝ իրենց ճտերով:

Հպարտ և ինքնահավան առաջնորդում է աքաղաղը հավերին և երազում. զարմանալի թռչուն եմ ես. հապա ո՞վ ունի իմ չափ մարմին, գեղեցկություն և վայելչատեսություն, ո՞ր հավի կատարը կհամեմատվի իմ բարձր և նռան պես կարմիր կատարի հետ, ո՞ր հավն ունի այնպիսի գույնզգույն և գեղեցիկ փետուր, ինչպիսին ես, ո՞ր հավի ոտքերին կան այսպիսի չքնաղ բիտեր, ինչպիսիք իմն են, ո՞վ ունի ինձ նման զորեղ և մեծ կտուց, ո՞ր թռչունն է առաջինն իմանում լուսաբացի մոտենալը և արթնացնում մարդկանց, միայն ես, և ոչ մի այլ թռչուն»:

Ուսուցիչն այս տեքստից մի քանի բառ է գրում գրատախտակին, որոնք հնարավոր է անծանոթ լինեն երեխաներին: Դրանք են. վառեկ, թուխս, կտուց, բիտ, կատար: Այս բառերը լավ ըմբռնելու համար աշակերտներին բաժանում է զույգերի և տալիս առաջադրանքներ՝ Աշխատանքային տետրում կատարելու համար.

ա) Տրված աքաղաղի նկարի վրա գտնել կատարը, բիտերը, կտուցը և գծերով կապել համապատասխան բառերի հետ (ուսուցչի լրացուցիչ հարցերը՝ որտե՞ղ է աքաղաղի կատարը, բի՞տը, կտո՞ւցը):

բ) Գունավորել աքաղաղի նկարը (պետք է ընդգծվի աքաղաղի փետուրների գույնզգույն լինելը):

գ) Մտածել, իրար հետ քննարկել և պատասխանել հարցերին.

– Ո՞ր հավն է կոչվում թուխս: (որը ճտեր ունի)

– Ո՞ր հավն է կոչվում վառեկ: (դեռ չմեծացած հավը, հավը՝ մինչև ձու ածելը)

3. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչը կրկին օգտվում է դասագրքում տրված ընտանի թռչունների նկարներից, երեխաներին խնդրում է ուշադիր դիտել և իրենց կարծիքն արտահայտել հետևյալ հարցերի շուրջ.

– Ո՞ր ընտանի թռչունները կարող են ջրում լողալ:

– Ինչպե՞ս են այս թռչուններին ոտքերն օգնում լողալ:

4. ԽՄԲԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ (9-10 րոպե)

Ուսուցիչը պատրաստ ունի 4 լուսանկար կամ աքաղաղի, վառեկի, սագի և հնդուհավի մեկ նկար, որոնք ամրացնում է պատին կամ գրատախտակին (եթե նկարներ չի կարողանա գտնել, այդ դեպքում ցուցապաստառի վրա առանձին պետք է գրի այս 4 բառը և փակցնի պատին):

Այնուհետև ուսուցիչը դասարանը բաժանում է փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբին բաժանում չորս փոքրիկ կպչուն թուղթ (այսպես կոչված ստիկերներ)՝ աքաղաղականչ, կչկչոց, կապկապոց, կռնչոց մակագրություններով (մեկ թերթի վրա՝ մեկ բառ):

Աշակերտները խմբերում պետք է դատողություն անեն և որոշեն, թե որ բառը, որ թռչնի արձակած ձայներն (հնչողությունն) է արտացոլում և բառերը (թղթերը) փակցնեն ցուցապաստառին, համապատասխան նկարների վրա:

Վերջում պետք է հանրագումարվի ակտիվությունը և վերջնականապես համաձայնության գան՝ աքաղաղ – աքաղաղականչ, վառեկ – կչկչոց , սագ – կապկապոց, հնդուհավ – կռնչոց:

Ուսուցիչը պետք է հետաքրքրվի՝ պատասխանների ինչ տարբերակներ ունեին խմբերը և ինչու արեցին այսպիսի ընտրություն:

5. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (9-10 ՐՈՊԵ)

Լրացուցիչ (կամ այլընտրանքային) ակտիվություն.

Ցանկալի է, որ ուսուցիչը հայթայթի ընտանի թռչունների ձայների ձայնագրություններ: Լսել է տալիս երեխաներին այս ձայնագրությունները, և նրանք պետք է որոշեն, թե որ թռչունն է արձակում այս կամ այն ձայնը:

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=z4pavVM-fM0

ԴԱՍ 45

Թեմա.	Կենդանական աշխարհ
Դասի վերնագիրը.	Մի մասը քայլում է, մյուսները՝ սողում
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան նկարագրել կենդանի մարմինը՝ ըստ էական հատկանիշների: Հայտնաբերել և ասել սողունների և կաթնասունների տարբերությունը: Տարբեր կենդանիների համեմատել՝ ըստ մարմնի մասերի: Նպաստել աշակերտների վերլուծաբանական մտածողության կարողության զարգացմանը:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Նկարագրում է և իրար հետ համեմատում տարբեր կենդանիների՝ ըստ մարմնի մասերի (օրինակ՝ գլուխ, վերջույթներ, պոչ, ականջներ, կտուց, թևեր, կնճիթ): Խմբավորում է կենդանի մարմիններն՝ ըստ բույսերի և կենդանիների, հիմնավորում է սեփական որոշումը: Հարց է ձևակերպում՝ տարբեր միջավայրերում ապրող բույսեր/կենդանիներ համեմատելու համար: Պատասխաններ է որոնում. դիտարկում է և համեմատում դասասենյակում, դպրոցի բակում, տեղի միջավայրում աճող տարբեր բույսերը (օրինակ՝ ըստ տերևների ձևի կամ չափի, ըստ ցողունների ձևի, հաստության կամ երկարության, ըստ ծաղիկների գույնի կամ չափի) կամ/և կենդանիներին (օրինակ՝ որդ, խխունջ, թիթեռ, մայիսյան բզեզ): Դիտարկման արդյունքները փոխանցում է տարբեր ձևով (բանավոր խոսքով, նկարով, կոլաժով, լուսանկարների միջոցով):
Անհրաժեշտ նյութ.	մկրատ, գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, թերթեր՝ կենդանիների անուններով:

Դասի ընթացքը.

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (2-3 րոպե).

Դասի սկզբում ուսուցիչն աշակերտների հետ անց է կացնում ներածական զրույց՝ կիրառելով հետևյալ հարցերը.

– Մենք գիտենք ընտանի կենդանիների մասին, բացի ընտանիից էլի ի՞նչ կենդանիներ գոյություն ունեն:

– Ըստ ձեզ՝ ինչո՞ւ են դրանք կոչվում վայրի կենդանիներ:

– Ի՞նչ վայրի կենդանի գիտեք:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (3-5 րոպե)

Ուսուցիչը ցույց է տալիս դասագրքի համապատասխան էջը և աշակերտներին խնդրում անվանել նկարներում պատկերված վայրի կենդանիներին, այնուհետև սողուններին, գտնել դրանց միջև նմանություններն ու տարբերությունները:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (12-16 րոպե)

Աշխատանքային տետրի համապատասխան էջի ստորին մասում, երկու շարքով մի քանի կենդանու ուրվանկար է արված: Դրանք են վագրը, եղնիկը, ոզնին, կենգուրուն, մողեսը, կոկորդիլոսը, օձը, կրիան:

Աշակերտները պետք է ինքուրույն աշխատեն:

Նրանց տրվում են հետևյալ առաջադրանքները.

ա) գունավորել հետևյալ ուրվանկարները,

բ) բոլոր նկարները կտրել շրջանակի գծով,

գ) անվանել բոլոր տրված կենդանիներին (դա կարող է տեղի ունենալ նաև ընդհանուր հարցերով),

դ) թերթերը ետին կողմից համարակալել այսպես.

մողես – 1

ոզնի – 2

կոկորդիլոս – 3

վագր – 4

կրիա – 5

օձ – 6

եղնիկ – 7

կենգուրու – 8

4. ԽԱՂ՝ ՏՐՎԱԾ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ (6-8 րոպե)

Աշակերտները շարունակում են ինքնուրույն աշխատել (խաղալ):

Այս լոտոյի նման խաղի պայմանն այսպիսին է. Աշխատանքային տետրի տվյալ էջի վերին մասում ներկայացված է աղյուսակ՝ երկու շարքով (յուրաքանչյուրում 4 վանդակ): Վանդակներում գրված են կենդանիների անուններ: Ուսուցիչը խառը և հերթով կարդում է այս կենդանիների անունները: Աշակերտներն իրենց ձեռքին եղած քարտերից պետք է ճանաչեն և անվանված կենդանին դնեն աղյուսակի համապատասխան վանդակի վրա: Երբ բոլոր վանդակները կլրացվեն, և խաղը կավարտվի, ուսուցիչը երեխաներին կսովորեցնի, թե ինչպես ստուգեն իրենք իրենց: Աշակերտները հենց տեղում պետք է շրջեն քարտերը և ուշադրություն դարձնեն թվերի հաջորդականությանը: Եթե թվերի հաջորդականությունը ճիշտ է (1, 2, 3, 4, 5, 6, 7, 8), առաջադրանքը ճիշտ է կատարված:

Այս խաղը մեկ հաղթող չի ունենա, ուսուցիչը կարող է դրվատել բոլոր աշակերտներին:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԶՈՒՅԳԵՐՈՎ (4-5 րոպե)

Ուսուցիչը երեխաներին առաջադրանքներ է տալիս՝ զույգերով աշխատելու համար.

ա) Տրված քարտերը նորից հավաքել, ուշադիր դիտել կենդանիներին և դրանք խմբավորել. կենդանիներ, որոնք քայլում են (մի խումբը), և կենդանիներ, որոնք սողում են (մյուս խումբը):

բ) Ուսուցիչը հարցնում է՝ իմացե՞լ են արդյոք, թե ինչ ընդհանուր անուն ունեն սողացող

կենդանիները (օձ, կոկորդիլոս, մողես, կրիա) (սողուններ): Ուսուցիչն այս բառը գրում է գրատախտակի վրա և կրկնել է տալիս:

6. ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի (ցանկալի է, որ լինի 4 կամ 5 խումբ): Խմբերից մեկական ներկայացուցչի դուրս է բերում սենյակի ազատ տարածություն, որտեղ հատակի վրա շրջանաձև դասավորել է թերթերը: Թերթերի վրա գրված են վայրի կենդանիների անուններ (առյուծ, արջ, եղնիկ, նապաստակ, օձ): Երաժշտության կամ երգի ուղեկցությամբ աշակերտները սկսում են քայլել թերթերի շրջանով: Մեղեդին դադարելուն պես, նրանք ևս պետք է կանգ առնեն: Աշակերտները մտքում կարդում են մակագրությունները (կենդանու անունը) այն թերթի վրա, որ բաժին է ընկել նրանց և վերադառնում են իրենց խմբերը: Խումբը պետք է մտածի այս կենդանու մասին, որպեսզի հետո համառոտ բնութագրի և փորձի նաև ասել այն, թե ինչպես է կոչվում այս կենդանու ձագը (առյուծ – կորյուն, արջ – քոթոթ, եղնիկ – եղնաձագ, նապաստակ – նապաստակիկ, օձ – օձի ձագ):

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

ԴԱՍ 46

Թեմա.	Կենդանական աշխարհ
Դասի վերնագիրը.	Ջրում ապրողները
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան ճանաչել ջրում ապրող որոշ կենդանիների և անվանել դրանց: Զարգացնել դիտարկման կարողությունը: Պարզ հետազոտության հիման վրա եզրակացություններ անել (որոշել եղջերաթեփի, լողակների նշանակությունը): Հատվածներից ստեղծել կենդանու ամբողջական մոդել: Դատողություն անել ջրի բնակիչների տեղաշարժման միջոցների մասին:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Նկարագրում է և իրար հետ համեմատում տարբեր կենդանիների՝ ըստ մարմնի մասերի (օրինակ՝ գլուխ, վերջույթներ, պոչ, ականջներ, կտուց, թևեր, կնճիթ): Հատվածներից հավաքում է բույսերի, կենդանիների և մարդկանց մարմնի ամբողջական մոդել:

Հարց է ձևակերպում՝ տարբեր միջավայրերում ապրող բույսեր/կենդանիներ համեմատելու համար:

Պատասխաններ է որոնում. դիտարկում է և համեմատում դասասենյակում, դպրոցի բակում, տեղի միջավայրում աճող տարբեր բույսերը (օրինակ՝ ըստ տերևների ձևի կամ չափի, ըստ ցողունների ձևի, հաստության կամ երկարության, ըստ ծաղիկների գույնի կամ չափի) կամ/և կենդանիներին (օրինակ՝ որդ, խխունջ, թիթեռ, մայիսյան բզեզ): Դիտարկման արդյունքները փոխանցում է տարբեր ձևով (բանավոր խոսքով, նկարով, կոլաժով, լուսանկարների միջոցով):

Անհրաժեշտ նյութ. մկրատ, գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, սոսինձ, գունավոր թերթեր հավելվածից, թերթեր:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (10-12 րոպե)

Ուսուցիչը երեխաներին ասում է, որ այս դասին կրկին կխոսեն կենդանիների մասին, միայն թե այս անգամ՝ ջրում բնակվող կենդանիների:

Դասագրքի համապատասխան էջում նկարված են ջրում լողացող ձկներ, մեդուզա, դելֆին և կետաձուկ, ջրի հատակին երևում են մոլյուսկներ՝ իրենց պայմանական նշաններով:

Առաջադրանքն այսպիսին է. աշխատանքը կատարվում է ինքնուրույն կամ զույգերով: Ուսուցիչը կարդում է կարճ տեքստեր, երեխաները լսում և որոշում են բնութագրված կենդանուն և անվանում նրա կարգային համարը: Ուսուցչի տեղեկությունները.

I. «Այս ջրային կենդանու երկարավուն մարմինը թեփուկներով է պատած, աչքերը միշտ բաց են, քանի որ կոպեր չունի: Նրա մանր ձվերից՝ ձկնկիթից, փոքրիկ ձագեր՝ մատղաշներ են դուրս գալիս: Նրանք անմիջապես սկսում են արագ և ճարպիկ լողալ»: (ձուկ)

II. «Այս մեծ կենդանին նման է ձկան, սակայն ձուկ չէ: Նա իր ձագերին կենդանի է ծնում և կաթով կերակրում: Նա մարդկանց համար անվտանգ և խելացի արարած է, ինչի պատճառով մարդիկ նրան հեշտությամբ վարժում են»: (դելֆին)

III. «Իսկ սա երկրագնդի ամենամեծ կենդանին է: Նա փղից շատ մեծ է... Նա ևս իր ձագերին կաթով է կերակրում: Նկարի վրա նրան հաճախ շատրվանով են պատկերում: Դրա պատճառն այն է, որ արտաշնչելիս այս հսկայական ջրային կենդանին օդի հետ դուրս է մղում նաև ջրի շիթ»: (կետաձուկ)

IV. «Այս փոքրիկ փափուկ կենդանիներն ապրում են խեցու մեջ: Խեցին նրանց պաշտպանում է թշնամուց: Պառկած են ջրի տակ, հատակին կամ ժայռի վրա և շատ դանդաղ են տեղափոխվում»: (խխունջ)

V. «Այս տարօրինակ կենդանին ոչ ոսկոր ունի, ոչ աչքեր, ոչ բերան... Դոնդողի պես փափուկ է և համարյա ամբողջությամբ ջրից է կազմված: Նրա թափանցիկ մարմինը բացված անձրևոցի է նման: Մարդիկ նրան հաճախ հանդիպում են ծովում, ափի մոտ»: (մեդուզա)

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (14-16 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և հանձնարարում է կատարել նախորդ էջին տրված առաջադրանքը (երեխաները պետք է օգնեն գրքի հերոսներին կատարել առաջադրանքը): Թերթի վերին մասում մեր գրքի հերոսները ձկներին պետք է թեփուկներ փակցնեն: Կամ՝ նկարած է ձկան ուրվանկար՝ առանց թեփուկների: Նույն էջի ստորին մասում տրված են գունավոր թեփուկներ: Աշակերտները պետք է կտրեն-հանեն այս գունավոր թեփուկները և պոչից սկսեն այդ թեփուկները կպցնել ձկան ուրվանկարի վրա:

Աշխատանքն ավարտելուց հետո, ուսուցիչը դիմում է երեխաներին.

– Ձեր ձեռքը քսեք ձկան գլխից մինչև պոչը և հակառակ ուղղությամբ: Ի՞նչ տարբերություն զգացիք:

– Ինչ եք կարծում, ձուկն ինչո՞ւ է ջրի մեջ ազատ սահում:

3. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (3-4 րոպե)

Ուսուցիչը քննարկում է անցկացնում՝ կիրառելով հետևյալ հարցերը.

– Ըստ ձեզ, ինչո՞վ են սնվում ձկները:
– Ինչո՞վ են սնվում դելֆինները:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՊԼԻԿԱՑԻԱՅԻ ՎՐԱ

Ուսուցիչը երեխաներին հանձնարարում է աշխատել զույգերով՝ ապլիկացիա ստեղծելու համար: Ուսուցիչը երեխաներին բաժանում է մաքուր թերթեր: Աշակերտները Աշխատանքային տետրի հավելվածի գունավոր թերթերով պետք է կկտրեն-հանեն տարբեր չափսի և ձևի եռանկյունիներ: Ուսուցիչը հարցնում է. «Ինչպե՞ս կարելի է երեք եռանկյունիներից ստանալ ձկան պատկեր»: Եթե աշակերտները չեն կռահի, ուսուցիչը ինքը կնկարի գրատախտակի վրա: Դրա նմանությամբ, երեխաներն աշխատում են իրենց մոտ եղած թերթերի վրա, փակցնում են եռանկյունիներ և ստեղծում ձկների պատկերներ: Աշխատանքն ավարտելուց հետո, ցանկալի է, աշխատանքները պատին փակցնել և դիտել:

5.ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

ԴԱՍ 47

Թեմա.	Կենդանական աշխարհ
Դասի վերնագիրը.	Թռչունների ձայներ
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան ճանաչել և անվանել որոշ վայրի թռչունների: Ձայնով տարբերել որոշ թռչունների: Դատողություն անել թռչունների տեղաշարժման միջոցների մասին:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. Ի.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.Ի.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Նկարագրում է և իրար հետ համեմատում տարբեր կենդանիների՝ ըստ մարմնի մասերի (օրինակ՝ գլուխ, վերջույթներ, պոչ, ականջներ, կտուց, թևեր, կնճիթ):
Անհրաժեշտ նյութ.	գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ:

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (10-12 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին հիշեցնում է, որ բացի ընտանի թռչուններից (որոնց արդեն ծանոթացել են), գոյություն ունեն նաև վայրի թռչուններ: Դրանցից մի քանիսի հետ ծանոթանալու նպատակով դասագրքի համապատասխան էջին տրված են վայրի թռչուններ (փայտփորիկ, հոպոպ, փասիան...), և գրված են դրանց անունները:

Ուսուցիչը հանձնարարում է երեխաներին աշխատել զույգերով: Զույգերը պետք է որոշեն թռչունները, կարդան համապատասխան մակագրությունը, անվանեն և հնարավորության սահմաններում նկարագրեն: Այնուհետև կարող են արտահայտել իրենց կարծիքն այն մասին, թե որ թռչունն են ավելի հավանում և ինչու:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (6-8 րոպե)

Աշխատանքային տետրի համապատասխան էջի վերին մասում տրված է երկու շրջանակ: Մեկի մեջ (գրված է «Ընտանի թռչուններ») նկարած է հավ, սագ, բադ և ծիծեռնակ, երկրորդում («Վայրի թռչուններ» մակագրությամբ) նկարած է բու, արծիվ, հոպոպ և հնդուհավ:

Աշակերտներն ինքնուրույն պետք է որոշեն, թե որ շրջանակում որ թռչունն է «ավելորդ» (առաջինում՝ ծիծեռնակը, երկրորդում՝ հնդուհավը), շրջագծեն և բացատրեն, թե ինչու են այդպես կարծում, նկարները գունավորեն:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐԱՏԱԽՏԱԿԻ ՎՐԱ (10-12 րոպե)

Ուսուցիչը գրատախտակի կամ մեծ չափսի թղթի վրա (որը փակցնում է պատին) մեկ սյունակով գրում է հետևյալ թռչունների անունները՝ աղավնի, ագռավ, ծիծեռնակ, ճնճղուկ, սոխակ: Դրա կողքին, երկրորդ սյունակով գրում է հետևյալ բառերը. դայլայլում է, ճռվողյում է, ճչյուն է հանում, կոկռում է, ղունղունում է:

Ուսուցիչը երեխաներին ասում է, որ թռչունները տարբեր տեսակի ձայներ են արձակում, մի քանիսը դայլայլում են, մի քանիսը ծլվլում, մի քանիսը ճչյուն հանում և այլն: Որոշ ձայներ շատ հաճելի են ունկնդրելու համար (դայլայլը, ծլվլոցը), որոշ թռչունների ձայներ տհաճ են լսվում:

«Ըստ ձեզ, թվարկված թռչուններից որո՞նք են դայլայլում», – ընդհանուր հարցով դասարանին է դիմում ուսուցիչը, և պատասխան ստանալուց հետո, ծիծեռնակը գծով կապում է «ճչյուն է հանում» բառի հետ: Նույն կերպ է վարվում նա բոլոր մնացած դեպքերում: Եթե աշակերտները չեն կարողանա որոշել, միայն այդ դեպքում ուսուցիչը կմիջամտի և կօգնի նրանց: Ի վերջո պետք է որոշեն, որ աղավնին ղունղունում է, ագռավը՝ կոկռում, սոխակը՝ դայլայլում և ճնճղուկը՝ ճռվողյում:

4. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ԼՈՒԾԵԼ (2-3 րոպե)

Աշակերտները կրկին մտում են նույն խմբերում: Ուսուցիչն աշակերտների համար թռչունների մասին հանելուկներ է կարդում (օրինակ՝ Մկրտիչ Կորյունի թռչունների մասին հանելուկները): Որ խումբն ավելի շատ հանելուկ կլուծի, հաղթող նա կլինի:

5. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ցանկալի է, որ այս դասի համար ուսուցիչը պատրաստ ունենա թռչունների ձայների ձայնագրություններ և երեխաներին ունկնդրել տա դրանք: Նրանք ձայնով պետք է որոշեն, թե թռչունը դայլայլում է, ճռվողյում է, ծլվլում է, կոկռում, կամ այլ ձայն է արձակում: Աշակերտները պետք է փորձեն ձայներով որոշել նաև թռչունների տարբերությունները:

ԴԱՍ 48

Թեմա.	Կենդանական աշխարհ
Դասի վերնագիրը.	Փոքրիկ վեցոտնանի կենդանիներ
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան անվանել մարդուն օգուտ բերող և վնաս հասցնող միջատները և պարզ բնութագրել դրանք: Դիտարկել ուսումնասիրման օբյեկտները պարզ սարքերի օգնությամբ: Պատկերազարդման վրա որոշել մարմինը և անվանել այն: Նպաստել աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Որոշում է և անվանում ծանոթ բույսերի հիմնական մասերը (օրինակ՝ ցողուն, տերև, արմատ, ծաղիկ, պտուղ): Հարց է ձևակերպում՝ տարբեր միջավայրերում ապրող բույսեր/կենդանիներ համեմատելու համար: Պատասխաններ է որոնում. դիտարկում է և համեմատում դասասենյակում, դպրոցի բակում, տեղի միջավայրում աճող տարբեր բույսերը (օրինակ՝ ըստ տերևների ձևի կամ չափի, ըստ ցողունների ձևի, հաստության կամ երկարության, ըստ ծաղիկների գույնի կամ չափի) կամ/և կենդանիներին (օրինակ՝ որդ, խխունջ, թիթեռ, մայիսյան բզեզ): Դիտարկման արդյունքները փոխանցում է տարբեր ձևով (բանավոր խոսքով, նկարով, կոլաժով, լուսանկարների միջոցով):
Անհրաժեշտ նյութ.	գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, լուցկու հատիկներ:

Դասի ընթացքը.

1.ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (7-8 րոպե)

Այս անգամ աշակերտներին պետք է ծանոթացնենք կենդանիների այն բազմազան խումբը, որին մարդիկ հանդիպում են համարյա ամեն օր: Դրանք միջատներն են:

Դասագրքում համապատասխան էջի վրա նկարած են միջատներ. ծղրիդ, բզեզ, ճանճ, խավարասեր, թիթեռ, մեղու, ճպուռ, մրջյուն, մոծակ: Աշակերտները պետք է աշխատեն զույգերով, որոշեն միջատները և անվանեն:

Վերջում ուսուցիչը խնդրում է աշակերտներին մեկ անգամ ևս ուշադիր դիտել նկարները և որոշել, թե քանի ոտք ունեն միջատները (բոլոր միջատները 6 ոտք ունեն: Հենց սա է նրանց բնորոշ նշաններից մեկը):

2.ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (7-8 րոպե)

Տրված է երկու շրջանակ: Մի շրջանակում, որի վրա գրված է «Ո՞րն է թռչուն», նկարված են թիթեռ, ճանճ, ծիծեռնակ և ճպուռ: Երկրորդ շրջանակում («Որը միջատ չէ» մակագրությամբ)՝ մեղու, բզեզ, որդ, մրջյուն: Այս անգամ աշակերտն ինքնուրույն է աշխատում, նա առաջին շրջանակում պետք է գտնի թռչունը (ծիծեռնակ) և շրջագծի: Երկրորդ շրջանակի մեջ պետք է որոշի, թե որը միջատ չէ (որդ), և շրջագծի: Այնուհետև կրկին ընդհանուր հարցերով պետք է ստուգվի առաջադրանքը, և դատողություն անեն: Վերջում աշակերտները գունավորում են նկարները:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (2-3 րոպե)

Եթե ժամանակ մնա (հակառակ դեպքում կհանձնարարվի՝ որպես տնային առաջադրանք), ուսուցիչը կմատնանշի նույն էջի ստորին մասում տրված ուրվանկարը: Կխնդրի նրանց միացնել

կետերը և ստացած նկարը գունավորել: Ուսուցիչը զրույց կվարի այն միջատի մասին, որն այս նկարի վրա է տրված: Ինչպիսի՞ն է այն, ի՞նչ գույն ունի և այլն: Վերջում ուսուցիչը խնդրում է աշակերտներին ներկայացնել, թե, իրենց կարծիքով, ի՞նչ են հարցնում մեր ընկերները մայիսյան բզեզին: Հավանաբար. «Բզե՛զ, բզե՛զ, մայիսյան, վաղն ինչպիսի՞ օր կլինի»:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ) (7-9 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և հանձնարարում գրքում տրված երկու նկարների հիման վրա կազմել փոքրիկ պատմվածք:

Առաջին նկարի վրա նկարված է մեղվագործ, որը դիմացանցով է աշխատում մեղվանոցների հետ: Նրանց են մոտենում երեխաները: Երեխաները հետ են վազում, և մեղուների պարսը հետևում է նրանց:

Ուսուցիչը սկսում է խոսել այս նույն թեմայի մասին: Դրա համար նա կիրառում է հետևյալ հարցերը.

– Ի՞նչ օգուտ են բերում մեղուները մարդկանց:

– Ի՞նչ է մեղվանոցը: Խորի՞սխը: Մեղրամո՞մը...

– Ի՞նչ են պատրաստում մեղրամոմից: (մոմ)

– Մեղուն ինչո՞ւ է սիրում բուրումֆալից ծաղիկներ:

– Մեղվին ինչի՞ համար է անհրաժեշտ թունավոր խայթիչը:

Ուսուցիչն աշակերտների հետ անում է եզրակացություն, որ գոյություն ունեն օգտակար և վնասակար միջատներ: Նա մոտավորապես հետևյալ հարցերն է տալիս.

– «Ո՞ր միջատներն են ապրում մարդկանց տներում»:

– «Ո՞ր միջատն է բույն դնում մազերի մեջ»:

– «Ո՞ր միջատն է կծում մարդկանց և նրանց արյունը ծծում»:

– «Ո՞ր միջատն է ուտում հագուստը և փչացնում այն»:

– «Ո՞ր միջատներն են տարածում հիվանդություններ»:

5.ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Այս անգամ աշակերտներն աշխատում են ինքնուրույն: Տրված էջում իրար վրա են դրված թիթեռի, մորեխի, ճպուռի և բզեզի ուրվանկարներ: Նույն տեղում գրված է 6 բառ (մեղու, բզեզ, ծղրիդ, մրջյուն, թիթեռ, ճանճ, ճպուռ): Աշակերտը պետք է որոշի, թե նկարի վրա որ միջատներն են տրված, և ընդգծի համապատասխան բառերը:

6. ԴԻՏԱՐԿՈՒՄ

Միջատների ձայների որոշում

Ուսուցիչը պարապում է աշակերտներին միջատների ձայները որոշելու մեջ:

Լավ եղանակի պայմաններում ուսուցիչը կարող է աշակերտներին դուրս տանել դպրոցի բակ և բույսերի կամ հողի վրա դիտարկել տալ միջատների պահվածքը: Ամենից հարմարը մրջյունների դիտարկումն է: Ցանկալի է փոքրիկ միջատները դիտարկել մանրադիտակով:

Այս ժամանակ ուսուցիչը պետք է առաջադրի հետևյալ հարցերը.

– Ի՞նչ միջատ եք տեսնում:

– Ի՞նչը գրավեց ձեր ուշադրությունը:

– Ըստ ձեզ, ինչո՞ւ են այսպես վարվում: (Ո՞ր կողմ են շարժվում, ի՞նչ են անում ...)

– Ըստ ձեզ, այս միջատներն առանձնացած են ապրում, թե՞ բազմաքանակ ընտանիքներով:

7. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

8. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ուսուցիչը խնդրում է երեխաներին հաջորդ դասի համար տանից բերել խաղալիք կենդանիներ:

ԴԱՍ 49

Թեմա. Կենդանական աշխարհ

Դասի վերնագիրը. Կենդանաբանական այգում

Դասի նպատակը. Աշակերտները գիտակցեն, որ կենդանաբանական այգու վանդակներում հիմնականում վայրի կենդանիների են պահում և ոչ թե՝ ընտանի:

Աշակերտները կարողանան թվել «կենդանաբանական այգու» կենդանիների ու նրանց պարզ բնութագրել:

Կիրառել հաղորդակցման տարբեր ձևեր:

Նկարագրել, խմբավորել և համեմատել տարբեր կենդանիների:

Նպաստել աշակերտների տարբեր ստեղծագործական ունակությունների («բազմակողմանի բանականության») զարգացմանը:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ. Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բնագիտ.I.3.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել կենդանի օրգանիզմներն՝ ըստ էական հատկանիշների:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը. Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):

Նկարագրում է և իրար հետ համեմատում տարբեր կենդանիների՝ ըստ մարմնի մասերի (օրինակ՝ գլուխ, վերջույթներ, պոչ, ականջներ, կտուց, թևեր, կնճիթ):

Խմբավորում է կենդանի մարմիններն՝ ըստ բույսերի և կենդանիների, հիմնավորում է սեփական որոշումը:

Հարց է ձևակերպում տարբեր միջավայրերում ապրող բույսեր/կենդանիներ համեմատելու համար:

Պատասխաններ է որոնում. դիտարկում է և համեմատում դասասենյակում, դպրոցի բակում, տեղի միջավայրում աճող տարբեր բույսերը (օրինակ՝ ըստ տերևների ձևի կամ չափի, ըստ ցողունների ձևի, հաստության կամ երկարության, ըստ ծաղիկների գույնի կամ չափի) կամ/և կենդանիներին (օրինակ՝ որդ, խխունջ, թիթեռ, մայիսյան բզեզ): Դիտարկման արդյունքները փոխանցում է տարբեր ձևով (բանավոր խոսքով, նկարով, կոլաժով, լուսանկարների միջոցով):

Անհրաժեշտ նյութ. խաղալիք կենդանիներ, գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (15-18 րոպե)

Այս դասի համար երեխաները տանից պետք է բերած լինեն խաղալիք կենդանիներ: Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի ու այդ խմբերին գրեթե հավասար քանակությամբ բաժանում խաղալիքները: Աշակերտներին տրվում է մի քանի հանձնարարություն.

I. Տրված կենդանիներից առանձնացնել թռչուններին:

II. Կենդանիներին խմբավորել ընտանի և վայրի կենդանիների:

III. Ուսուցիչը պատի վրա աշակերտների յուրաքանչյուր խմբի պետք է տեղ հատկացնի: Այդ հատվածում երեխաները պետք է աթոռներ շարեն ու աթոռների վրա դնեն իրենց «կենդանիներին»: Յուրաքանչյուր խմբի աշխատանքի արդյունքում կստեղծվի մի մեծ «գազանանոց» : Աշակերտները պետք է հասկանան ու ընտանի կենդանիներին (օրինակ՝ շուն, կատու, կով, ոչխար, հավ...եթե խառնվել են նրանց խաղալիքներին) կենդանաբանական այգում չտեղավորեն:

Այնուհետև սկսվում է «կենդանաբանական այգու» դիտում: Յուրաքանչյուր խմբի աշակերտներ իրենց հատվածում հյուրընկալում են այլ խմբերի աշակերտների, ներկայացնում են կենդանիներին, ասում են նրանց անունները և հնարավորության սահմաններում բնութագրում են (օրինակ՝ սա փիղ է, փիղը շատ մեծ կենդանի է: Նա քթի փոխարեն երկար կնճիթ ունի: Փիղը կնճիթով վերցնում է խոտն ու դնում բերանը: Փղին մոտենալը վտանգավոր է...):

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (8-10 րոպե)

Տետրի համապատասխան էջում, վերևի հատվածում նկարված են ձկներ ու թռչուններ: Աշակերտներն, առանց ձեռքը թերթից կտրելու, գիծ քաշելով պետք է միմյանցից առանձնացնեն ձկներն ու թռչունները:

Ուսուցչի հարցերը.

– Ի՞նչ կենդանիներ կան այս նկարում:

– Ձկները որտե՞ղ են բնակվում:

– Ինչպե՞ս է կոչվում այն անոթը, որտեղ մարդիկ տանը տեղակայում են և խնամում ձկներին (ակվարիում):

– Ձեզանից ո՞վ ունի (ո՞վ է տեսել) ակվարիում:

– Ինչպիսի՞ն է ակվարիումը:

Դասագրքի տվյալ էջի ներքևի մասում նկարված են ընձուղտ, աղվես ու փիղ: Նույն տեղում էլ երեք տարբեր ձևի վանդակ է նկարված: Աշակերտները պետք է հասկանան, թե որ վանդակը որ կենդանու համար է հատկացված ու դրանք գծերով միացնեն իրար: Այնուհետև նկարը պետք է գունավորեն:

3. ԴԵՐԵՐՈՎ ԽԱՂ (2-3 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի ու առաջարկում է դերերով խաղ խաղալ: Յուրաքանչյուր խմբից մեկական աշակերտ (կամ մի քանիսը) մարմնավորում է գազանանոցի վանդակում եղած որևէ կենդանու: Մյուս աշակերտները պետք է կռահեն, թե որ կենդանին է նրանց առջև: Այնուհետև յուրաքանչյուր խմբից աշակերտները այդ «կենդանուն» տալիս են իրենց հետաքրքրող հարցեր, իսկ այդ «կենդանին» պատասխանում է:

4. ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

ԴԱՍ 50

Թեմա.	Տիեզերք
Դասի վերնագիրը.	Աստղադիտակ, մանրադիտակ
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան դիտարկել երկնային մարմինները: Պարզ հարցեր տալ և ենթադրություններ արտահայտել: Պարզ սարքերի օգտագործմամբ դիտարկել ուսումնասիրման օբյեկտը: Ուսումնասիրվելիք երևույթի մասին պարզ հարցեր տալ: Պարզ սարքերի միջոցով դիտարկել: Մասնակցել գործնական ակտիվությունների:

	Գիտակցել մարդու զգայության օրգանների (աչք) նշանակությունը: Արդյունքները փոխանցել բանավոր կամ իր համար ցանկալի այլ ձևով:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս: Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Անվանում է մարդու զգայության օրգանները և դրանց գործառույթները (օր.՝ աչք – «տեսնում եմ», ականջ – «լսում եմ», լեզու – «զգում եմ համը», քիթ – «զգում եմ հոտը», մաշկ – «զգում եմ ջերմությունը և ցուրտը, հարթ կամ անհարթ մակերևույթը»): Դատողություն է անում զգայությունների և զգայությունների օրգանների դերի մասին մարդու (օր.՝ սննդամթերքի պիտանելիության ժամկետը որոշել, փողոցում անվտանգ տեղաշարժվել) և կենդանիների համար (օր.՝ ժամանակին հայտնաբերել վտանգը, սնունդ հայթայթել, ապաստան գտնել): Կիրառում է տարբեր պարզ սարքավորումներ (խոշորացույց, ֆոնենդոսկոպ) զգայությունների հզորացման նպատակով և նկարագրում է մարմնի հատկությունները, որոնք այդ սարքավորման օգտագործման ժամանակ են դարձել ակներև:
Անհրաժեշտ նյութ.	խոշորացույց, տերև՝ բոլոր աշակերտների համար, 1 մանրադիտակ, տեսանյութ:

Դասի ընթացքը.

1. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱ (2-3 րոպե)

Ուսուցիչը դիմում է դասարանին.

– Հավանաբար ձեզ հետաքրքրում է, թե ինչ է տեղի ունենում աշխարհում, որը հսկայական է, և մենք՝ Երկրի վրա ապրողներս, լոկ նրա մի փոքրիկ մասն ենք: Մարդկանց միշտ հետաքրքել է աշխարհի ուսումնասիրումը: Դրա համար դարեր շարունակ սարքեր էին հայտնագործում, ստեղծվեց հատուկ գիտություն, որը աստղագիտություն է կոչվում և այլն: Ուշադիր դիտիր քո գրքում տրված նկարները: Այն ամենը, ինչ տեսնում ես, մարդն է հայտնագործել, ստեղծել: Ըստ քեզ, ինչո՞ւ, ինչո՞վ է մեզ օգնում դրանցից յուրաքանչյուրը:

2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԶՈՒՅԳԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ (10-20 րոպե)

Ուսուցիչը բերել է խոշորացնող ապակի՝ խոշորացույց: Յուրաքանչյուր աշակերտի բաժանում է հետազոտման նյութ, որն այս դեպքում կարող է լինել տերև:

ա) Աշակերտները 1 րոպեի ընթացքում պետք է դիտարկեն տերևի մակերևույթը: Նկարագրեն՝ ինչ են տեսնում:

բ) Այնուհետև յուրաքանչյուր զույգի բաժանում է խոշորացնող ապակի՝ խոշորացույց, որի օգնությամբ նրանք մեկ անգամ ևս ուշադիր պետք է դիտեն տերևները: Նրանք կհայտնաբերեն, որ ի տարբերություն անզեն աչքի, խոշորացույցի միջոցով նրանք կարող էին տեսնել նույնիսկ տերևի մանրագույն գծերը:

գ) Ուսուցիչն աշակերտներին ցույց է տալիս մանրադիտակը և բացատրում, որ մարդը հորինել է սարք, որի միջոցով հնարավոր դարձավ տեսնել նույնիսկ մանրագույն մասնիկներ: Ուսուցիչը ցանկություն ունեցողներին հնարավորություն է տալիս նայել մանրադիտակով: Հնարավոր է հետազոտման առարկան կրկին տերևը լինի: Աշակերտները կկարողանան համեմատել խոշորացույցի և մանրադիտակի հնարավորությունները, անել եզրակացություն:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-7 րոպե)

Ուսուցիչ.

– Ուշադիր դիտե՞լ եք արդյոք գիշերային երկինքը: Գիշերը ի՞նչ եք տեսնում երկնքում:

Բացի այն աստղերից, որոնք մենք տեսնում են անզեն աչքով, երկնքում բազմաթիվ այլ աստղեր կան, որոնք չենք կարող տեսնել: Դրանք տեսնելու հարցում մեզ կօգնի աստղադիտակը:

4. ԱՍՏՂԱԴԻՏԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՆՊԱՏԱԿԸ (3-5 րոպե)

– Մտապահե՛ք, աստղադիտակը սարք է, որը կիրառում են երկնային մարմինների դիտարկման համար:

Աստղադիտակը նման է մանրադիտակին, երկուսն էլ մարդուն օգնում են աչքի համար անտեսանելի մարմինները տեսնել:

Դուք մանրադիտակի միջոցով տեսաք տերևի մանրագույն մասնիկները, որոնք անզեն աչքով ոչ էլ կարող էիք նկատել:

Աստղադիտակի հայտնագործմամբ մարդը կատարեց իր վաղուցվա երազանքը, կարողացավ մոտեցնել մեզանից շատ հեռու գտնվող երկնային մարմինները և դրանք դիտարկել:

Այս թեման հաջորդ դասին ավելի մանրամասնորեն կքննարկենք:

5. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչը համառոտ կամփոփի դասի ժամանակ անցած թեման և կխնդրի աշակերտներին հաջորդ դասի համար քնելուց առաջ դիտել երկինքը, ուշադիր դիտարկել աստղերը, լուսինը և մտապահել, լավ կլինի, որ նկարեն գիշերային երկինքը:

ԴԱՍ 51

Թեմա.	Տիեզերք
Դասի վերնագիրը.	Երկնային մարմիններ
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան դիտարկել երկնային մարմինները: Պարզ հարցեր տալ և ենթադրություններ արտահայտել: Պարզ սարքավորումների կիրառմամբ դիտարկել ուսումնասիրման օբյեկտը: Ուսումնասիրվելիք երևույթի մասին պարզ հարցեր տալ:
Դասի ընթացքը.	Աշակերտները կարողանան մասնակցել գործնական ակտիվությունների: Պարզ սարքավորումների կիրառմամբ զարգացնել դիտարկման կարողությունը: Ճանաչել և նկարագրել երկնային մարմինները: Փոխանցել/հիմնավորել անձնական կարծիքները/դիտարկման արդյունքները:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.4.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել մարմիններն՝ ըստ բաղադրիչ նյութերի հատկանիշների: Բնագիտ.I.5.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և կողմնորոշվի նրանում:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս: Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Նկարագրում է իր շուրջն առկա մարմինները և խոսում դրանց բաղադրիչ նյութերի մասին (օրինակ՝ մկրատ – երկաթ, տետր – թուղթ, գրենական պարագա ռետին – ռետին): Խմբավորում է միանման նյութերից պատրաստված մարմինները: Կիրառում է համապատասխան տարածական հարաբերություն արտահայտող տերմիններ(օրինակ՝ հեռու, մոտ, ինձանից աջ, վերև, ներքև) և որոշում դպրոցի տարածքում առկա օբյեկտների դիրքն իր նկատմամբ: Դիտարկման հիման վրա ստեղծում է դպրոցի նկար, խոսում այն մանրամասների մասին, որոնք իր առանձնահատուկ ուշադրությունն են հարուցել:
Անհրաժեշտ նյութ.	պարան, տեսանյութ տիեզերքի մասին (Արեգակի և Երկրի մասին), գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ:

Դասի ընթացքը.

1. ԶՐՈՒՅՑ (10-15 րոպե)

Ուսուցիչ.

Հավանաբար բոլորդ տեսել եք երկինքը գիշերով: Երկինքը հատկապես այն ժամանակ է հետաքրքիր, երբ պարզ է:

– Ի՞նչ եք տեսնում երկնքում:

Դուք պատկերացրեք, բացի այն աստղերից, որոնք մենք տեսնում ենք, կան նաև բազմաթիվ այլ աստղեր, որոնք մեր աչքի համար անտեսանելի են: Դրանք տեսնելու հարցում մեզ օգնում է սարքը, որը կոչվում է աստղադիտակ:

Վրաստանում ամենամեծ աստղադիտակը Աբասթումանիի աստղադիտարանում է:

Աստղադիտարանում աստղադիտակի օգնությամբ դիտարկում են արևի, լուսնի և մոլորակների շարժումը և երկնակամարում դրանց տեղափոխությունը: Աստղադիտարաններն առավելապես լեռներում են կառուցում, որտեղ օդն ավելի մաքուր է, թափանցիկ, և տեսանելիությունն էլ ավելի լավ է: Այսօր աստղադիտարաններ կան նաև տիեզերանավերի վրա:

Մտապահեք, աստղադիտակը սարք է, որը կիրառում են երկնային մարմինների դիտարկման համար:

Աշխարհում միլիարդավոր աստղեր կան: Աստղերը տարբերվում են մոլորակներից: Աստղը բաղկացած է շիկացած գազերից, որոնք չափից ավելի շատ տաքացած օդի, գոլորշու են նման: Ճիշտ այս մեծ ջերմության շնորհիվ աստղերը լուսավորում են, ավելի ճիշտ՝ առկայծում են և ջերմություն ճառագում: Սակայն, այս ջերմությունը մեզ չի հասնում: Հապա գուշակեք, ինչո՞ւ (հեռու է):

Աստղը, կենդանի օրգանիզմի նման, առաջանում է (ծնվում է), ապրում և մեռնում:

Իսկ մոլորակները նրանով են տարբերվում աստղերից, որ դրանք չափսերով անհամեմատ փոքր են և ոչ այնքան տաք, ինչպես աստղը: Նրանք լույս էլ չեն ճառագում:

Բացի Երկրից, Արեգակի շուրջ այլ մոլորակներ էլ են շարժվում:

Որոշ մոլորակներ շրջապատված են օղակով (4 մոլորակ): Որքան ավելի հեռու է մոլորակը, այնքան ավելի պակաս ջերմություն է ստանում Արեգակից, այնքան ավելի սառն է:

Արեգակը աստղ է, որն ամենից մոտ է գտնվում մեզ: Արեգակը ևս, այլ աստղերի նման, շիկացած է և այդ պատճառով էլ լուսավորում է: Արեգակը միակ աստղն է, որը տեսնում ենք ցերեկը: Ավելին, Երկիրը հենց նրանից է ստանում ջերմություն և լույս, ինչը նրա վրա կյանքի գոյության պարտադիր պայմանն է: Արեգակի լույսը մեզ հասնում է մոտավորապես 8 րոպեում:

Մարդիկ հնագույն ժամանակներից դիտարկում էին երկնային մարմինները: Այսօր, տեխնիկայի զարգացման հետ մեկտեղ, մոլորակները և աստղերը Երկրից դիտարկում են աստղադիտակով: Բացի այդ, տիեզերք են ուղարկում տիեզերանավեր, որտեղից կարելի է դրանք մոտ հեռավորությունից լուսանկարել, դիտարկել, հետազոտել և այլն:

Տիեզերքից Երկիրը երկնագույն է երևում, քանի որ նրա մակերևույթի մեծ մասը ջրով է պատված:

Երկիրը մոլորակ է, որը ճանապարհորդում է Արեգակի շուրջ:

Տեղեկություններն ավելի լավ ըմբռնելու և հասկանալու հարցում աշակերտներին կօգնի տեսանյութը մոլորակների մասին, որն ուսուցիչը նախապես պետք է պատրաստ ունենա:

Աշակերտները դասագրքում կարող են տեսնել մոլորակների դասավորությունը, տեսնել, թե ինչպիսին է աստղադիտակը և այլն:

2. ԹԵՄԱՏԻԿ ԽԱՂ. «ԵՐԿՐԻ ՊՏՏՎԵԼԸ» (4-5 րոպե)

Ցանկալի է, որ ուսուցիչն այս դասի համար պատրաստած ունենա պարան: Ակտիվության սկզբում ուսուցչին կօգնեն 2 կամավորներ: Պայմանականորեն մեկը կլինի Արեգակը, մյուսը՝ Երկիրը: «Արեգակը» կբռնի պարանի մի ծայրը, «Երկիրը»՝ մյուսը: Ուսուցչի նշանով սկսում է շարժվել «Երկիրը», որը պտտվում է Արեգակի շուրջ: Ուսուցիչն ուշադրությունը կենտրոնացնում է նրա վրա, որ ճանապարհը, որն անցնում է Երկիրը Արեգակի շուրջ, անփոփոխ է: Հնարավոր է, ուսուցիչը հիշատակի նաև «ուղեծիր»բառը, որի մտապահումն աշակերտների համար պարտադիր չէ, սակայն տերմինը նրանց համար մեկ այլ ժամանակ այլևս օտար չի լինի: Ուսուցիչը զուգահեռաբար պետք է խոսի այն ժամանակվա մասին, որ Երկիրը ծախսում է Արեգակի շուրջը մեկ շրջան անելու համար: Պարբերաբար փոխվում են նաև զույգերը:

3. ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ (3-5 րոպե)

– Ինչ ես կարծում, Արեգակին մոտ գտնվող մոլորակի վրա կլինի ավել ջերմություն, թե՞ հեռվում գտնվողի:

– Ըստ քեզ, ո՞ր մոլորակի վրա է հնարավոր ապրել, որտեղ որ շատ ցուրտ է, շատ շոգ է, թե՞ չափավոր ջերմաստիճան է:

– Ինչպե՞ս է կոչվում այն անձը, ով ճանապարհորդում է տիեզերանավով:

– Ինչ եք կարծում, հնարավո՞ր է արդյոք այլ մոլորակի վրա կյանք գոյություն ունենա:

– Բացի ջերմությունից, ուրիշ ի՞նչ է անհրաժեշտ կյանքի համար:

Թվարկեք ամեն ինչ, ինչ անհրաժեշտ է կյանքի համար (ջերմություն, ջուր, օդ): Վերջում աշակերտները պետք է անեն եզրակացություն, որ այս ամենը կա Երկրի վրա:

Ուշադիր դիտիր քո գրքում տրված նկարը և պատասխանիր հարցերին:

– Գիտեք արդյոք, թե որքա՞ն ժամանակ է անհրաժեշտ Արեգակի շուրջ Երկրի պտտվելուն: (1 տարի)

– Ձմռանը պակաս տաք է, գուշակեք՝ ինչո՞ւ: Գարնա՞նը:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել դասագրքի համապատասխան էջը:
– Որ սարքավորումով ո՞ւմ և ո՞ւր կուղարկեիք ճանապարհորդելու:
Միացրո՛ւ գծերով:

5. ԳՈՒՆԱՎՈՐԻՐ ՏԵՏՐՈՒՄ (3-5 րոպե)

Ուսուցիչը ցույց է տալիս Աշխատանքային տետրում տրված քարտեզը: Նախորդ դասին լսած տեղեկությունների հիման վրա աշակերտներն իրենք պետք է կռահեն, թե ինչ գույն է իրենց անհրաժեշտ քարտեզն ավարտելու, Երկրի մակերևույթը վերականգնելու համար:

6. ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=XdGQMgF-BSA

ԴԱՍ 52

Թեմա.	Տիեզերք
Դասի վենագիրը.	Ճանապարհորդություն դեպի տիեզերք
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան դիտարկել ուսումնասիրման օբյեկտը: Նկարագրել նրա շուրջն առկա մարմինները: Կիրառել տարածական հարաբերություն արտահայտող բառեր: Պատկերազարդման վրա և իրականության մեջ որոշել մարմինները, նկարագրել և տեսակավորել դրանք: Դիտարկման հիման վրա պատասխանել հարցերի: Աշակերտները կարողանան ըստ մեծության տարբերակել Արեգակը, Երկիրը և Լուսինը:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.4.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել մարմիններն՝ ըստ բաղադրիչ նյութերի հատկանիշների: Բնագիտ.I.5.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և կողմնորոշվի նրանում:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս: Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):

	Նկարագրում է իր շուրջն առկա մարմինները և խոսում դրանց բաղադրիչ նյութերի մասին (օրինակ՝ մկրատ – երկաթ, տետր – թուղթ, գրենական պարագա ռետին – ռետին):
	Խմբավորում է միանման նյութերից պատրաստված մարմինները:
	Կիրառում է համապատասխան տարածական հարաբերություն արտահայտող տերմիններ(օրինակ՝ հեռու, մոտ, ինձանից աջ, վերև, ներքև) և որոշում դպրոցի տարածքում առկա օբյեկտների դիրքն իր նկատմամբ:
Անհրաժեշտ նյութ.	երեք տարբեր չափի գնդակ (մեծ, միջին և փոքր), տեսանյութ տիեզերքի մասին:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (6-7 րոպե)

Ուսուցիչը շարունակում է նախորդ դասին սկսած թեման, երեխաների հետ խոսում է տիեզերքի մասին, բացատրում է, թե ինչ է տիեզերքը, տիեզերանավը և ցույց է տալիս դասագրքում տրված պատկերազարդումները՝ ժամանակակից տիեզերանավ և մարդը Լուսնի վրա:

Դասագրքի հաջորդ էջում տրված են տիեզերքից լուսանկարված Արեգակի, Լուսնի և Երկրի լուսանկարներ:

Ուսուցչի մատնանշումով աշակերտներն ուշադրություն են դարձնում այդ լուսանկարներին և գծերով միացնում են համապատասխան բառերին: Այնուհետև պատասխանում են ուսուցչի հարցերին.

– Դո՞ւք էլ էիք այդպես պատկերացնում Արեգակը, Լուսինը, Երկիրը:

– Ինչպիսի՞ն է, փաստորեն, իրականում Երկրագունդը (աշակերտները «գունդ» բառը դեռ չգիտեն, այդ պատճառով ասում ենք, որ գնդակի նման է, գնդակի ձև ունի):

– Ինչպիսի՞ն են, փաստորեն, Արեգակը, Լուսինը:

– Ի՞նչ այնպիսի բան իմացաք, որ չգիտեիք:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-6 րոպե)

Աշխատանքային տետրի համապատասխան էջում նկարված է տիեզերանավ, որում նստած են մեր հերոսները: «Ի՞նչ կտեսնեն երեխաները տիեզերքում»: Աշակերտները պետք է նկարեն Արեգակը, Լուսինը, Երկրագունդն ու աստղեր:

Աշխատանքն ավարտելուց և նկարներն ուսումնասիրելուց հետո, ուսուցիչը մի քանի աշակերտի հարցնում է.

– Ինչպիսի՞ ձև ունի Երկրագունդը քո նկարում: Անկյուններով է, թե՞ ոչ:

– Արեգակն ինչպիսի՞ ձև ունի, իսկ Լուսի՞նը:

– Ըստ ձեզ, Երկրագունդն է ավելի մեծ, թե՞ Լուսինը: Արեգակը, թե՞ Երկիրը:

– Ի՞նչ ես կարծում, աստղերն իսկապե՞ս այդքան փոքր են:

3. ԶՐՈՒՅՑ (5-7 րոպե)

Հիմվելով երեխաների նկարների ու տիեզերական լուսանկարների վրա՝ ուսուցիչը ծավալում է զրույց՝ հետևյալ հարցերի կիրառմամբ.

– Ո՞րն է լույս ճառագայթում՝ Արևը, Երկիրը, թե՞ Լուսինը: Ինչո՞ւ եք այդպես կարծում:

– Ըստ ձեզ, ինչո՞ւ է Լուսինը լուսավորված:

– Ինչու՞ է Երկիրը լուսավորված:

– Երկրագնդի այն մասը, որտեղ մենք ապրում ենք, միշտ լուսավորվա՞ծ է:

– Երբ Երկիրը լուսավորված է, ի՞նչ ենք ասում, գիշեր է, թե՞ ցերեկ:

– Երբ Երկիրը մթնած է, ի՞նչ ենք ասում, գիշեր է, թե՞ ցերեկ:

– Ըստ ձեզ, աստղերին էլ Արեգակն է լուսավորում, թե՞ նրանք ինքնուրույն են լուսավորվում: (Աստղերն ինքնուրույն են լուսավորվում):

– Լույսից բացի, Արևն ի՞նչ է տալիս Երկրին: (ջերմություն)

4. ԽԱՂ՝ ՁԵՎԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ (10-12 րոպե)

Ուսուցչի հանձնարարությամբ երեխաները կանգնում են ու նստարանները դնում պատին մոտ, որպեսզի սենյակն ազատվի: Այնուհետև նրանց տրվում է հանձնարարություն, որ.

1. Ձեռք-ձեռքի բռնեն ու արև ստեղծեն (մեծ շրջան):
2. Ստեղծեն երկիր (ավելի փոքրիկ շրջան):
3. Ստեղծեն լուսին (կարող են խմբավորվել փոքր շրջանում):
4. Ստեղծեն աստղեր (կարող են «որպես աստղեր ցրվել»):

Այնուհետև խաղը շարունակվում է նոր հանձնարարությամբ.

1. Բոլորս հայտնվել ենք Արեգակի վրա, նկարագրեք, ի՞նչ ենք զգում:
2. Բոլորս հայտնվել ենք Լուսնի վրա (որտեղ ուժեղ սառնամանիք է), ի՞նչ եք զգում:
3. Բոլորս վերադարձանք Երկիր, ինչպե՞ս եք ձեզ զգում:

5. ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄ ԳՆԴԱԿՆԵՐՈՎ

Ուսուցիչն իր սեղանի վրա դնում է 3 գնդակ. մեկը ֆուտբոլի կամ բասկետբոլի գնդակ է, մեկը թենիսի կամ այդ նույն չափի մեկ այլ գնդակ, երրորդն էլ ավելի փոքր գնդակ է (օրինակ՝ սեղանի թենիսի գնդակ): Ընդհանուր համաձայնության են գալիս, պայմանականորեն մեկը պետք է արևը լինի, մեկը՝ երկրագունդը, իսկ մյուսը՝ լուսինը: Աշակերտները պետք է որոշեն, թե որ գնդակն է արեգակը, որը երկիրն ու լուսինը: Եվ պետք է պարզաբանեն, թե ինչու են այդպես կարծում:

Դրանով պետք է տեղի ունենա այն կարծիքի հաստատում, որ Արեգակը Երկրից շատ ավելի մեծ է, իսկ Լուսինը Երկրից փոքր է:

Իմանալու համար, թե ինչպես է Արեգակը ջերմություն ճառագում, ուսուցիչը վառում է սեղանի լամպը: Ուսուցչի ուղղորդմամբ երեխաներից մեկը մատը մոտեցնում է վառված լամպին և զգում է նրանից եկող ջերմությունը: Որքան ձեռքը հեռանում է լամպից, այնքան ավելի պակաս ջերմություն է ստանում նա: Իսկ մեծ հեռավորությունից լամպի ջերմությունն այլևս չի զգացվում, թեպետ նրա լուսավորումը այնուամենայնիվ տեսնում ենք: Այդպես են նաև աստղերը, նրանց լույսը հասնում է մեզ, բայց ջերմությունը հեռավորության պատճառով չի հասնում: Իսկ Արևից մշտապես ստանում ենք թե՛ լույս, թե՛ ջերմություն:

6. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Երաշխավորվող տեսանյութ. https://www.youtube.com/watch?v=PPME-JnwrAA

ԴԱՍ 53

Թեմա.	Տիեզերք
Դասի վերնագիրը.	Ի՞նչ տեղի կունենա, եթե Արեգակը «հանգչի»
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան անվանել օր ու գիշերվա ընթացքում դիտարելի փոփոխությունները: Անվանել, համեմատել տարվա եղանակները: Կիրառել տարածական հարաբերություն արտահայտող տերմիններ: Մասնակցել գործնական ակտիվությունների: Մարմինները և երևույթները որոշել, նկարագրել պատկերազարդման վրա և իրականության մեջ: Կիրառել հաղորդակցման տարբեր ձևեր: Նպաստել աշակերտների մեջ պատկերացնելու և երևակայության կարողության զարգացմանը:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

	Բնագիտ.Ի.5.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և կողմնորոշվի նրանում: Բնագիտ.Ի.6.Աշակերտը պետք է կարողանա բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Կիրառում է համապատասխան տարածական հարաբերություն արտահայտող տերմիններ(օրինակ՝ հեռու, մոտ, ինձանից աջ, վերև, ներքև) և որոշում դպրոցի տարածքում առկա օբյեկտների դիրքն իր նկատմամբ: Անվանում է դիտարկվող փոփոխությունները ցերեկվա ու գիշերվա ընթացքում: Անվանում է և իրար հետ համեմատում տարվա եղանակները, դատողություն է անում դրանց տարբերակիչ հատկանիշների մասին:
Անհրաժեշտ նյութ.	լապտեր, գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, թերթեր:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-6 րոպե)

Նախորդ դասից աշակերտներն արդեն գիտեն, որ Արեգակն իր ճառագայթներով տաքացնում է Երկրագունդը: Հիմա ուսուցիչը հարց է տալիս.

– Միշտ նո՞ւյն կերպ է Արեգակը ջերմացնում Երկիրը: (Կամ տարվա բոլոր եղանակներին մեր Երկիրը նույն ձևո՞վ է տաքություն ստանում Արեգակի ճառագայթներից:)

Այս հարցի շուրջ ցանկալի է քննարկում անցկացնել, որպեսզի ձևավորվի կարծիք, որ գարնանը, ամռանը, աշնանն ու ձմռանը մեր Երկիրն Արեգակից միանման չի տաքանում (դրա պատճառների մասին այժմ չենք խոսում):

Դասագրքի համապատասխան էջում տրված է չորս նկար և գրություններ՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ:

Աշակերտներն այս հանձնարարությունը պետք է ինքնուրույն կատարեն, հասկանան, թե տարվա որ եղանակն է արտահայտում յուրաքանչյուր նկար: Այնուհետև պետք է բացատրեն իրենց տեսակետը:

2. ԽԱՂ ԳՆԴԱԿՈՎ ԵՎ ԼԱՊՏԵՐՈՎ (8-10 րոպե)

Ուսուցիչը նոր հարց է տալիս.

– Ինչո՞ւ են Երկրագնդի վրա գիշերն ու ցերեկը հերթագայում միմյանց: (Կամ ինչո՞ւ է գիշերվան հաջորդում ցերեկը, իսկ ցերեկվան՝ գիշերը:)

Այս հարցին պատասխան տալու համար ուսուցիչն աշակերտներին առաջարկում է մոդելավորում՝ գնդակով ու լամպով: Վառված լամպը արևն է, իսկ գնդակը՝ երկիրը: «Երկրի» լուսավորված մասում ցերեկ է, մութ մասում՝ գիշեր: Ինչպե՞ս են հերթագայում գիշերն ու ցերեկը միմյանց:

Եթե գնդակը պտտենք, կպարզվի, որ նրա լուսավորված մասը կհայտնվի մթության մեջ (գիշեր կգա), իսկ մթնած մասը կլուսավորվի (լույսը կբացվի): Հենց այսպես է իրականում էլ՝ Երկրագունդը

այդ գնդակի նման պտտվում է, այդ պատճառով, երբ նրա մի կողմում ցերեկ է, մյուս կողմում գիշեր է: Պտույտի պատճառով գիշերն ու ցերեկը հերթագայում են միմյանց (լավ կլինի, եթե այս եզրահանգումներն աշակերտներն իրենք անեն): Իսկ մարդկանց թվում է, թե Արեգակը շարժվում է երկնակամարում՝ բարձրանում է ու իջնում:

Այս մոդելն ավելի ակներև դարձնելու համար ուսուցիչը ևս մեկ խաղ է առաջարկում աշակերտներին. աշակերտները շրջան են կազմում ու կանգնում են դեմքով դեպի դուրս: Նրանց շրջանը Երկրագունդն է: Ուսուցիչը լապտերը պահում է դեպի «Երկրագունդը» (պայմանականորեն մի քանի աշակերտ կլուսավորվի, այսինքն՝ շրջանի առջևի՝ լուսավորված կողմում ցերեկ է) և ասում է. «Որտե՞ղ է ցերեկ: Ձեռք բարձրացնեն այն երեխաները, ում լապտերը լուսավորում է»: Երեխաներն իրենք են անում եզրակացություն, որ այս կողմում ցերեկ է: «Հիմա թող ձեռք բարձրացնեն նրանք, ովքեր չեն տեսնում «արևի» լույսը, այսինքն՝ որտեղ գիշեր է»:

Հետո շրջանը կպտտվի ու «գիշերն ու ցերեկը» կփոխարինեն մեկը մյուսին:

3. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (3-4 րոպե)

Ուսուցիչը դասարանական զրույցը կառուցում է հետևյալ թեմայի շուրջ.

- Ի՞նչ տեղի կունենա Երկրի վրա, եթե «Արեգակը հանգչի»:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (7-8 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4 խմբի: Խմբերին բաժանում է մեկական թուղթ, մեկի վրա նկարված է արև, մյուսի վրա լուսին, երրորդի վրա՝ աստղեր, իսկ չորրորդի վրա՝ երկրագունդը: Համապատասխանաբար՝ մի խումբը արևն է, երկրորդը լուսինը, երրորդը՝ աստղերը և վերջինը՝ երկիրը:

Այնուհետև խմբերից յուրաքանչյուրի անդամները հերթով մյուս խմբերի անդամներին տալիս են իրենց հետաքրքրող հարցերը և լսում են պատասխանները (օրինակ՝ «լուսնին» տալիս են լուսնի մասին հարցեր, իսկ «լուսնի երեխաները» հիմնվելով իրենց երևակայության վրա, օրիգինալ պատասխաններ են տալիս):

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (1-2 րոպե)

Աշխատանքային տետրի տրված էջի ներքևի մասում մեր ընկերները օգնության կարիք ունեն, որպեսզի կարողանան կատարել վարժությունը: Աշակերտները պետք է օգնեն նրանց այս նկարներում որոշակի օրինաչափություն գտնել և լրացնել դատարկ վանդակները:

6. ՍԱ ՀԵՏԱՔՐՔԻՐ Է (1-2 րոպե)

Ուսուցիչը երեխաների համար կարդում է կամ հակիճ պատմում է Հելիուսի մասին հին հունական առասպելը:

«Հեռու Արևելքում, երկնքի եզրի մոտ վեր էր խոյացած Արևի՝ Հելիուսի ոսկե ապարանքը: Ամեն առավոտ, երբ արևելքը կարմրին էր տալիս, փայլատակող ոսկյա դարպասում հայտնվում էր Հելիուսի ոսկյա կառքը, որին լծված էր ձյան պես ճերմակ չորս նժույգ: Հելիուսը հուսալիորեն բռնում էր կատաղի ձիերի սանձերը: Նրա հագուստը և ոսկյա պսակը կուրացուցիչ լույս էին արձակում և սփռում շրջակայքի վրա:

Հելիուսի կառքն անընդհատ վեր էր բարձրանում երկնային վերելքի վրա և լուսավորում ողջ երկրագունդը, ջերմություն և կյանք պարգևում: Հենց հասնում էր երկնքի կենտրոնին, սկսում էր աստիճանաբար իջնել դեպի արևմուտք և վերջում սուզվում օվկիանոսի ջրերի մեջ: Այնտեղ Հելիուսին արդեն սպասում էր ոսկյա նավը: Նա իր ձիերով և կառքով նստում էր այդ նավի մեջ և կրկին սլանում դեպի իր ոսկյա ապարանքը: Ապարանքում գիշերում էր, առավոտ վաղ կրկին հայտնվում աշխարհին և ուրախություն բերում բոլորին»:

Ըստ Անգել Բոնովի «Առասպելների ու լեգենդների...»

Աշխատանք պատկերավոր արտահայտությունների վրա

Ուսուցիչը երեխաներին ասում է, որ վրաց լեզվում, ինչպես նաև հայերենում, բազմաթիվ արտահայտություններ կապված են «արև» բառի հետ: Այդպիսի մի քանի արտահայտություն նա

գրատախտակին է գրում, իսկ աշակերտները պետք է կռահեն, թե ինչ նկատի ունի: Ուսուցիչը գրված արտահայտությունները բացատրում է միայն այն դեպքում, եթե երեխաներն իրենք չեն կարողանում բացատրել:

– Իննաչյա արև: (կիզիչ արև)
– Արևը լվացվում է: (երբ արևը լուսավորում է, բայց միաժամանակ անձրև է տեղում)
– Ցերեկով-արևով: (բացահայտ, բոլորի աչքի առաջ)
– Արևն ու լուսինը նրա վրա են դուրս գալիս (ասում են մոր մասին, որը երեխային շատ է սիրում):
– Արևամանուկ: (գեղեցիկ տղա)
– Արևի երես չտեսած: (առանձնապես գեղեցիկ կին)
– Արևը կծում է: (արևի ճառագայթներն այնքան կիզիչ են, որ այրում են մաշկը)

(Եթե ուսուցիչը ցանկություն և ժամանակ ունի, կարող է այս արտահայտություններին ավելացնել իրեն հայտնի արտահայտություններ ևս):

7. ԱՄՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

ԴԱՍ 54

Թեմա.	Ամառ
Դասի վերնագիրը.	Ամառն էլ եկավ
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան բնութագրել ամառը՝ որպես տարվա եղանակներից մեկը: Երևույթները ճանաչել պատկերազարդման վրա և իրականության մեջ և նկարագրել: Անվանել զգայության օրգանները և գիտակցել դրանց գործառույթները: Անվանել դիտարկվող փոփոխությունները: Հագուստը տեսակավորել՝ ըստ տարվա եղանակների: Թվարկել ամառվա ամիսները և նկարագրել բնության մեջ ընթացող ակներև փոփոխությունները: Նպաստել աշակերտների տրամաբանական մտածողության կարողության զարգացմանը:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարբական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը: Բնագիտ.I.6.Աշակերտը պետք է կարողանա բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Անվանում է մարդու զգայության օրգանները և դրանց գործառույթները (օր.՝ աչք – «տեսնում եմ», ականջ – «լսում եմ», լեզու – «զգում եմ համը», քիթ – «զգում եմ հոտը», մաշկ – «զգում եմ ջերմությունը և ցուրտը, հարթ կամ անհարթ մակերևույթը»):

Դատողություն է անում զգայությունների և զգայությունների օրգանների դերի մասին մարդու (օր.՝ սննդամթերքի պիտանելիության ժամկետը որոշել, փողոցում անվտանգ տեղաշարժվել) և կենդանիների համար (օր.՝ ժամանակին հայտնաբերել վտանգը, սնունդ հայթայթել, ապաստան գտնել):

Անվանում է դիտարկվող փոփոխությունները ցերեկվա ու գիշերվա ընթացքում:

Տարբերում է ցերեկվա ու գիշերվա հատվածները՝ առավոտ, կեսօր, երեկո, գիշեր, և դրանք կապում է իր ակտիվության/գործունեության հետ:

Անվանում է և իրար հետ համեմատում տարվա եղանակները, դատողություն է անում դրանց տարբերակիչ հատկանիշների մասին, խոսում է դրանցից յուրաքանչյուրին բնորոշ եղանակի մասին:

Թվարկում է մարդու գործունեության (օրինակ՝բույսեր տնկել, խաղողաքաղ, բերքահավաք), կենդանիների վարքի (օրինակ՝ թռչունների չու, ձմեռային քուն) և բույսերին բնորոշ փոփոխությունների (օրինակ՝ ծաղկունք, տերևաթափ) օրինակներ՝ ըստ տարվա եղանակների:

Անհրաժեշտ նյութ. Հագուստը տեսակավորում է՝ ըստ տարվա եղանակների:

Դասի ընթացքը.

1. ԼՍԵԼ ՊԱՏՄՎԱԾՔԸ ԵՎ ՈՐՈՇԵԼ ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿԸ (4-5 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին այսպիսի առաջադրանք է տալիս. նրանք պետք է լսեն ուսուցչի կարդացած տեքստը և որոշեն, թե տարվա որ եղանակն է նկարագրված.

«Այս եղանակին տարվա ամենաերկար օրերն են՝ տասնչորս ժամվա ընթացքում արևը չի հեռանում երկնքից: Ահա, եկավ կեսօրը, արևը վեր բարձրացավ և երկրին հենց երկնքի մեջտեղից է նայում: Այս ժամանակ մարդ ոչ միայն չի կարող նայել արևին, այլև կդժվարանա նայել լուսավորված երկնքին և երկրին: Ե՛վ երկինքը, և՛ դաշտը, և՛ գետերը, և՛ օդը պայծառ լույսով են ողողված: Անտանելի շոգ է, տապ: Անտառում և մացառուտում շոգից հոգնած թռչունները լեզուները դուրս են հանել և խղճալիորեն հևում են:

Ամբողջ դաշտն այս ժամանակ տարբեր միջատներով է պատած, բազմաթիվ խայտաբղետ թիթեռներ են հաճելիորեն ճախրում, ոսկեգույն մեղուն այս ժամանակ ժրաջանորեն աշխատում է լորենու և բուրումավետ ծաղիկների վրա, որոնցից քաղցր հյութ է ծծում՝ մեղր պատրաստելու համար... Աշխատասեր մրջյունները հողի տակ իրենց ձմեռվա պաշարն են հավաքում, սկյուռը չոր ընկույզը կրում է ու կրում փչակի մեջ: Այսպես մեծանում, աշխատում և հաճույք են ստանում բոլոր շնչավոր արարածները ...»

(Ըստ Յ.Գոգեբաշվիլիի «Ամառը» ստեղծագործության)

2. ԶՐՈՒՅՑ ԱՄԱՌՎԱ ՄԱՍԻՆ (4-5 րոպե)

– Ինչպե՞ս կռահեցիք, որ այս պատմվածքի մեջ ամառ է նկարագրված:
– Տարվա ո՞ր եղանակին է հաջորդում ամառը:
– Ինչպե՞ս է փոխվում բնությունն ամռանը:
– Ո՞վ է հիշում, և ո՞վ կթվարկի աշնան ամիսները:
– Ո՞վ է հիշում, և ո՞վ կթվարկի ձմռան ամիսները:
– Ո՞վ կթվարկի գարնան ամիսները:
– Ի՞նչ ամիս է այժմ (ենթադրվում է, որ դասն անց է կացվում հունիսին):
– Ամառվա ի՞նչ ամիսներ գիտեք, բացի սրանից:
(Ուսուցիչը գրատախտակի վրա գրում է ամառվա ամիսները):

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՒՄ (5-7 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4 խմբերի և յուրաքանչյուրին բաժանում մեկական թերթ՝ մակագրություններով. գարուն, ամառ, աշուն, ձմեռ: Աշակերտները խմբերում յուրաքանչյուր թերթի վրա պետք է գրեն համապատասխան ամիսների անվանումները ճիշտ հաջորդականությամբ: Այնուհետև յուրաքանչյուրը լուռ, դիմախաղով և ժեստերով այնպես պետք է մարմնավորի տարվա տվյալ եղանակը, որ մյուս խմբերը կարողանան գուշակել:

Այնուհետև ուսուցիչը դիմում է դասարանին.

- Հիշե՛ք, թե տարվա որ եղանակին է ձեր ծննդյան օրը: Չանվանեք, միայն այնպես նկարագրեք, որ մենք գուշակենք:

Այնուհետև ուսուցիչը հարցերով վարում է զրույցը.

– Ինչպիսի՞ եղանակ է քո ծննդյան օրը:
– Ի՞նչ էիք հագել դու և քո ընկերները:
– Եղե՞լ է արդյոք անձրև, ձյուն:
– Շա՞տ ծաղիկներ էին: Ծառերը ծաղկե՞լ էին:
– Ինչպե՞ս եք հագնված (տաք, թեթև):

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (8-10 րոպե)

Աշխատանքային տետրի համապատասխան էջի վրա (վերին մասում) տրված է ուրվանկար, որտեղ պատկերված են մեր գրքի հերոսները Սև ծովի ափին (լողափում): Աշակերտները պետք է գունավորեն նկարը, այնուհետև նկարագրեն:

(Ուսուցչի օժանդակ հարցերը.

– Ըստ ձեզ, ո՞ր ծովի ափին են երեխաները:
– Ո՞ր ծովի ափին է գտնվում մեր հայրենիքը:
– Ձեզանից ո՞վ է եղել ծովափում:
– Ի՞նչ են անում սովորաբար մարդիկ ծովափում:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (4-5 րոպե)

Նույն էջի ստորին մասում ձեր հասակակիցները տրամաբանական հարց պետք է վճռեն՝ պետք է որոշեն և լրացնեն դատարկ վանդակը տրված քառակուսու մեջ: Ուսուցիչն աշակերտներին խնդրում է օգնել մեր գրքի հերոսներին կատարել առաջադրանքը (աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ ինքնուրույն):

6. ԴԵՐԵՐՈՎ ԽԱՂ (2-3 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4 խմբի և նրանց առաջարկում տուփի մեջ լցրած գունավոր թղթերից հանել մեկը և կապել այն տարվա եղանակի հետ: Բացատրել, թե ինչու են այն կապել տարվա այս եղանակի հետ: Այնուհետև յուրաքանչյուր խումբ պետք է մտածի և հերթով ներկայացնի տեսարան այս եղանակի մասին: Յուրաքանչյուր անգամ մյուս խմբի աշակերտները պետք է որոշեն ներկայացման բովանդակությունը:

ԴԱՍ 55

Թեմա.	Ամառ
Դասի վենագիրը.	Մեր գյուղը
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան համեմատել և նկարագրել գյուղական միջավայրը, բնութագրել այն: Համեմատել գյուղի և քաղաքի բնակելի տները: Նկարագրել քաղաքաբնակների և գյուղաբնակների գործունեությունը: Որոշել և նկարագրել մարմիններն՝ ըստ պատկերազարդման:

	Հավաքել անհրաժեշտ տեղեկություններ: Հիմնվել անձնական տեսակետների վրա: Կիրառել հաղորդակցման տարբեր ձևեր: Դիտարկման հիման վրա նկար ստեղծել: Ըստ տարվա եղանակների՝ նկարագրել մարդու գործունեությունը:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.5.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և կողմնորոշվի նրանում: Բնագիտ.I.6.Աշակերտը պետք է կարողանա բնութագրել ցերեկվա ու գիշերվա և տարվա եղանակների հետ կապված փոփոխությունները:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով): Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Դիտարկման հիման վրա ստեղծում է դպրոցի նկար, խոսում այն մանրամասների մասին, որոնք իր առանձնահատուկ ուշադրությունն են հարուցել: Թվարկում է մարդու գործունեության (օրինակ՝բույսեր տնկել, խաղողաքաղ, բերքահավաք), կենդանիների վարքի (օրինակ՝ թռչունների չու, ձմեռային քուն) և բույսերին բնորոշ փոփոխությունների (օրինակ՝ ծաղկունք, տերևաթափ) օրինակներ՝ ըստ տարվա եղանակների:
Անհրաժեշտ նյութ.	գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, թերթեր կամ մեծ թղթեր:

Դասի ընթացքը.

1. ԶՐՈՒՅՑ ԳՅՈՒՂԻ ՄԱՍԻՆ (5-6 րոպե)

Ուսուցիչը զրույց է անցկացնում՝ այսպիսի հարցերի օգտագործմամբ.

– Ամռանը, բացի ծովից, քաղաքից ո՞ւր են տանում երեխաներին հանգստանալու:

– Ձեզանից ո՞վ է եղել գյուղում:

– Ինչո՞վ է ամռանը գյուղը հրապուրիչ:

– Ի՞նչ տարբերություն կա քաղաքի և գյուղի միջև:

– Ո՞վ կհիշի հաճելի տպավորություններ գյուղի մասին: (Ուսուցիչը հնարավորություն պետք է տա ցանկացողներին փոխանցել իրենց հուշերը գյուղում անցկացրած օրերի մասին: Եթե դասն անց է կացվում գյուղական դպրոցում, հարցերի մեջ շեշտադրումը պետք է արվի նրա վրա, թե ինչով է տարբերվում գյուղում ամառը գարնանից: Ամռանն ի՞նչ աշխատանքներով են զբաղված մարդիկ ...)

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (7-8 րոպե)

Դասագրքի համապատասխան էջի վրա (վերին մասում) տրված է երկու տիպի բնակելի տուն՝ քաղաքի և գյուղի: Աշակերտները պետք է որոշեն և բնութագրեն («քաղաքի տուն», «գյուղի տուն»):

Այնուհետև ուսուցիչը խնդրում է աշակերտներին համեմատել այս երկու տիպի տներն իրար հետ և պատասխանել հարցերին.

– Ի՞նչ նմանություն կա քաղաքի և գյուղի տների միջև:

– Ի՞նչ տարբերություն կա դրանց միջև:

– Ինչպե՞ս ճանաչեցիք քաղաքի տունը:

Այնուհետև բացեն Աշխատանքային տետրը և գունավորեն:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (15-17 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին շարունակել աշխատել Աշխատանքային տետրում, որտեղ (ստորին մասում) մեր հերոսներից մեկը ծաղրաշարում է տրված: Ընդամենը 4 նկար է նկարված՝ խախտված հաջորդականությամբ:

Աշխատանքը պետք է շարունակվի եղած խմբերում: Ուսուցիչն աշակերտներին բաժանում է այս ծաղրաշարին ուղեկցող համարակալված նախադասություններ: Դրանք են.

1. Ամռանը մայրը Նիկոլոզին գյուղ տարավ:
2. Տատիկը Նիկոլոզին խնդրեց բանջարանոցում պոմիդոր հավաքել:
3. Նիկոլոզն ընտրեց հասած պոմիդորները և հավաքեց:
4. Տատիկը պոմիդորից աղցան պատրաստեց:

Աշակերտները պետք է որոշեն, թե որոնք են այս նախադասություններին համապատասխան նկարները և համարակալեն, այնուհետև գունավորեն նկարները:

4. ԶՐՈՒՅՑ «ՈՎ Ի՞ՆՉ Է ԱՆՈՒՄ ԳՅՈՒՂՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ (15-17 րոպե)

Ուսուցիչն օժանդակ հարցերի միջոցով է անցկացնում այս զրույցն այն նպատակով, որ պարզի, թե աշակերտների պատկերացումներով (կարծիքով) ամռանն ինչ գործունեություն են ծավալում գյուղաբնակները (տղամարդիկ, կանայք, երեխաները):

5. ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և գրատախտակի վրա սյունակով գրում է բառերը՝ խրճիթ, ջրաղաց, գոմ, ցանկապատ, ցանկապատերի միջև ձգվող նեղ փողոց, բանջարանոց, խոտի դեզ, ջրհոր, աղբյուր, գետ, մրգատու ծառեր, ընտանի կենդանիներ:

Սկզբից քննարկում են այս բառերը, քանի որ, հնարավոր է, որոշ բառեր երեխաների մի մասի համար անծանոթ լինեն:

Այնուհետև ուսուցիչը խնդրում է խմբերին, որ թերթի վրա նկարեն գյուղը՝ օգտագործելով գրատախտակի վրա տրված բառերը (բոլորը կամ մասամբ):

Ներկայացնելու ժամանակ խումբը ներկայացնում է իր նկարը և նշում, թե որ առարկաներն են տեղափոխել գրատախտակից թերթի վրա:

6. ԱՄՓՈՓՈՒՄ (3-4 րոպե)

ԴԱՍ 56

Թեմա.	Ամառ
Դասի վերնագիրը.	Էքսկուրսիա դասարանի «անտառում»
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան բնության մեջ էքսկուրսիայի համար ճիշտ ընտրել անհրաժեշտ իրերը: Մշակել շրջակա միջավայրում մաքրության պահպանման պահանջմունքը: Պատասխանել պարզ հարցերի:

	Հարցին պատասխանելու համար հավաքել անհրաժեշտ տվյալներ, նշումներ անել:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով): Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): Անհրաժեշտ նյութ. մեծ թղթեր, գունավոր մատիտներ կամ ֆլոմաստերներ, կոնակապայուսակ, մեկանգամյա օգտագործման ափսեներ, բաժակներ և գդալներ, ջրաման, լուսանկարչական ապարատ, անձեռոցիկներ, սրբիչ, բամբակ, բինտ, յոդ, գնդակ, կոնֆետներ, կերակուր տոպրակով, նկարչության վրձին, ատամի մածուկ, արդուկ:

Դասի ընթացքը.

1. ԶՐՈՒՅՑ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ՄԱՍԻՆ (4-5 րոպե)

Խմբերով աշխատանք

Ուսուցիչը ցույց է տալիս համապատասխան նկարները, որոնց վրա պատկերված է անտառը և բնության գրկում էքսկուրսիայի գնացած իրենց հասակակիցներ, և հարց է տալիս. ուզո՞ւմ եք էքսկուրսիա գնալ: Աշակերտների պատասխանները լսելուց հետո, ուսուցիչը շարունակում է խոսել այս թեմայի մասին:

2. ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (8-10 րոպե)

Բնության գրկում ամառը լավագույն ժամանակն է: Բնության գիրկ գնալուն գիտելիք է անհրաժեշտ և էքսկուրսիայի համար նախապատրաստություն: Ուսուցիչն այս դասի համար դասարան է բերել կոնակապայուսակ և էքսկուրսիայի համար անհրաժեշտ իրեր՝ մեկանգամյա օգտագործման ափսեներ, բաժակներ և գդալներ, ջուր խմելու կաշվից տոպրակ կամ պոլիէթիլենե շիշ, արևի գլխարկ, լուսանկարչական ապարատ, անձեռոցիկներ, սրբիչ, բամբակ, բինտ, յոդ, անձրևանոց, կերակուր ցելոֆանե տոպրակով, գնդակ, սրբիչ ... նաև «ավելորդ» իրեր՝ գիրք, քանոն, վրձին, ատամի մածուկ, մկրատ, արդուկ, ծաղիկ՝ ծաղկամանով ...

Սկզբից ուսուցիչն աշակերտներին ցույց է տալիս վերոթվարկյալ բոլոր իրերը և դրանք դնում սեղանին: Աշակերտները պետք է անվանեն, թե ինչ առարկա են տեսել: Նրանից հետո, երբ բոլորը կծանոթանան այստեղ հավաքված իրերին, ուսուցիչը դասարանը կբաժանի խմբերի և կտա առաջադրանք: Յուրաքանչյուր խմբի կբաժանվի իրերի ցանկ, որը կարող է ներկայացվել սխեմայի տեսքով: Այնուհետև նրանց խնդրում է «+» -ով նշել այն առարկաները, որոնք կդնեն պայուսակի մեջ էքսկուրսիա գնալուց առաջ:

Տանելու իրեր

Բաժակ +
Գդալ
Մեկանգամյա ափսե +

Ներկայացնելու ժամանակ աշակերտներն, իսկապես, պետք է պայուսակի մեջ դնեն այն իրերը, որոնք գրված ունեն, և միևնույն ժամանակ բացատրեն, թե ինչի համար են արել այսպիսի ընտրություն (կամ ինչի համար պետք կգա այս կամ այն իրը): Լցված կոնակապայուսակը պետք է վերցնեն, որպեսզի համոզվեն, որ այն բավականին ծանր է, և իսկապես չարժե ավելորդ իրեր տանել: Այնուհետև ուսուցիչը կդատարկի կոնակապայուսակը, որպեսզի այլ խումբ ևս կարողանա ներկայացնել նույնը:

Ներկայացնելուց հետո ուսուցիչը լրացուցիչ ընդհանուր հարցեր է տալիս.

– Էքսկուրսիայի ժամանակ ի՞նչ կոշիկներ պետք է հագնենք: Ի՞նչ հագուստ: Ինչո՞ւ:

– Ինչպիսի՞ եղանակին է գերադասելի էքսկուրսիա կազմակերպել: Ինչո՞ւ:

– Ե՞րբ է ցանկալի գնալ էքսկուրսիա (առավոտյան, կեսօրին, երեկոյան): Ինչո՞ւ:

3. ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ «ԴԱՍԱՐԱՆԻ ԱՆՏԱՌ» (5-8 րոպե)

Նրանից հետո, երբ աշակերտները կհմտանան էքսկուսիայի համար անհրաժեշտ իրեր ընտրելու մեջ, ուսուցիչը նրանց կառաջարկի էքսկուսիա կազմակերպել դասարանի անտառ, որը պատրաստել են նախորդ պարապմունքների ժամանակ:

Աշխատանքը շարունակվում է եղած խմբերում: Յուրաքանչյուր խումբ պետք է մտածի փոքրիկ պատմություն դասարանական էքսկուրսիայի մասին: Մինչև խմբերում երեխաները մտածում են և դատողություններ անում, ուսուցիչը անտառի ցուցապաստառի վրա ամրացնում է կոնֆետի թղթեր, պոլիէթիլենի տոպրակի պատառներ, մեկանգամյա բաժակներ և գդալներ:

Ուսուցիչ. «Անտառ որ մտաք, այսպիսի տեսարանի հանդիպեցիք: Ձեր պատմության մեջ դա ևս նախատեսեք և մտածեք ի՞նչ կանեք»:

Շնորհանդեսներից հետո կամ դրանց ընթացքում ուսուցիչը կարող է օժանդակ հարցել տալ.

– Ե՞րբ էր անտառն ավելի գրավիչ՝ մինչև աղբոտելը, թե՞ այժմ:

– Ինչպե՞ս տեղի ունեցավ բնության աղտոտումը: Ո՞վ է աղտոտում այն:

– Ի՞նչը չեք հավանում այսպիսի միջավայրում:

– Ինչպե՞ս վարվենք, ուրեմն, որ չաղտոտենք բնությունը: Ո՞ւր տանենք այս աղբը:

Աշակերտների օգնությամբ ուսուցիչը «թափոններից» ազատում, մաքրում է դասարանի անտառը և հավաքում դրանք մի մեծ պոլիէթիլենե տոպրակի մեջ («Այս աղբը տանենք մեզ հետ և գցենք աղբամանի մեջ»):

4. ՈՒՐՎԱՆԿԱՐՆԵՐ ԱՆԵԼ. «ԻՄ ՍԻՐԵԼԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՆԵՐԸ» (8-10 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է ինքնուրույն աշխատելու համար մտաբերել իրենց տպավորությունները՝ կապված բնության հետ. նրանց հիշողության մեջ գեղեցիկ բնության ինչպիսի պատկերներ են մնացել, կամ ինչպես են պատկերացնում այն և կատարեն ուրվանկարներ:

Նկարների քննարկման ժամանակ պետք է նշվի, որ բոլոր երեխաները հավանում են մաքուր բնությունը, մաքուր բնությունը գրավիչ է, այդ պատճառով էլ նրանց նկարներն այսքան գեղեցիկ են:

5. ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

ԴԱՍ 57

Թեմա.	Ամառ
Դասի վերնագիրը.	Վարքի կանոնները բնության գրկում
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան կազմել բնության մեջ վարքի կանոնները: Կարողանան գործնականում կիրառել բնության մեջ վարքի կանոնները: Կարողանան կենցաղային թափոնները ճիշտ տեղավորել և հոգ տանել շրջակա միջավայրի մաքրության մասին: Մասնակցել պարզ գործնական ակտիվությունների: Անձնական կարծիքների վրա հիմնվելով՝ պատասխանել հարցերի:

	Գիտակցել սննդամթերքի պիտանելիության որոշման հարցում զգայության օրգանների նշանակությունը:
Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարբական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.2.Աշակերտը պետք է կարողանա գիտակցել զգայության օրգանների նշանակությունը:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Դատողություն է անում զգայությունների և զգայությունների օրգանների դերի մասին մարդու (օր.՝ սննդամթերքի պիտանելիության ժամկետը որոշել, փողոցում անվտանգ տեղաշարժվել) և կենդանիների համար (օր.՝ ժամանակին հայտնաբերել վտանգը, սնունդ հայթայթել, ապաստան գտնել): Անվանում է անձնական հիգիենայի պարագաներ (օր.՝ սանր, ատամի խոզանակ, սրբիչ): Դատողություն է անում հիգիենայի կանոնների պահպանման նշանակության մասին:
Անհրաժեշտ նյութ.	գրատախտակ, կավիճ, հիգիենիկ ձեռնոցներ, կոնակապա-յուսակ, էքսկուրսիոն իրեր, պոլիէթիլենե տոպրակներ, լուսանկարչականա ապարատ:

Դասի ընթացքը.

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (8-10 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին ասում է, որ էքսկուրսիայի համար անհրաժեշտ է կազմել վարքի կանոններ և պահպանել դրանք, հակառակ դեպքում կարող է խումբը ցրվել, և երեխաները որևէ վտանգի հանդիպեն (գազանի հանդիպեն, անտառում կորչեն, ձորը գլորվեն և բազմաթիվ այլ): Որպեսզի դա տեղի չունենա, ուսուցիչն աշակերտներին առաջարկում է կազմել բնության մեջ քայլելու և վարվելու կանոններ: Դրա համար ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և հանձնարարում, որ յուրաքանչյուրը 1-2 կանոն մտածի:

Այնուհետև ուսուցիչը բոլոր խմբերում մտածած կանոնները գրում է գրատախտակի կամ պաստառի թերթի վրա, միասին քննարկում են դրանք և ի մի բերում:

Դրանից հետո ուսուցիչը երեխաներին առաջարկում է բնություն դուրս գալ և շարժվել այս կանոններով, հնարավոր է, բնության մեջ լինելով, ոմանք այլ կանոններ ևս ցանկանան ավելացնել:

2. ՓՈՔՐ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ (10-15 րոպե)

Ուսուցիչը երեխաներին դուրս է տանում (բակ, դպրոցի մոտակայքի զբոսայգի կամ այլ բնական միջավայր), և անց են կացնում գործնական վարժություններ բնության մեջ վարքի կանոններ մշակելու համար: Բացի նրանից, որ դասարանում էին կազմել, ուսուցիչը սովորեցնում է հետևյալ վարվելաձևերը.

ա) միասին քայլել – բոլորը պետք է քայլեն իրար մոտ, կածանով կամ ճանապարհով, խումբը չպետք է ձգվի,

բ) ուշադիր քայլել – ամենքը պետք է տեսնեն իրենցից առջև քայլող ընկերոջը և նաև պետք է տեսնեն այն, թե ուր են դնում ոտքը,

գ) փոքրիկ խոչընդոտների հաղթահարում – աշակերտները պետք է ընտելանան անվտանգ և իրար օգնելով խոչընդոտների հաղթահարմանը (ընկած ծառ, առվակ, ձորակ, փշոտ վայրեր),

դ) հանգստանալու և սնվելու համար տեղ ընտրել (ստվեր, ջրին մոտ, կոճղեր կամ մեծ քարեր՝ նստելու համար),

ե) պահել կերակրի մնացորդները – ինչպես պետք է առանձնացվի այն, ինչը հետագայում ևս պիտանի է ուտելու համար, ինչպես պահեն թափոններն այնպես, որ չաղտոտեն շրջակա միջավայրը:

Էքսկուրսիայի վերջում պետք է դիտել տարածքը և մաքրել այն: Դրա համար ուսուցիչը պատրաստած ունի հիգիենիկ ձեռնոցներ, որոնք բաժանում է աշակերտներին: Հավաքած աղբը տեղավորում են մեծ պոլիէթիլենե տոպրակի մեջ, ինչը հետո կնետեն աղբարկղի մեջ:

Լավ կլինի, եթե որպես հիշատակ լուսանկարվեն և փակցնեն Աշխատանքային տետրի համապատասխան էջում:

3. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁ ԴՊՐՈՑ (8-10 րոպե)

Վերջում, պարապմունքի ամփոփման ժամանակ, պետք է վերլուծվի նաև այն, թե արդյոք տարե՞լ էին ամեն ինչ, ինչն իրենց անհրաժեշտ եղավ էքսկուրսիայի ժամանակ: Չունեի՞ն արդյոք ավելորդ իրեր: Ի՞նչ փորձառություն ձեռք բերեցին, ի՞նչ սովորեցին և այլն:

ԴԱՍ 58

Թեմա.	Իմ հայրենիքը
Դասի նպատակը.	Աշակերտները կարողանան պարզ հարցեր տալ: Դիտարկել ուսումնասիրման օբյեկտը: Որոշել մարմինը/երևույթը, նկարագրել և տեսակավորել այն: Հարցերին պատասխանել՝ անձնական կարծիքների վրա հիմնվելով և դիտարկմամբ: Խոսել այն մանրամասների մասին, որոնք իր հետաքրքրությունն են շարժել:
Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքի հետ և ստուգիչներ.	Բնագիտ. I.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարբական հետազոտական հմտություններ ու կարողություններ: Բնագիտ.I.5.Աշակերտը պետք է կարողանա նկարագրել տեղի միջավայրը և կողմնորոշվի նրանում:
Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.	Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս: Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ: Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա: Դիտարկման հիման վրա ստեղծում է դպրոցի նկար, խոսում այն մանրամասների մասին, որոնք իր առանձնահատուկ ուշադրությունն են հարուցել:

1. ԹԵՄԱՏԻԿ ԶՐՈՒՅՑ (8-10 րոպե)

Երկիրը անկախ տարածք է, վայր Երկրագնդի վրա, որտեղ ապրում է հիմնականում մեկ լեզվով խոսող ժողովուրդ, որն ունի իր կառավարությունը, ունի պետական լեզու, իր դրամը:

Բոլոր երկրներն ունեն իրենց անվանումը և սահմանները, որոնք ճանաչում են մնացած երկրները: Երկիրն ունի իր դրոշը և օրհներգը (մեղեդի): Ունի սեփական օրենքներ և կանոններ, որոնք պահպանում են այս երկրի քաղաքացիները:

Որոշ երկրներ տարածքային առումով են մեծ, որոշ երկրներ առանձնանում են բնակչության մեծաքանակությամբ: Երկրների թիվն անփոփոխ չէ, որոշ երկրներ մասնատվում են/բաժանվում են, որոշ երկրներ՝ միավորվում:

– Ինչ եք կարծում, Երկրագնդի վրա կա՞ արդյոք ցամաքի մաս, որտեղ երկրներ չկան, համապատասխանաբար մարդիկ էլ չեն ապրում:

Իհարկե, կա: Սա Անտարկտիդան է: Այնտեղ ո՛չ կառավարություն կա, ո՛չ դրոշ: Ավելին, շատ երկրներ ստորագրել են օրենքն այն մասին, որ Անտարկտիդան մնա՝ որպես անձեռնմխելի բնության պատկեր, որտեղ միայն գիտական հետազոտություններ և դիտարկումներ կանցկացվեն:

Ինչպես նշեցինք, որոշ երկրների բնակչության թիվը մեծ է, իսկ որոշ երկրներինը՝ փոքր:

Տարբեր երկրների բնակիչները երբեմն արտաքինով նույնպես

տարբերվում են միմյանցից: Որտեղ շատ շոգ է, տեղի բնակչությունը հիմնականում սևամորթ է կամ դեղնամորթ:

– Ըստ Ձեզ, Աֆրիկայում մարդկանց անհրաժե՞շտ է տաք հագուստ: Ինչո՞ւ:

– Ըստ Ձեզ, ինչո՞ւ են թռչուններն աշնանը չվում տաք երկրներ:

– Բոլո՞ր թռչուններն են չվում:

– Լսե՞լ եք արդյոք «առաջին ծիծեռնակ» արտահայտությունը: Ինչի՞ հետ են կապում այս արտահայտությունը: (գարնան գալուստի)

Տարբեր երկրներում և երկրամասերում, ելնելով բնական պայմաններից, հանդիպում ենք տարբեր բույսերի, կենդանիների և թռչունների:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (4-5 րոպե)

Ուշադիր դիտարկի՛ր դասագրքում տրված նկարները:

– Ինչ ես կարծում, ո՞ր խմբի կենդանիներն են ապրում մեր անտառներում:

– Համապատասխանաբար, ինչպիսի՞ բնական պայմաններ են մեր երկրում:

– Ի՞նչ է նշանակում չափավոր պայմաններ, այլ կերպ՝ չափավոր կլիմա:

– Անվանի՛ր՝ ի՞նչ բույսեր են աճում մեր երկրում:

Դատողությո՛ւն արա տարբեր կենսական միջավայրերի մասին, որոնց լուսանկարներ տրված են դասի հաջորդ էջին, ի՞նչ կենդանիներ կարող են ապրել դրանցից յուրաքանչյուրում:

3. ԱՌԻԴԻՈՆՅՈՒԹ ԵՎ ՏԵՍԱՆՅՈՒԹ (10-15 րոպե)

Ուսուցիչն այս դասի համար ընտրել է առդիո- և տեսանյութ: Ցանկալի է, որ երեխաներին սկզբից ունկնդրել տանք Վրաստանի օրհներգը: Այնուհետև ցուցադրենք տեսանյութ՝ Վրաստանի տեսարաններով:

Վերջում, ուսուցիչը կամփոփի դասը, որը տարվա վերջին դասն է. Հավանեցի՞ք ֆիլմը, որ դիտեցինք: Միջավայրը, որ տրված է ֆիլմում, քո հայրենիքն է: Հայրենիքին հոգածությամբ է պետք վերաբերվել և խնամել: Պահպանի՛ր քո հայրենիքը:

9. ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ՓՈՔՐ ԽՄԲԵՐՈՎ ԵՎ ԶՈՒՅԳԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոցական կրթական համակարգում աշակերտակենտրոն մոտեցումն ուժեղ թափ հաղորդեց համագործակցային մանկավարժության զարգացմանը, այն այսօր լայն տարածում է գտել աշխարհում: Ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերի միջև հատկանշական է զույգերով ու խմբերով աշխատանքը: Ավանդական դասի ժամանակ, երբ գերակշռում է ֆրոնտալ հարցումը, հիմնականում ակտիվություն են ցուցաբերում ուժեղ աշակերտները: Նրանք նոր նյութը հեշտությամբ են հասկանում, արագ յուրացնում են, ուսուցիչն էլ հիմնվում է նրանց վրա, իսկ թույլ աշակերտը մնում է ստվերում, և նրա՝ դասերից ետ մնալն այս դեպքում արդեն երաշխավորված է, քանի որ ժամանակը չի բավականացնում, որպեսզի ամեն ինչ պարզ պատկերացնի, և ոչ էլ համարձակվում է հարցերով դիմել ուսուցչին: Եթե նրան հարցնում են, արագ պատասխանել չի կարողանում կամ ճիշտ չի պատասխանում և, կարճ ասած, խափանում է դասի բնականոն ընթացքը:

Հիմա քննարկենք երկրորդ տարբերակը, երբ աշակերտին անհատական առաջադրանքներ ենք տալիս, և նա ինքնուրույն պարապում է: Հաճախ նա իր հաջողություններով ու անհաջողություններով հանդերձ մնում է ինքն իր կեղևի մեջ: Նրան քիչ է հուզում, թե ինչպես են ընթանում ընկերոջ գործերը և հիմնականում իր խնդիրներով է զբաղված:

Իսկ համագործակցային մանկավարժությունը ուսանման այլ եղանակ է առաջարկում, երբ աշակերտի կողքին կան ընկերներ, որոնց պետք է օգնել կամ որոնցից կարող է օգնություն խնդրել՝ հարցնել այն, ինչ անհասկանալի է: Կարող են միասին քննարկումներ անել ու եզրահանգման գալ: Երբ քեզանից է կախված խմբի հաջողությունը, անհնար է, որ քո պատասխանատվության չափը չգիտակցես, չաշխատես, չսովորես, ծուլանաս և այլն:

Փորձը ցույց է տալիս, որ համատեղ ուսանումը ոչ միայն առավել հեշտ և հետաքրքիր է , այլև արդյունավետ է: Հատկանշական է, որ այդ արդյունավետությունը վերաբերում է ինչպես ակադեմիական հաջողություններին և մտավոր զարգացմանը, այնպես էլ՝ բարոյական աճին:

Իր նպատակին հասնելու համար համագործակցային ուսուցումը հաճախ կիրառվում է դասարանում խմբերով կամ զույգերով աշխատանքի (պարապմունքի) մեթոդով: Մանկավարժական նոր տեխնոլոգիաների իրականացումն էլ հաճախ խմբային աշխատանքի մեթոդի հետ է կապված:

ԶՈՒՅԳԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Զույգերով աշխատելու համար ուսուցիչը դասարանը զույգերի է բաժանում և առաջադրանք է տալիս (եթե որևէ աշակերտ մենակ է մնում, ուսուցիչը կարող է ինքը նրա հետ զույգ կազմել կամ երեք երեխա նստեցնել միասին): Աշխատանքի տևողությունն ուսուցիչն է որոշում և աշակերտներին նախապես զգուշացնում է: Աշխատանքի ավարտից հետո, եթե ուսուցիչը զույգերից մեկի աշխատանքը գնահատում է, այդ գնահատականը պետք է նույն չափով և նույն կերպ վերաբերի երկու զուգընկերներին էլ: Այդպիսով , երեխաները կհասկանան, որ նրանք պատասխանատվություն ունեն իրենց զուգընկերոջ հանդեպ և կփորձեն միմյանց օգնել սովորելու գործընթացում: Նրանք միասին դիտարկում են, մտածում, դատողություն անում, աշխատում, նկարում, ապա ստուգում են մեկը մյուսի աշխատանքը, վերահսկում են այն: Նման համագործակցությունը հիմք է ստեղծում փոքր խմբերով առանց հակամարտության աշխատանքի համար:

ԽՄԲԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Խմբային պարապմունքը դպրոցում մենք քննարկում ենք՝ որպես կոլեկտիվ մտավոր աշխատանք, ինչը երեխայի մտավոր զարգացման համար լավագույն պայմաններ է ստեղծում:

Հարաբերությունների տեսանկյունից խմբային պարապմունքի նպատակը ոչ այնքան այն է, որ խումբը ենթարկվի ուսուցչին, որքանով այն, որ խմբի յուրաքանչյուր աշակերտ իրեն հարմարավետ զգա, առավելագույն արդյունքների հասնի և ընկերների ու ուսուցչի հետ համագործակցի: Նման պայմաններում խմբային աշխատանքը հետևյալ ազդեցությունն է գործում աշակերտի անհատականության զարգացման վրա.

– Խումբը ստեղծում է մտավոր լարվածության դաշտ:
– Խումբը ստեղծում է էմոցիոնալ լիցքավորման դաշտ:
– Խումբը մարդուն վարքի փորձ ձեռք բերելու հնարավորություն է տալիս:
– Խմբում աշակերտն ընտելանում է ընկերների հետ համագործակցությանը:
– Խումբը նպաստում է աշակերտի՝ ինքնուրույն աշխատելու ունակության զարգացմանը:
– Խումբը մարդու մեջ զարգացնում է պատասխանատվության զգացումն ու այսպես շարունակ:

Ուսուցչի կազմակերպած խմբային դասն իմաստ ունի միայն այն դեպքում, երբ տեղի է ունենում աշակերտների անհատական զարգացում: Խումբը լավագույն հնարավորությունն է ընձեռում այնպիսի ստեղծագործական միջավայրի ստեղծման համար, որն ապահովում է խմբի անդամների զարգացում:

Դասի ժամանակ խմբային աշխատանքի զարգացման հիմնական յուրահատկություններն են.

1) Կոնկրետ ուսումնական խնդիրների լուծման համար դասարանը բաժանվում է 3-6-հոգանոց խմբերի:
2) Յուրաքանչյուր խմբի տրվում է կոնկրետ առաջադրանք (առաջադրանքը բոլոր խմբերի համար կարող է լինել նույնը կամ տարբեր), որը խումբը միասնաբար է կատարում՝ առաջնորդի կամ ուսուցչի ղեկավարությամբ:
3) Խմբում առաջադրանքն աշակերտների միջև այնպես է բաշխվում և կատարվում, որ հնարավոր լինի խմբի յուրաքանչյուր անդամի անհատական ներդրումն աշխատանքում արձանագրել և գնահատել:
4) Սկզբում խմբերի կազմը փոփոխական է, նրանց համալրումը տեղի է ունենում նրա նախատեսմամբ, որ դա առավելագույնս նպաստի յուրաքանչյուր աշակերտի հնարավորությունների իրացմանը և անհատական բնավորությունների համատեղմանն՝ առանց խնդիրների:
5) Խումբը ձևավորվում է այն սկզբունքով, որ միավորվեն տարբեր ուժերի տեր ու գիտելիքների տարբեր մակարդակների, տարբեր բնավորություններով աշակերտները, ինչը նրանց փոխադարձաբար միմյանց լրացնելու ու հարստացնելու հնարավորություն է տալիս:
6) Խումբը պետք է աշխատի փոխադարձ համաձայնությամբ, առանց բախումների, ոչ մի երեխա չպետք է ճնշվի:
7) Աշխատանքը պետք է կատարվի ուսուցչի կողմից նախապես սահմանված ժամանակահատվածում:
8) Խումբն աշխատում է մեկ սեղանի շուրջ:
9) Որպես թիմեր ձևավորված խմբերը կարելի է ժամանակ առ ժամանակ փոփոխել կամ անփոփոխ թողնել որոշ ժամանակ (մեկ կամ երկու ամիս, ուսումնական կիսամյակ):

Խմբային աշխատանքի ժամանակ պետք է աշակերտներին խթանենք աշխատանքի և արդյունքների միասնական քննարկման, միմյանց խորհուրդի կարգով դիմելու և փոխադարձ օգնության:

Այդ ժամանակ զգալիորեն ավելանում են բոլոր անհրաժեշտ դեպքերում ընկերներին օգնելու դեպքերը: Պետք է նշել, որ այս դեպքում օգնող աշակերտը պակաս օգուտ չի ստանում, քանի որ նրա գիտելիքը կոնկրետանում, ակտիվանում, ամրապնդվում է համադասարանցուն բացատրելու գործընթացում:

Խմբային աշխատանքի ժամանակ ուսուցիչը տարբեր գործառույթներ է կատարում՝ ստուգում է աշխատանքի ընթացքը, արձագանքում է հարցերին, կանոնակարգում է վեճերն ու աշխատանքի հաջորդականությունը, անհրաժեշտության դեպքում օգնում է առանձին աշակերտի կամ ամբողջ խմբին: Միաժամանակ առավելագույնս նպաստում է արդյունքների քննարկմանն ու փոխադարձ խորհրդատվությունների անցկացմանը:

Ուսուցիչը պետք է վերահսկի ամբողջ դասարանի աշխատանքը, սակայն չպետք է ստեղծվի տպավորություն, թե որևէ խմբի գլխին կանգնած է: Ուսուցիչը չպետք է միջամտի խմբի աշխատանքին՝ բացի այն դեպքից , երբ աշակերտները որևէ հարցի պարզաբանում են խնդրում:

Աշխատանքն ավարտելուց հետո, խմբերը ներկայացնում են իրենց աշխատությունները (խմբի անդամներից մեկը պարզաբանում է կատարված աշխատանքը և օգտագործում մեկնաբանության համար)։ Ուսուցիչն ինքը կարող է ընտրել շնորհանդեսավարին (ներկայացնողին) կամ էլ կարող է խմբին տալ ընտրության հնարավորությունը։ Շնորհանդեսի ժամանակ վեճն անընդունելի է, որպեսզի ներկայացնողի մտքի թելը չկտրվի։ Հարցեր կարող են տրվել միայն շնորհանդեսից հետո (շնորհանդեսի մասին ավելի մանրամասն կխոսենք ստորև)։

Խմբային աշխատանքը հաջողությամբ իրականացնելու համար՝ ուսուցիչը պետք է լավ ճանաչի դասարանին (խոսքը ոչ միայն աշակերտների գիտելիքի մակարդակի մասին է, այլև խառնվածքների ու հարաբերությունների առանձնահատկությունների)։ Խմբային աշխատանքի համար անհրաժեշտ է նախապես պատրաստվել ու ծրագրել այն։ Ճիշտ է, նման աշխատանքն ուսուցչից լրացուցիչ ժամանակի հատկացում է պահանջում, սակայն փոխարենը մանկավարժական էֆեկտը զգալիորեն մեծ կլինի։

Խմբային աշխատանքը հաջողությամբ կարելի է անցկացնել ինչպես նոր նյութի հաղորդման ժամանակ, այնպես էլ արդեն սովորած նյութը ստուգելիս ու գնահատելիս։ Կարևորը, որ ուսուցիչը չշփոթի, իմանա, որ խմբային աշխատանքը ոչ թե նպատակ է, այլ գործնական միջոց՝ դասն իր նպատակին հասցնելու և նախանշված խնդիրները լուծելու համար։

Հաջորդ փուլում ցանկալի է, որ **քննարկում** կազմակերպվի։ Քննարկումն ինքնըստինքյան է ծնվում, քանի որ շնորհանդեսի ժամանակ թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտների մոտ, բնականաբար, հարցեր են առաջանում։ Շնորհանդեսի ժամանակ հարցեր տալը ցանկալի չէ։ Երբ ընդհատվում է միտքը, արդյունքում խախտվում է շնորհանդեսի ամբողջականությունն ու կանոնավորությունը։ Իսկ շնորհանդեսի ավարտից հետո առաջ քաշված հարցերի շուրջ պետք է քննարկում անցկացվի։ Հարցը խորությամբ ըմբռնելուց բացի, քննարկումը նպաստում է մի շարք օգտակար հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, ինչպիսիք են՝ ակտիվ ունկնդրումը, սեփական կարծիքի արտահայտումն ու դրա հիմնավորումը, վեճի ժամանակ հեղինակություն վայելող մարդու առջև վախի հաղթահարումը, դատողությունն ու ուրիշի միտքը գնահատելու ունակության զարգացումը, ինչպես նաև տարբերվող կարծիքի հանդեպ ներողամիտ վերաբերմունքը։ Քննարկման գործընթացն այս հատկանիշների զարգացմանն այն դեպքում է նպաստում, եթե ինքը՝ ուսուցիչը դրանց կրողն է և օրինակ, ինչը սովորելու է կոչում ուրիշներին։

Քննարկումը միշտ ընթանում է այն կանոնների պահպանմամբ, որոնք նախապես են եղել մշակված ուսուցչի և աշակերտների միջև։ Քննարկման կանոններն առհասարակ պետք է այսպիսին լինեն.

– Երբ մեկը խոսում է, մյուսները լսում են։
– Եթե որևէ բան ես ուզում ասել, ձեռք բարձրացրու։
– Ուրիշին չընդհատես խոսելիս։
– Ուրիշի խոսելու ժամանակ չծիծաղես՝ բացի այն դեպքից, երբ կատակում են։
– Վիճաբանությանը մասնակցում են բոլորը։

Քննարկումից հետո սովորաբար տեղի է ունենում գնահատումը (տարրական դասարաններում թվանշաններով գնահատում տեղի չի ունենում)։

Գնահատումը շատ նուրբ գործընթաց է և անաչառ ու զգույշ մոտեցում է պահանջում։ Գնահատումը տեղի է ունենում առանց թվանշանի։

Աշակերտը գնահատվում է ըստ նրա, թե որքանով լուրջ ու պատասխանատվությամբ է մոտեցել տրված հանձնարարությանը, ինչպես է «պարապել» և իր հնարավորությունների քանի տոկոսն է օգտագործել այդ գործընթացում։

Խմբերի շնորհանդեսներից հետո ուսուցիչը գրատախտակը բաժանում է այնքան մասի, որքան խումբ կա, և համարակալում է։ Գնահատվում է ոչ թե անհատական, այլ խմբային աշխատանքը։ Գնահատում են խմբերի անդամները և ոչ թե ուսուցիչները։ Գնահատումը տեղի է ունենում բոլորի կողմից։ Յուրաքանչյուր աշակերտ հայտնում է իր կարծիքը և ասում է այն խմբի համարը, որին լավագույնն է համարում (իր խմբից բացի)։ Ուսուցիչը գրատախտակի վրա համապատասխան

խմբի թվի տակ նշում է անում: Խմբի համարն ասելու հետ մեկտեղ ցանկալի է, որ աշակերտը նաև բացատրի, թե ինչու է առավելությունն այդ խմբին տվել: Վերջում, ըստ նշումների, բացահայտվում է լավագույն խումբը:

Աշխատանքի վերջում նպատակահարմար է այսպես կոչված ռեֆլեքսիայի՝ կշռադատման անցկացումը:

«Կշռադատում» (ռեֆլեքսիա) տերմինը նշանակում է սեփական կարծիքների ու ապրումների վերլուծություն, սեփական հոգեվիճակի մասին մտածել, երբ դիտարկումը միտված է գիտակցության ներքին գործունեությանը: Մի խոսքով, մանկավարժական կշռադատումը կարող է բացատրվել՝ որպես սեփական վարքի, այս դեպքում՝ ուսումնա- ճանաչողական գործունեության գիտակցում: Առաջին դասարանում կշռադատման ժամանակ բավական է աշակերտների կողմից այն բանի գիտակցումը, թե ինչ են սովորել այդ դասի ընթացքում, ինչն էր նրանց համար հետաքրքիր ու հիշարժան, ինչն են դժվարացել հասկանալ և այլն:

Պարապմունքի եզրափակիչ փուլում դասի ընթացքը և մասնակիցների արձագանքները հիշելը կարևորագույն ուսումնական և դաստիարակչական գործառույթ են կատարում:

10. ԻՆՉՊԵՍ ԳՆԱՀԱՏԵՆՔ ԱՇԱԿԵՐՏԻՆ

Ըստ Ազգային ուսումնական պլանի, ուսուցման I փուլում (1-4 դասարաններ), խորհուրդ չի տրվում թվանշանով գնահատել: Չնայած դա չի նշանակում, որ աշակերտների գնահատում ընդհանրապես տեղի չի ունենում: Հակառակը, կարծում ենք, որ առանց թվանշանի գնահատելիս, համեմատաբար ավելի շատ են հնարավորություններն՝ աշակերտների գիտելիքներն ու ստեղծագործական ընդունակությունները ցույց տալու համար:

Ըստ մեզ, ավելի հարմար է աշակերտներին գնահատել՝ ելնելով այն նպատակներից (գիտելիք, հմտություն-կարողություններ, վերաբերմունք), որոնք ենթադրում է այս առարկայի ուսուցումը, և ըստ այն կոնկրետ (լոկալ) նպատակների, որոնց հասնել պլանավորում ենք հենց դասի ժամանակ (կամ ուսուցման գործընթացում գնահատում ենք այն, թե ինչպես կարողացավ աշակերտը հաղթահարել կոնկրետ հանձնարարությունները):

Ուսուցիչը նախապես պետք է իմանա, թե ինչ չափանիշներով պետք է գնահատի աշակերտին: Այդ չափանիշներում մանրամասնորեն պետք է նկարագրի աշակերտի կողմից առարկան սովորելու և յուրացնելու մակարդակն ու որակը:

Ուսուցիչն աշակերտներին պետք է գնահատի հաճախ և տարբեր ուղղություններով: Գնահատումը պետք է հիմնվի ուսուցչի կողմից յուրաքանչյուր աշակերտի դիտարկման արդյունքում կուտակած տվյալների վրա:

Հնարավոր է գնահատումը ներառի հետևյալ չափանիշները.

- Որքանով ճիշտ է ճանաչում և անվանում աշակերտն առարկաներն ու երևույթները:
- Որքանով ճշգրիտ կարող է նա ձևակերպել միտքը:
- Առարկաների և երևույթների խմբավորում՝ ըստ նման և տարբերվող հատկանիշների:
- Աղյուսակների և դիագրամների կազմում-լրացում:
- Ուսուցանվող հարցի հետ կապված համապատասխան հարցերի ձևակերպում:
- Շնորհանդես՝ գիտելիքի և հմտությունների ցուցադրում:
- Տրամաբանական եզրակացություններ անել:

Մենք համարում ենք, որ առարկաները ճանաչելը և անվանելն «աշակերտի գիտելիքի որակի համեմատաբար ցածր, I կարգի ցուցանիշ է»:

Ավելի բարձր՝ II մակարդակի չափանիշներ են «մտքի հստակ ձևակերպումը», «առարկաների և երևույթների խմբավորումը» և «շնորհանդեսը»:

Ամենաբարձր՝ III մակարդակի չափանիշներն են՝ «աղյուսակների լրացումը», «համապատասխան հարցերի ձևակերպումը» և «տրամաբանական եզրակացությունների հանգումը»:

Այսպիսով, ենթադրվում է, որ յուրաքանչյուր հաջորդ մակարդակ նախատեսում է նախորդ մակարդակի չափանիշների պահանջները նույնպես:

Փորձը մեզ ցույց է տվել, որ զույգերով ու խմբերով կատարված ակտիվությունը նպաստում է աշակերտների միջև համագործակցության հմտության զարգացմանը: Նման աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են լսել միմյանց, նկատի ունենալ ուրիշի կարծիքը, կարողանում են քննադատաբար, ստեղծագործաբար մտածել և գնահատել, սեփական կարծիքը հայտնել ու հիմնավորել և այլն: Նրանք սովորում են գործառույթները ճիշտ բաշխել և ժամանակը ռացիոնալ օգտագործել:

Ցանկալի է, որ խմբային աշխատանքի գնահատման ժամանակ ուսուցիչը շեշտադրումն անի դրական կողմերի վրա. ոմանք ավելի լավ են գրում, իսկ ոմանց հաջողվում է ավելի լավ կարդալ կամ նկարել: Գնահատելիս ուսուցիչն ուշադրությունը չպետք է կենտրոնացնի նրա վրա, ինչն աշակերտի մոտ չի ստացվում: Հակառակը՝ նա միշտ պետք է շեշտի այն արժանիքը, որն աշակերտին առանձնահատուկ ձևով կներկայացնի: Դրանով աշակերտին ավելի լավ աշխատելու խթան կտրվի,

ավելի լավ սովորելու, ուրիշների համար օրինակ ծառայելու... Ի վերջո այս ամենը կնպաստի աշակերտների ինքնահաստատմանն ու սեփական հնարավորությունների մեջ վստահ լինելուն:

Ուսուցիչը նախապես պետք է որոշած լինի խմբային աշխատանքի գնահատման ձևը: Խմբային աշխատանքի ժամանակ ցանկալի է, որ երեխաներն իրենք գնահատեն մյուս խմբի աշխատանքները: Շնորհանդեսի ընթացքում պարտադիր է, որ խմբի կողմից ներկայացված աշխատությունը փակցվի գրատախտակին կամ աշխատության վրա գրվի համապատասխան խմբի համարը, որպեսզի աշակերտները հնարավորություն ունենան գնահատել միմյանց աշխատանքները. յուրաքանչյուր աշակերտ բարձրաձայնում է, թե ըստ իրեն՝ որ խմբի աշխատանքն է լավագույնը (բացի իր խմբից), և հիմնավորում է, թե ինչու է այդպես կարծում: Յուրաքանչյուր կարծիք հայտնողի կարծիքը ուսուցիչը գրատախտակին, խմբի համարի մոտ է գրանցում «+» նշանով: Ըստ «+» նշանների քանակի կորոշվի հաղթող խումբը:

Հնարավոր է, որ ուսուցիչն ընդունի գնահատման միասնական պայմանական նշաններ (արև, աստղ, ժպտացող մարդուկ և այլն) կամ կիրառի այնպիսի միջոց, ինչպիսին է կարճ մեկնաբանությունը: Այս դեպքում ուսուցիչը հատ-հատ (բանավոր կամ գրավոր) գնահատում է յուրաքանչյուր աշակերտի կատարած աշխատանք (թեստ, սխեմա, ապլիկացիա, նկար և այլն): Նա կարող է յուրաքանչյուր աշխատանքի տալ կարճ գրավոր մեկնաբանություն, որտեղ խոսքը կլինի կատարված աշխատանքի արժանիքների և թերությունների մասին: Ցանկալի է, որ տեղում տրվեն նաև անհրաժեշտ խորհուրդները.

Օրինակ.

– Թաթիա՛, դու հաջողությամբ կարողացար կատարել հանձնարարությունը. ճիշտ ես բաշխել ժամանակը, ընկերներիդ հետ համաձայնեցված էիր աշխատում և որոնում էիր խնդրի լուծման ուղիներ: Ապրե՛ս:

– Գիգա՛, դու լավ ես կատարել աշխատանքդ, չնայած, եթե ժամանակ չկորցնեիր, հավատում եմ, ինքդ էլ կհայտնաբերեիր սխալդ ու կկարողանայիր ուղղել այն: Խորհուրդ եմ տալիս ընդհանրապես ավելի ուշադիր կարդալ առաջադրանքի պայմանը, այդպես ավելի մեծ հաջողությունների կհասնես: Քեզ հետ մեծ հույսեր եմ կապում:

Ցանկալի է, որ ուսուցիչը նման ամփոփիչ մեկնաբանություն կիսամյակի ավարտին յուրաքանչյուր աշակերտի համար նույնպես գրի, որտեղ նա կբնութագրի աշակերտի ամբողջ կիսամյակի աշխատանքը և նրա հնարավորություններն ավելի լավ դրսևորելու համար խորհուրդներ կտա: Ցանկալի է, որ ուսուցիչը խուսափի խիստ բացասական գնահատականներից, որպեսզի աշակերտը դրանից չկորցնի իր անձի ու հնարավորությունների հանդեպ հավատը: Դրան հակառակ, ավելի էֆեկտիվ կլինի, որ աշակերտներին աշխատանքը բարելավելու ուղիներ առաջարկենք, առաջ մղենք, նրանց իրենց հնարավորությունների հանդեպ վստահություն, հավատ ներշնչենք ու որքան հնարավոր լինի քաջալերենք ու ոգևորենք:

Հնարավոր է դպրոցն ինքը մշակի ու ընդունի միասնական պայմանական նշաններ՝ առանձնահատուկ հաջողությունը գնահատելու համար, կամ ուսուցիչն ինքը սահմանի գնահատման սխեմա: Առաջարկում ենք գնահատման պարզ սխեմա:

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔ	ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔ	ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔ	ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔ
	1	2	3	4 .....
1. Սաաբա Զաալիշվիլի	Ամբողջությամբ յուրացրել է	Ամբողջությամբ յուրացրել է	Մասամբ է յուրացրել	Ամբողջությամբ յուրացրել է
2.Մարիամ Չոխելի	Ամբողջությամբ յուրացրել է	Ամբողջությամբ յուրացրել է	Ամբողջությամբ յուրացրել է	Մասամբ է յուրացրել

Վրաստանում հանրակրթական համակարգը նպատակադրում է հարմար պայմաններ ստեղծել ազգային և համամարդկային արժեքներ կրող ազատ անհատի ձևավորման համար:

Միևնույն ժամանակ, կրթական համակարգը զարգացնում է դեռահասների մտավոր և ֆիզիկական հմտություններն ու կարողությունները, տալիս է անհրաժեշտ գիտելիք, ապահովում առողջ կենսակերպ, աշակերտների մոտ ձևավորում ազատական և ժողովրդավարական արժեքների վրա հիմված քաղաքացիական գիտակցություն և օգնում նրանց՝ ընտանիքի, հասարակության և պետության հանդեպ սեփական իրավունքների և պարտականությունների ճանաչման հարցում:

Վրաստանի հանրակրթության համակարգում ստացած փորձի հիման վրա դեռահասը պետք է կարողանա.

ա) **Գիտակցել սեփական պատասխանատվությունը երկրի շահերի, ավանդույթների և արժեքների հանդեպ:**
Դպրոցական կրթությունը պետք է զարգացնի աշակերտի ունակությունը՝ ճիշտ սահմանել սեփական երկրի պետական, տնտեսական և քաղաքական շահերը, և նրան տա օգտակար որոշումների կայացման և ակտիվ գործելու հնարավորություն:

բ) Պաշտպանել և պահպանել բնական շրջակա միջավայրի պայմանները:
Դեռահասը պետք է իմանա. ինչ բնական պայմաններում է ապրում, ինչ փսաս կարող է հասցնել շրջակա միջավայրին այս կամ այն գործողությունը, ինչպես պահպանի և պաշտպանի բնական շրջակա միջավայրը:

գ) **Արդյունավետ օգտագործել տեխնոլոգիական կամ ուրիշ մտավոր ձեռքբերումներ, գտնել տեղեկատվություն, մշակել և վերլուծել այն:**
Այսօր, երբ մարդու համար հասանելի է մեծ ծավալի և տարբեր բովանդակության տեղեկատվություն, դրա արդյունավետ օգտագործումը կենսական նշանակություն է ստանում: Դեռահասը պետք է կարողանա ոչ միայն հայթայթել տեղեկություններ, այլ նաև գնահատել դրանք՝ ըստ բովանդակության, որակի, նշանակման. սահմանել նախանշված նպատակների համար դրանց օգտագործման ձևերը. տեխնոլոգիական ձեռքբերումներն արդյունավետորեն կիրառել ամենօրյա կյանքի, աշխատանքի, մտավոր և հոգևոր գործունեության պայմանների բարելավման համար:

դ) **Ինքնուրույն ապրել, որոշումներ կայացնել:**
Դպրոցական կրթությունը պետք է զարգացնի դեռահասի՝ անձնական, ընտանեկան և հասարակական կյանքում ինքնուրույն որոշումների կայացման հմտություններ ու կարողություններ:

ե) **Լինել ստեղծագործ, ինքնուրույն ստեղծել արժեքներ և ոչ թե ապրել միայն առկա արժեքների հաշվին:**
Դպրոցական կրթությունը պետք է ապահովի դեռահասի այն հմտությունների ու կարողությունների զարգացում, որոնք նրան հնարավորություն կտան արդեն առկա փորձն ու ձեռքբերումներն օգտագործել նոր նյութական, մտավոր և հոգևոր արժեքների ստեղծման համար:

զ) **Ամբողջ կյանքի ընթացքում շարունակաբար զարգացնել սեփական հնարավորություններն ու հետաքրքրությունները, հնարավորինս իրացնել դրանք ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:**
Դպրոցական կրթությունը պետք է ձևավորի դեռահասի՝ շարունակական զարգացման, ամբողջ կյանքի ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերման կարողություն, որպեսզի կարողանա պատշաճ կերպով սահմանել սեփական հնարավորություններն ու հոգևոր հակումները և ըստ այդմ հաստատել սեփական տեղը հասարակական կյանքում: Դեռահասը պետք է պատրաստ լինի ընտրություն կատարելու՝ ապագա կրթության և աշխատանքային գործունեության համար:

է) **Հաղորդակցվել անհատների ու խմբերի հետ:**
Դպրոցական կրթությունը պետք է ապահովի, որ հասարակության ապագա անդամների մոտ զարգանան ընդհանուր հաղորդակցական հմտություններ ու կարողություններ (գրել, կարդալ, խոսել, լսել), կազմակերպչական և խմբային աշխատանքի հմտություններ, այդ թվում նրանց մոտ, ում համար Վրաստանի պետական լեզուն մայրենի լեզուն չէ:

ը) **Լինել օրինապահ, հանդուրժող քաղաքացի:**
Այսօրվա հարաշարժ, էթնիկ և մշակութային առումով բազմազան աշխարհում որպեսզի հասարակությունը գործի, առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում փոխադարձ հարգանքի, փոխըմբռնման և փոխճանաչման հմտությունները: Դպրոցը պետք է մշակի դեռահասի՝ մարդու իրավունքների պաշտպանության և անհատին հարգելու կարողությունը, որը նա կօգտագործի իր և ուրիշի ինքնատիպության պահպանման համար: Դեռահասը պետք է կարողանա օգտագործել մարդու հիմնարար իրավունքների մասին ստացած տեսական գիտելիքն ու ապրել այդ սկզբունքներով: